

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
SHIRAK'S CENTER FOR ARMENIAN STUDIES

**«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը.
հայագիտության արդի հիմնահարցեր»**

9-րդ միջազգային գիտաժողով
Գյումրի, 24-25 սեպտեմբերի, 2016

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ



**Shirak historical and cultural heritage:
modern issues of Armenology**

9th International Conference
Gyumri, 24-25 Septamber, 2016

ABSTRACTS OF PAPERS

Երևան 2016

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

ՀՏԴ 94 (479.25) : 908 : 391 / 398 (=19) : 008 : 06

ԳԴՄ 63.3 (5Հ) + 26.89 + 63.5 (5Հ) + 71

Շ 642

Տպագրվում է

**ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհրդի որոշմամբ և
ՀՀ ԳԱԱ համահայկական հիմնադրամի հովանավորությամբ**

Խմբագրական խորհուրդ՝ Ս. Հայրապետյան (պատասխանատու խմբագիր)
Հ. Հարությունյան
Կ. Բազեյան
Կ. Սահակյան
Ռ. Հովհաննիսյան

«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայազիտու-
Շ 642 թյան արդի հիմնահարցեր» միջազգային գիտաժողովի /Գյումրի,
24-25 սեպտեմբերի/ զեկուցումների դրույթներ.- Եր.: Գիտություն,
2016.- էջ 410:

ՀՏԴ 94 (479.25) : 908 : 391/398 (=19) : 008 : 06

ԳԴՄ 63.3 (5Հ) + 26.89 + 63.5 (5Հ) + 71

Ժողովածուում զետեղված են 2016թ. սեպտեմբերի 24-25-ին Գյումրիում անցկացվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայազիտության արդի հիմնահարցեր» միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթները: Դրանք վերաբերում են տարածաշրջանի պատմության, ազգագրության, հնագիտության, ճարտարապետության, արվեստագիտության խնդիրներին, արձարծում են միջմշակութային հարցեր: Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ISBN 978-5-8080-1235-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն, 2016

Մերզո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (Հայաստան)

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: hkentron@mail.ru

ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆԸ ԵՎ ՇՊՄԺ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Շիրակը, Հայաստանի այլ պատմական գավառների նման, հոգևոր և նյութական մշակույթի անսպառ գանձեր ունի՝ հնագիտական ու պատմական մեծարժեք հուշարձաններ ու անհատակ անցյալ, դարերով ձևավորված ազգագրական գունդերանգների ինքնատիպ գամմա ու անկրկնելի բանահյուսություն, անգուգական կենցաղ ու դարերի խորքից եկող ավանդույթներ, զարմանահրաշ ճարտարապետություն ու նկարչություն, բազմազան արհեստներ ու զբաղմունքներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն և մեր բազմադարյա մշակույթի այլ ձեռակերտ գոհարներ: Այլ խոսքով՝ պատմամշակութային ծովածավալ ժառանգություն, որի ուսումնասիրության վերջին երկու տասնամյակը անխզելիորեն կապված է նաև Գյումրիում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ:

1997-ի հունվարին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ընդառաջ գնալով մարզային իշխանությունների, Գյումրու մտավորականության խնդրանքին ու հանրապետության մի շարք անվանի գիտնականների (Վ.Բարխուդարյան, Ս.Համբարձումյան, Ա.Քալանթարյան, Լ.Հախվերդյան, Ս.Հարությունյան, Ա.Մելքոնյան և ուրիշներ) միջնորդությանը, Կառավարության քննարկմանը ներկայացրեց Գյումրիում հայագիտական կառույց հիմնելու առաջարկը: Կովանները մի քանիսն էին՝ տեղում գիտական ներուժի (մանավանդ երիտասարդ կադրերի) առկայությունն ու նրան գործելու, արարելու հնարավորություն ընձեռելը, Շիրակի հարուստ մշակույթն ու Աղետից ծանր վիրավոր քաղաքի հոգևոր վերածննդի տեսլականը: Այսպես սկիզբ առավ պատմությունը մեր երկրում առայժմ միակ ակադեմիական ոչմայրաքաղաքային հայագիտական կառույցի, որի գոյության տարիները ինքնահաստատման ու

ձեռքբերումների տարիներ եղան: Նախ հստակեցվեցին պատմական գավառի հնագիտության, ազգագրության, բանահյուսության ու պատմության գիտական ուսումնասիրության մեջ կենտրոնի առաջնահերթությունները, պատվի գործ համարվեց հետազոտական աշխատանքի բարձր որակի ապահովումը պետական ֆինանսավորմամբ թեմատիկ ծրագրերում, որոնք այդ ընթացքում հասան տասնհինգի և կատարվում են ամենայն պատասխանատվությամբ ու բարեխղճորեն: Զգալի աշխատանք կատարվեց Բենիամինի հնավայրի՝ անտիկ դամբարանադաշտի ու բնակավայրի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ, հայտնաբերվեցին Անիի քարանձավային արվարձանը և ուրարտական ամրոց-բնակավայր Հայկաձորում, Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան տաճարական համալիրը Աշոցքի տարածաշրջանում և Ազատանի մ.թ.ա.1-ին հազարամյակի եռաշերտ հուշարձանը (պ.գ.թ. Լ.Եզանյան, Հ.Խաչատրյան, որպես առանձին ազգագավառ՝ ավարտվեց պատմական Շիրակի Էրիախի երկրի հնագույն պատմության ուսումնասիրությունը թեկնածուական ատենախոսության տեսքով (պ.գ.թ. Ի. Ավագյան):

Հայկաձորի քարանձավային հնավայրի՝ որպես Անի արվարձանի հետազոտությունը կարևորվում է հատկապես միջնադարյան Անիի նյութական մշակույթի մասին մեր պատկերացումների հարստացման առումով: Այդ արվարձանը քարանձավ-բնակարանների մի համալիր է, որի պեղված բնակարանները և հայտնաբերված գտածոները հարուստ նյութ են միջնադարյան մայրաքաղաքի այս հատվածի ճարտարապետական լուծումների, շինարարական սկզբունքների, հասարակ բնակչության կենցաղի ու մշակույթի մի շարք տարբերույթ հարցերի ուսումնասիրության համար, հետևաբար կարևոր գիտական արժեք ու նշանակություն ունեն: Իսկ ուրարտական ամրոց-բնակավայրի հնագիտական ուսումնասիրությունը նորովի լույս է սփռում տարածքի մ.թ.ա. 1-ին հազարամյակի պատմության ու մշակույթի մի շարք հիմնախնդիրների լուծման վրա:

Գիտականորեն արժևորվեց Մեծ Սեպասարի հնավայրից հայտնաբերված ծիսական առարկաների պաշտամունքային դերը հնդեվրոպական դիցաբանության և հավատալիքների համատեքստում: Տաճարական համալիրի պեղված սրբարանում փաստված ծիսական արարողություն-

ների նյութական մնացորդները (արդուզարդի առարկաներ, տարաբնույթ անոթներ և այլն), ինչպես նաև զոհաբերված գայլերի գանգերը եզակի են և լավագույնս են վկայում տարածքի հնդեվրոպական ցեղերով բնակեցված լինելը: Պեղումների շարունակումը ավելի ամբողջական կդարձնի պատկերացումը այս վաղբրոնզիդարյան հնավայրի պատմամշակութային անգնահատելի արժեքի, պատմական ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, հավատալիքների ու կենցաղի մեջ նրա տեղի ու նշանակության մասին:

Առաջին իսկ տարիներից կենտրոնում սկիզբ առավ Շիրակի հնագույն պատմության մի շարք հիմնախնդիրների՝ մ.թ.ա. 1-ին հազարամյակում Ախուրյանի ավազանի երկրների և ցեղային միությունների տեղադրմանը, նրանց տեղորոշմանը, հատկանունների (տեղանուններ, երկրանուններ, ցեղանուններ, ջրանուններ) ստուգաբանությանը, բնակչության էթնիկ պատկանելությանը, նրա հնդեվրոպական հիմքի ճշգրտմանը, լեզվին, կրոնական հավատալիքներին ու սովորույթներին վերաբերող մի շարք վիճահարույց հարցերի քննությունը (պ.գ.դ. Մ.Պետրոսյան, պ.գ.թ. Լ.Պետրոսյան): Վերջին շրջանում, հատկապես վրացական պատմագիտության մեջ լուրջ հավակնություններ են դրսևորվում Ախուրյանի ավազանի երկրների բնակչության խուռիական կամ վրացական ծագման վարկածն ամեն կերպ հիմնավորելու ուղղությամբ (Թ.Գամկրելիձե և այլք): Ավելին, արվում են Ախուրյանի ավազանի՝ վրացական ցեղերի նախահայրենիքի մաս կազմելու վերաբերյալ օտարալեզու մասնագիտական գրականության մեջ (Ի.Դյակոնով, Ի.Իվանով, Թ.Գամկրելիձե և այլք) շրջանառվող և ընդգծված հակահայ ուղղվածություն ունեցող վարկածներ: Ուստի կենտրոնում իրականացվող նմանօրինակ պատմագիտական քննությունը շատ կարևոր է հայ ժողովրդի շիրակյան հատվածի մ.թ.ա. առաջին հազարամյակի էթնոլեզվական, հոգևոր-մշակութային, սոցիալտնտեսական և հասարակական-քաղաքական պատմության ուսումնասիրությունը ամբողջացնելու տեսակետից: Մյուս կողմից՝ բացահայտվում է վերոնշյալ կեղծ վարկածների հակագիտական էությունը և քննադատվում մեր հարևանների՝ տարածաշրջանի պատմությունը խեղաթուրելու փորձերը:

Մասամբ նույն նպատակն ունի նաև Շիրակյին հարակից պատմական տարածքների, մասնավորապես, Տայքի 16-19-րդ դդ. պատմության մի շարք խնդիրների ուսումնասիրությունը (պ.գ.թ. Ա.Ակոպով): Գիտական սպառիչ մեկնաբանություն են ստացել պատմական Տայքի հուշարձանների ազգային պատկանելության և վարչաժողովրդագրության, բնակավայրերի տեղագրության, այլակրոն հայերին առնչվող մի շարք արդիական, նաև վիճահարույց հարցեր:

Շիրակի նորագույն պատմությունը ևս բազմաթիվ նախատիպերի հաղթահարման ու կնճռոտ հարցերի նորովի մեկնաբանման կարիք ունի: Տարվում է արդյունավետ աշխատանք Ալեքսանդրապոլի գավառի պատմաժողովրդագրական պատկերի ու վերջինիս փոփոխությունների հանգամանակի ուսումնասիրության, 1917-1918թթ. ընթացքում գավառի տարածքում արևմտահայ գաղթականության տեղաբաշխման և գավառի էթնոժողովրդական իրավիճակի վրա գաղթերի թողած ազդեցության վերաբերյալ արխիվային նյութերի հավաքման և վերլուծության ուղղությամբ (պ.գ.թ. Ա.Հայրապետյան): Ընթացքի մեջ է Ալեքսանդրապոլի գավառի 20-րդ դարասկզբի ժողովրդագրական իրավիճակին, գավառի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, Ալեքսանդրապոլում գործող հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությանը վերաբերող արխիվային նյութերի հավաքումն ու վերլուծությունը: Գիտական նորովի մեկնաբանություն են ստացել 1918 և 1920 թվականներին Ալեքսանդրապոլի թուրքական ռազմակալման վերաբերյալ հայ պատմագիտության մեջ առկա մի շարք վիճահարույց հարցադրումներ (պ.գ.թ. Կ.Ալեքսանյան), ուրվագծվել է գավառակենտրոնի՝ այդ շրջանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի, նաև բարոյահոգեբանական իրավիճակի՝ վայրիվերումներով լի պատկերը (պ.գ.թ. Գ.Այվազյան):

Կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» ծրագրի մյուս բաղադրիչը Շիրակի ազգագրական հարուստ շտեմարանի ուսումնասիրությունն է (խմբի ղեկ.՝ պ. գ. թ. Կ. Բազեյան): Ալեքսանդրապոլի տնտեսական զբաղմունքների, տնտեսվարման օժանդակ ձևերի ու եղանակների, արհեստների,

համքարությունների, կենցաղի, բնակարանի, կահկարասիի, ծիսատոնական համակարգի, բառուբանի յուրահատկությունների վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների հիմքի վրա շարունակվում է Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմագագազրական ծավալուն հետազոտության երկրորդ մասի իրականացումը՝ նվիրված քաղաքի լենինականյան ժամանակահատվածի ազգագրական դիմագծի ամբողջացմանը, որի առանձին շտրիխներ՝ տնտեսական կյանքի, հայրենադարձության նշանակության ու ժողովրդագրական տեղաշարժերի, քաղաքի արդյունաբերականացման, քաղաքային արհեստների ու տնտեսական զբաղմունքների փոխակերպումների, գյուղական բնակչության դեպի քաղաք միգրացիայի (պ.գ.թ. Ա.Բոյաջյան), քաղաքային մշակույթի, արվեստի և այլ հարցեր (մ.գ.թ. Լ.Աթանեսյան) ներկայումս Հայագիտականի ազգագրագետների ուշադրության կենտրոնում են:

Մեկ տասնամյակից ավելի կենտրոնի ազգահոգեբանների համար ուսումնասիրության հարուստ նյութ են Գյումրու և Շիրակի մարզի արդի ազգագրական դիմապատկերի, մասնավորապես ժամանակակից բանահյուսության (նաև «աղետի բանահյուսության») ու նրա փոխակերպումների, ժողովրդական տոների ու ծիսակատարությունների ձևափոխությունների հարցերը (հարսանիք, կնունք, ծնունդ, ուխտագնացություն, մատաղ և այլն): Այս ամենի հանրագումարը կլինի Շիրակի մարզի բնակավայրերի ազգագրական ատլասի ստեղծումը, որը ձեռնարկվել է Կենտրոնում երկու տարի առաջ և պահանջում է հսկայածավալ դաշտային ու վերլուծական աշխատանք (հ.գ.թ.Կ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան):

Շիրակի ազգագրական պատկերի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունի նաև նրա ժողովրդական երգարվեստի գիտական արժևորումը. ծավալուն աշխատանք է կատարվել ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության արդի ինդիքների և զարգացման միտումների մեկնաբանման ուղղությամբ, ամբողջացվել է 20-րդ դարակեսին Լենինականում ստեղծված գուսան Շահենի աշուղական դպրոցի ներկայացուցիչների վաստակի ըստ ամենայնի արժևորման աշխատանքը (արվ.թ. Հ. Հարությունյան, Հ. Ափինյան), շարունակվում է մարզկենտրոն Գյումրիում և գյուղական բնակավայրերում ժողովրդական երգի ու

պարի կատարումների արդի փոխակերպումների քննությունը, ընթացքի մեջ են Շիրակի ժամանակակից երաժշտական բանահյուսությանը նվիրված նյութերի մշակումը (Ե.Վարոսյան), միջազգային համագործակցության շրջանակներում ավարտման փուլին է հասցվել Հաագայի պատմական արդարության և հանդուրժողականության ինստիտուտի նախաձեռնությամբ կատարվող «Աշտուղական ավանդույթներ. Կարս-Ալեքսանդրապոլ» համատեղ ծրագրի մեր մասը, որը նվիրված է 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին երկու քաղաքների երաժշտական կյանքում նշանակալի դեր ունեցած հայ և թուրք աշուղների ստեղծագործական ժառանգության համեմատական քննությանը:

Գյումրու մշակութային և ազգագրական ուրույն դիմապատկերի կարևոր շտրիխներից մեկը նրա խոսվածքն է՝ իր արդի առանձնահատկություններով, որի համակողմանի քննությունը սկիզբ է առել Կենտրոնում միայն վերջերս (բ.գ.դ.Ս.Հայրապետյան): Կատարվում է հայկական օրորոցային երգերի զուգադրական հետաքրքիր ուսումնասիրություն (Հ.Մատիկյան): Ավարտվել են նախապատրաստական աշխատանքները նաև գիտական մեկ այլ թեմայի («Շուշի-Ալեքսանդրապոլ. քաղաքային մշակույթի աղերսներ») ուսումնասիրությունը սկսելու համար: Ելակետն այն է, որ Անդրկովկասի ամենահայեցի, հասարակական ու կրթամշակութային ինքնատիպ կյանքով ապրած երկու հայաշատ կենտրոնները՝ Ալեքսանդրապոլն ու Շուշին, իրենց պատմական դերակատարությամբ ու մեր ժողովրդի կյանքում ունեցած նշանակությամբ, իրենց ավանդասիրությամբ ու քաղաքային մշակույթով բավականին ընդհանրություններ և աղերսներ պիտի ունենան, որոնք կարոտ են հիմնավոր գիտական մեկնաբանության:

Կենտրոնում հրատարակվում է «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու՝ 14 տպագրական մամուլ ծավալով: Այսօր հրապարակի վրա են հանրապետության գիտական շրջանակներում բարի համբավ վայելող այդ ժողովածուի 18 հատորներ, որոնցում Շիրակի պատմությանը, հնագիտությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված շուրջ 360 հոդվածների, հրապարակումների և հաղորդումների գերակշիռ մասը հեղինակել են Կենտրոնի գիտաշխատող-

ները: 2010-ին Կենտրոնում ստեղծվեց նաև «Շիրակի հնագիտական և պատմագագազրական ուսումնասիրություններ» մատենաշարը՝ նպատակ հետապնդելով խթանել ավարտված թեմաների ամբողջական տպագրությունը: Հրատարակվել են մատենաշարի երկու պրակներ, նաև տասնյոթ մենագրություններ, արխիվային նյութերի ու փաստաթղթերի երեք ստվարածավալ ժողովածուներ:

Կազմակերպվող միջոցառումներից շատերը բարի ավանդույթի են վերածվել. հայագիտության դասեր մարզի տարածքում գտնվող զինմասերում, ամեն աշուն Գյումրիին զարդարող «Հացի տոն» ազգագրական փառատոներ, երիտասարդ գիտնականի ամառային դպրոցներ, ազգագրական գիտարշավներ, գիտական ընթերցումներ (Դրանցից մեկը, նվիրված Անիի՝ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակման 1050-ամյակին, բախտ վիճակվեց անցկացնել հենց Անիի Մայր տաճարում՝ տարբեր երկրներից հարյուրավոր հայ հովեկների ներկայությամբ):

Կենտրոնի անուրանալի ձեռքբերումներից են Գյումրիում ավանդաբար հրավիրվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով գիտաժողովները: Պարբերաբար գումարվելով երկու-երեք տարին մեկ՝ այս գիտաժողովները, որ ՀՀ ԳԱԱ նախագահության թույլտվությամբ վերջին շրջանում ձեռք են բերել միջազգային կարգավիճակ, նպատակ են հետապնդում հայտածել Հայաստանի հյուսիսի, մասնավորաբար պատմական Շիրակի հնագիտական, պատմագիտական, ազգաբանական ու բանագիտական ուսումնասիրության ժամանակակից մակարդակը, բացահայտել տարաբնույթ հետազոտությունների իրականացման գործում առկա հիմնախնդիրները, առաջադրել ու քննարկել ուսումնասիրվող վիճահարույց իրողությունների նորովի գիտական մեկնաբանություններ և հնարավորության սահմաններում ուրվագծել հայագիտության ընդհանուր համատեքստում Շիրակի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետագա ընթացքն ու առաջնահերթությունները 21-րդ դարի առաջին քառորդին:

Այս գիտաժողովները սկզբից նեթ եղան և շարունակում են լինել մեծամասշտաբ միջոցառումներ ոչ միայն Գյումրու, այլև հանրապետու-

թյան գիտական և մշակութային կյանքում: Դրանք ավանդաբար հավաքում են ունկնդիրների շատ մեծ լսարան (Գյումրու և մարզի գիտական մտավորականություն, ուսուցչություն, բուհերի հայագիտական ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմ և ուսանողություն), ունենում են թեմատիկ լայն շրջանակ, մասնակիցների հեղինակավոր ու ներկայացուցչական կազմ, որի մեջ քիչ չեն այս գիտաժողովների մշտական մասնակիցները (պակաս կարևոր չէ նաև մեծաթիվ երիտասարդ գիտնականների առկայությունը): Եվ եթե նախորդ յոթ գիտաժողովները տեղավորվում էին հանրապետական գիտական միջոցառման ձևաչափի մեջ, ապա վերջինը՝ ութերորդը հատկորոշվեց նաև տասներկու երկրների 18 հայազետների (Իտալիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ՌԴ, Ճապոնիա, Վրաստան, Գերմանիա և այլն) արդյունավետ մասնակցությամբ, ինչը միջազգային հարթության վրա դրեց Շիրակի (և ոչ միայն) պատմամշակութային ժառանգության գիտական արժևորմանը նվիրված այդ միջոցառումը: Բավական է նշել, որ տեղի ունեցած բոլոր այս գիտաժողովների նյութերը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը առանձին ժողովածուներով հրատարակել է և դրել գիտական շրջանառության մեջ, նաև տեղավորել իր www.shirakcenter.sci.am կայքէջում:

ՀՀ կենտրոնում, որտեղ պետբյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում է «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ-2» ծրագիրը, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված գիտաժողովների կազմակերպմանը և իրականացմանը տրվում է կարևորագույն նշանակություն: Դրանք կենտրոնի գիտաշխատողների համար յուրատեսակ փորձաքննություն են, որ ենթադրում են արդյունավետ ու պատվախնդիր մասնակցություն: Ամեն անգամ կենտրոնի գիտաշխատողները հերթական գիտաժողովին մասնակցում են 25-30 գիտական հաղորդումներով, նախորդ գիտաժողովից հետո ընկած ժամանակահատվածում վերոնշյալ ծրագրի շրջանակներում հրատարակել են ինը տասնյակից ավելի աշխատանքներ (8 մենագրություն), պաշտպանել են չորս թեկնածուական ատենախոսություն:

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնն ունի ՇՊՄԺ գիտաժողովների կազմակերպման և անցկացման պատշաճ փորձ և ի գործ է ապահովելու նմանօրի-

նակ միջոցառման գիտական բարձր մակարդակ ու արդյունավետություն, նաև ըստ ամենայնի ներկայացնելու միջոցառման մշակութային կարևոր նշանակությունը: Ի դեպ, 2013թ. հոկտեմբերին Կենտրոնը ՀՀ գիտության պետական կոմիտեի, մշակույթի նախարարության և Գյումրու քաղաքապետարանի աջակցությամբ Գյումրիում կազմակերպեց նաև «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային խոշոր գիտաժողովը՝ մեր հանրապետության 80, ԱՊՀ յոթ երկրների 48 և ԱՄՆ, Ֆրանսիայի, Լիբանանի, Վրաստանի 12 ազգագրագետների, սոցիոլոգների, պատմաբանների, բանագետների և հնագետների մասնակցությամբ:

ՇՊՄԺ իններորդ գիտաժողովը կունենա մինչև 90 հայաստանյան մասնակիցներ ՀՀ ակադեմիական համակարգի հայագիտական ինստիտուտներից և բուհերի հայագիտական ամբիոններից, մասնակցության հրավեր է արվել նաև արտերկրի շուրջ 30 գիտնականների 14 երկրներից: Գիտաժողովի անցկացմանը կաջակցեն ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարանը, Շիրակի մարզպետարանը, Գյումրու քաղաքապետարանը, անհատ բարեգործներ: Գիտաժողովը կունենա նաև մշակութային միջոցառումների մեծ ծրագիր: Արտագնա նիստեր կգումարվեն մարզի մի քանի հնավայրերում, Գյումրու թանգարաններում, նախատեսվում են հանդիպումներ քաղաքի մտավորականության և ուսանողների հետ:

Բարի երթ գիտաժողովին և արդյունավետ աշխատանք նրա մասնակիցներին...

Sergo HAYRAPETYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: hkentron@mail.ru

SHIRAK'S ARMENOLOGICAL CENTER AND SHHCH CONFERENCES

Shirak Centre of Armenological Studies was founded in Gyumri in 1997. It is the only armenological structure of the Academy situated out of the circles of the capital. The scope of the researches includes the investigation of new archaeological monuments in the territory of Shirak region; historical events, rich ethnography, folklore, folk music, arts and crafts, customs of the region of Shirak. 10 archaeological monuments have been discovered in the course of the center's two-decade existence. Rich material of ethnographic origin has been collected and cultivated, there have been investigated the demographic, educational and cultural processes of Aleksandrapol in the XIX century and at the beginning of the XX century. There have been published "Research Papers" of 18 periodical volumes, 2 series of issues called "Shirak's archaeological and historio-ethnographic studies", 15 monographs and 3 collections of archival materials. Art, folk and ethnographic festivals have been organized.

Among the events organized by the Center the conferences concerning "Shirak's historical and cultural heritage" are considered to be of extremely importance. The materials of 8 such previous conferences have been published in separate collections. Besides, the Armenian scientists, numerous scientists from the USA, the RF, France, Italy, Japan, Germany and from other countries actively took part in those conferences in different years. The end of this conference is to introduce the modern level of archaeological, historical, ethnological and philological researches of the historical Armenia and especially the province of Shirak and put forward and discuss new scientific interpretations concerning various issues of the above-mentioned areas.

80 scientists from Armenia and 12 scientists from the RF, Ukraine, Georgia, Lebanon, Poland will take part in the 9th international conference.

Աննա ԱԶԻԶՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: annamalah@yahoo.com

**ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԶԱՐԴԱԳՈՏԻՆԵՐԻ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կուր-արաքսյան խեցեղենի զարդամոտիվների համակարգում առանձնակի տեղ են գրավում զարդագոտիները, որոնք աչքի են ընկնում իրենց զարդանախշերի զանազան մոտիվներով և կատարման եղանակներով:

Ուսումնասիրությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում (Ազարակ, Արագած, Կառնուտ, Շենգավիթ, Շիրակավան, Ֆիդլետովո) գտնվող վաղբրոնզեդարյան հուշարձանների հնագիտական նյութի հիման վրա: Զուգահեռներ են տարվել վերոհիշյալ հնագիտական նյութի և կուր-արաքսյան այլ հուշարձանների նյութերի միջև:

Եզրագոտիներն արվել են գծագարդ, կետագարդ, ակոսագարդ, ներձկման և գունագարդ (աստառի կողմից) կատարման եղանակներով և մեծ մասամբ պատկերվել են կարասների, կճուճների, քրեղանների, թասերի, զանազան տեսակի անոթների և նաև խուփերի վրա:

Ըստ զարդամոտիվների՝ զարդագոտիները կարելի է տիպաբանել հետևյալ չորս խմբերի՝ երկրաչափական, բուսական, կենդանակերպ և սոլյառ: Խորհրդանշական իմաստով պատկերվել են խեցեղենի վերնամասում՝ վզի և ուսի հատվածներում, պատկերվել են նաև խուփերի եզրերին՝ կրելով պահպանողական իմաստ:

Anna AZIZYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: annamalah@yahoo.com

THE TYPOLOGICAL DISTINCTIVE FEATURES OF KURA-ARAXES CERAMIC ORNAMENTS

The ornamental belts of Kura-Araxes ceramic ornaments are striking with their various ornamental motives.

The research has been conducted on the bases of archaeological finds uncovered as a result of the excavations at Early Bronze age sites like Agarak, Aragats, Karnut, Shengavit, Shirakavan and Fioletovo. For this purpose, the parallels were drawn between the above-mentioned archaeological finds and the ones of Kura-Araxes other sites.

The fringes are described as belt-lined, ornamented with dots, grooved, and concave and painted (interiors) and basically, they were depicted on the jars, jugs, basins, bowls, various pots and lids as well.

In accordance with the ornamental motives, the ornamental belts can be classified as: geometrical, vegetal, animal - like and solar. In the symbolic sense, they were depicted on the upper part of the pottery neck and the shoulders, and on the rims of the lids, symbolizing the protection.

Ինգա ԱՎԱԳՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, (Գյումրի)

E-mail: inga.avagyan.76@mail.ru

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐ ՇԻՐԱԿԻ

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻՑ

Շիրակի տարածքում գտնված պատահական գտածոների թիվը ավելացել է ևս երկու իրերով: Այդ իրերից առաջինը տասներեք բեկորներ

րից բաղկացած բրոնզե թասն է, իսկ երկրորդը՝ տասնվեց բեկորներից բաղկացած բրոնզե գոտին: Գտածոները հայտնաբերվել են Սպանդարյան գյուղի գերեզմանոցում գերեզման փորելու ժամանակ և տեղափոխվել են գյուղի միջնակարգ դպրոցի պատմության անկյուն:

Բրոնզե, ամբողջական թիթեղից կռած թասի տրամագիծը 17 սմ է, խորությունը՝ մոտավորապես 5 սմ: Սպանդարյանի թասի մոտավորապես նմանօրինակը պեղվել է Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզի երկրորդ փուլով թվագրվող թիվ 575 դամբարանից¹: Տ.Խաչատրյանը նմանօրինակ թասերը նույնպես թվագրում է վաղ երկաթի և միջին երկաթի դարերով, սակայն նշում է, որ կան նաև ավելի վաղ օրինակներ Թրիալեթիից, որոնք Բ.Ա. Կուֆտինը թվագրում է ուշ բրոնզի դարաշրջանով: Ենթադրում ենք, որ թասը կռված է ամբողջական թիթեղից:

Համեմատաբար լավորակ բրոնզից ուրարտական թասեր պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում և Էրմիտաժում: Ուրարտական այս թասերը պեղվել են Կարմիր բլուրից և ունեն ուրարտական արքաների անուններով արձանագրություններ²՝ Մենուա, Արգիշտի I, Սարդուրի II, Ռուսա I: Բ.Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ Կարմիր բլուրից պեղված հայտնի թասերը պատրաստված են հատուկ սարքով, որը ճգնվել է թիթեղը, կամ կռված են ամբողջական բրոնզե թիթեղից:

Բրոնզե գոտու պահպանված հատվածների երկարությունը մոտ 60 սմ է, ամբողջական բեկորի լայնությունը՝ 19,5 սմ: Գոտին բաղկացած է 11 ժապավեններից: Գոտու վերին և ստորին եզրերը հարթ են, ունեն 1 սմ լայնություն: Այս եզրերի ներքին մասով անցնում են 3 մմ լայնություն ունեցող, սեպաձև զարդանախշերի շարքով զարդերիզները: Գոտու երկրորդ, չորրորդ, վեցերորդ, ութերորդ և տասներորդ ժապավեններն ունեն 3,4 սմ լայնություն և զարդարված են պարույրների չորսական շարքերով, բացի տասներորդ ժապավենից, որը զարդարված է երեք շարքից բաղկացած համեմատաբար խոշոր պարույրներով, քան մյուս ժապավենները: Պարույրներով զարդարված ժապավենների միջև գտնվում են հարթ մակերեսով չորս ժապավեններ, որոնց երկու եզրերը նույնպես զարդարված

¹ Хачатрян Т. Древняя культура Ширака, Ер., 1975, с. 219-220, рис. 131.

² Пиотровский Б. Ванское царство (Урарту), М., 1959, с.180, табл. XXXIV.

են 3 մմ լայնություն ունեցող սեպաձև զարդանախշերի շարքերով: Գոտու ճարմանդը չի պահպանվել: Իրար հաջորդող ինը զարդագոտիներից հինգը զարդարված են պարույրներով, չորս զարդագոտիները, որոնք ընկած են հինգ պարույրներով զարդարված ժապավենների միջև, հարթ են, սակայն եզրագարդված են սեպաձև ժապավեններով:

Պարույրներով զարդարված գոտիներ հայտնի են Սևանի ավազանից՝ Ե.Լավայանի նյութերից, Աղթալայից¹, Սանսահինից²:

Հ.Մարտիրոսյանը այս՝ բրոնզե հսկա թիթեղներից պատրաստված գոտիները, որոնք կրում էին իբրև զարդ, պաշտպանության միջոց և պաշտամունքի առարկա, թվագրում է ուշ բրոնզեդարյան մշակույթի II փուլից ոչ շուտ (Լճաշեն-Մեծամորյան II մշակույթ) և կարծում, թե դրանք հարատևում են մինչև ուշ ուրարտական ժամանակաշրջանը³: Հ.Մարտիրոսյանը այս գոտիները բաժանում է չորս խմբերի.

ա) գոտիներ՝ հարթ մակերեսով, բ) գոտիներ՝ երկրաչափական պարզունակ կամ բարդ փորագիր զարդերով՝ եռանկյունիներով, ռոմբերով, պարույրներով, որոնց սիմվոլիկ կրոնական նշանակությունը դեռևս վերջնականապես պարզված չէ, գ) գոտիներ կենդանական պատկերներով՝ եղնիկների, այծերի, ձիերի, ցուլերի, որոնք, ըստ երևույթին, երկնային որոշակի մարմինների ու երևույթների սիմվոլներ են, դ) կրոնապաշտամունքային բարդ կոմպոզիցիա ունեցող գոտիներ, որտեղ ներկայացված են որսի սիմվոլիկ տեսարաններ, բնապաշտական երևույթների ամբողջական համատեքստում կամ արևի մարդակերպ աստծո ընթացքը՝ մարտակարքերով, հրեղեն ձիերի, թռչունների, արևների, երկնային լուսատուների ուղեկցությամբ⁴:

¹ Խնկիկյան Օ., *Սրիեստները բրոնզեդարյան Հայաստանում, Հայաստանի հնագիտական հուշարձանները 9, Բրոնզեդարյան հուշարձանները, պրակ III, Եր., 1977, էջ 103, աղ. XIII նկ. 5,6:*

² Мартыросян А., *Армения в эпоху бронзы и раннего железа, Եր., 1964, с. 139-140, рис. 58:*

³ Մարտիրոսյան Հ. Ա., *Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձանները 2, Բրոնզեդարյան հուշարձանները, պրակ II, Եր. 1969, էջ 33, աղ. XXXIX, նկ. 2,3:*

⁴ Նույն տեղում, էջ 33:

Բոլորանախշը կամ պարույրը նաև հանդիպում է Շիրակավանի Բ.ա. IX-VIII դդ. թվագրվող թիվ 10, 11 դամբարաններում պեղված երկու գոտիների վրա¹:

Սպանդարյանի նորահայտ գոտին դասվում է Հ.Մարտիրոսյանի առաջարկած երկրորդ խմբին և թվագրվում Բ.ա. X-VII դդ.:

Inga AVAGYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: inga.avagyan.76@mail.ru

CASUAL FINDINGS FROM THE NECROPOLIS OF SHIRAK'S SPANDARYAN VILLAGE

The number of casual findings has increased with two objects in Shirak's territory. One of the things is the bronze bowl consisted of thirteen fragments and the second one is the bronze belt consisted of sixteen fragments. The objects have been discovered while digging the grave in Spandaryan village and have been carried to the historian corner of the village's secondary school.

The diameter of the bowl made of bronze and completely tinned metal is 17 cm, the depth is about 5 cm. Another bowl of the same kind has been excavated in Artik's necropolis. T. Khachatryan dates back such bowl to the centuries of early iron and middle iron, but mentions that there are also earlier examples from Trialeti, which according to B.A. Kuftin, belong to late bronze.

We suppose that the bowl is made of tin. The length of the preserved segments of the bronze belt is about 60 cm, the width of the whole fragment is 19.5 cm. The belt consists of 11 bands.

¹ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա., Հին Շիրակավան (1977-1981թթ. պեղումների արդյունքները), Եր., 2002, նկ. 13-14:

Արմինե ԳԱԲՐԻԵԼՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: arminegabriel@mail.ru

**ԱՐՑԱՆԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ
ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ**

Արցախի Տիգրանակերտը գտնվում է ԼՂՀ Ասկերանի շրջանում, Խաչենագետի աջ ափին վեր խոյացող Վանքասար լեռան հարավարևելյան ներքնալանջին և այդ լանջին կից գոգավորությունում, Արքայական աղբյուրների հարևանությամբ: Հուշարձանի պեղումներով ձեռք են բերվել մեծ քանակությամբ նյութեր, որոնց ուսումնասիրությունը հույժ կարևոր է ոչ միայն Արցախի, այլև անտիկ Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար: Շուրջ 10 տարի տևած պեղումների ընթացքում հայտնաբերված այս նյութի մի զգալի մասը կազմում է անտիկ խեցեղենը, որն աչքի է զարնում ինչպես ձևերի առատությամբ, այնպես էլ գեղարվեստական հարդարանքի բազմազանությամբ: Բավարար քանակությամբ ներկայացված նյութը հնարավորություն է ընձեռում կատարելու անտիկ խեցեղենի հարդարանքի դասակարգում:

Նյութի քննությունը ցույց տվեց, որ անոթների գեղարվեստական հարդարանքն իրականացվել է գունազարդման, փայլեցման, փորագրման, դրոշմազարդման, ծեփման և վերադրման եղանակներով՝ գունազարդման եղանակի ակնհայտ գերակշռմամբ:

Անտիկ ժամանակաշրջանում Հայաստանում և Արցախում խեցեղենը գունազարդելու ավանդույթը հասնում է իր ծաղկման և զարգացման գագաթնակետին: Տիգրանակերտի անտիկ խեցեղենը զարմացնում է իր զարդամոտիվների բազմազանությամբ՝ ներկայացնելով նշված ժամանակաշրջանում խեցեղենի գունազարդման գործընթացի վերջին և ամենաճաղկուն փուլը:

Պատկերազարդման մոտիվները բազմազան են. դրանք պայմանականորեն կարելի է բաժանել չորս մեծ խմբերի.

1. երկրաչափական,

2. բուսական,
3. աստրալ նշաններ,
4. ֆիզուրատիվ պատկերներ և տեսարաններ:

Գրեթե բոլոր մոտիվները, որպես կանոն, ներառված են անոթը հարդարող գոտիների մեջ: Ընդ որում, յուրաքանչյուր գոտի հարդարվում է միայն մեկ մոտիվով: Արդյունքում անոթը ներկայանում է տարատեսակ մոտիվներ ներառող 2-5 գոտիներից կազմված հորինվածքով:

Armine GABRIELYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: arminegabriel@mail.ru

A CLASSIFICATION ATTEMPT OF ANTIQUE POTTERY ORNAMENTATION OF TIGRANAKERT, ARTSAKH

Tigranakert in Artsakh is situated in Askeran region in NKR, on the south-eastern slope of Vankasar mount, on the right bank of Khachenaget River and in a depression, adjacent to the slope, near Royal Springs. The excavations revealed numerous materials, the study of which is important for the research of both Artsakh, and also for the material culture of Hellenistic Armenia.

A considerable part of the materials excavated during a ten year period contains Hellenistic ceramics, noteworthy both for its various forms and its decoration diversity. The great amount of presented material allows for making classifications of the various ornaments of the Hellenistic ceramics.

The pottery analysis revealed that decoration of the vessels was applied by the means of painting, burnishing, incision, stamping, and application, with preference of the painting technique.

In the Hellenistic period in Armenia and Artsakh, the tradition of pottery ornamentation flourished and reached its culmination. The Hellenistic ceramics from Tigranakert are noteworthy for a diversity of ornamentation

motifs, representing the latest and the most prosperous phase of pottery decoration in that period.

The ornamental motif types are different and could be conditionally divided into four groups:

1. geometric
2. floral
3. astral signs
4. figurative depictions and scenes

Almost all of the motifs, as a rule, are enclosed in frames of the relief belts. Each belt is decorated with a single motif. As a result, the vessel surface represents a composition consisting of 2-5 belts, each enclosing various motifs.

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: smuseum@web.am

ՎԱՆԱԿԱՏԻՑ ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԻՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՑԹԸ (ըստ Մեծ Սեպասարի նյութերի)

Վաղբրոնզիդարյան մշակույթում գենքի տեսականու մեջ առանձնանում են վանակատից նետապլաքները: Մեծ Սեպասարի նյութերում, ի թիվս բազմաթիվ և տարատեսակ այլ գտածոների, կան նաև ձևով և պատրաստման տեխնիկայով համաժամանակյա հնավայրերից հայտնի օրինակները կրկնող վանակատից նետապլաքներ (տախտ. 1):

Մեծ Սեպասարում նշված նետապլաքներ հայտնաբերվել են նաև զոհաբերությունների նյութական մնացորդների հետ. զոհաբերված ցլի գանգի կողքին (տախտ. 1, նկ. 3), նաև՝ ցլի եղջյուրի և նվիրաբերված – զոհաբերված իրերի հետ (տախտ. 1, նկ. 4, 5, 7, 8):

Ծիսակարգերից պահպանված նյութական մնացորդները հնագիտական փաստեր են, որոնք ոչ միայն իրերի կիրառական նշանակու-

թյունը և տնտեսական կյանքի պատկերն են ներկայացնում, այլ նաև՝ ծիսական որոշակի դերն ու գործառույթը:

Զոհաբերության ծեսում նետապլաքների դերի մեկնաբանման նպատակով հնագիտական նյութին զուգադրվում են ինչ-որ չափով գրավոր պատմությունը փոխարինող ազգագրական, բանահյուսական և լեզվաբանական տվյալները:

Հնդեվրոպական դիցաբանության մեջ վիշապամարտիկի զենքը քարն է: Լեռան (սար) կամ ժայռի վրա գտնվող վիշապամարտիկը քարե զենքով (ամպրոպ-լեռ, ամպրոպ-քար) կործանում է լեռան տակ կամ լեռան վրա գտնվող իր հակառակորդին: Հին հունական դիցաբանության մեջ քարերը համարվում էին մարդկության նախամայր երկրի ոսկորներ: *Akmon*-ը հին հունարենում ունի *երկնաքար*, *կայծակ*, *զնդան* իմաստները և համադրվում է սանսկրիտերեն *asman*-ին՝ *քար*, *կայծակ*, *երկինք*:

Վիշապամարտիկի զենքը նաև կայծակն է: Երկրի ընդերքից ելած Տիփոնի հետ պայքարում Զևսի ձեռքում փայլատակում և հարյուրներով ցած էին թափվում բոցեղեն կայծակները: Կայծակն ընկալվել է որպես երկնքից նետված օձ: Ահրիմանը Ահուրամազդայի հետ անհաջող մարտից հետո վիշապի տեսքով երկնքից գետին է նետվում:


Քարից նետապլաքները ժողովորդն անվանում է ամպրոպային սլաքներ: Հայոց հավատալիքներում «...կեծակն Աստծո ձեռքի թուրն է (գավազանը), որով հետապնդում և ոչնչացնում են քաշկերին: Կայծակն ամպրոպի աստծո հրեղեն նետն է: Կայծակից խոցված մարդը նրհատակ (նահատակ)» էր համարվում, այսինքն՝ ամպրոպի աստծու զոհ:

Ռիզվեդայում Ինդրայի՝ աստվածներից գլխավորի, որոտի և կայծակի աստծու զենքը վաջրան է (ալմաստ, կայծակ, ամպրոպային քար, մահակ, մատ (որոտի), որով խոցում է իր բազմաթիվ թշնամիներին: Ինդրային կոչում էին Վաջրին, Վաջրաբիքիթ (վաջրա կրող, տանող): Վաջրան ուներ չորս կամ հարյուր անկյուն, հազար ատամ, հաճախ այն ատամնավոր սկավառակ է կամ խաչակերպ և նույնացվում էր արևի հետ (Ինդրայի ձեռքերում վաջրան ինչպես արևը երկնքում): Վաջրան (վեդ. *vajra* ա-վեստ. *vazra*) նաև իրանական Միթրայի զենքն է, քրմերի յուրօրինակ գավազանը: Վանակատից նետապլաքը, վաջրան և ճառագայթավոր սկավառակը

ամպրոպային աստվածության խորհրդանիշ կայծակի մարմնավորում են, ամպրոպի աստծու զենք:

Հավատալիքների և ծեսերի համադրումները ցույց են տալիս, որ ծիսակարգից պահպանված նյութական մնացորդների հետ գտնված վանակատից նրբին նետասլաքները խորհրդանշել են ամպրոպի աստվածությունը: Նետասլաքով զոհի կենդանու վզին նշան է դրվել՝ շեշտելու գոհաբերվող կենդանու պատկանելն աստվածությանը:

Տախտակ 1



Larisa EGANYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: smuseum@web.am

ARROWS MADE FROM OBSIDIAN AND THEIR RITUAL FUNCTION /According to the Materials of Sepasar/

Among different types of weapons of early bronze age culture we distinguish obsidian arrows. In the materials of Mets Sepasar, among numerous and various findings, there are repeated arrows made from obsidian from synchronic old places.

Here the arrows have been discovered with the material remnants of sacrifice: close to the skull of a sacrificed bull, also horns of a bull and sacrificed things.

The material remnants preserved from ritual ceremonies are archaeological facts which not only present the practical importance of things and the picture of economic life, but also some role and function of a ritual is presented.

The synthesis of doctrines and rites show that the subtile arrows discovered with the material remnants preserved from the ceremony have symbolized the storm deity.

On the neck of the victim with arrows a mark has been put for emphasizing the sacrificed animal's belonging to the deity.

Բենիկ ԵՐԻՑՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: akhudaverdyan@mail.ru

**ՆՈՐԱԳԱՎԹԻ ԲԱՑՕԹՅԱ ԿԱՅԱՆԻ
ՕԼԴՈՒՎԱՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ**

Հնավայրը գտնվում է Արարատյան դաշտի տարածքում՝ Երևան քաղաքի հարավային ծայրամասի Աերացիա թաղամասի և Նորագավիթ գյուղի միջև: Հայտնաբերվել է 1996թ. Բ. Երիցյանի կողմից, ուսումնասիրությունները շարունակվել են 1997-1998թթ.: Տեղանքը հարթ, քարքարոտ, շուրջ 60 քմ տարածք է: Վերջինիս մակերեսից ու հետախուզական երկու (1x1x1մ) փոսորակների կավ-ավազային ու գետաքարային խաթարված հատվածներից հավաքվել է 344 հնագիտական գտածո: Քարե գործիքների համալիրն (323 իր) այստեղ ուղեկցված է կենդանաբանական (11), մարդաբանական (4) ոսկորային մնացորդներով ու խեցեղենի (6) բեկորներով: Քարե իրերի պատրաստման համար հումք են հանդիսացել մոտ 12 տարբեր սեռի ու տեսակի, ձևի ու որակի հրաբխանստվածքային լեռնային ապարներ ու կոնգլոմերատներ (վանակատ, բազալտ, հասպիս, կվարց, ռիոլիտ, կրաքար և այլն): Քարե իրերի ուսումնասիրությունից պարզվել է, որ համալիրը կազմված է երեք տարբեր (գետաքարային, վանակատե իրեր և վանակատե ցլեպների մանր հատույթներ) հավաքածուներից: Դրանցից առաջինը ներկայացնում է խոշոր և միջին չափերի (5-10 սմ) օլոսվայան մշակույթին հատուկ գետաքարային իրեր (չոպպեր, կլիվեր, դրեր քերիչներ և այլն): Կան նաև որոշակի խոշոր ու հաստ կլեկտոնյան ցլեպներ ու նրանց կտորտանքներ, սակայն գրեթե անմշակ վիճակում և արտադրական թափոնի տեսքով:

Վանակատե իրերի հավաքածուն ներկայացնում է հումքի ոչ մեծ կտորներից, երկկողմանի ու միակողմանի բեկոտված տիպաբանորեն անորոշ իրեր և մի քանի շեյան տիպի ձեռքի հատիչներ: Քիչ են նաև անմշակ ցլեպները, որոնցից մեծ մասը նույնպես արտադրական թափոն է: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում վանակատե ցլեպների ու շեղբերի լայնակի հատված միկրոմասերից կազմված հավաքածուն:

Վերջիններս որոշ չափով հիշեցնում են մեզոլիթյան ձևերը, սակայն երկրաչափական միկրոլիթներ չեն: Նրանք իրենց հատման ու մասնակի հարդարման եղանակներով ավելի շատ նման են Նոր Նորք 6-ի ու Նուռնուսի արխեոլիթյան միկրո հավաքածուներին: Վանակատի նշված երկու հավաքածուների առկայությանը և քարի մեխանիկական հղկման ու ձևավորման եղանակով պատրաստված առարկաների բացակայությունը բնորոշում են Նորագավթի օլոուվայան մշակույթի յուրահատկությունը և նրա տարբերությունը այդ մշակույթի մյուս դրսևորումներից:

Ելնելով Նորագավթի քարե համալիրի մասնավոր ու ընդհանուր չափորոշիչներից՝ կարելի է ևս մեկ անգամ համոզվել, որ մենք գործ ունենք իրականում ոչ թե ստորին պալեոլիթի ինդուստրիալ մշակույթի, այլ էթնոսպեցիֆիկ բնույթի, սինկրետիկ էությանբ, անհատի կողմից պատմական ժամանակներում պատրաստված փորձառական արտադրանքի հետ: Այդ են վկայում նաև քարի գործիքներին մշտապես ուղեկցող հնագիտական և բնագիտական այլ կարգի նյութերը: Տվյալ պարագայում դրանք ներկայացված են ընտանի կենդանիների ու թռչունների, ժամանակակից մարդու ոսկորների մնացորդներով¹ և միջնադարյան խեցեղենի բեկորներով: Ուստի, նման օլոուվայան համալիրները մեր կողմից դասվում են Հայաստանի քարի դարի մշակույթների պարբերացման համակարգում վերջին պարբերաշրջանը ներկայացնող պսևդոլիթների շարքին:

Տվյալ պարագայում, ի դեմս Նորագավթի նյութերի, մենք գործ ունենք մի յուրահատուկ քարե գործիքների համալիրի հետ, որը ներկայացնում է արխեոլիթներից (շել) պսևդոլիթներին (օլոուվայ) անցման շրջանը և որպես այդ երկու պարբերաշրջանները կապող օղակ, ունի կարևոր նշանակություն դրանց հարաբերական ժամանակն ու հաջորդակա-
նությունը հիմնավորելու առումով:

¹ Մարդաբանական նյութերը (վզի ողի, աղեղի հատված, ֆալանգ և արմունկի ոսկրի հատված) ուսումնասիրվել են Ա. Խուդավերդյանի կողմից, և դրանք բոլորն էլ ըստ մասնագետի, պատկանում են ժամանակակից մարդու ֆիզիկական տիպին:

Benik YERITSYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: akhudaverdyan@mail.ru

THE OLDOVAN CULTURE OF NORAGAVIT SITE

The study of Oldovan stone tool industry and accompanying artifacts revealed that this industry, like the other stone tools of that type, could not be ascribed to the Paleolithic or initial stages of Stone Age in Armenia. These are conditionally attributed to the Stone Age, but, in reality, are pseudolites, ethno-specific by their nature and syncretic by their essence, and refer to undated terminal period of the Stone Age in Armenia.

The main objective of this paper is to clarify the status and relative dating of the new variant of the Oldovan culture of Noragavit. The open-air site is situated in the southern side of Yerevan city region, between the Oldivan site Mushakan 1-3 and Shengavit Bronze Age settlement. The stone tools collected from the surface were accompanied by osteological material remains and ceramics fragments. The research revealed that these materials represent the new variant of the Oldovan culture. Noragavit complex differs from the other complexes of the Oldovan culture of Armenia by the following categories: presence of macro and micro archaeological obsidian object collections, lack of polished shapes and figures of stone, characteristic of other variants of the Oldovan, as well as presence of collections of micro objects of obsidian with edge retouch.

Above mentioned specifics allowed the author to conclude that this kind of historical-cultural manifestations of thinking in material expression could be neither Paleolithic nor even Neolithic. Their legal place and relative dating could be defined as the period of archaeolits (Acheulean- Abbevillian) and pseudolites (Oldovan). The Noragavit culture presents transition from Abbevillian to Oldovan and plays an important role as a connecting link between these two cultures.

Աղավնի ԺԱՄԿՈՉՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: galstyan-1966@mail.ru

**ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ (IX-X ԴԴ.) ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ
ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՄԲ**

IX դարի II կեսից Արաբական խալիֆության թուլացումով, տերության տարածքով մեկ առաջացան ամիրություններ, որոնցից նշանավոր էին Հայաստանում Սաջյանների (889-953), ապա Սալարյանների (941-966), Թահիրիդների՝ Կենտրոնական Ասիայում, Խորասանում (821-873), Բուվեհիդների (945-1055) Իրանի արևմտյան և հարավարևմտյան մասերում Ռեյ, Բաղդադ և Իսպահան կենտրոններով, Սամանյաններինը Կենտրոնական Ասիայում և Իրանի հյուսիսային ու արևելյան կողմերում՝ Մամարդանդ և Բուխարա կենտրոններով:

Քաղաքական այս նոր միավորումները մշակեցին տնտեսական ու կառավարման նոր համակարգ, որն էապես տարբերվում էր նախորդից:

Տնտեսական առաջին տրանսֆորմացիան քաղաքների դինամիկ առաջադիմությունն էր, որ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համահունչ ներդաշնակությամբ, արհեստների ինտենսիվ զարգացման արդյունք էր: Հավելենք, որ ամիրությունները տիրապետում էին քաղաքների ու առևտրական ճանապարհների լծակներին, և մարդկային գործոնի տեղաշարժերով ազդեցության և փոխազդեցության գործառույթով կատարելագործվում էին արհեստները, ծավալվում՝ առևտրական բազմազան գործարքները: Արհեստներից խեցեգործության բնագավառը՝ իբրև բնակչության կենցաղային առօրյա պահանջարկի առարկա, իր մասնաճյուղերով արձանագրեց զարգացման մի նոր փուլ, ըստ որում, ջնարակած խեցեղենի արտադրության կրկին հայտնվելը երևույթ չէր, որովհետև այն ուներ հնամենի ծագում և արմատներով հասնում էր Ք. Ա. I հազարամյակի խորքերը մինչև Ք. Հ. V դարը: Հայաստանի հնագիտական հուշարձաններում այդ տիպի խեցեղենը հայտնա-

բերված է Թեյշեբանիում, Լոռի Բերդում, Մեծամորում, Օշականում, անտիկ ու վաղմիջնադարյան հուշարձաններում: Մինչև IX դարն այդ որակի խեցեղենի արտադրության դադարը առայժմ չունի իր բացատրությունը: Գործառնության նոր փուլը՝ տեխնոլոգիական առաջատար ձեռքբերումներով, ջնարակի գործածության բազմերանգությամբ ու հարդատարրերի գանազան լուծումներով, սկսվեց IX դարի II կեսից:

Սույն հաղորդումը նվիրված է այդ որակի խեցեղենի արտադրանքի կազմակերպման, նրա կենտրոնների արժևորման հիմնախնդիրներին և իրականացված է Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի հուշարձանների պեղումներից գտնված նյութերի հենքով: Ջնարակած խեցեղենի ժամանակագրական սահմանները իրարամերժ են ու գուրկ հիմնավորումից, որովհետև շատերն այն հասցնում են VIII դարի վերջերը:

Դվինի պեղումների շնորհիվ IX դարի II կեսով թվագրումն ունի վստահելի կովաններ, քանի որ նյութը հիմնականում հայտնաբերված է 893 թվականի երկրաշարժին հաջորդած մշակութային շերտերում, իսկ միջնաբերդում XII-XIII դդ. հետևող շինարարական կոմպլեքսներում:

Վերջին տասնամյակում Արցախի Տիգրանակերտի պեղումներն ի հայտ բերեցին IX-X դարերի ջնարակած խեցեղենի հարուստ հավաքածուներ՝ բացահայտելով Կովկասում այդ դարաշրջաններում գործող ևս մի նոր կենտրոնի գոյությունը, որը սերտորեն համագործակցել է ինչպես Օրին-Կալայի, այնպես էլ Հայաստանի արտադրական կենտրոնների հետ՝ չբացառելով տեղի ճաշակի ընկալման անհրաժեշտությունը:

Այսպիսով, IX-X դարերում ջնարակած խեցեղենի արտադրությունը զարգացավ տարածաշրջանի մոտակա ու հեռակա գրեթե բոլոր երկրներում տեխնոլոգիական ու ջնարակի գուներանգների ընտրության, ինչպես նաև արտաքին ձևաստեղծման ընդհանրությամբ:

Տարբերություններն ակնհայտ են հարդատարրերի հորինվածքների մշակման մոտեցումներում, որ պայմանավորված էր յուրաքանչյուր երկրի արհեստավորի ստեղծագործական մտահղացման մակարդակի դրսևորումով:

Ջնարակած խեցեղենի առատությունը պեղված բոլոր հուշարձաններում վկայում է բնակչության և շուկայական պահանջարկի բավարարման անհրաժեշտությունը, և պատահական չէ այն մտածողությունը (Ա. Յակոբսոն), որ այդ խեցեղենը պիտի դիտարկել իբրև կիրառական դեկորատիվ արվեստի առարկա՝ կոչված բավարարելու մարդկանց ոչ միայն առտնին, այլև գեղագիտական պահանջները:

Aghavni ZHAMKOCHYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: galstyan-1966@mail.ru

THE ESTIMATION OF MEDIEVAL GLAZED POTTERY CENTRES (IX-X CENTURES) BY HISTORICAL COMPARISION METHODS

In the II half of the IX century the Arab Caliphate became weak and on its territory new administrative unions – Emirates came into existence.

At the same time the settlements of urban type developed into large cities where crafts and trade rapidly improved. The ceramic craft was one of the most developed craftsmanship especially the glazed pottery.

Dvin-one of the largest cities of the region in means of communications and craft activities with Iran, Iraq, Central Asia and South Caucasus ceramic centres had immediate contacts. The last ten year excavations carried out in Tikranakert of Artsakh brought into light a great amount of medieval glazed ceramics of IX-X centuries. The investigation testified that in IX-X centuries the city was also a noteworthy glazed pottery centre.

The aim of the report is to show the universality of all the above mentioned countries production centers and to outline the specific features which indicate the local traditions of each country.

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: smuseum.web.am

ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ՝ ԸՍՏ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Գրականության մեջ պաշտպանական գործառույթ ունեցող ամրությունները ունեն տարբեր անվանումներ՝ *ամրոց, բերդ, դղյակ, աշտարակ, ամրացված դիտակետ* և այլն, որոնք օգտագործվում են ընդհանուր իմաստով: Դեռևս կատարված չէ պաշտպանական կառույցների տիպաբանական վերլուծություն և դրան համապատասխան դասակարգում:

Պաշտպանական կառույցների տարբեր անվանումները հուշում են, որ դրանք պետք է ունենային գործառական տարբեր նշանակություն, և ըստ այդմ՝ տարբեր կառուցվածք ու չափեր: Առ այսօր բացահայտված չեն տարբեր անվանումներով ու գործառույթներով ամրությունների տեսակների առանձնահատկությունները, բնորոշման համապատասխանությունը գործառույթին և ըստ այդմ՝ ճշգրիտ եզրույթների կիրառումը:

Հայկական վաղմիջնադարյան պատմագրության մեջ պատերազմական գործողությունների, հարձակողական և պաշտպանական մարտերի տեսարանների մանրամասն նկարագրությամբ ամենահարուստը թերևս Փավստոս Բուզանդի ու Հովհան Մամիկոնյանի երկերն են: Այս հեղինակների անպաճույճ լեզուն, ժողովրդական լեզվամտածողությանը հավատարմությունը, իրերի և անցքերի անբռնազբոս, ուղղակի ընկալման և փոխանցման պարագան զգալի նյութ են տալիս խնդրո առարկա եզրույթների ճիշտ բացահայտման և տիպաբանական բնորոշման համար: Պաշտպանական ամրություններից ամենատարածվածներն ամրոցներն են: Սակայն *ամրոց* եզրույթը, որի արմատը *ամուր* բառն է, ունի շատ լայն կիրառություն և շատ դեպքերում գործածվում է ոչ միայն կառույցի, այլև անմատչելի, դժվարամուտ տարածքների և տեղանքի բնութագրման համար: Որպես պաշտպանական կառույցներ, մեր կարծիքով, ամրոցներն ունեցել են տեղական՝ պարսպագուրկ, փոքր բնակավայրերի

բնակչության պաշտպանության գործառույթ: Նման փոքր ամբոց է նկարագրում Հովհան Մամիկոնյանը Կուառու գյուղում, որտեղ հյուսիսականների անակնկալ հարձակման ժամանակ պատսպարվում ու դիմադրում են բնակիչները: Նման ամբոց է Աղվորիկի վաղմիջնադարյան ամբոցը, որը գտնվում է մոտ 60 կացարաններից կազմված բնակավայրի կենտրոնական, բարձրադիր մասում: Ոսումնասիրելով աղբյուրները՝ գալիս ենք այն եզրակացության, որ ամբոց անվանվող պաշտպանական կառույցները բաժանվում են 2 հիմնական խմբի՝

1. բնակավայրից դուրս, բայց մոտ գտնվող փոքր, առանց մշտական կայագործի ամրաշինական կառույցներ,
2. նմանատիպ, բայց բնակավայրի մեջ գտնվող ամրաշինական կառույցներ:

Բոլորովին այլ գործառություն ունեին *բերդ* անվանումով ամրությունները: Դրանք կառուցվում էին արքունիքի կամ խոշոր նախարարների կողմից և պատկանում էին նրանց: Բերդերի հիմնական մասը գտնվում էր անմատչելի տեղերում և ուներ մշտական կայագործ՝ բերդապահներ: Դրանք ծառայում էին որպես ռազմական խոշոր հենակետեր, գանձարաններ, զենքի և սննդամթերքի պահեստներ, հսկում էին ռազմավարական ճանապարհները: Շատ դեպքերում ծառայում էին որպես բանտ: Պարսպապատ քաղաքներում դեռևս անտիկ ժամանակաշրջանից կային նաև միջնաբերդեր, որոնք ունեին նույն գործառույթները:

Համանման գործառույթ ունեին նաև նախարարական բերդերը, այն տարբերությամբ, որ դրանք բնակեցված էին, և այստեղ մշտապես ապրում էր նախարարի ընտանիքը: Այս տարբերությունը թույլ է տալիս նախարարական բերդերը որակել որպես *դոյակներ*:

Բերդերի՝ որպես բանտերի գործառույթը լայն տարածում է ունեցել: Սոսկ բանտային գործառույթ ուներ, օրինակ, հանրահայտ Անհուշ բերդը, Գրիգոր Լուսավորիչը պահվում էր Արտաշատի բերդում, Շապուհն ըմբոստ նախարարների կանանց պահելու համար հրամայում է կառուցել բերդեր: Միայն մեկ դեպքում՝ Հովհան Մամիկոնյանի մոտ մենք հանդիպում ենք *բանտատուն* արտահայտությանը, որը հուշում է կալանավորված անձանց պահելու համար հատուկ տան գոյության մասին:

Բերդերի և ամրոցների նկարագրությունների մեջ հաճախ հանդիպում է *առապար* արտահայտությունը, որը նշանակում է քարքարուտ: Մեր կարծիքով, առապարը բերդի կամ ամրոցի պարսպից 25-30մ հեռավորությամբ խոշոր քարերի մի քանի անկանոն շարքերից կազմված շղթա է, որը կոչված է արագորեն գրոհող զորքի շարժումը մի պահ կասեցնելու կամ արագությունը կոտրելու համար: Նման օրինակ մենք ունենք Ագատանի մ.թ.ա. 2-1-ին հազարամյակի ամրոցում: Առաջին հայացքից թվում է, որ վայրկյաններ տևող այդ կասեցումը կամ վազքի արագության դանդաղումը չի կարող էական նշանակություն ունենալ, ու նման կառույցը պաշտպանական առումով անիմաստ է: Սակայն մենք չպետք է մոռանանք պաշտպանվող կողմից արդյունավետ զենքերից մեկի՝ պարսատիկի մասին, որը հայերն օգտագործել են հնագույն ժամանակներից: Այն անհրաժեշտ քարերի առատության պայմաններում հատուկ ծախս ու հմտություն չպահանջող ամենաարդյունավետ զենքերից է: Պատահական չէ, որ, օրինակ, Ադվորիկի վաղմիջնադարյան ամրոցի լայն պարիսպն ամբողջովին լցված է բռնցքաչափ և մի փոքր ավելի մեծ քարերով: 25-30մ հեռավորությունը նաև խիստ նպաստակահարմար տարածություն է կանգ առած կամ դանդաղ ընթացող թիրախը դիպուկ նետահարելու համար:

Hamazasp KHACHATRYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: smuseum.web.am

The comprehensive study of the material ascertains that the burial complex at Spandaryan has many similarities to the Iron Age archaeological complexes of Armenia and the north-western part of the Iranian Plateau. It may be dated to the 11th – 9th cc BC.

**Andreas FURTWÄENGLER, Dorothea MAUERMANN,
Tobias NEUSER¹ (Germany)
Hamazasp KHACHATRYAN², Larisa YEGANYAN²,
Levon PETROSYAN³ (Armenia),**

¹ University of Halle-Wittenberg

² Shirak Regional museum (Gyumri)

³ Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: andreas.furtwaengler@altertum.uni-halle.de, smuseum@web.am,

AZATAN'S SITE

The archaeological site near the modern village Azatan , which lies ca. 5 km south of Gyumri, has been intensively explored since 2010. Before that, several trenches were conducted at the site since the 1980s onwards under the direction of the Archaeological Museum of Gyumri. The site of Azatan consists mainly of a settlement and its necropolis dating roughly from the LBA III to the Iron III period (c. 1300 BC-until hellenistic time). The settlement is located on the northern slope of a small long hill of around 5 km length in east-west direction and is arranged on three smaller hills divided by a former river channel, running approximately in north-south direction. The beginning of the occupation of the site near Azatan can roughly be dated to the transition between the LBA III (1300-1150 BC) and the Iron IA period (1150-1000 BC). This date is indicated by scattered pottery over the site and several tombs dating to this period, even though substantial settlement layers of this period have not

been excavated until now, probably due to the latter occupation of the site. From the following periods Iron IB to Iron II (c. 1000-600 BC) substantial remains of the settlement and the surrounding necropolis could be excavated. During this period or even earlier during the preceding period the eastern hill of the settlement was fortified by a cyclopean projecting wall filled with smaller stones, encircling an area of roughly 100 meters in north-south direction and 50 meters in east-west direction. The layout plan of the interior of the fortified area remains until now unclear, due to disturbances by the later construction of several storage circuits in the conducted trench. Contemporaneously, several dwelling units were situated on the eastern slope of the western hill. On aerial photos several relative equally sized rectangular dwelling units can be recognized, consisting of an outer wall, encompassing the different units and terracing the sloping terrain, and a central house unit. Furthermore two circular stone structures can be recognized that probably served the keeping of animals. The preliminary results of an excavated house in 2015 show a relative large building of three phases. The second phase, corresponding roughly to the Iron IB to Iron II period consists of a rectangular slightly round stone wall dug into the ground and a rising rammed earth wall. Finds suggest the preparation of food (bread, butter) and the production of textiles. Parts of a similar house, south of this unit, excavated during the 1990's, contained several round grain silos and plates for preparing bread. From this or the former period also two circular structures, probably linked to cultic functions, were excavated on the southern hill of the settlement. The eastern one (quadrant T20) consists of a semicircular outer single rowed wall with a length of c. 15 meters in east-west direction and a width of c. 13 meters with several smaller circular walls inside. Cattle bones and the traces of fire inside the circular structures as well as a large number of fragmented bowls and grain rubbers just outside in the north of the outer wall suggest the preparation of food inside the structure and the following cleaning of it. Small pieces of costumes, as beads and the fragment of a belt-buckle, a single arrow head, as well as the proximity to contemporaneous graves may indicate a function of the structure in the framework of the laying out of the dead. The second structure consists of a circular well-constructed single row

of stones with a diameter of around 24 meters. Several steles of a height up to 1,20 meters were erected on the circular wall, partly corresponding to the axes of the solstices and the equinox. Because of this astronomic orientation and the careful construction of the structure, a cultic function seems likely. The contemporaneous tombs of this settlement consist on the one hand of cromlechs, so circular stone concentrations above a grave-pit and on the other hand of chambers vertically dug into the slopes of the river channel with an entrance, locked with a row of stones. The tombs contain mostly single burials in contracted position, while the bones were displaced by partly reuses. The grave goods are quite homogeneous and consist of a number of bowls and jars. Additionally Sevan-style daggers and adornments as beads, small bronze appliquéés, and temple rings were found in the graves. A singular burial was excavated in 2013 (quadrant S11) on the western slope of the southern hill close to the old river channel. The disturbed tomb consists of a rock-cut chamber, locked up with a row of stones. It contained the rests of a buried person in contracted position, a large jar with a flaring rim, resembling shapes of the Lchaseh-Metsamor 5 assemblages of the Iron IB period. The tomb contained a large number of bronze jewellery, as appliquéés, small bells and a chain. The settlement seems to be abandonment somewhere during the Iron II period (800-600 BC) and reoccupied during Iron IIIa (600-300 BC). During this period large parts of the former settlement were reoccupied but also new building were erected on the northern slope of the southern hill as well as on an exposed plateau north of the former settlement new. On the northern plateau in the 1980s and in 2011 one house and the parts of three other houses of this settlement were excavated. These were semi-subterranean dwellings, known commonly as type Hasarashen, of one main room (c. 4 x 4 meters) and four column-bases. Several storage pits, dug into the earth and constructed with stones, with a depth of 2 meters and a length and width of 1 meter were discovered in these houses. During this period the whole course of the river in the settlement, so over a length of more than 400 meters, was reconstructed. To both sides of the course a stone wall with a high up to 1 meter was built to canalize the water. After this period the settlement seems sporadically be

settled during the early Iron IV period, during which large scale levelling on the fortified eastern hill took place. Architectonical remains of this period are until now absent.

**Անդրեաս Ֆուրտվաենգլեր, Դորոթեա ՄԱՈՒԵՐՄԱՆ,
Թորիաս Նեոխեյսեր (Գերմանիա)
Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ², Լարիսա ԵԳԱՆՅԱՆ,
Լևոն ՊԵՏՐՈՍՅԱՆ³ (Հայաստան)**

¹ Հալլեի Վիթենբերգ համալսարան (Գերմանիա)

² Շիրակի երկրագիտական թանգարան (Գյումրի)

³ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: andreas.furtwaengler@altertum.uni-halle.de, smuseum@web.am,

ԱԶԱՏԱՆԻ ՀՆԱՎԱՅՐԸ

Ազատանի հնագիտական հուշարձանը գտնվում է Գյումրուց 5կմ հեռավորության վրա և հայ-գերմանական արշավախմբի կողմից ուսումնասիրվում է 2010 թվականից:

Այն կազմված է ամրոցից, բնակավայրից և դամբարանադաշտից: Բնակավայրը գտնվում է փոքր երկար բլրի հարավային լանջին, իսկ հարեվան գերիշխող բարձունքին տեղադրված է ամրոցը:

Հուշարձանը գոյատևել է ուշ բրոնզի 3-րդ փուլից մինչև հելլենիստական ժամանակաշրջանը: Այն հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկել մ.թ.ա. 13-րդից մինչև հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթի, ճարտարապետության, շինարվեստի, տնտեսական կյանքի, դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի ու ծեսերի փոփոխություններն ու զարգացումը: Ուսումնասիրված բնակելի կառույցները կիսազետնավոր են, ունեն ուղղանկյունաձև հատակագիծ և կառուցված են արհեստական դարավանդների վրա: Հայտնաբերված մեծաքանակ խեցեղենը, աշխատանքային գործիքները, հացահատիկի ամբարները, խոշոր և մանր եղջրավոր ընտանի կենդանիների բազմաթիվ

ուսկորները խոսում են տնտեսական գործունեության և կենցաղավարման մասին:

Ամրոցի և բնակավայրի տարբեր շերտերից հայտնաբերված նյութերի բաղդատումը տարբեր ժամանակաշրջանների 3 դամբարանադաշտերից հայտնաբերված նյութերի հետ նոր լույս է սփռում անցումային ժամանակահատվածների նյութական մշակույթում տեղի ունեցած էական փոփոխությունների վրա:

Նույն բնակավայրի մ.թ.ա. 13-9-րդ դարերին վերաբերող 1-ին և 2-րդ դամբարանադաշտերում փաստված կրոնլեիներով պարփակված, խոշոր, անկանոն քարերով ծածկված հիմնահողային թաղումներին մ.թ.ա. 8-6-րդ դարերի 3-րդ դամբարանադաշտում փոխարինելու են գալիս խոշոր քարարկղերն ու սալարկղերը: Լայն երկաթի ժամանակաշրջանին են վերաբերում նաև կատակոմբային և ժայռափոր դամբարանները:

Նույն բնակավայրի դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի ու ծեսերի փոփոխությունները հնարավորություն են տալիս դիտարկելու կրոնաձիսական իրողությունների և հասարակական ու տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքը:

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
HISTORY, DEMOGRAPHICS

Սուսաննա ԱԴԱՄՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: susannaiae@mail.ru

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՄԿՈՂՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ԱՆՏԻՊ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արագածոտնի մարզի հնագույն բնակավայրերից է Օշականը, որը հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով (Ք.ա. II հազարամյակից մինչև ուշ միջնադար): Սակայն պատմագրության մեջ Օշական անունը կապված է հայ մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, որն Օշականում հիմնել է դպրոց և իր մահից հետո ամփոփվել այստեղ: 443թ. հայոց իշխան Վահան Ամատունու նախաձեռնությամբ Սուրբ Մաշտոցի դամբարանի վրա կառուցվում է գմբեթավոր եկեղեցի, որը չի պահպանվել: Հետագա դարերում եկեղեցին նորոգվել ու վերափոխվել է, իսկ այսօր Մեծ ուսուցչի վկայարանը գտնվում է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու ավագ խորանի ներքնահարկում: XIX դարի կեսերին այս եկեղեցին կիսավեր էր. 1875-1879 թթ. Ամենայն հայոց Գևորգ Դ կաթողիկոսի (1866-1882) և Օշականի ազգաբնակչության նախաձեռնությամբ ոչ միայն հիմնանորոգվում է, այլև 1884թ. ավարտվում է եկեղեցու արևելյան մասում գտնվող զանգակատան կառուցումը և մարմարյա տապանաքար տեղադրվում Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա:

Օշականի միջնադարյան հուշարձանների, հատկապես՝ եկեղեցիների և վիմագրերի ուսումնասիրումն սկսվել է XIX դարից, որում կարևորվում են Հովհ. Շահխաթունյանցի, Ս. Ջալալյանցի, մեծավաստակ գիտնական Ղևոնդ Ալիշանի տեղագրությունները: Սակայն մեզ է հասել նաև Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի անտիպ մի ձեռագիր, որն անհայտ պատճառներով չի տպագրվել և մնացել է հեղինակի արխիվային ֆոնդերում:

Հայոց եկեղեցու մեծագործ հոգևորական, վիմագրագետ, տեղագիր-ճանապարհորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն (1833-1911) առանձնահատուկ տեղ ունի XIX դարի այն ուսումնասիրողների շարքում, որոնց շնորհիվ Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերից մեզ է փոխանցվել ավելի քան 700 վիմագիր: 1868-70թթ., ստանալով Երևանի փոխթեմակալի պաշտոնը, նա ձեռնամուխ է եղել Ս. Մաշտոց եկեղեցու շինարարությանը, կանգնեցրել է եկեղեցու կառուցման վկայագիրը, միաժամանակ ուսումնասիրել է կոթողները՝ ամփոփելով «Ստորագրություն Օշական գեղջ և նորաբաց դպրոցին յանուն Ս. Մեսրոպբայ թարգմանչին» ուսումնասիրության մեջ: Այս ձեռագրի շնորհիվ Օշականից մեզ է հասել 15 վիմագիր (մեկը եղել է խաչկալի վրա), որից վեցը չեն պահպանվել: Հողվածում դրանք ներկայացվել են հեղինակի վերծանությանը և համեմատվել են բնագրի հետ, որից հետո մեր կողմից կատարվել են մասնակի շտկումներ: «Ստորագրութիւնը» գրվել է մինչև Ս. Մաշտոց եկեղեցու հիմնանորոգումը, և եկեղեցու որմերին նախկինում եղած չորս վիմագրերը կա՛մ չեն պահպանվել, կա՛մ էլ տեսանելի չեն խորհրդային տարիներին եկեղեցու ներսում կատարված հարդարման պատճառով: Այդ պատճառով էլ կարևորում ենք այս ձեռագրի դերը և հույս հայտնում, որ մի օր այն կտպագրվի, իսկ վիմական արձանագրությունները նոր շունչ կստանան հայագետների կողմից:

Susanna ADAMYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: susannaiae@mail.ru

THE UNPUBLISHED STUDY OF ARCHBISHOP MESROP SMBATSYANTS

Oshakan is one of the oldest settlements of Aragatsotn region, which is famous for its architectural monuments (from BC II millennium until the Middle Ages). But in the historiography the name Oshakan is associated with Armenian great illuminator Mesrop Mashtots, who established a school and was buried there. In 443 with the initiative of Armenian trout Vahan Amatuni,

a domed church was built on the mausoleum of Saint Mashtots, which is not preserved. In the following centuries the church was renovated and transformed, and today the martyrium of the Great teacher is in the basement of the main altar of Saint Mesrop Mashtots church. In the middle ages of XIX century the church was partly destroyed. In 1875-1879 with the initiative of Holy Armenian Catholicos Gevorg IV (1866-1882) and the population of Oshakan was not only reconstructed, but also in 1884 was finished the construction of bell tower the church's eastern part and marble stone was placed on the grave of Mesrop Mashtots.

The study of Oshakan's medieval monuments, especially churches and lithography began in the XIX century, and here it is important the topography of Hovhannes Shakhhatunyants, Sargis Jalalyants and outstanding scientist Ghevond Alishan. However we got an unpublished manuscript of Archbishop Mesrop Smbatsyants, which had never been published because of unknown reasons and was remained in the author's archive fund.

Great priest of the Armenian Church, epigraphist, surveyor-explorer Archbishop Mesrop Smbatyants has a special place among the researchers of the XIX century, and thanks to him there are more than 700 lithographs reached to us various parts of Eastern Armenia. In 1868-70 getting the position of Vice Diocese, he started the construction of St. Mashtots church by installing the monument of the church, at the same time, explored the monuments. Thanks to this manuscript there are 15 lithographs reached us from Oshakan, six of which were not preserved. In the article they are introduced with the itemization of the author which were compared with the original, followed by our partial adjustments.

The unpublished study was written before the reconstruction of St. Mashtots church and the four lithographs which were on the walls are either not preserved or are not visible, because of the renovation during the Soviet Union.

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: karineal@mail.ru

***ԹՈՒՐԲԱԿԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՎԱՌՈՒՄ 1918-1921թթ.***

Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության առանցքը համարվող ժխտողականությունը խոր արմատներ ունի, որոնք ձգվում են ընդհուպ մինչև Հայոց Մեծ եղեռնի տարիները:¹

Թեև միջազգային գիտական շրջանակներում ժխտողականությունն ընկալվում է որպես ցեղասպանության վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից հետո արմատախիլ են արվում ազգի մշակույթը և պատմական հիշողությունը, Թուրքիայում այն դրսևորվել է ցեղասպանության իրականացման հետ միաժամանակ: Թուրք պետական գործիչները, գիտակցելով հայ ժողովրդի և մարդկության դեմ իրականացվելիք հրեշավոր արարքի հանցավորությունը, նախապես քայլեր են ձեռնարկել հետագայում պատասխանատվությունից խուսափելու համար: «Երբ թուրքական իշխանությունները հայերին տեղահանելու հրաման տվեցին, դա պարզապես մի ամբողջ ժողովրդի ոչնչացման հրաման էր, -գրել է ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն իր հուշերում,-բայց ինձ հետ բանակցությունների ժամանակ նրանք ջանք չգործադրեցին այդ փաստը հերքելու կամ թաքցնելու համար»:²

Մի ամբողջ ժողովրդի հայրենագրվելու և ոչնչացնելու հրեշավոր արարքի համար հատուցման ժամը հետաձգելու հույսով թուրքերն այսօր

¹ <http://armscoop.com/2012/01/>, *Ս. Ավետիսյան, Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության մեջ հասարակական կարծիք ձևավորողների դերը և գործունեության ժամանակակից մեթոդները:*

² <http://www.foreignpolicyjournal.com/2015/03/06/the-armenian-genocide-in-modern-turkeys-official-denialism-a-hundred-shades-of-denial/#.VPoJ5aGaw-d.facebook>, *Grigor Boyakhchyan*

ևս շարունակում են կառչել ժխտողականության արմատներին՝ կենսունակ դարձնելով դրանք ժամանակակից մեթոդներով:

Թուրքական ժխտողականության արմատները տարածվել են նաև Արևելյան Հայաստանում, որտեղ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում շարունակվող Հայոց ցեղասպանության քաղաքականությունը թուրքական իշխանություններն ստիպված են եղել իրականացնել ավելի գոյշ և խորամանկ քայլերով:

Թուրքական ժխտողականությունն յուրահատուկ դրսևորումներ է ունեցել 1918-1921թթ. Ալեքսանդրապոլի գավառի թուրքական ռազմակալման շրջանում, երբ թուրքերը, իրենց դիվանագիտական զինանոցի պաշարները հարստացնելով նոր խարդավանքերով, պատմական տարբեր իրավիճակներում, գրավել և համապատասխանաբար վեցական ամսով ռազմակալել են Ալեքսանդրապոլի գավառը (1918թ. մայիսի 15-ից դեկտեմբերի 4-ը և 1920թ. նոյեմբերի 7-ից 1921թ. ապրիլի 21-ը): Այդ ընթացքում նրանք, շարունակելով Հայոց ցեղասպանության քաղաքականությունը, ֆիզիկապես ոչնչացրել են եղեռնից մազապուրծ արևմտահայ գաղթականներին և արևելահայ բնակչության մի սովոր գանգված, ամբողջովին թալանել և տնտեսապես քայքայել Ալեքսանդրապոլի գավառը, ձեռնարկել ամեն քայլ իրենց հարևանությամբ առաջացած հայկական նորանկախ պետությանը զրկելու կենսունակ պետություն դառնալու հնարավորությունից:¹

Արևելյան Հայաստանում իրականացվող Հայոց ցեղասպանության քաղաքականության հիմքում դնելով այնպիսի ռազմավարություն, որը միայն 1960-ական թվականներին միջազգային հանրության բառապաշարում պետք է հայտնի դառնար «ժխտողականություն» անվանումով,² թուրքերը ջանացել են ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում, այլև հետա-

¹ Ալեքսանյան Կ., *Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, Եր., 2005, էջ 18-25:*

² http://www.armin.am/images/menus/2472/Ruben_Melqonyan.pdf, *Հայոց ցեղասպանության նկատմամբ թուրքական քաղաքականության որոշ առանձնահատկությունների շուրջ (1965 և 2015):*

գայում ևս խույս տալ միջազգային հանրության առջև պատասխանատվությունից և հատուցումից:

Ընդ որում ոչ միայն միջազգային հանրությունը, այլ նաև հայ հասարակությունը ցեղասպանությունից 100 տարի անց դժվարանում է տեսնել Ալեքսանդրապոլի գավառում թուրքական ժխտողականության արմատները՝ հաճախ տուրք տալով ժխտողականության տարածված մեթոդները մեկին՝ զոհերին մեղադրելուն: Հայ պատմագիտական մտքի և հասարակական գիտակցության մեջ առկա են ոչ այնքան Արևելյան Հայաստանում թուրքական ժխտողականության էության և Ալեքսանդրապոլի գավառի բնակչության ապրած ողբերգության բացահայտման, որքան նրանց մեղադրելու միտումները: Ավելին, նշված ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցած իրադարձություններին վերաբերող հարցերը ինչպես պատմագիտության, այնպես էլ հասարակական գիտակցության մեջ վերածվել են կարծրատիպերի: Մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառի բնակչությունը մեղադրվում է թուրքերին չդիմադրելու և նրանց հետ համագործակցելու համար: Մինչդեռ 1918-1921թթ. Ալեքսանդրապոլի գավառի թուրքական զինակալման շրջանում թուրք-հայկական հարաբերությունների հիմքում թուրքերի՝ պետականորեն մշակված ցեղասպանության քաղաքականությանը դիմակայող հայ բնակչության պայքարն էր ֆիզիկական գոյության համար:

Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921թթ. թուրքական ցեղասպան քաղաքականության ժխտողականության դրսևորումների ուսումնասիրությունը մի կողմից՝ ընկալելի է դարձնում այդ հարաբերությունների բնույթը, մյուս կողմից՝ տեսանելի դարձնում այն արմատները, որոնցից այսօր սնվում է թուրքական ժխտողականությունը, այն է՝ համապատասխանեցնել իրենց շահերը մեծ տերությունների շահերին, հանդես գալ հայերի շահերի պաշտպանության և ազատարարի դերում, մեղադրել հայերին մահմեդականների նկատմամբ իրականացրած բռնությունների մեջ, հակասություններ առաջացնել և պառակտել հայ հասարակությանը, զրկել նրան դիմադրական կարողություններից, 1915թ. կատարած ոճիրը թաքցնելու համար ոչնչացնել Արևելյան Հայաստանում ապաստանած, եղեռնից մազապուրծ արևմտահայ գաղթականությանը, ժողովրդական

դիվանագիտությամբ փորձել տեղի բնակչության վստահությունը շահել, ստեղծել տեղական իշխանության մարմիններ՝ իրենց գործողություններին օրինական տեսք տալու համար, հայերի բռնությունների ու թալանի քաղաքականությունն իրականացնել «մեղմ» և «օրինական» միջոցներով:¹ Միաժամանակ չխորշելով նրանց գաղտնի ոչնչացնելու ամենազարեկի մեթոդներից (նկուղներում, դաշտերում և սարերում սպանել, մարագներում և եկեղեցիներում այրել, ջրհորներում խեղդել)՝ վերջապես տնտեսապես քայքայել և ոչնչացնել արևելահայության ստվար մի զանգված, թուլացնել և գրեթե անհնար դարձնել հայոց պետականության կայացումը:

Karine ALEKSANYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: karineal@mail.ru

THE MANIFESTATION OF THE TURKISH DENIAL IN THE PROVINCE OF ALEXANDRAPOL IN 1918-1921

In the final stage of the World War I the Turkish authorities had to take more cautious and fraudulent steps against the Armenian genocide policy carrying on in Eastern Armenia. Turkish state figures, realizing the monstrous action towards the Armenian people and humanity, have taken steps to avoid the responsibility.

In the article we have presented the continuation of the Turkish massacre organizing policy in the province of Alexandrapol in 1918-1921 and revealed the roots of denial of Turkey's modern foreign policy. That is to say, to confirm their benefit in the interest of great countries, they appear in the role of Armenian's interest protection, to accuse the Armenian people of committing violence upon Moslems, to cause contradictions and disrupt the Armenian society, deprive him of resisting capacities as well as for hiding the massacre in 1915 to annihilate the rescued Western-Armenian emigration, by means of popular diplomacy to gain the benefit of local population, establish local authorities, to carry out the policy by "smooth" and "legal" means.

¹ Կ. Ալեքսանյան, *Տեղական կառույցների օգտագործման թուրքական քաղաքականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921թթ.*, ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2005, էջ 49-52:

Արկադի ԱԿՈՊՈՎ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: arkadone@mail.ru

**ՀԱՅՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

976թ. Բյուզանդիայում գահ բարձրացավ Մակեդոնական հարստության ականավոր ներկայացուցիչ Վասիլ II-ը (976-1025 թթ.), որի գահակալումը նշանավորվեց կայսրությանը նորանոր տարածքների միացմամբ: Իր դիվանագիտական հանճարի և ռազմավարական ճիշտ որոշումներ կայացնելու շնորհիվ նա կարողացավ Տայքի Դավիթ Կյուրապաղատին թույլ տալ գրավել կայսիկների ամիրայությունը ենթակա մի շարք հայկական տարածքներ, որոնք վերջինիս մահվանից հետո անցնելու էին Բյուզանդական կայսրությանը: 989թ. նա կարողացավ ստիպել Դավիթ Կյուրապաղատին, որ Տայքը ևս կտակի իրեն:

Բյուզանդիայի ակտիվությունն արևելյան ուղղությամբ ուղղակի բախվում էր Հայոց Բագրատունյաց թագավորության շահերին: Դավիթ Կյուրապաղատի մահից հետո Վասիլ II-ը շտապ եկավ Հայաստան, Վրաստանի թագավոր Բագրատ III-ին «շնորհեց» Դավիթ Կյուրապաղատի տիրությունների մի մասը «ցկյանս օգտագործման», իրեն ներկայացած հայ և վրացի իշխաններին «մեծարեց» տիտղոսներով: Դավիթ Կյուրապաղատի դաշնակից հայոց շահնշահ Գագիկ I-ը չներկայացավ Վասիլ II-ին՝ այն փոքրոգություն համարելով:

Տայքի կյուրապաղատության տիրությունների բռնազավթումը մեծ ազդեցություն ունեցավ Այսրկովկասի ճակատագրի վրա, քանի որ Դավիթ Կյուրապաղատի և Գագիկ I-ի դաշինքը միակ կենսունակ ուժն էր, որ կարող էր պայքարել Հարավարևմտյան Հայաստանի և Ատրպատականի մահմեդական ամիրայությունների դեմ, ինչպես նաև դիմագրավել Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությանը: Ավելին, Բյուզանդական կայսրության համար Հայաստանի նման ուժեղ հարևանի առկայությունն ավելորդ լարվածության առիթ էր, և Բյուզանդիան առաջին իսկ հարմար առիթն օգտագործելու էր՝ ձերբագատվելու համար տարածա-

շրջանում վտանգավոր մրցակցից: Սակայն քանի Հայոց Բագրատունյաց թագավորության դեկին էր շահնշահ Գագիկ I-ը, այս խնդիրը դժվար իրագործելի էր, եթե չասենք անհնարին: Ուստի կայսրությունը փորձելու էր իր դիրքերն ավելի ամրապնդել նորանվաճ տարածքներում և այն դարձնել հենակետ հետագա արշավանքների համար:

1014թ. Բագրատ III-ի մահից հետո Վասիլ II-ը Վրաստանի նոր թագավոր Գիորգի I-ից պահանջում է վերադարձնել իր հորը ցմահ օգտագործման տրված տիրույթները: Գիորգին մերժում է, սակայն կայսրը չի շտապում արագորեն լուծել այս հարցը, քանի որ Գիորգի I-ը՝ հանձին հայոց շահնշահ Գագիկ I-ի, հզոր դաշնակից ուներ, որի հետ կապված էր նաև ազգակցական կապերով: Այսուհանդերձ, Գագիկ I-ի մահից հետո՝ 1021թ., կայսրն իր ուժերը շարժում է Արևելք՝ օրակարգում ունենալով Վասպուրականի և Դավիթ Կյուրապաղատի ժառանգության հարցերը: Պարտություն կրելով՝ Վրաց արքան հաշտություն է խնդրում:

Գագիկ I-ի մահից հետո սկսված գահակալական պայքարի ժամանակ Գիորգի I-ը հանդես էր եկել թագաժառանգ Հովհաննես-Սմբատի շահերի պաշտպանությամբ: Այդ պայքարը համընկավ Տայքի համար Վրաստանի և Բյուզանդիայի միջև սկսված պատերազմին, և Հայոց Հովհաննես-Սմբատ թագավորը՝ ի փոխհատուցումն Գիորգի I-ի ցուցաբերած աջակցության, իր օգնությունն ուղարկեց վրաց արքային, որը կործանարար հետևանքներ թողեց Անիի Բագրատունյաց թագավորության համար:

Վրաստանի պարտությունը վճռեց նաև Անիի Բագրատունյաց թագավորության ճակատագիրը, քանի որ Գիորգի թագավորի դաշնակից Հովհաննես-Սմբատն ստիպված էր Անին կտակել Բյուզանդիային: Հայոց թագավորի ներկայացուցիչներ կաթողիկոս Պետրոս Գետադարձը և վարդապետ Հովհաննես Կոզեմը Տրպալիզոնում գտնվող Վասիլ II-ին ներկայացան 1021թ. դեկտեմբերի վերջերին: Լաստիվերցու ասելով՝ հենց այստեղ «եղև Հայոց կորստեան գիր և նամակ»:

Բանակցություններն անցան կայսեր համար ցանկալի հունով: Ընդունվում էր այն նույն սկզբունքը, որ մի ժամանակ Դավիթ Կյուրապաղատն էր կիրառել, և որով էլ Վասիլ II-ն սկիզբ էր դրել իր արևելյան քաղաքականությանը: Անիի դիմաց Հովհաննես-Սմբատը մագիստրոսի կո-

չում և Անիի ու Մեծ Հայքի ցմահ արքունտոսի պաշտոն էր ստանում: Համաձայնության այս կետը պատճառաբանվում էր նրանով, որ Հայոց թագավորն անժառանգ էր, ուստի նա իր հոժար կամքով ժառանգ էր կարգում կայսրին:

Այսպիսով, Վասիլ II-ի շուրջ հիսունամյա հետևողական և հեռատես քաղաքականության հետևանքով կայսրությունն առանց լուրջ ջանքեր գործադրելու ոչ միայն կարողացավ տիրանալ Դավիթ Կյուրապաղատի ժառանգությանը, այլ նաև հող ստեղծեց հետագայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին ևս կայսրությանը միացնելու համար, որը և հաջողությամբ իրագործվեց 1045թ.:

Arkadi AKOPOV (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: arkadone@mail.ru

ON THE ISSUES OF THE FALL OF THE BAGRATUNI'S KINGDOM

In 976 one of the famous representatives of the Macedonian dynasty Basil II (976-1025) was enthroned in Byzantium, who enlarged the Empire with new territories due to his diplomatic genius. In 977-979 respectively the ruler of Tayk's principality David Kuropalates helped to pressure Byzantine emperor Basil II during the uprising of Bardas Skleros and was rewarded with a number of Armenian areas - Phasiane, Karin, Hark, Apahuniq, etc. "until death" use. Trying to change the status of those lands, in 989 David participated the rebellion of Bardas Phocas against the Emperor, but defeated, and had to bequeath his land Basil II. In 1001 David Kuropalates was poisoned and killed by the Georgian Archbishop Illarion, then Tayk's "legitimate" heir Basil II gave the principality to the first king of the united Georgia Bagrat III for "until death" use. But in 1014, after the death of Bagrat III, these lands passed to his son Giorgi I, who declared that all the lands, which were in ownership of his father, must be under his rule. Byzantine empire didn't try to regulate this

problem immediately, because he didn't want to have problems with Armenian king Gagik I, who was a major force, and also had family ties with the Giorgi I.

After the death of Gagik I (1020) the struggle began between the crown princes – Hovhannes-Smbat and Ashot. This problem was regulated by Giorgi I. When the war began between Georgia and Byzantine Empire for the lands of David Kuropalates, Hovhannes-Smbat had to participate in this conflict as a compensation of the support of Giorgi I defencing the interests of Georgian king. Georgia was defeated which has decided the fate of the Ani's Kingdom. The representatives of king Hovhannes-Smbat – Catholicos Petros Getadardz and Archimandrite (vardapet) John Koghern introduced themselves to Basil II in the end of December 1021 in Trabzon. The negotiations were held in the desired direction for the Emperor. John-Smbat had to pay for assistance of Giorgi I. And the payment was fatal for Ani's Kingdom of Bagratunies, because according to agreement, after the death of John-Smbat Ani had to pass to Byzantium. The agreement on this point was explained by the fact that the Armenian King was heirless, so it was his own free will to appoint Basil II as a heir.

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

Email: AyG.84@mail.ru

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՀԱՅՈՑ
ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1850-1880-ական թթ.)**

*Հայաստանի 25-ամյա վերանկախացումը վերածնունդ է,
վերաիմաստավորում է, վերաթարմացում է,
վերակառուցում է, վերամիավորում է:*

XIX դարի առաջին կեսին պատմական Շիրակում հիմնադրված Ալեքսանդրապոլ բերդաքաղաքի 1850-1880-ական թվականների հասարակական կյանքը երկրաշինության հիանալի դիպված է: Ռուս-թուրքական պետական սահմանի մոտ գտնվելը, բնակչության՝ Արևմտյան Հայաստանից տեղափոխված լինելը, ռուսական զորքի առկայությունը, Անիին, նաև հայ մշակույթի կենտրոն Թիֆլիսին (Թբիլիսի) մոտ գտնվելը, միջազգային բարենպաստ դրությունն այն գործոններն են, որոնցով պայմանավորված էր քաղաքի հասարակական մտքի զարգացումը:

Նոր ժամանակների և արդի պետականակերտման գործընթացի հիմնարար բաղկացուցիչներն են ազգային գաղափարախոսությունը, ազգային-իրավական նորմերը, բանակը, ազգային կրթությունը և դաստիարակությունը, քաղաքական արժեհամակարգը:

Ալեքսանդրապոլի հասարակական միտքը սերտ առնչակցություն ունի հայկական ազգային գաղափարախոսության այն տարրերի հետ, որոնք վերաբերում են Հայաստանի ազատագրությանն ու անկախության հաստատմանը:¹ Ազգային գաղափարախոսությունը ձևակերպել էր դեռևս XVI-XVIII դարերի հայ հասարակական-եկեղեցական միտքը (Մխիթար Սեբաստացի և Մխիթարյաններ, Ղազար Ջահկեցի, Միմեոն Երևանցի, Հակոբ Շահամիրյան, Միքայել Չամչյան և այլք): Չներկայացնելով ազ-

¹ Այվազյան Ա., Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունը, Պատմաբանասիրական հանդես, Եր., 2002, №1, էջ 141:

գային պետություն՝ հայրենիքի և ազգության հայ գաղափարախոսները ուշմիջնադարյան քաղաքական տեսությունների, կրթական համակարգի, փիլիսոփայության շրջանակներում մերժեցին օտարափառությունը, գովերգեցին աշխատասիրությունը, պայքարեցին ապահայացման դեմ:

Ապրելով քաղաքական ազատությունների, տնտեսական նորարարությունների, լուսավորականության, ինքնատիպ աշխարհակարգի սահմանման, «երիտասարդների»¹ դարաշրջանում՝ XIX դարում, ալեքսյուլցիները և ամբողջ հայությունը բարենորոգվելու, երիտասարդանալու հայտներկայացրին («Մանուկ Հայաստան», «Երիտասարդ Հայաստան»): XIX դարի երկրորդ կեսից՝ Ղրիմի կամ Արևելյան պատերազմից հետո, նրանք հանգիստ պայմաններում վերագնահատեցին XVIII դարավերջի ֆրանսիական հեղափոխության համամարդկային նշանաբանը՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»: Հայ հասարակագետները, սակայն, *հավասարություն* բառույթը փոխարինեցին *հանդարտություն* և *արդարություն* բառերով:² Դա, փաստորեն, XIX դարում հայոց պետականակերտման գաղափարախոսության ատաղձն է: Ելնելով այդ գաղափարախոսությունից, ըստ ալեքսյուլցի մտավորական Հովհաննես Մուշեղյանցի, ապագա հայկական պետության քաղաքացիները, պետք է հարգեն աշխատանքը, լինեն միաբանված և սիրեն դիմացինին:³

Ծանոթ լինելով XIX դարի հայ և համաշխարհային հայրենասիրական գրականությանը, արևմտահայ գործընկերների տեսակետներին, ուսումնասիրելով բրիտանական քաղաքական մշակույթը՝ ալեքսյուլցի պետականամարտիկները գործնականում աշխատեցին Հայաստանի անկախության օգտի համար: Օրինակ, ալեքսյուլցի անկախական Արսեն Կրիտյանի ստեղծած ընկերության գործունեությունը 1869-1875 թվականներին:⁴

¹ «Երիտասարդ Ռուսաստան», «Երիտասարդ Բոսալիա», «Երիտասարդ Թուրքիա», «Երիտասարդ Գերմանիա», «Երիտասարդ Լեհաստան». քաղաքական կազմակերպությունների և շարժումների անվանումներ են:

² Սահակ Պարթևի կամ Հայրապետ Մշոյ. Ողբերգություն բաժանեալ ի չորս արարուածս, Կ. Պոլիս, Տպագրություն Քիրոքճեան, 1869, էջ 22:

³ Մուշեղեանց Յ., Հայ-Ազգություն, «Արարատ», Վաղարշապատ, 1871, թիվ Ա, էջ 47:

⁴ Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից. ուսումնասիրության և փաստաթղթեր, Եր., ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, 1958, էջ 121-148:

Պետական մտածողություն ունեցող գործիչներ Հ. Մուշեղյանը և Դավիթ Սվադճյանը հստակ գիտակցում էին, որ ապրում են քաղաքացիական իրավունքների հանրահռչակման ժամանակաշրջանում:¹ Քաղաքական անկախության բացակայությունը խոչընդոտ չէր ավեքպուլցի պետականամարտիկների համար, որ նրանք խորհեին գալիք հայկական պետության հասարակական հարաբերությունների կառուցվածքի մասին, քննարկեին, թե ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվեն հասարակական գործիչներն իրենց աշխատանքում: «Մեր հայերիս դժբաղդութիւնն էլ այն է,-գրում է ավեքպուլցի բժիշկ Ավետիք Բաբայանը,-որ մեր ընտանեկան կեանքը այնպիսի բնատրուփինք չէ արտաբերում, որ իրանց նուիրելով հասարակական գործունեութեան, հպատակեին միայն իրանց ներքին ձգտման գործին ծառայելու և արդարամիտ ուղղութեամբ վեհանձն ներողամտութեամբ և սիրով շատ ոյժեր գրաւէին դարձեալ սիրած գործին ծառայացնելու և նորան ընդլայնացնելու...»:² Հ. Մուշեղյանցի կարծիքով, հասարակության շարժիչ ուժերից մեկը ինքնաճանաչողությունն է, մյուսը՝ կանանց քաղաքացիական ակտիվությունը:³ Հ.Մուշեղյանը հասարակական կյանքում կանանց դերի բարձրացման գաղափարի իսկական երկրպագու է: «Հասարակական իրավունք», «իւրեանցապատկան իրաւունք», «ժողովրդի առաջադիմութիւն», «ժողովրդի իրավունք». թվարկվածները ավեքպուլցի հասարակական գործիչ Կարապետ Մատինյանցի և «Մշակ» թերթի ավեքպուլցի երկու թղթակիցների հրապարակախոսական ազատահոտ բառապաշարի գլխավոր արտահայտություններն են:⁴

1850-1880-ական թվականների ավեքպուլցի հասարակական գործիչներից շատերը, օրինակ, Պետրոս Հայկազունին, Հակոբ Փամբուխձ-

¹ «Արարատ», 1870, թիվ Դ, էջ 142: Մուշեղեանց Յ., Դաստիարակութիւն ի մարդն, «Արարատ», 1873, թիվ Թ, էջ 342:

² Ա.Բ., Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 15.XI.1873:

³ Յորդոր ի սեր ազգային գրականութեան, «Արարատ», 1870, թիվ ԺԲ, էջ 316: Մուշեղեանց Յ., Աղեքսանդրապոլոյ չայոց օրիորդաց Սահականոյ ծխական դպրոցի բացման հանդէս, Արարատ, 1873, թիվ Զ, էջ 232:

⁴ Մատինեանց Կ., Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ, «Արարատ», 1870, թիվ Ժ, էջ 252: Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», Թիֆլիս, 1.II.1873: ***, Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 18.X.1873:

յանցը, աղքիլիսեցի (կրաշենցի) քահանա Մանվել Աստվածատրյանը, բարձր էին գնահատում հանրակրթական բնագավառում եվրոպական երկրների¹ ձեռք բերած փորձը: Նրանք այդ ոլորտի տեղական պատասխանատուներին կոչ էին անում հետևելու եվրոպական լուսավորական մտքի ձեռքբերումներին և դրանք կիրառելու հայկական դպրոցներում: Ալեքսանդրյան պետականամարտիկները տեսնում էին նաև այդ խնդրի հակառակ երեսը.

Խելքով Եւրոպին յարմարէ՛ ,

Դուն քեզ ու քեզ կառավարէ՛²

Ալեքսանդրյան պոլի հասարակական միտքը հայրենիքում մնալու, համախմբվելու, հայկական պետությունը հզորացնելու, ամուր լինելու, քաղաքակրթական բարձր արժեքներին հաղորդակցվելու, միմյանց ինսայելու, խաղաղ գոյակցելու պատգամներ է թողնում իր ուսումնասիրողներին:

Gevorg AYVAZYAN(Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

Email: AyG.84@mail.ru

PUBLIC CONCEPTION OF ALEXANDRAPOL IN THE CONTEXT OF THE ARMENIAN STATE SYSTEM CREATION (1850-1880-S)

The fundamental components of the state system creation process of new and modern period are the national ideology, national-legal rules, army, national education and upbringing, political value system.

The public conception of Alexandrapol has close correlation with the elements of the Armenain national ideology, which refer to the liberation of Armenia and the establishment of independence. Touching upon the Armenian and the World literature of patriotism of the XIX century, the ideas of Western-

¹ *Եվրոպա, եվրոպական ազգեր գրելով՝ նրանք, սակայն, ոչ մի երկրի անուն չեն նշում:*

² *Աշըղ Ջիւանու երգերը, Ա. Աղեքսանդրյան, Գ. Մանուէանցի տպարանում, 1882, էջ 37:*

Armenian co-workers and having studied the British political culture, we can mention that Alekpolian state fighting-men practically worked for the benefit of Armenian independence. The absence of political independence was not an obstacle for Alekpolian state people, that they could think of the upcoming structure of social relations.

In 1850-1880-s most of the Alekpolian state fighting-men were highly appraising the gained experience of European countries in the common sphere. They called the local executives to follow the achievements of European instructive idea and put them into practice in Armenian schools.

Հասմիկ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան)

E-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ (1773-1800)

XVIII դ. վերջին քառորդի հայ ազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ իր ակտիվ գործունեությամբ, եռանդուն խառնվածքով և յուրահատուկ մարդկային հատկանիշներով առանձնանում է մեր նոր ժամանակաշրջանի պատմության եկեղեցական-քաղաքական բացառիկ գործիչ, ռուսահայ թեմի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղոթյանը: Ապրելով Անդրկովկասի՝ Ռուսաստանի կողմից գրավման նախաշեմին ընկած ժամանակահատվածում, Հայաստանի ազատագրության բաղձանքով տոգորված, նա դարձավ այդ երկրի միջոցով թուրք-պարսկական լծից Հայաստանի ազատագրության տեսակետի կրողն ու տարածողը, այդպիսով՝ հանդիսանալով նախորդ ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի մարտիկների (Իսրայել Օրի, Հովսեփ Էմին և այլք) գործի շարունակողը:

Միմենոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780) շնորհիվ դառնալով ռուսահայ թեմի առաջնորդ, նա մեծ և ծավալուն գործունեություն ծավալեց Ռուսաստանում՝ ոչ միայն որպես եկեղեցական, այլև քաղաքական գործիչ՝ նշանավոր դեր կատարելով XVIII դ. վերջին քառորդի հայկական ազգային-ազատագրական շարժումների մեջ:

Օժտված լինելով նուրբ դիվանագիտությամբ, անտեսելով ցարական պետության ստեղծած դժվարությունները՝ նա կարողացավ ռուսաբնակ հայ հասարակական գործիչների միջոցով կապեր հաստատել ռուսական արքունիքի ու ռուս գորահրամանատարության հետ, կարճ ժամանակամիջոցում մեծ հեղինակություն ձեռք բերել ռուսական պաշտոնական շրջաններում՝ դառնալով ռուսների վստահված անձն ու ներկայացուցիչն Անդրկովկասում:

Արդությանի քաղաքական հայեցակարգի նպատակակետը Հայաստանը ռուսների օգնությամբ թուրք-պարսկական լծից ազատագրելու և անկախ պետականություն ստեղծելու խնդիրն էր: Ուստի նա ակտիվ գործունեություն ծավալեց՝ ռուս ռազմական-քաղաքական գործիչների ուշադրությունը բևեռելու այդ հարցին: Դրանք իրենց արտացոլումը գտան ոչ միայն ռուս գործիչներին ներկայացրած զեկույցների, ծրագրերի, գրավոր հիշատակագրերի ու դաշնագրերի նախագծերի ու գործնական առաջարկների, այլև հոգևոր հոր ակտիվ քաղաքական գործունեության մեջ, ինչի վկայությունն են 1780-ական թթ. սկզբներին Պետերբուրգում ռուս քաղաքական ու հոգևոր գործիչների հետ վարած նրա բանակցությունները:

Նրա ուշադրությունից դուրս չեն մնացել նաև եկեղեցական գործերի կազմակերպման աշխատանքները: Ստիպված լինելով պարբերաբար շրջագայել թեմի սահմաններից դուրս՝ նա տեղի իր գործակալների միջոցով մշտապես վերահսկում էր թեմի եկեղեցական գործերը, նամակների միջոցով հոգում և անհրաժեշտ լուծում տալիս կուտակված հարցերին, կոնդակներով մշտապես դիմում իր թեմի իրավասության տակ գտնվող բնակիչներին՝ կոչ անելով ենթարկվել թեմի փոխանորդներին և չշեղվել հայ առաքելական եկեղեցու դրույթներից:

Նրա ուշադրությունից դուրս չեն մնացել թեմի աղքատ խավի սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Այդ խավի տարրական պայմաններն ապահովելու նպատակով արքեպիսկոպոսը մշտապես հանգանակություններ էր կազմակերպում:

Արդությանին շարունակ անհանգստացնում էր հայ ժողովրդի աշխարհասփյուռ վիճակը: Մեծ դեր կատարելով Ղրիմի և այլ վայրերի հայերի՝ Ռուսաստան վերաբնակվելու և Նոր Նախիջևան ու Գրիգորիոպոլ քաղաքների հիմնադրման գործում՝ նա հետագայում ևս մշտապես իր ուշադրության տակ պահեց նորաբնակների սոցիալ-տնտեսական իրավիճակը, ինչպես նաև Ռուսաստանի տարբեր վայրերից՝ նորաշեն քաղաքներում հայերի վերաբնակեցման հարցերը:

Արդությանի՝ ռուսահայ թեմում ծավալած բազմաբնույթ գործունեության կարևորագույն արգասիքներից էր հոգևոր մտավոր-մշակութային կյանքում կատարած բարեփոխումները: Արդությանի շնորհիվ կանոնակարգվեց թեմում հոգևոր վարչական գործերի կառավարության կանոնադրությունը: Նրա գործուն և անմիջական մասնակցությամբ տեղի ունեցան տպարանի և դպրոցների բացում, եկեղեցաշինության և մշակութային մյուս ոլորտների կյանքի աշխուժացում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ իր աստվածահաճո, ազգանվեր ու եկեղեցաշեն գործունեությամբ Արդությանը մեծ ավանդ է թողել ռուսահայ թեմի ոչ միայն հոգևոր-մշակութային կյանքում, այլև մեծ չափով նպաստել հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Hasmik AMIRJANYAN (Armenia)

Institute of History NAS RA (Yerevan)

E-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

HOVSEP ARCHBISHOP ARGHUTYAN AS AN ARMENIAN LEADER OF THE RUSSIAN EPARCHY (1773-1800)

Hovsep Archbishop Arghutyan was the famous social political figure and religious at the last quarter of the 18th century. He was the leader of

Armenian eparchy in Russia. He was Russian-oriented and Catholicos Simon Yerevansti (1763-1780) helped him for becoming the leader of Armenian eparchy in Russia. Arghutyan fought against the Turkish-Persian yoke and continued the work of Israel Ory, Hovsep Emin and others.

Hovsep Archbishop Arghutyan was the good diplomate and made contacts with the Russian court and commanders-in-chief. He wrote them the memorandums, different plans of pacts, carried on negotiations with Russian political figures and priesthood. In a short time he became the personal empowered of Russia in Transcaucasus.

He travelled a lot, but interested in church affairs as well. He wrote letters and solved all the questions connected with the church, wrote official messages to Armenians loving in Russia and asked them not divated from the Apostolic church. He was interested in the poor's life and for helping them organized macrifices.

Arghutyan was sorry for Armenians who were spread all over the wored. He was the founder of New Nakhchevan and Grigoripole and resettled Armenians in these new cities.

One of the main activities of Arghutyan was the improvings in spritual, intellectual lives and the administrative regulation so of eparchy as well. He opened schools, printing houses and built churches, etc. Pleasing to God he made the valuble contributions not only for Armenian eparchy but increasing and strengthening the Armenian-Russian political relationships.

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: a.boyajyan@mail.ru

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 2001 ԵՎ
2011 թթ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**

Բնակչությանը, նրա թվաքանակին, աճի օրինաչափություններին, կազմին, տեղաշարժերին և տարաբնակեցմանը վերաբերող տեղեկություններն ունեն երկրատնտեսական, աշխարհաքաղաքական ու գիտական կարևոր նշանակություն: Այս դրույթը հիմք ընդունելով՝ կփորձենք վերլուծել Շիրակի մարզի բնակչության թվաքանակի և կազմի փոփոխություններն ըստ Հայաստանի Հանրապետության 2001 և 2011 թթ. մարդահամարի արդյունքների:

Շիրակի մարզի մշտական բնակչությունը, ըստ 2001 թ. մարդահամարի արդյունքի, 283389 մարդ էր (136168 տղամարդ, 147221 կին)¹, իսկ 2011 թ.-ին՝ 251941 (121615 տղամարդ, 130326 կին)²: Մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում մարզի բնակչության տեսակարար կշիռը հանրապետության ամբողջ բնակչության թվում տատանվել է 8,8-8,3%: 2001 թ. մարզի առկա բնակչության թիվը մշտականից պակաս էր 26147 մարդով³, իսկ 2011 թ.՝ 18633-ով⁴: Շիրակի ուրբանիզացման մակարդակի 10 տարիների փոփոխությունների քննությունից պարզվում է, որ մարզի քաղաքային բնակչության թվի նվազումը տասնյակ անգամ գերազանցում է գյուղական բնակչության թվի նվազումը: Մարզի քաղաքային մշտական բնակչության թիվը երկու մարդահամարների միջև ընկած ժա-

¹ ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները, Եր., 2003, էջ 183:

² <http://armstat.am/file/doc/99482923.pdf>

³ Բոյաջյան Ա., Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, ՇՀՀ կենտրոնի «Գիտայական աշխատություններ», հ.8, Եր., 2005, էջ 183:

⁴ Բոյաջյան Ա., Աջամոլյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում (XX դ. վերջ XXI դ. սկիզբ), Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը (Լ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը), Եր., 2011, էջ 45:

մանակահատվածում պակասել է 27352-ով կամ 15,7%-ով, իսկ առկա բնակչությունը՝ 23816 մարդով, այդ թվում՝ Գյումրի քաղաքինը՝ 26198-ով կամ 18,7%-ով: Մարզի գյուղական բնակչության թիվը նվազել է՝ առկան 118-ով (0,1%-ով), մշտականը՝ 92 մարդով: 2001թ. մարզի առկա բնակչության թվի 62,7%-ն է բնակվել քաղաքներում, այդ թվում՝ 54,5%-ը՝ Գյումրիում: Նույն ցուցանիշը 2011թ. կազմել է համապատասխանաբար՝ 58,9 և 48,9%: Համեմատության համար նշենք, որ 1987թ. մարզի բնակչության 73,4%-ն է բնակվել քաղաքներում, որից 63,5%-ը՝ Գյումրիում (Լենինականում)¹: Մարզի ուրբանիզացման մակարդակի շեշտակի անկումը պայմանավորված է բնական աղետի, սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական և հոգեբանական գործոններով:

Այդուսակ 1-ից երևում է, որ մարզկենտրոնի բնակչության թվի նվազման ցուցանիշը գերազանցում է մարզի բնակչության թվի նվազման ցուցանիշը: Ուշագրավն այն է, որ բնակչության թվի աճ գրանցվել է Արթիկի տարածաշրջանում և համանուն քաղաքում: Ինչո՞վ է պայմանավորված այդ աճը՝ դժվարանում ենք բացատրել, որովհետև բնական աճի և ներգաղթի հաշվին բնակչության թվի այդպիսի աճ ապահովել հնարավոր չէ: Կարծում ենք՝ ներկայացված պաշտոնական վիճակագրական տվյալները չեն համապատասխանում իրականությանը:

Այժմ անհրաժեշտ է պարզել, թե բնակչության սեռատարիքային կառուցվածքում ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել: Ըստ 2001թ. մարդահամարի արդյունքի՝ Շիրակի մշտական բնակչության 48,1%-ն էր տղամարդ, իսկ առկայինը՝ 45,9%-ը, 2011թ. նույն ցուցանիշը գրեթե չի փոփոխվել: Մարզի բնակչության տարիքային կազմում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. 2001թ. համեմատ 2011թ. մինչաշխատունակ տարիքի (մինչև 15 տարեկան) առկա բնակչության թիվը պակասել է 25091 մարդով կամ 35,2%-ով, հետաշխատունակը (65 և բարձր տարիքի մարդիկ)՝ 1095-ով կամ 4,2%-ով, աշխատունակ տարիքի բնակչության թիվը (15-64 տարեկան) ավելացել է 2252-ով կամ 1,4%-ով: Մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի շեշտակի նվազումը բացատրվում է ծնելիության մակարդակի անկումով: Համեմատության համար հիշատա-

¹ *Բոյաջյան Ա., նշվ. աշխ., էջ 66:*

կենք, որ նույն ժամանակահատվածում ՀՀ մինչաշխատունակ տարիքի առկա բնակչության թիվը նույնպես շեշտակի նվազել է: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ մինչև 15 տարեկան բնակչության մեջ տղաները գերազանցում են աղջիկներին այն դեպքում, երբ նրանց թիվը ժողովրդագրական նորմայով պետք է հավասար լիներ:

Աղյուսակ 1

Շիրակի մարզի ըստ տարածաշրջանների առկա բնակչության թվի շարժընթացը 2001 և 2011թթ.

տարածաշրջան	2001թ.	2011թ.	Տարբերությունը 2001 և 2011թթ.	
			մարդ	%
Շիրակի մարզ	257242	233308	-23934	-9,3
Քաղաք	161298	137482	-23816	-14,8
գյուղ	95944	95826	-118	-0,1
Գյումրի	140318	114120	-26198	-18,7
Ախուրյան	39969	38151	-1818	-4,5
Ամասիա	6596	5625	-971	-14,7
Անի	18075	16834	-1241	-6,8
Աշոցք	9375	8345	-1030	-11,0
Արթիկ	42909	49933	+7024	+16,4

Այսպես, 2001թ. մարդահամարի տվյալներով Շիրակի մարզում մինչև 15 տարիքային խմբում տղաները 2541-ով ավելի են աղջիկներից, իսկ 2011թ.՝ 3640-ով: Նույն ցուցանիշը Հայաստանում կազմում է 29971 և 38666: Աղջիկների և տղաների այդպիսի անհամամասնությունը բացատրվում է առաջին հերթին նրանով, որ ծնողներն առաջին հերթին նախընտրել են տղա երեխա ունենալ: Ներկայացվող ժամանակահատվածում էապես փոփոխվել է նաև մարզի բնակչության տարիքային կառուցվածքը: Ըստ 2001թ. մարդահամարի՝ մարզի ամբողջ մշտական բնակչության 26,6%-ը կազմել է մինչաշխատունակ տարիքի բնակչությունը, 15-64 տարեկանները համապատասխանաբար՝ 63,4 և 65, իսկ բարձր տարիքինը՝ 10%: 2011թ. նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 18,7, 71,3 և 10%: Բերված թվերից երևում է, որ 10 տարիների ընթացքում որոշակի նվազել է մինչաշխատունակ տարիքի բնակչության թիվը, իսկ աշխատու-

նակ տարիքի բնակչության թիվն ավելացել է: Մարզի բնակչության տարիքային կառուցվածքի այդպիսի փոփոխությունը լարվածություն է ստեղծել աշխատաշուկայում, հետևաբար արտագաղթի ծավալների աճը պայմանավորված է նաև աշխատունակ տարիքի բնակչության աճով: Մարզի քաղաքային բնակավայրերում պատկերը հետևյալն է. 2001թ. մինչաշխատունակ տարիքի բնակչության թիվը կազմել է քաղաքային մշտական բնակչության ամբողջ թվի 27,1%-ը, աշխատունակը՝ 65,4%-ը, հետաշխատունակը՝ 7,5%-ը, իսկ 2011թ. նույն ցուցանիշներն են համապատասխանաբար 17,9%, 71,2% և 10,9%: Գյումրի քաղաքում նույն ցուցանիշը գրեթե չի տարբերվում մարզայինից:

2001-2011թթ. ժամանակահատվածում, ըստ վերընթաց գոտիակառուցության, բնակչության բացարձակ թվի էական նվազում գրանցվել է 1400-1600մ բարձրության վրա:

Մարզի բնակչության բնական շարժին անդրադառնալիս անհրաժեշտ է աճի ցուցանիշները ներկայացնել 2001-2015թթ. կտրվածքով՝ դրանք համեմատելով մեր հանրապետության բնակչության բնական շարժի հետ: Ներկայացվող ժամանակահատվածում առաջին հայացքից աչքի է զարնում ծնունդների, մահացությունների, բնական աճի գործակցի ցուցանիշի աճ: Շիրակի մարզում՝ 2001թ. 1000 բնակչի կտրվածքով ծնվածների թիվը 7, 8, մահացածներինը՝ 6, 6, բնական աճը՝ 1,2 մարդ է: 2014թ. համապատասխանաբար՝ 15,1, 10,1 և 4,2 մարդ: Հայաստանի Հանրապետությունում և Շիրակի մարզի բնակչության բացարձակ թվի նվազումը հանգեցրեց ծնունդների գործակցի աճին, իսկ մահացությունների աճը՝ տարեցների բացարձակ թվի աճին: Վերջին 15 տարիներին մեր հանրապետության, այդ թվում՝ Շիրակի մարզի բնակչության աճի տեմպերի վրա որոշակի ազդեցություն ունի բնական վերարտադրությունը: Կարելի է արձանագրել, որ ներկայումս մարզի բնակչության բնական վերարտադրությունը գտնվում է ժողովրդագրական անցման երրորդ և չորրորդ անցման փուլի միջակայքում, երբ ծնելիության անկմանը զուգընթաց՝ աճում է մահացության մակարդակը: Հաշվի առնելով մարզի ժողովրդագրական ներկայիս վիճակը՝ մոտակա տարիներին հնարավոր է, որ բնակչության մահացությունը գերազանցի ծնելիությունը: Ամասիայի և

Աշոցքի մի քանի շատ մանր և մանր գյուղական բնակավայրերում բնակչության մահացությունը գերազանցում է ծնելիության ցուցանիշը: Իսկ Շիրակի մարզում գրանցվել է մանկամահացության թվի տատանում: Օրինակ, 2001թ. մինչև մեկ տարեկան մահացածների թվաքանակը 64 է, 2004թ.-ին՝ 51¹ և 2011թ.-ին՝ 87²:

2001 և 2011թթ. մարդահամարների արդյունքներից պարզվեց, որ Շիրակի մարզի մանր (100-500 բնակչություն) և միջին (1001-3000 բնակչություն) բնակավայրերի բնակչության թիվն ավելացել է, իսկ շատ մանր (մինչև 100), փոքր (501-1000) գյուղական բնակչության թիվը պակասել է: Այսպես, փոքր գյուղական բնակչության թիվը նվազել է 16,7%-ով, իսկ միջին մեծության գյուղերինը՝ 16,5%-ով:

Շիրակի մարզի ազգային կազմում երկու մարդահամարի արդյունքի տվյալներով տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները: Հայերի թիվը նվազել է 30852-ով կամ 11%-ով, եզդիներինը՝ 47-ով կամ 4,8%-ով, իսկ ռուսներինն ավելացել է 52-ով կամ 4,9%-ով:

Artashes BOYAJYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: a.boyajyan@mail.ru

THE POPULATION IN SHIRAK REGION ACCORDING TO THE CENSUS OF 2001-2011

The information concerning population, its number, form, settlements and resettlements is of great geo-political, economic and scientific significance.

We have tried to analyse the numeral and structural changes of Shirak's population according to the results of 2001 and 2011 census. After studying the changes of 10 years urbanization level in Shirak, we come to the conclusion that the decrease of region's urban population surpasses the decrease of rural population about 200 times.

¹ *Բոյաջյան Ա., Աջամողյան Ա., նշվ. աշխ., էջ 45:*

² *http://www.armstat.am/file/article/demos_12_13.pdf*

According to the official statistics, an increase of population has been registered in Artik.

The natural reproduction had some definite influence on the growth of Shirak's population. We can mention the fact that nowadays the natural reproduction of population in the region is between the second and fourth stage demographic transition when in parallel with the birthrate decrease, the deathrate is growing.

Taking into account the present demographic state of the region, in the near future it is possible that the deathrate will surpass the birthrate.

Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

E-mail: arshavirgasparyan@mail.ru

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՍՊԵԼԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Պատմությունը որոշակի օրինաչափությունների հանրագումար է, սակայն երբ պատմագրության մեջ այդ օրինաչափությունները անտեսվում կամ խախտվում են, ապա նման մոտեցումը ամբողջովին խեղաթյուրում է պատմությունը:

Այն պատմիչների համար, որ խախտել են նախատեսված օրինաչափությունները և ստեղծել առասպելախառն պատմություններ, անշուշտ, շատ դժվար է պատմական տվյալները գուրգույզել այնպես, որ դրանք բոլոր հարցերում համընկնեն: Այդպիսի գուրգույզումների ժամանակ շեղումներն իրոք անխուսափելի են:

Նման պատմիչների շարքին է դասվում նաև Զաքարիա սարկավագ Քանաքեռցին:

Հարկ է նշել, որ չնայած իր պարզամտությանն ու պատմության մասին ունեցած խիստ նեղ հայացքին՝ Ջաքարիան կարևորում է պատմության դերն ու նշանակությունը: Նրա տեղեկությունները խիստ արժեքավոր են հատկապես Հովհաննավանքի տնտեսական կյանքի ուսումնասիրման համար: Պատմությունը շարադրելիս նա չի փորձում անգամ տարանջատել առասպելն ու իրականությունը և դրանք՝ որպես բացարձակ ճշմարտություն, ներկայացնում է ընթերցողին: Ամեն մի երկրորդական դեպք, հեքիաթ նա իրական պատմություն է համարում և չափազանց կարևորում է դրանք սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը: Ջաքարիա պատմագիրը քննադատական վերաբերմունք չունի անգամ իր հաղորդած նյութի նկատմամբ, որի ընտրության հարցում պատասխանատվությունը, իրենից հեռացնելով, թողնում է ընթերցողի հայեցողությանը:

Նրա աշխատության մեջ առասպելն ու իրականությունը հանդես են գալիս միասին առանց որոշակի ժամանակագրական հստակության և արժանահավատության:

Ջաքարիայի «Պատմագրությունը» բաղկացած է երեք հատորից: Առաջին երկու հատորները պարունակած նյութի արժեքով հավասարաչափ չեն, դրանք պատմական երկի արժեք չունեն, որովհետև վերցված են գուտ ժողովրդական գրույցներից ու երգերից: Չնայած այդ գրույցները պատմություն չեն, սակայն հիմքը պատմական է, քանի որ լիովին արտացոլում է ներկայացվող ժամանակաշրջանի հիմնախնդիրները: Պատմագիրը, իրոք, ժողովրդական պատմվածքների սիրահար է, ամբողջովին տոգորված ժողովրդական գրողի հոգեբանությամբ: Նա համարվում է XIX դարի մեծ Քանաքեռցու՝ Խաչատուր Աբովյանի գրական նախահայրը:

Ջաքարիա Քանաքեռցու հաղորդումների զգալի մասը նվիրված է նաև պարսից շահերի (շահ Իսմայիլ, շահ Թահմազ, շահ Աբբաս I, շահ Սեֆի) մասին ժողովրդի մեջ տարածված գրույցներին ու երգերին: Աշխատության մեջ ուշագրավ տեղեկություններ են պարփակված նաև 1606-1620թթ. Արցախի լեռնային շրջաններում տարածված գյուղացիական շարժման վերաբերյալ, որոնք զգալի պատմագիտական արժեք են ներկայացնում հատկապես սոցիալական շարժումների պատմության ուսում-

նասիրման համար: Այդ տեղեկությունները լիարժեք պատկերացում են տալիս շարժման գաղափարախոսության և ընթացքի մասին:

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրությունը» բացառիկ կարևորություն է ներկայացնում Հայաստանի և հարևան երկրների սոցիալ-տնտեսական կյանքի առանցքային հարցերի ուսումնասիրության համար: Մեր ոչ մի պատմագիր այնքան մանրամասն չի ներկայացրել հայ գյուղի կյանքն ու կենցաղը, նրանց վիճակը, որքան Զաքարիա Քանաքեռցին: Ժողովրդական պատմագրի գործող անձերի մեծագույն մասը շարքային հասարակ մարդն է, հիմնականում՝ գյուղացին: Նա կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև գյուղական համայնքի ներքին կյանքի, տանուտերերի ընտրության կարգի և համայնքին հաշվետու լինելու նրանց պարտականությունների մասին:

Զաքարիա պատմագիրն էլ իր նախորդների նման բնական բոլոր երևույթների (սով, երկրաշարժ, պատերազմ) պատճառը համարում է Աստծո հանդեպ մարդկանց գործած մեղքերը:

Զաքարիա Քանաքեռցին Առաքել Դավրիժեցու նման բարձր է գնահատել հայ խոշոր առևտրավաճառուական խավի ներկայացուցիչների գործունեությունը, հստակ ցույց է տվել նրանց կատարած դերը հայ հասարակական ու հոգևոր կյանքում: Գրեթե բոլոր դեպքերում, պարսկական ու թուրքական արքունիքների կարևոր հարցերը լուծվում էին հենց հայ խոջաների միջնորդությամբ ու օժանդակությամբ:

Հիրավի, այս աշխատությունը պարունակում է մեծ թվով առասպելներ ու առասպելախառն պատմություններ և անգամ հեքիաթներ: Նրանցում հանդիպում ենք վիշապների, դևերի, օձերի, հրաշապատում երևույթների, որոնք ճանաչողական ու պատմագիտական ոչ մի արժեք չունեն, բայց իբրև ժողովրդական բանահյուսություն և ազգագրական նյութ, իրոք, որոշակի կարևորություն են ներկայացնում:

Այդ բոլորով հանդերձ, Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրությունը» իր պարունակած հարուստ նյութերով ու մատուցման ձևերով, պատկերավոր լեզվով, գեղջկական անմիջականությամբ ու պարզությամբ պատվավոր տեղ է գրավում հայ պատմագրության մեջ: Այն պատմագրի ու նրա ժամանակաշրջանի կենդանի հուշարձանն է և իրավամբ համար-

վում է արժեքավոր գրական կոթող XVII դարի հայ պատմագրության անշուք անդաստանում:

Arshavir GASPARYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail: arshavirgasparyan@mail.ru

DELIMITATION OF HISTORY AND LEGEND IN THE REPORTS OF DEACON ZAKARIA KANAKERTSI

History is a sum of certain laws but when some laws are ignored or broken in historiography, such approach distorts history.

For those historians who have broken the prescribed patterns and created mixed legendary stories, certainly, it is very difficult to combine historical data, so they correspond to each other in all issues.

Among such historians is Deacon Zakaria Kanakertsi.

It should be mentioned that, despite his simple-mindedness and narrow outlook on history, Zakaria emphasized the role and importance of history. His information is very valuable especially in the field of socio-economic life.

In the process of writing history, he does not attempt to distinguish between a myth and reality, and he represents them as absolute truth to the reader. He considers any minor case, every fairy tale as a real story and he highlights the need of passing them to the future generations. Historian Zakaria does not have even a critical attitude towards his responsibilities, and he leaves it to the reader himself to choose.

Historian Zakaria, like all his predecessors, considered the reason to all natural phenomena (famine, war earthquake) people's sins towards God.

Indeed Deacon Zakaria Kanakertsi's work contains a large number of myth, mixed legendary stories and even fairy tales. There we encounter dragons, demons, snakes, mysterious phenomena which are cognitive and have no historical value, but as a folklore and ethnographic material are of particular importance. In his "History" myth and reality come together without any chronological accuracy and reliability. They are taken just from folk tales

and songs. Though these talks do not represent history, their origin is historical, as they reflect the problems of the given period.

So, it is the reason why his work is so important as it vividly reflects the delimitation of history and myth. Nevertheless, with all the included rich material and form, figurative language and simplicity, it occupies an honorable place in Armenian historiography.

**Отар ГОГОЛИШВИЛИ,
Тамаз ПУТКАРАДЗЕ (Грузия)**

Батумский Государственный университет
E-mail: txil1968@mail.ru

ИЗ ИСТОРИИ РАЗВИТИЯ КАПИТАЛИЗМА В ГОРОДЕ БАТУМИ: АЛЕКСАНДР МАНТАШЕВ

Ещё очень давно до Русско-Турецкой войны (1877-1878) и до возвращения Аджарии в родную Грузию в Батуми жило довольно много армян. В основном они были заняты торговлей и как, присуще представителям этой нации, прекрасно справлялись с этой деятельностью. То, что многочисленная диаспора армян, живших в Батуми сохраняла свою идентичность и веру видно и оттого, ещё в период господства Османской империи им удалось построить в 1877г. Армяно-Григорянскую церковь, которая функционирует и в настоящее время. В Батуми армянское население значительно возросло после Русско-Турецкой войны (1877-1878) и возвращения Аджарии в состав Грузии. Большая часть армян живущих в Батуми, активно включалась в строительство города, особенно, в среду предпринимательства и торговли, достигнув во всём этом значительных успехов. Среди армян, в то время выделилась семья Манташевых. Она создала крупную промышленную индустрию, основателем которой является Александр Иванович Манташев.

Александр Манташев (1849-1911) был Тбилиским армянином, его отец известный торговец, обладавшим большим капиталом. Сын Александр занялся предпринимательством и достиг больших успехов. В дальнейшем его имя стало известным во всём мире.

А. Манташев, как умный и дальновидный человек точно рассчитал, где и как наилучшим образом вложить капитал. В 1899 Манташев в г. Баку организовал нефтепромышленное и торговое общество.¹ И именно здесь в нефтяном бизнесе выявился талант Манташева. Он становится одним из богатейших людей Российской Империи и его капитал достигает 2 млн рублей. К 1914 году его капитал насчитывал в 30млн рублей.

Он был акционером целого ряда нефтепромышленных и банковских обществ, крупным землевладельцем, владельцем домов, банков в разных городах империи.

После смерти А. Манташева начатые им большие дела продолжали его сыновья. У него было 4 сына, которые твердо продолжали его дело и увеличивали отцовский капитал.

После установления Советской власти в России, братья Манташевы эмигрировали за границу.

Манташевская Батумская фирма функционировала с 1886 года. Эта фирма располагалась между ул. Манташевского и Шавшетской там, где в настоящее время находится батумский автовокзал.

Манташев владел также заводами, изготавливающими деревянные ящики для перевозки нефтепродуктов и заводами готовящими бидоны для керосина. Один из этих заводов находится на улице Гогешавили. На территории заводов находилось множество подсобных сооружений и складов, здесь же находилось общежитие для рабочих. В собственности Манташева была и нефтеперегонная станция.²

¹ *Центральный государственный архив Аджарской автономной республики (в сокращении ЦГАА), фонд 1, опис 1, дело 123.*

² *ЦГАА, дело 123.*

В то время в Батуми, в т. н. „нефтяном городе” существовало 128 нефтяных резервуаров, общая вместимость которых составляла 21млн. 636 тыс. 139 фут нефти. Эти нефтяные резервуары принадлежали 22 фирмам и частным лицам. 25 из этих нефтяных резервуаров принадлежали братьям Нобелям.

По данным 1898 года Манташев занимал третье место по количеству принадлежавших ему нефтяных резервуаров. Ему принадлежало 11 нефтяных резервуаров с вместимостью 2млн. 449 тыс. тонн.

В 1896 году Манташев в Батуми смонтировал крупнейшую нефтяную станцию, которая занимала 6297кв. саженной земли. Станция имела 27 трупроводов, общая протяжённость которых составляла 26711 футов.

К 1986 году заводы Манташева, изготовили 2215850 штук деревянных ящиков и 4131700 штук нефтяных бидонов, как было уже указано выше—деревянными ящиками за границу перевозили керосин, в большинстве случаев в страны востока, в каждый ящик вмещал по два полных бидона.

В следующий 1897 год фирма Манташева изготовила 2024350 деревянных ящиков и соответствующее количество бидонов 40088700. К 1878г. изготовили 2955450 деревянных ящиков и 5910900 штук бидонов.¹

К концу XIX века фирмы братьев Нобелей, Манташева и Ротшильда внедрили в производство новейшую технику. Они установили элеваторы, с помощью которых нефть на прямую перекачивалась на суда и таким образом отправляли по месту назначения. Все это способствовало уменьшению производительных затрат.

Внедрение передовой техники значительно сократило количество рабочих рук, сотни человек остались без работы.

Всё это вызвало сокращение доходов мелких капиталистов и привело к полному банкротству. После этого нефтеперегонная монополия сосредоточилась в руках—Манташева, Ротшильда, Нобелей.

Монополизация и внедрение новейшей техники в производство обанкротило многих производителей и их производства, что вызвало их возмущение и полную безнадёжность к своему будущему.

¹ *Очерки истории Аджарии, т. III, Батуми, 2008.*

Мелкие производители живущие в Батуми: Хильянц, Хачатурянц, Мнацаканов, Ходжаширов и другие обратились с жалобой о своём тяжёлом и безвыходном положении.

Они сообщили, что в своё время ими были вложены крупные капиталы в нефтепроизводство, но сейчас оказались в критическом положении, ведут своё производство устаревшими методами что и привело их краху.

17 марта 1889 года Батумский городской совет рассмотрел просьбу предпринимателей о разработке закона против экономических катастроф. Большинством голосов было принято постановление: „Возбуждение ходатайства о запретном законе перелива нефти с Батумского порта за границу или об установлении особого тарифа растаможки перевозки нефти. Для получения правительственного распоряжения о законе, отправить в Петербург депутацию городского совета.”¹

Организованная борьба мелких предпринимателей и их попытка искусственно приостановить естественное развитие промышленного капитализма-закончилась полным крахом.

Otar GOGOLISHVILI

Tamaz PHUTKARADZE (Georgia)

Batumi State University

E-mail: txil1968@mail.ru

FROM THE HISTORY OF DEVELOPMENT OF CAPITALISM IN BATUMI: ALEXANDER MANTASHEV

Long time ago, before Russian-Turkish war (1877-1878) and before returning Adjara to its motherland Georgia, there were many Armenians in Batumi. They were engaged in sale and had great success in it. As multiple Armenian-Batumi diaspora could keep their identity and faith shows they could build Armenian-Georgian church in 1877, in a period of Osmalian invasions,

¹ *Очерки истории Аджарии, т. III, Батуми, 2008*

which also functions nowadays. Armenian population has grown in Batumi after the Turkish-Russian war (1877-1878) and after entering Adjara in Georgian borders. Armenians living in Batumi were actively involved in a city building, mainly in industry and sale in which they got great success. Alexander Mantashevi (1849-1911) was an Armenian in Tbilisi. His father was a famous salesman, who had a large industry and got a great success.

A. Mantashevi as a clever man, counted where to put his capital in a better way. In 1899 Mantashevi created oil industry and sales society in Baku. In this business he showed his talent and became one of the richest man in the Russian Empire and his capital became 22 million roubles. He was an auctioneer of oil industry and banks societies, as well as a great landowner, owner of many houses and banks in different countries of the Empire.

After the death of Alexander Mantashevi, his children continued his business. He had four children, who continued father's business and increased his capital.

Руслан КАНДОР (Россия)

Адыгейский республиканский институт гуманитарных исследований (Майкоп)

E-mail: kandor.ryslan@mail.ru

АРМЯНЕ В БОЕВОЙ ЛЕТОПИСИ ЧЕРКЕССКОГО КОННОГО ПОЛКА (1914-1916 гг.)

Столетний юбилей Первой мировой войны способствовал значительному росту интереса к событиям, последствиям и урокам этой войны. И для современной России и Армении остается актуальным вопрос боевого содружества народов на полях сражений Первой мировой войны.

Настоящая статья посвящена вопросу участия армян в боевом содружестве с другими народами Кавказа в боях Первой мировой войны в составе Черкесского конного полка. В работе широко использованы архив-

ные материалы, а также различные литературные источники – личного происхождения и исследования российских авторов.

Особое и значимое место в статье отводится истории боевой жизни блистательного офицера, поручика Леона Владимировича Марданова – уроженца Тифлиса, армяно-григорианского вероисповедания, из дворянской семьи полковника, инспектора Владимирского Киевского кадетского корпуса. Осенью 1914 г. поручик Марданов, как офицер, временно исполнявший обязанности командира 3-й сотни Черкесского конного полка, берет на себя все хлопоты по укомплектованию 3-й сотни всадниками и их обучению военному делу.

В течение полутора лет Леон Марданов принимает участие во многих тяжелейших боях с противником и весну 1916 г. встречает в звании штабс-ротмистра, в должности командира 3-ю сотню Черкесского конного полка. Его личный пример в бою, уважение и почтительность к подчиненным, верность воинскому долгу и своему слову – все это всегда ценилось всадниками полка.

Во время Брусиловского наступления 31 мая 1916 г., штабс-ротмистр Марданов повел за собой 3 сотни Черкесского конного полка в конную атаку на занятое австрийской пехотой село Окно. В этом бою он был смертельно ранен.

В статье указано на исключительную важность сохранения имен героев великой войны. Этим мы отдаем долг памяти блистательным офицерам и всадникам разных народов, служившим в Черкесском конном полку, их беспримерному подвигу во имя защиты отчизны.

Ruslan KANDOR (Russia)

Adygeya Republic Institute of Humanitarian Research (Maykop)

E-mail: kandor.ruslan@mail.ru

ARMENIANS IN THE FIGHTING CHRONICLE OF THE CIRCASSIAN MOUNTED REGIMENT (1914-1916)

The centenary of the World War I contributed to the significant increase in the interest of the events, consequences and lessons of that war. And for modern Russia and Armenia there is an actual question of the fighting commonwealth of the people on fields of battles of the World War I.

This article is devoted to the study of the participation of Armenians in the fighting commonwealth with other peoples of the Caucasus in fights of the World War I as a part of the Circassian mounted regiment. In the work archival materials are widely used, as well as various literary sources – of personal origin and research by Russian authors.

The special and important place in the article is given to the history of the fighting life of a brilliant officer, Lieutenant Leon Vladimirovich Mardanov – a native of Tiflis, Armenian-Gregorian faith, of the noble family of Colonel, Inspector of the Kiev Vladimirsky Cadet Corps. In the autumn of 1914 the Lieutenant Mardanov as an officer temporarily acting commander of the third squadron of the Circassian mounted regiment, undertakes all the efforts on completion of the third squadron by riders and on their training in military science.

Within one and a half years Leon Mardanov participated in many harsh battles with the enemy and he meets the spring of the 1916 in the rank of Lieutenant-captain, commander of the third squadron of the Circassian mounted regiment. His personal example in combat, respect for and deference to a subordinate, his faithfulness to military duty and his own word-everything was always valued by the riders of the regiment.

During the Brusilov offensive on May 31, 1916, Lieutenant-Captain Mardanov took over the third squadron of the Circassian mounted regiment to an attack on the Austrian infantry which had occupied the village Okno. In this fight he was fatally wounded.

The article points out the crucial importance of keeping the names of the heroes of the Great War. By this, we pay a tribute to the officers and brilliant riders of different peoples, who served in the Circassian mounted regiment, to their unprecedented feats in the name of protecting the homeland.

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: armenani@mail.ru

Ս.Դ. ՀՆՉԱԿՑԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ԱՐԱԳԱԾ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1903թ.

XIX դ. վերջերին ցարիզմը որոշակի քայլերի դիմեց Հայաստանյայց եկեղեցու իրավունքները սահմանափակելու համար: 1903թ. հունիսի 12-ին հաստատված օրենքով եկեղեցուն պատկանող անշարժ գույքն ու ավանդներն անցան պետական համապատասխան նախարարությունների տնօրինությանը¹:

Օրենքն առաջ բերեց աշխարհասփյուռ հայության արդարացի ընդվզումը: Երևանում, Ախալքալաքում, Գանձակում, Թիֆլիսում, Բաքվում և Անդրկովկասի հայաշատ այլ քաղաքներում տեղի ունեցան բազմահազարանոց ցույցեր: Տեղ-տեղ դրանք ուղեկցվեցին բնակչության և ոստիկանության միջև արյունալի ընդհարումներով:

Ըմբոստության ազդանշանը տվեց Ալեքսանդրապոլը: 1903թ. հունիսի 29-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը Գ. Գուլիցինի հետ բանակցելուց հետո Թիֆլիսից եկավ Ալեքսանդրապոլ՝ այստեղից Էջմիածին անցնելու համար: Հովվապետի հայտնվելը անակնկալի բերեց ինչպես ալեքսանդրապոլցիներին, այնպես էլ տեղի հնչակյան կազմակերպության անդամներին: Կաթողիկոսական կառքը շրջապատած ամբոխը ուղեկցեց նրան

¹ Կոստանդյան Է., Սկրտիչ խրիսյան. հասարակական-քաղաքական գործունեություն, Եր., 2000, էջ 404:

մինչև կայարան, որտեղ քարեր նետեց ժանդարմների վրա, կոտրեց գնացքի ապակիները և հարձակվեց կաթողիկոսի թիկնապահ եպիսկոպոսների վրա¹: Տեղի հնչակյանները փորձեցին տարերայնորեն սկսված շարժմանը կազմակերպված բնույթ տալ, սակայն հաջողության չհասան: Դեռ Ալեքսանդրապոլում կրքերը չէին հանդարտվել, երբ բողոքի ելույթներ սկսվեցին Մեծ Ղարաքիլիսայում:

Տեղի ունեցածի մեղքն իշխանությունները բարդեցին առանձին անհատների վրա: Խռովության անհաջող փորձ կազմակերպելու մեղադրանքով Ալեքսանդրապոլի գավառի երեք բնակիչների նկատմամբ քրեական հետապնդում սկսվեց: Սակայն, ժողովրդական տարերային ելույթը՝ իբրև կազմակերպված հանցագործություն ներկայացնելու իշխանությունների գործադրած ջանքերն ապարդյուն անցան: Հասարակական կարգը խախտելու մեղադրանքով դատարանը երիտասարդներին դատապարտեց ընդամենը 6-8 ամսվա բանտարկության²:

Ցարիզմի հայատյաց քաղաքականության դրսևորումների դեմ պայքարի մեկ այլ միջոց դարձավ ռուս պաշտոնյաների և նրանց կամակատարների ահաբեկումը, որ իրագործվեց ազգային կուսակցությունների տեղական կառույցների կողմից, և որի գագաթնակետը դարձավ մահափորձը Կովկասի կառավարչապետի դեմ:

Հայ վրիժառուի առաջին հարվածն իր հասցատիրոջը գտավ հենց Ալեքսանդրապոլում: 1903թ. օգոստոսի 12-ի կեսօրին մի խումբ հնչակյաններ դաշույնի հարվածներով սպանեցին ռուս ավագ քահանա Վասիլևին: Ս.Դ.Հ.Կ. Ալեքսանդրապոլի «Արագած» մասնաճյուղի վարչության այդ տարիներին քարտուղար Պետրոս Մոճռոյանն իր հուշերում գրում է, թե հունադավան այս հոգևորականն Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա, Աղին և Բուղդաշեն գյուղերի բնակչության կեսին խոստումներով ու կաշառքով դավանափոխ էր արել, որից հետո ազգի երկու տարբեր

¹ Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության (1887-1962թթ.), հ. Ա, խմբ. Ա. Կիտուր, Պէյրուս, 1962, էջ 421:

² Մի դատ, «Հնչակ» ամսաթերթ, Լոնդոն, 1904, տասնելյոթերորդ տարի, թիւ 4-5, ապրիլ-մայիս, էջ 30-31:

դավանանքի պատկանող գյուղացիների միջև սկսվել էին կռիվներ ու երկպառակություններ¹:

Մեր կարծիքով, ռուս քահանայի ահաբեկման իրական պատճառն ամենևին էլ հավատորսության մարմաջը չէր: Արևելահայության շրջանում ուղղափառ կրոնը տարածելու իշխանությունների փորձերը ձախողվել էին դեռևս XIX-րդ դարից: Հայ գյուղացին նոր կրոնն ընդունելուց և հողային պահանջները բարելավելուց հետո վերադարձել էր Հայ Առաքելական եկեղեցու գիրկը:

Մենք հակված ենք ենթադրելու, որ ալեքսանդրապոլցի հնչակյանների համար Վասիլևի ահաբեկումը փորձ էր իր մասշտաբներով անհամեմատ ավելի մեծ ու հանդուգն մի ծրագրից՝ Գ. Գուլիցինի դեմ մահափորձի կազմակերպումից առաջ:

Կառավարչապետն իր հայատյացությամբ աչքի էր ընկել պաշտոնը ստանձնելու առաջին իսկ օրվանից, երբ ծրագրել էր հայ-վրացական ընդհարումներ կազմակերպել: Համիդյան գուլումի օրերին Գ. Գուլիցինը պետական խորհրդի քննարկմանն էր ներկայացրել մեկ այլ հրեշավոր ծրագիր՝ «հայերին ամբողջապես տեղահան անելու և Սիրիա տեղափոխելու մասին», որը ևս բարեբախտաբար չիրագործվեց:

Հայ ժողովրդի դեմ նյութած դավերի համար Ալեքսանդրապոլի հնչակյան մասնաճյուղը դեռևս 1902թ. որոշել էր ահաբեկել նրան, բայց վախենալով հետևանքներից՝ այդ ծրագրից առժամանակ հրաժարվեց: Հայակեր կառավարչապետի ահաբեկման հնչակյան ծրագիրը նորից արդիական դարձավ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գուլքի բռնագրավման մասին օրենքի ընդունումից հետո:

1903թ. օգոստոսի 16-ին ՄԴՀԿ Ալեքսանդրապոլի «Արագած» մասնաճյուղը Հարություն Չաքարյանի նախագահությամբ որոշում ընդունեց «իբր կատարած անբավ չարիքների համար տեռորի յենթարկել Գալիցինին»:

¹ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1456, ց. 2, գ. 24, թ. 2-3: Տերթոսներ, «Հնչակ» ամսաթերթ, Լոնդոն, 1903, տասնևվեցերորդ տարի, թիւ 9-10, դեկտեմբեր, էջ 79:

Ահաբեկումը տեղի ունեցավ 1903թ. հոկտեմբերի 14-ին Թիֆլիսից Կոջոր տանող ճանապարհին: Հարձակվելով Գ. Գոլիցինի կառքի վրա՝ ահաբեկիչները թունավորված դաշույնների չորս հարվածներ հասցրին նրան և կարծելով, թե սպանված է՝ դիմեցին փախուստի: Սակայն, ըստ պաշտոնական վարկածի, նրանք կոզակների հետ սկսած փոխհրաձգության ժամանակ սպանվեցին: Մեկ այլ տեսակետի համաձայն, որը, մեր կարծիքով, առավել ճշմարտամոտ է, ոստիկանների կողմից շրջապատված Մարգիսն ու Պողոսը՝ «տեսնելով, վոր այլևս ազատվելն անհնար է, ընդունում են իրենց մոտ պատրաստի պահած թույնը և հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահանում», իսկ Մհերին հաջողվում է փախչել¹:

Ցավոք, իշխանուհի Մարիա Ֆյոդորովնայի, ենթասպա Սիպլիվենկոյի և կառապանի անձնագրի գործողությունների շնորհիվ կառավարչապետը ողջ մնաց: Վերքերը խորը չէին, և ֆիզիկապես նա շատ արագ ապաքինվեց, բայց հոգեպես խանգարվեց: Մանավանդ որ իշխանություններին այդպես էլ չհաջողվեց պարզել ո՛չ մահափորձի կազմակերպիչների, ո՛չ էլ ահաբեկիչների անձը: 1905թ. հունվարի 1-ին կիսախելագար կառավարչապետը պաշտոնանկ արվեց, իսկ ևս յոթ ամիս անց՝ 1905թ. օգոստոսի 1-ին, վերադարձվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցուց այնքան դժվարությամբ բռնագրավված գույքը:

Հոկտեմբերի 14-ի ահաբեկչությունը ցնցող տպավորություն թողեց ողջ կայսրության մեջ: Գ. Գոլիցինը պատժվեց այն բանի համար, որ փորձում էր վերջ տալ հայ ժողովրդի գոյությանը Կովկասում, այն բանի համար, որ կարծում էր, թե «հայը հաչել և ոչ խածել գիտե»²:

¹ ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 24, թ. 9, գ. 114, թ. 1: Մհեր Մանուկեան, «Հնչակ» ամսաթերթ, Փարիզ, 1906, տասներիններորդ տարի, թիւ 7, յուլիս, էջ 69-70

² Պատմական օրը, «Հնչակ» ամսաթերթ, Լոնդոն, 1903, տասներկեցերորդ տարի, թիւ 9-10, դեկտեմբեր, էջ 79:

Armen HAYRAPETYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: armenani@mail.ru

THE ACTIVITY OF “ARAGATS” BRANCH OF THE SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY IN 1903

At the end of the XIXth centuries tsarism made definite steps to restrict the rights of the Armenian church. According to the law passed in June, 1903 the property and deposits belonging to the church passed on to the dispensation of corresponding state ministries.

The law rose the just rebellion of Armenians. Aleksandrapol gave the signal of the rebellion. In July 29, 1903 Catholicos Mkrtych Khrimyan arrived in Aleksandrapol from Tiflis for going to Ejmiacin. The Hnchakyans living there tried to interfere with the movement but did not have success. The excited crowd began to throw stones on gendarmes and they broke the glasses of the train. The terrorizing of Russian officials and their fawners was one of the struggles against the manifestations of the tsarizm’s anti-Armenian policy which was carried out by the local structures of national parties.

In 1903, August 12 a number of Hnchukyans killed the Russian clergyman Vasilev with dagger slashes. The next stab was addressed to anti-Armenian administrator G. Golitsin who had planned to organize Armenian-Georgian clashes, then to take Armenians to Sibir.

Hnchukyan “Aragats” branch of Aleksandrapol made a decision to terror G. Golitsin for having machinated against the Armenians in 1903, August 16. In 1903 October 14, three Hnchukyan terrorists on the way to Kojor gave four blows of daggers to the administrator. Unfortunately, he remained alive.

Physically recovered and spiritually disordered G. Golitsin in 1905, January 1, was dismissed and on August 1 the expropriated goods taken from the Armenian Apostolic church with great difficulty was given back.

Արման ՄԱԼՈՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ (Երևան)

E-mail: armanmaloyan@mail.ru

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՒԾՍՑԱԾ ՀԱՅԵՐԻ ԵՎՍ ՄԵԿ
ԷԹՆՈԴԱՎԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍԻՆ**

Վերջին տարիներին բավական հաճախակի են դարձել անդրադարձները ծպտյալ (գաղտնի, թաքուն, կրիպտո) կամ այլախոս ու այլադավան հայերի հիմնախնդիրներին: Մասնավորապես, ուսումնասիրություններ են կատարվում ու հողվածներ հրատարակվում թուրքացած, արաբացած, քրդացած, մահմեդական, կաթոլիկ հայերի մասին: Այս համատեքստում անհրաժեշտ է բարձրաձայնել և ուսումնասիրել նաև ասորացած հայերի պատմությունը: Տարիներ առաջ «Ազգ» օրաթերթում («Ազգ», թիվ 34, 27 փետրվար, 2009, էջ 5) թուրքագետ Հ. Չաքրյանը, անդրադառնալով պրոֆ. Մալիմ Ջոհջեի այն հայտարարությանը, թե «կան նաև ասորի դարձած հայեր», գրում է հետևյալը. «Եթե հայերի թուրքանալու, քրդանալու, արաբանալու, այսինքն՝ մահմեդականություն ընդունելու պատճառը բնաջնջումից փրկվելն էր, թեև դա նրանց նույնիսկ տեղահանությունից չի փրկել, ապա 1915-ին բնաջնջման ենթարկվել են նաև ասորիները: Քանի որ ճակատագիրն անխուսափելի էր, ապա ի՞նչ նշանակություն պիտի ունենար հայի համար ասորու ինքնությամբ սպանվելը»:

Ի տարբերություն մեծարգո թուրքագետի՝ համոզված ենք, որ ներկայիս Թուրքիայի տարածքում եղել են և կան նաև ասորացած հայեր: Խոսքը հիմնականում Տուր Աբդինի և Հայաստանի հարավային այն տարածաշրջանների մասին է, որտեղ վաղնջական ժամանակներից կողք կողքի ապրել են հայեր ու ասորիներ: Տուր Աբդինը մոտավորապես համընկնում է հետագայի Դիարբեքիրի նահանգի Մարդինի գավառի Միդիադի գավառակին: Տեղանունների բառարանի հեղինակները Տուր Աբդինը նույնացնում են Ծավդեք (Կադմուխ, Տուն Կադմուսի) գավառին՝ գրելով, որ այն գտնվել է Հայոց (Վերին) Միջագետքում, Տիգրիս գետի վերին հոսանքի շրջանում, Բաբխի երկրամասի և Կաշիյարի լեռան մոտակայքում: Հայկական աղբյուրները տարածաշրջանը հիշատակում են Ծավդեք, Մովսես

Խորենացին՝ Կադմեայ Տուն անունով, որը նույնացվում է Կորճայք աշխարհի Կորդուք գավառին: Հնագույն ժամանակներից այս տարածաշրջանում ապրել են հայեր, հետագայում բնակություն են հաստատել նաև ասորիներ, քրդեր: Փոխվել է շրջանի ժողովրդագրական պատկերը, ասորիները մեծամասնություն են դարձել, սկսվել է հայերի ասորացման գործընթաց: Ասորիների բնակության հիմնական օջախներից է եղել Դիարբեքիի վիլայեթը, որը կազմված էր Դիարբեքիի, Մարդինի, Արդնիի սանջակներից և 13 կազաներից:

Ուշագրավ է հետևյալ փաստը. 1909թ. Տուր Աբդինում ճանապարհորդած Գերտրուդ Բելը հիշատակում է Հեշտերեկ (Աշտարակ) անունով գյուղ: Ակնհայտ է, որ ժամանակին այն եղել է հայկական (Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում «աշտարակ» բառը չի համարում սեմական լեզուներից փոխառություն): Ավելի ուշ շրջանի քարտեզում արդեն այդ անունով գյուղ չկա. հավանաբար թուրքերն այն հետագայում անվանափոխել են, կամ գյուղն է ապարնակեցվել:

1790-ական թթ. հատուկ առաքելությամբ դեպի Օսմանյան կայսրություն, ապա նաև Պարսկաստան ճանապարհորդած ֆրանսիացի բնագետ Գ.Ա. Օլիվիեն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում տարածաշրջանի բնակչության վերաբերյալ: Օլիվիեի վկայությամբ՝ Մարդինում կար 1500 հակոբիկյան հայ: Օլիվիեն Մարդինի և Մծբինի բնակչության մասին խոսելիս երկու դեպքում էլ օգտագործում է «հակոբիկյան հայ» արտահայտությունը:

Ասորացած հայերի մեծ մասը, դավանական առումով, եղել է Հակոբիկյան եկեղեցու հետևորդ (յակուբի): Հայ Առաքելական և Հակոբիկյան եկեղեցիների միջև էական տարբերություններ գրեթե չկան: Այս հանգամանքը զգալի դեր է խաղացել հայերի ասորացման գործընթացում:

Հայերի ասորացումը շարունակվել է նաև Հայոց ցեղասպանության հետևանքով տարագրված հայերի շրջանում, երբ որոշ թվով հայեր ապաստանել են լեռնային դժվարամատչելի Տուր Աբդինի շրջանում:

Ամփոփելով նշենք, որ խնդիրը պատմաազգագրական լուրջ ուսումնասիրության կարիք ունի:

Arman MALOYAN(Armenia)

National Institute of Education, Ministry of Education and Science of RA (Yerevan)

E-mail: armanmaloyan@mail.ru

CONSIDERATIONS ON YET ANOTHER ETHNO-RELIGIOUS GROUP OF ASSIMILATED ARMENIANS

References to the problems of non-Armenian speaking and non-Christian or clandestinely assimilated Armenians have been notably frequent in recent years. In particular, research has been done into, and articles published on Turkish, Arab and Kurdish people of Armenian origin, as well as on Armenians converted to Catholicism and Islam. In this context it is but natural to research into the history of assimilated Assyrian Armenians.

There is no doubt that there have been and there still are Assyrians of Armenian origin living in the territory of modern Turkey, particularly in Tur-Abdin and (historical) Southern Armenia, regions with a long-standing mixed co-existence of the two ethnicities.

Tur-Abdin matches the Midiad district of the Mardin province in the later Diarbakir state. Since ancient times Armenians had been living in this area that was later populated also with Kurds and Assyrians. The demography of the region had changed gradually: Assyrians had become a majority, and that had led to the assimilation of Armenians.

The majority of the assimilated Armenians were followers of the Jacubi church. Since there are not any major disparities between the Jacubi and the Armenian Apostolic churches, the fact had considerably affected the process of assimilation.

Later the process of assimilation went on among Armenians deported in the course of the Genocide, when groups of them had settled in the safer Tur-Abdin region.

In conclusion, it is our opinion that the issue calls for further historical and ethnographic research.

Гаяне МАХМУРЯН (Армения)

Институт истории НАН РА (Ереван)

E-mail: ggmakhm@hotmail.com

АЛЕКСАНДРОПОЛЬ 1918-1920 гг. В ДОКУМЕНТАХ ГОСУДАРСТВЕННОГО ДЕПАРТАМЕНТА США И НАЦИОНАЛЬНОГО АРХИВА АРМЕНИИ

Документы Государственного департамента США и Национального архива Армении позволяют выделить три основные проблемы социальной жизни Александрополя 1918-1920 гг. Это 1) восстановление города после разрушительного вторжения, завершившегося эвакуацией турецкой армии 26 декабря 1918 г. 2) Вопросы военной подготовки и самообороны. А также 3) организация помощи беженцам, покинувшим Западную Армению и Карсскую область. Первая задача требовала быстрого восстановления городского железнодорожного вокзала, депо и магистрали до Сарикамыша. Был проинспектирован также важный автомобильный маршрут по шоссе Трапезунд-Эрзерум-Карс-Александрополь.

Вторая проблема включала в себя оснащение и содержание гарнизона в 6-7 тыс. солдат, у которых не было хлеба, обуви и боеприпасов, но сохранялась высокая готовность защищать свою страну. Третья часть работы охватывала 68 тыс. крайне истощенных беженцев, сосредоточившихся в городе с 35-тысячным постоянным населением. Александрополь стал одним из шести региональных центров помощи в Закавказье (вместе с Батумом, Тифлисом, Карсом, Ереваном и Каракилисом), а также одним из ее четырех ближневосточных центров (вместе с Бейрутом, Константинополем и Тавризом).

В соответствии с мартовскими посланиями 1919 г. будущего президента США, а на тот момент - генерального директора помощи стран Антанты Г. Гувера, обнаруженными в Национальном архиве Армении, государственная Американская продовольственная администрация утвердила двойной рацион ежедневного потребления для армянских беженцев; она

взялась оплатить половину всех поставок, оформляемых как товарный кредит, и доставить грузы на кораблях ВМС США.

Первые поставки помощи прибыли в апреле 1919г., 15 мая администрация Американского Комитета Помощи доставила ее первые грузы зерна и муки. В октябре 1919 г. тысячи женщин и детей приступили к общественным работам. Железнодорожное движение стало регулярным, с 3 ноября – беспрошленным, и перешло под контроль Американского Комитета Помощи на Ближнем Востоке. Беженцы с Казачьего поста и Полигона (где их разместили 3 марта 1920г.) ремонтировали здания и дороги, производили ткани и одежду для армии и сирот. Последняя группа детей перешла под опеку армянского государства.

Следующий 1920г. знаменовался открытием 31 января Государственного университета, большевистским военным выступлением 10-22 мая; с 1 августа в Александрополь была перенесена резиденция генерального директора кавказского отделения Американской Помощи на Ближнем Востоке Э. Ярроу; а 22 сентября вспыхнула новая турецко-армянская война. К 5 ноября бои переместились под стены города, вследствие чего премьер-министр РА А. Оганджян обратился к президенту В. Вильсону и Верховному комиссару США в Константинополе М. Бристолу с просьбой о защите. 11 ноября полномочный представитель Республики Армения в Вашингтоне Г. Пастрмаджян обсуждал тяжелое положение города с госсекретарем Б. Колби. Руководитель внешнеполитического ведомства, как и его консул Ч. Мозер ответили, что США обеспечивали поставки продовольствия, но не имели военных обязательств.

Gayane MAKHMOURIAN (Armenia)

Institute of History NAS RA (Yereva)

E-mail: ggmakhm@hotmail.com

ALEXANDROPOL OF 1918-1920 IN THE DOCUMENTS OF THE U.S. DEPARTMENT OF STATE AND THE NATIONAL ARCHIVES OF ARMENIA

Records of the U.S. Department of State in common with papers of the National Archives of Armenia point out three main problems of Alexandropol's social life in 1918-1920. They are the reconstruction of Alexandropol after the devastating invasion and Turkish evacuation of December 26, 1918. The problems concern military training and self-defense, as well as the issues of relief for the refugees from the Western Armenian and Kars Oblast. The first task demanded an urgent reconstruction of the city terminal and depot together with the railway line to Sarikamish. A great transit highway Trebizond-Erzurum-Kars-Alexandropol had been inspected too. The second problem included a necessity to equip and maintain 6-7 thousand military force, which lacked bread, shoes, uniforms and ammunition, but kept its will to defend the country. And the third issue concerned 68 thousand extremely exhausted refugees, concentrated in the city of 35 thousand local population. Alexandropol became one of the six main centers of relief in Transcaucasia (with Batum, Tiflis, Kars, Erevan, Karaklis) and one of the four main centers in the Near East (the other were Beirut, Constantinople and Tabriz).

According to the U.S. President to-be and Director General of the Allied Relief H. Hoover correspondence of March 1919, discovered at the Armenian National Archives, the state agency of the American Food Administration had confirmed the double ration per day for Armenian refugees; it resolved to pay half of the cost of all transactions which were to be put as a goods credit and were shipped by the U.S. Navy.

The first consignments of relief emerged in April, 1919. On May 15 the American Relief Administration had brought its loads of wheat and flour. In October, 1919, thousands of children and women participated in public works.

The railway traffic had become regular, duty-free from November 3 and was controlled by the American charitable Near East Relief. The refugees from the Kazachi Post and Polygon (accommodated on March 3, 1920) repaired buildings and roads, produced textile and clothes for the Army and orphans. The latter ones had transferred under the State auspice.

The next 1920 brought an inauguration of the State University on January 31; a Bolshevik rebellion of May 10-22; Alexandropol had become a residence of the Director General of the Caucasian branch, Near East Relief, E. Yarrow on August 1; then a new war with Turkey had exploded on September 22. It brought the combats under the city walls on November 5. The Prime Minister H. Ohanjanian had appealed to President W. Wilson and the U.S. High Commissioner in Constantinople M. Bristol for protection. The Armenian Plenipotentiary G. Pastrmajian discussed the fate of the city with the State Secretary B. Colby on November 11. The high official and his Consul C. Mozer responded that the U.S. afforded provisions, but did not bind by military obligations.

Ֆելիքս ՄՈՎՍԻՍՅԱՆ (Հայաստան)

Վանաձորի պետական համալսարան

E-mail: felmov@mail.ru

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Արևմտահայերի ազգային սահմանադրության գաղափարախոսական ակունքները, ընդհանուր գծերն ու սկզբունքները, եվրոպական սահմանադրությունների, հունական և հրեական համայնքների կանոնադրությունների հետ առնչությունները և բազմաթիվ այլ հարցեր դեռևս համակողմանիորեն ուսումնասիրված չեն: Տարբեր են ազգային սահմանադրու-

թյանը տրված գնահատականները՝ «ներքին ինքնավարության օրենք»¹, «որչափ ազգային, նույնչափ և օսմանեան պետական օրենք»², «ազգային կանոնադրություն»³, «ազգային-եկեղեցական գործերի կանոնադրություն»⁴, «Կանոնադրություն հայ համայնքի»⁵, «ազգային սահմանադրություն»⁶:

1860-ական թվականներին հայ հասարակական մտքում և հատկապես պարբերական մամուլում շրջանառվում էր այն գաղափարը, որ արևմտահայ լիբերալների հեղինակած 1857թ. «Ազգային կանոնադրությունը» և դրա հիման վրա կազմված 1860թ. «Ազգային սահմանադրությունը» պարունակում էին քաղաքական տարրեր, ուստի Բարձր դուռն այն չվավերացրեց՝ առաջնորդվելով այն մտայնությամբ, որ «պետութեան մէջ պետութիւն չի կրնար ըլլալ»⁷: Իրականում 1860թ. մայիսի 24-ի և 1863թ. մարտի 17-ի «Ազգային սահմանադրությունները» կանոնակարգում էին արևմտահայ համայնքի ներքին կյանքը և պարունակում էին ազգային ներքին մշակույթի ինքնավարության սաղմեր, որոնք ամփոփված էին վեց հիմնական սկզբունքներում: Դրանցում պատրիարքական իշխանության մասին որևէ ակնարկ չկար: Խոսքը ազգային պարտքի, ազգի և անհատի փոխադարձ պարտավորությունների, իրավունքի, ազգային վարչական իշխանության և երեսփոխանության մասին էր: Արևմտաեվրոպական սահմանադրությունների սկզբունքով կազմված ազգային սահմանադրությունը կրում էր լուսավորական ու ազատական գաղափարների ազդեցությունը: Այն իրավական տեսանկյունից կարգավորվում էր ոչ միայն Կ. Պոլսի, այլև Օսմանյան կայսրության ողջ հայ ազգաբնակչության կրթական, լուսավորական, հոգևոր և մշակութային կյանքը:

¹ Տե՛ս Ատոմ, *Ազգային սահմանադրությունը, գծեր մեր մշակույթի պատմութենէն, Կ. Պոլիս, 1914, էջ Ա:*

² Տե՛ս Մարտիան, *Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում 1860-1910, հատոր Ա, Թիֆլիս, 1912, էջ Բ:*

³ Ա. Ալպոյաճեան, *Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը: Կ. Պոլիս, 1910, էջ 331:*

⁴ «Հայրենիք» ամսագիր, 1935, թիվ 5, էջ 79:

⁵ *Роллен Жекмен М. Г. Армения, армяне и трактаты. М., 1986, стр. 18.*

⁶ «Հայրենիք» ամսագիր, 1954, թիվ 10, էջ 93; 1955, թիվ 6, էջ 90, թիվ 7, էջ 96:

⁷ Ատոմ, *նշված աշխ., էջ 38:*

Բարձր դրան վավերացրած 1863թ. «Ազգային սահմանադրությունը» պատրիարքին ճանաչում էր Օսմանյան տերությունը «հայոց ազգին համար տալու հրամաններուն գործադրութեան բնական միջնորդ և Ազգային վարչութեան գլուխ»¹: Դրանով սուլթանը նպատակ էր հետապնդում նախ՝ վերջ տալ պատրիարքական մենատիրությանը, իրավունքներին ու արտոնություններին և երկրորդ՝ հպատակ արևմտահայությանը դիտել ոչ թե ազգային, այլ կրոնական համայնք: Դրա վկայությունն այն է, որ փաստաթուղթը թուրքերեն կոչվում է «Հայ ազգի կանոնադրություն», որի վերնագրում և գլուխներում բացակայում է «ազգային» բառը:

Արևմտահայ ազատամիտ մտավորականությունը, վաճառականներն ու արհեստավորները ոգևորությամբ ընդունեցին սահմանադրությունը, որը «ամբողջ ազգն է»: Սահմանադրության մեջ նրանք տեսնում էին նոր կյանք, միություն, զորություն և ազգային հույսերի իրականացում: Այդ հույսերը հոսոյ ցնդեցին, երբ պարզվեց, որ 1863թ. «թլպատված» և մասնակիորեն «խեղացած»² «Սահմանադրութեան ազդեցութիւնը խիստ փանաքի եղավ»³, քանզի չէր ապահովում արևմտահայության էական շահերն ու քաղաքացիական իրավունքները:

Ազգային սահմանադրության ստեղծած հուսախաբությունը և «Կ.Պոլսի բարոյական գարշահոտությունը»⁴ հաղթահարելու նպատակով մի խումբ լիբերալ գործիչներ ձեռնամուխ եղան մասոնական օթյակների ստեղծմանը: Նրանք նպատակ էին հետապնդում կյանքի կոչել բարոյագիտական «մի շարք վսեմ գաղափարներ՝ եղբայրութիւն, համբերատարութիւն, գութ, օգնութիւն, ինքնակատարելագործում, լուսավորութիւն: Եվ այդ բոլորի վրայ սուսառնում էր մի այլ առաքինություն՝ «ըլլալ ազատ»⁵:

Այդ ազատամիտ երիտասարդներից Ս. Ազնավուրը, Ստ. Ոսկանյանը, Ս. Հեթիմյանը, Հ. Մվաճյանը, Ս. Թագվորյանը մինչև սահմանադրական շարժումը մասոն ձեռնադրվել էին եվրոպական օթյակներում: Ազա-

¹ Տե՛ս Ազգային սահմանադրութիւն հայոց. Կ. Պոլիս, 1860, էջ 12:

² Տե՛ս Նայրանդյան Մ., Երկերի ժողովածու, հատոր 4, Եր., 1983, էջ 292:

³ Չիլինկիրյան Գր., Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս, Չմյունխա, 1883, էջ 58:

⁴ «Հայրենիք» ամսագիր, 1937, թիվ 5, էջ 78:

⁵ Նույն տեղում, էջ 82:

տամիտ սահմանադրականներ Մ. Վիչենյանը, Ն. Պայյանը, Հ. Կրճիկյանը, Ն. Ռուսինյանը, «Ուսումնական խորհուրդ» խմբակի անդամներ Գ. Մարկոսյանը, Ս. Ապրոն, Մ. Մինասյանը նախ՝ պատրաստեցին 1857թ. «Ազգային կանոնագիրը», ապա՝ 1860թ. «Ազգային սահմանադրությունը»:

Ն. Ռուսինյանը, արևմտահայության կյանքի կանոնագիրը «Ազգային սահմանադրություն» անվանելով, պատրանքների մեջ չէր, ոչ էլ տուրք էր տալիս քաղաքական սնապարծության, այլ գաղափարական համերաշխություն էր արտահայտում մասնության Աստվածաշունչ համարվող գլխավոր փաստաթղթին՝ Ջոն Անդերսոնի «Սահմանադրությանը»:

Սկսած 1860թ. հունվարից՝ Չմյուռնիայում գործունեություն էր ծավալում «Հուներոս» թիվ 806 մասունական օթյակը, որի վերահսկիչ Մ. Ազնավուրը 1862թ. Կ.Պոլսում ստեղծեց անգլիական Odd Fellows-ի հայկական մասնաճյուղ՝ «Օրիոն» (Հայկ) անունով¹: 1864թ. ապրիլի 29-ին Չմյուռնիայում ստեղծվեց հայկական առաջին «Մեծն Տիգրան» թիվ 1014 օթյակը, որի հայտնի դեմքերից էին սահմանադրականներ Մ.Նուպարյանը, Մ. Մամուրյանը, Գ. Զիլինկիրյանը, Տետեյան եղբայրները²:

1866թ. փետրվարի 22-ին Կ.Պոլսում Մ. Ազնավուրի նախագահությամբ 18 «լուսավորականներ» հիմնադրեցին «Մեր» օթյակը, որին շուտով անդամագրվեցին սահմանադրականներ Մ. Մամուրյանը, Մ.Փափազյանը, Ս. Թագվորյանը, Գ. Զիլինկիրյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Հ. և Գ. Նորատունկյանները և ուրիշներ³:

«Մեր» օթյակի նշանաբանն էր՝ «Միություն, Մեր, Լուսավորություն, Աշխատանք և Ազատություն», որտեղ «ազատություն» բառը ենթադրում էր ազգը ազատել հոգևորականության և ամիրայության կամայականություններից, պաշտոնյաների բռնություններից, կրոնական կոիվներից ու սոցիալությունից⁴:

¹ «Հայրենիք» ամսագիր, 1954, թիվ 10, էջ 94-95; «Գեանք եւ արուեստ», 1936, թիվ 8, էջ 226:

² «Գեանք եւ արուեստ», 1935, տարեգիրք Ե տարի, էջ 73; «Հայրենիք» ամսագիր, 1955, թիվ 2, էջ 81-82:

³ «Հայրենիք» ամսագիր, 1937, թիվ 7, էջ 124-133; «Գեանք եւ արուեստ», 1935, Ե տարի, էջ 73-74:

⁴ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, թիվ 5, էջ 84:

Հետագայում հիմնադրված «Եփրատ» թիվ 1078 և «Հայաստան» թիվ 1185 մատնական օթյակները հավատարիմ մնացին ազատության, ազգային առաջադիմության և ազգի օգտին գործելու գաղափարին:

Feliks MOVSISYAN (Armenia)

Vanadzor State University

E-mail: felmov@mail.ru

GENERAL FEATURES AND PRINCIPLES OF WESTERN ARMENIANS' NATIONAL CONSTITUTION

The ideological sources of western Armenians' national constitution, European constitutions, connections between Greek and Jewish community constitutions, and various other issues haven't been comprehensively studied. "National constitutions" (May 1860 and March 1863), composed by the imitation of West-European constitutions, regulated the inner life of western Armenian community and contain self-government embryos of the national culture that had been summarized in six main principles. Western Armenian liberal intellectuals adopted the constitution with great inspiration seeing in it new life, union, power and realization of national hopes. However, these hopes blew up when the Turkish authorities confirmed the constitution as "Constitution of the Armenian Nation" which didn't satisfy the western Armenians' interests and civil rights. To overcome the disappointment related to the national constitution a group of liberal and constitutional activists established mason lodges. They were aimed at giving birth to some moral high ideas and being free.

The word "freedom" in the motto "Great Tigran" and "Love" implied to free the nation from the whim of the clergymen, tyranny and ignorance of the authorities. "Ephrat" and "Armenia" lodges remained loyal to the ideas of freedom, national leadership and functioning for the benefit of the nation.

Հակոբ ՄՈՒՐԱԴՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան)

E-mail: muradyanhakob@yahoo.com

ՇՈՐԱԳՑԱԼԻ ԳԱՎԱՌԱԿԻ (ԱՐԵՎՍՏՅԱՆ ՇԻՐԱԿ)

ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1830-1877 թթ.¹

Զարգացած միջնադարում հայկական թագավորությունների անկումից հետո օտար տիրապետությունները հաջորդեցին մեկը մյուսին: Մեծ Հայքի Այրարատ աշխարհի ութերորդ գավառ Շիրակը, որն Ախուրյան գետով բաժանվում է երկու մասի՝ արևելյան և արևմտյան, 16-րդ դարի սկզբներին համապատասխանաբար նվաճվեցին Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության կողմից: Արևմտյան Շիրակը հայտնի է նաև այլ անվանումներով՝ Շորագյալ, Շիրակավան, Շորեգեր, Շորեգի, Շորեկել: Մինչև 19-րդ դարի առաջին երեսնամյակ այն Կարսի էյալեթի (նահանգ) սանջակներից (գավառ) էր: Գավառը թեև երեք անգամ՝ 1806-1812, 1828-1829 և 1853-1856 թթ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքում գրավվում է ռուսական զորքերի կողմից, սակայն վերադարձվում է Օսմանյան կայսրությանը: Նվաճված շրջանները թուրքերին թողնելու լուրը մեծ հուսահատություն է առաջացնում հայության շրջանում: Չկամենալով մնալ օսմանյան տիրապետության տակ՝ բազմահազար հայեր նախընտրում են տեղափոխվել Ռուսական կայսրության նորանվաճ տարածքներ, այդ թվում՝ Արևելյան Հայաստան, իսկ դրան էլ հետևում է կայսրության տարածքներից, հիմնականում Բորչալուի և Ղազախի շրջաններից ու մասամբ էլ Պարսկաստանից կարափափախների հաստատվելն Աղբաբայում և Շորագյալում²: Կարափափախները բնակվում էին Ախուրյանի առափնյա շրջաններում և հատկապես Ալաջայի լեռնե-

¹ Շորագյալի գավառի 16-րդ դարից մինչև 1830 թ. վարչական բաժանումների, բնակավայրերի տեղագրության, ժողովրդագրական նկարագրի ու տեղաշարժերի մասին տե՛ս Հ. Մուրադյան, Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր., 2006: Ընդգծենք, որ ուսումնասիրության համաձայն՝ գավառը բացառապես հայաբնակ էր:

² Хелмицкий П., Карсская область, военно-статистический и географический обзор, 1 изд., ч. 2, Тифлис, 1893, с. 34-35.

րում, սակայն հավաք ազգային միավոր չէին: Նրանց հետ բնակվում էին նաև բազմաթիվ հայեր:

1834 թ. օսմանյան իշխանությունների իրականացրած վարչական հերթական փոփոխությամբ Կարսի էյալեթն արդեն որպես սանջակ միացվեց Էրզրումի էյալեթին: Այսպիսով, Շորագյալի գավառը վերածվեց կազայի (գավառակ). կայմակամի նստավայրը Հաջի-Վալի գյուղն էր:

1829 թ. նոյեմբերի 30-ին կազմված մի վավերագրի համաձայն՝ Շորագյալի 46 գյուղերից 36-ը զուտ հայաբնակ էին, իսկ յոթը՝ հայ և թուրք խառը բնակչությամբ, որոնցում էլ հայերը մեծամասնություն էին կազմում: Միայն երեք գյուղերն էին թուրքերով բնակեցված: Գավառակում հայկական 1165 տան դիմաց, թուրքերը կազմում էին ընդամենը 249-ը¹:

Շորագյալում բնակվում էին նաև պարսիկներ², քրդեր, կային նաև քրդաբնակ գյուղեր³:

Օսմանյան իշխանությունները ռուս-թուրքական պատերազմներից հետո ձգտում էին էլ ավելի հզորացնել ինչպես սահմանային կարևոր ամրությունները, այնպես էլ այդ գոտու մահմեդականներին, փոխարենը՝ թուլացնել իրենց համար անվստահելի քրիստոնեական տարրը:

Ռուսական կայսրության կողմից Կովկասի նվաճումից հետո գավառակում բնակություն են հաստատում նաև կովկասյան լեռնականներ՝ գլխավորապես կաբարդինցիները և օսերը:

«Եթե մեզ հասած չլիներ պատմական ոչ մի տվյալ այս երկրամասի անցյալ ճակատագրի մասին, ապա միայն հուշարձանների ավերակները, չափազանց մեծ թվով տարածված ամբողջ տարածքով, չեն թողնում ոչ մի կասկած, որ այդտեղ քրիստոնեությունը երբևէ եղել է ծաղկուն վիճակում,

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257^{III}, վավ. 63:

² Ալիշան Ղ., Շիրակ, էջ 112: Սարգսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 194:

³ Երեմիա Տևկանց, Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական /1872-1873թթ./, էջ 65, 84: Я. Д. Малама, Описание Эрзерумского вилаяета, С.-Петербург, 1874, с. 21.

և որ այն իր տեղը զիջել է մահմեդականությանը միայն սարսափելի կատակլիզմներից հետո», -նշել է Դ. Բաքրաձեն¹:

Արևմտյան Շիրակն ավելի ընդարձակ է, քան արևելյանը: Շորագյալի մասին գրած բոլոր հեղինակները միաբերան վկայում են գավառի՝ տարածքի ընդարձակության համեմատ, գյուղերի ու բնակչության սակավաթվության, ինչպես նաև ոչ խիտ բնակեցված լինելու փաստը:

Վերը թվարկված իրադարձությունների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Հայաստանի խորհրդի անդամ, Հ. Յ. Դաշնակցության ճանաչված գործիչ ու մտավորական, հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահ Մարտիրոս Հարությունյանի թվով 24 նամակները: Դրանք ուղղված են Հայաստանի խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին, ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազնունուն և, հատկապես, արտաքին գործերի նախարար Միրական Տիգրանյանին՝ ժամանակագրական տեսակետից ընդգրկելով 1918թ. դեկտեմբերից մինչև 1919թ. մարտը: Նշված նամակները հայ-վրացական հարաբերությունների տվյալ ժամանակափուլի պատմությունը

հետազոտող մասնագետների (Ռ. Հովհաննիսյան, Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Ա. Մելքոնյան, Կ. Սարգսյան, Վ. Վիրաբյան և ուրիշներ) կողմից ուսումնասիրված չեն: Դրանք ինքնագիր բնագրերից վերծանվում և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում մեր կողմից: Փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվի թիվ 200 ֆոնդում (Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն): Պատրաստվում ենք առաջիկայում դրանք հրատարակել:

Նշենք նաև, որ, բացի նշված նամակներից, Թիֆլիսից Երևան վերադառնալուց հետո՝ 1919թ. ապրիլի 7-ին, Մ. Հարությունյանը և պատվիրակության մյուս անդամներն իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ ընդարձակ գեկուցում-հաշվետվություն են ներկայացրել վարչապետի պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանին: Այս արժեքավոր փաստաթուղթը տարիներ առաջ հրատարակել ենք («Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2009, N 1, էջ 185-206):

Մ. Հարությունյանի նամակներում անդրադարձ է կատարվում գինադարի վերաբերյալ բանակցություններին, խաղաղարար կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներին, կոնֆերանսի ընթացքին, երկկողմ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման խնդրին, հայ-վրացական հարաբերություններին առնչվող այլ վիճահարույց հարցերի:

Նշյալ նամակներն առաջին հերթին աչքի են ընկնում հավաստիությամբ: Դրանք պետական մտածելակերպ, գոյություն ունեցող միջպետական հակասությունները դիվանագիտական ճանապարհով լուծելու հմտություններ ունեցող, սառը, առանց հույզերի դատողություններ անող քաղաքական գործչի և դիվանագետի եզրահանգումներ, վերլուծություններ ու առաջարկներ են, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել նաև մեր օրերում:

Hamo SUKIASYAN (Armenia)

Institute of History NAS RA (Yerevan)

E-mail: hamosukiasyan@gmail.com

ELUCIDATION OF THE WORKS OF ARMENIAN - GEORGIAN PEACE CONFERENCE IN 1919 IN TBILISI IN THE LETTERS BY MARTIROS HARUTYUNYAN

After the Armenian- Georgian war in December 1918, Armenian-Georgian territorial disputes were seemingly "settled" at the Armenian - Georgian peace conference held on 9-16 January, 1919. Georgian regime was established in Akhalkalaki, Lori, liberated by the Armenian troops, became a "neutral zone". Resolution of other contentious issues concerning the relations (including the diplomatic relations) between Armenia and Georgia lasted till March 1919.

Still uninvestigated 24 letters by a member of the Parliament of Armenia, a prominent figure of Armenian Revolutionary Federation, an intellectual, the head of the Armenian delegation at the Armenian - Georgian peace conference Martiros Harutyunyan have a special importance for elucidating the above-mentioned events. The original letters are investigated and put into scholarly circulation for the first time. In the letters questions concerning the armistice negotiations, the preparatory work and the process of the peace conference, the restoration of the bilateral relationship, other disputable issues of the Armenian-Georgian relations are touched upon.

First of all, the letters are distinguished by accuracy. They represent analysis, conclusions and suggestions by a political figure and diplomat having a state mentality, skills to solve the interstate contradictions in a diplomatic way, which are also relevant in our days.

Թորգոմ ԱՂԱՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: aghanyan.torgom@gmail.com

**1926 թ. ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՎ 1988 թ. ՍՊԻՏԱԿԻ
ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

Զեկուցումը նվիրված է 1926թ. Լենինականի (այժմ՝ Գյումրի) և 1988թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծությանը: Փորձ է արվել համեմատել վերոհիշյալ երկու ավերիչ երկրաշարժերի հետևանքով տարածաշրջանում առաջացրած սոցիալ-մշակութային, տնտեսական և ժողովրդագրական փոփոխությունները, դրանց պատճառած նյութական վնասը, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջաններում աղետի հետևանքների հաղթահարման տարաբնույթ ձևերն ու մոտեցումները: Այս պարագայում հատկապես կարևորվում է ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը, այսինքն՝ բնակչության թվաքանակի փոփոխությունները, բնական ու մեխանիկական շարժերի բնութագիրը, բնակչության կազմը երկրաշարժին նախորդող ու հաջորդող ժամանակահատվածում:

Վերլուծությունն իրականացնելու համար տրվել է համառոտ պատմական ակնարկ՝ ներկայացնելու տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակը, փորձելով հասկանալ խնդրի լուծմանն ուղղված ռազմավարությունների, իրականացված գործողությունների ընդհանրություններն ու տարբերությունները նշված երկրաշարժերից հետո:

Այս առումով, որպես ընդհանրություն է դիտարկվել աղետից անմիջապես հետո ՀԽՍՀ կառավարության, ԽՍՀՄ պետական կառույցների, մասնավորապես, բանակի անմիջական օգնությունը, ինչպես նաև միութենական մյուս հանրապետությունների աջակցությունը աղետյալների փրկելու, աղետի հետևանքները վերացնելու և վերականգնման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ: Քանի որ Սպիտակի երկրա-

շարժը տեղի ունեցավ խորհրդային իշխանության վերջին տարիներին, ուստի սկզբնական շրջանում մոտեցումներն ու գործողություններն ըստ էության նույնն էին, ինչ 1926 թ. երկրաշարժի ժամանակ:

Ինչ վերաբերում է տարբերություններին, դրանք առավել ակնառու են երկրաշարժի հետևանքների վերացման ու Ադետի գոտու վերականգնման գործընթացներում: Եթե Լենինականի 1926թ. երկրաշարժի հետևանքներն ամբողջությամբ վերացվեցին մեկուկես տասնամյակում (մինչև Հայրենական պատերազմի սկիզբը), ապա Սպիտակի երկրաշարժի դեպքում, ավելի քան քառորդ դար անց, դեռևս լիովին վերացված չեն, և «Ադետի գոտի» հասկացությունը այսօր էլ մնում է արդիական: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում պայմանավորված են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ գործոններով:

Քաղաքական գործոնն այս դեպքում պայմանավորված է պետական համակարգերի տարբերությամբ. Լենինականի երկրաշարժից հետո վերականգնողական գործընթացներն իրականացվեցին խորհրդային իշխանության օրոք՝ նրան հատուկ գաղափարախոսության պայմաններում, իսկ Սպիտակի երկրաշարժը՝ նորանկախ հայկական պետականության կայացման շրջանում: Այս պարագայում կարևորվում էին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, հայ-ադրբեջանական հակամարտությունը, որը վերաճեց պատերազմի, Հայաստանի Հանրապետության շրջափակումը, որոնք հնարավորություն չտվեցին պետության ուշադրությունը սևեռելու Ադետի գոտու վրա, օգտագործելու առկա ֆինանսական ու մարդկային ողջ ռեսուրսները:

Երկրաշարժի հետևանքների վերացման գործում մեծ նշանակություն ուներ նաև տնտեսական քաղաքականությունը: Եթե Լենինականի երկրաշարժի ժամանակ վերականգնողական աշխատանքներն իրականացվեցին երկրում ընթացող արդյունաբերության զարգացման (ինդուստրիալիզացիա) պայմաններում, և քաղաքում կառուցվեցին բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ, ապա Սպիտակի երկրաշարժից հետո տնտեսության ազատականացումն ու անցումը ազատ շուկայական հարաբերությունների, կազմալուծեցին առանց այդ էլ ավերված տնտեսական համակարգը՝ ինֆրաստրուկտուրան:

Սոցիալական առումով ևս տարբերությունները մեծ են: Լենինականի երկրաշարժից հետո բնակչության մեծ ներհոսք սկսվեց քաղաք՝ նոր բացված ձեռնարկություններում աշխատողների պակասը լրացնելու նպատակով, ուստի կարճ ժամանակում քաղաքային բնակչության թիվը կրկնապատկվեց: Բնակչության թվաքանակի աճին նպաստում էր նաև բնակչության սոցիալական պայմանների բարելավումը՝ բնակարանաշինությունը, բարեկեցիկ կոմունալ-կենցաղային պայմանների ստեղծումը, հասարակության տարբեր խմբերի սոցիալական ապահովումը և այլ գործոններ:

Սպիտակի երկրաշարժից հետո տեղի ունեցան բնակչության թվաքանակի փոփոխություններ, այսպես՝ 1989-1992 թթ. ծնելիության ցուցանիշները նվազեցին, զգալիորեն դանդաղեցին բնակչության աճի տեմպերը, մեծ չափերի հասավ արտագաղթը, այս ամենի հետևանքով կտրուկ փոխվեց Աղետի գոտու բնակչության ժողովրդագրական պատկերը: Բնակարանաշինության դանդաղ տեմպերի հետևանքով ձևավորվեցին կոմունալ-կենցաղային տարրական հարմարություններից զուրկ տնակային թաղամասեր: Աշխատատեղերի բացակայությունն առաջացրեց սոցիալական անապահով իրավիճակ, որը հանգեցրեց չքավորության բարձր տեսակարար կշռի:

Վերը թվարկված գործոնների հետևանքով փոխվեց նաև մշակութային իրավիճակը: Լենինական քաղաքում հիմք դրվեց նոր՝ «բանվորական մշակույթի», որի արդյունքում ձևավորվեց «լենինականցու» տեսակը՝ իր բնորոշ հատկանիշներով, սկսվեց լայնածավալ մշակութային շինարարություն: Իսկ ահա Սպիտակի երկրաշարժից հետո արմատապես փոխվեց բնակչության կենսամշակութային համալիրը՝ բնակարանը, տնտեսական գործունեության ձևերն ու եղանակները, սոցիոնորմատիվ մշակույթը, հոգևոր մշակույթն ու ամբողջությամբ վերցրած արժեհամակարգը: Ժողովրդի դիպուկ գնահատմամբ 1988թ. երկրաշարժից հետո «Լենինականը գնաց, Գյումրին մնաց»:

Torgom AGHANYAN(Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: aghanyan.torgom@gmail.com

COMPARATIVE ANALYSIS OF THE EARTHQUAKES IN LENINAKAN IN 1926 AND IN SPITAK IN 1988

The article presents a comparative analysis of the earthquakes in Leninakan in 1926 and in Spitak in 1988. In the article we have made an effort to compare socio-cultural, demographic and economic changes, material damages caused by the above mentioned earthquakes, as well as diverse ways and approaches to the overcoming the consequences of the disaster in different periods of time. In this case it is very important to analyze the demographic situation, in particular the problems of quantity and distribution of the local population, the social composition before the earthquake and after it.

Давид АСАТРЯН, Г. САЖУМЯН (Армения)

Институт проблем информатики и автоматизации НАН РА (Ереван)

E-mail: dasat@ipia.sci.am

ПРОГРАММНЫЙ ИНСТРУМЕНТ ДЛЯ ВИРТУАЛЬНОГО ВОССТАНОВЛЕНИЯ ПОВРЕЖДЁННЫХ ИЗОБРАЖЕНИЙ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

Бурное развитие компьютерной техники и информационных технологий (ИТ) сопровождается их проникновением практически во все сферы интеллектуальной деятельности человека. В частности, во всем мире ИТ интенсивно применяются в разнообразных задачах обработки информации, связанных с культурным наследием многих народов мира. Эти задачи охватывают такие объекты, как древние рисунки и фотографии, рукописные тексты, архитектурные памятники, изображения повреждённых объек-

тов и много другого. Армения, как древнейшая страна, обладает богатейшим культурным наследием, однако, если судить по публикациям в мировой научной литературе, весьма мало внимания уделяется применениям ИТ, математических методов и современной компьютерной техники для развития арменоведческих исследований.

Целью настоящей работы является привлечение внимания исследователей к указанной проблеме путём демонстрации некоторых эффективных методов компьютерной обработки изображений и конкретных результатов, связанных с виртуальным восстановлением повреждённых изображений культурного наследия Армении.

В настоящей работе демонстрируется применение созданного нами программного инструмента (ПИ) и различных его модификаций к некоторым типам повреждённых или искажённых изображений. ПИ предназначен для виртуального восстановления оцифрованных изображений, искажённых, испорченных или запачканных пятнами, пропусками и другими внешними причинами, путём математического анализа и обработки изображения, принятия обоснованных решений и корректировки изображения.

Приведём некоторые примеры.

На Рис. 1 приведено изображение из коллекции Матенадарана, на котором видны некоторые искажения типа схода краски, а на обработанном изображении они в значительной степени восстановлены. На рис. 2 приведён восстановленный фрагмент произведения Боттичелли, искажённый трещинами.

Большой интерес представляет задача выделения текста из рисунка для дальнейшей обработки, например с применением читающих автоматизированных систем. На Рис. 3 приведён подобный пример изображения, в котором дополнительно выполнены некоторые операции по улучшению результата (путём фильтрации нежелательного фона и помех).

Рис. 4 представляет результат попытки считывания текста, выгравированного на стенах церквей, на надгробных памятниках и других объектах подобного рода.



Րիս. 1.




Րիս. 2.



Հայր մեր, որ յերկինսն, սորբ
 եղևցի անուն փ. ո. եկեացեալ
 քայլութիւն փ. ո. եղևցին զամբ
 ք. ո. որպէս յերկինս և յերկրի:
 Զհայր մեր հանապազորդ
 սորբ մեզ պարտ և թող մեզ
 զպարտիս մեր, որպէս և
 մեք թողունք մերոց պար-
 տապանաց: Ամ. մի տանի:
 Կմեղ ի փորձութիւն, այլ
 փրկես զմեզ ի շարեմ. քի
 փ. ո. և արքայութիւն և
 զօրութիւն և փառք յս
 փ. ո. անսն ամեն:

Րիս. 3.



Րիս. 4.

Приведённые примеры показывают возможность и эффективность применения компьютерной техники в задачах исследования культурного наследия.

В докладе приводится краткое описание программного инструмента, а также демонстрируется техника получения приведённых результатов.

Davit ASATRYAN, G. SAZHUMYAN (Armenia)

Institute for Informatics and Automation Problems of the NAS RA (Yerevan)

E-mail:dasat@ipia.sci.am

PROGRAM TOOL FOR VIRTUAL RESTORATION OF AFFECTED IMAGES FROM CULTURAL HERITAGE

The rapid development of computer and information technologies (CITs) is accompanied by penetration of virtually all spheres of human intellectual activity.

In particular, around the world CITs are used extensively in a variety of data processing tasks related to the cultural heritage of many peoples of the world. These tasks include items such as old drawings and photographs, handwritten texts, architectural monuments, images of damaged objects and many others.

Armenia is an ancient country, has a rich cultural heritage, but, judging by the publications in the scientific literature, very little attention is paid to the use of CITs, mathematical methods and modern computer technologies for the development of Armenian Studies.

The purpose of this paper is to draw attention of researchers to this problem by demonstrating some effective computer image processing techniques and outcomes associated with the virtual restoration of the damaged images of Armenia's cultural heritage. This paper demonstrates the use of a software tool we created and its various modifications of certain types of damaged or distorted images.

Program tool is designed to restore the virtual digital images, distorted, damaged or soiled spots, gaps and other external causes, through mathematical analysis and image processing, sound decision-making and image correction.

Some examples are given which demonstrate the feasibility and effectiveness of the use of computer technology in problems of cultural heritage studies.

The report provides a brief description of the software tool and also demonstrates the examples and technology of obtaining the results.

Աննա ԱՍՈՅԱՆ (Հայաստան)

Ա. Խաչատրյանի տուն-թանգարան (Երևան)

E-mail: anna_asoyan@yahoo.com

ՀՈՒՇԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԳՅՈՒՄՐՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հայաստանում գործող թանգարանների շարքում թեև ամենասովոր և բազմաշերտ խումբը հուշայիններն է, սակայն դրանց նվիրված մասնագիտական համակողմանի ուսումնասիրություն մինչ օրս չի հրապարակվել: Այս տիպի թանգարաններն առանձնանում են թե՛ բնույթով, թե՛ հավաքածուներով և թե՛ գործունեությամբ: Հուշային թանգարաններն այցելուներին հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ոչ միայն նշանավոր անձանց կյանքի և գործունեության, այլև տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, կենցաղի, մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ: Ներկայացվող զեկուցման շրջանակներում փորձ է կատարվել համեմատական քննությամբ դիտարկել Երևանում և Գյումրիում գործող հուշային թանգարաններից մի քանի-

սը: Ընտրություն կատարելիս շեշտը դրվել է անվանի արվեստագետներին նվիրված հուշային թանգարանների վրա: Ներկայացվում են.

- երկու տարբեր քաղաքներում նույն մտավորականի ընտանիքին պատկանող առանձնատներում գործող հուշային թանգարանների առանձնահատկությունները՝ Ավետիք Իսահակյանի Գյումրու և Երևանի տուն-թանգարանների օրինակով:
- հիմնական գործունեությունը ԽՍՀՄ մայրաքաղաքում ծավալող նշանավոր արվեստագետների հայաստանյան հուշային թանգարանների համեմատությունը՝ քանդակագործ Մերգեյ Մերկուրովի Գյումրու և կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի Երևանի տուն-թանգարանների օրինակով: Այդ համատեքստում դիտարկվել են թանգարանների ստեղծման պատմությանը, հավաքածուներին, ցուցադրությանը և գործունեությանն առնչվող խնդիրները:

Մեր ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ թեև նշված թանգարանները հուշային տիպին են պատկանում, այսուհանդերձ խիստ բազմազան են: Այսպես՝ Ավ. Իսահակյանի տուն-թանգարանները, լիարժեք ներկայացնելով փիլիսոփա-քնարերգուին, այնուամենայնիվ տարբեր են, քանի որ Գյումրու տուն-թանգարանը բանաստեղծին ներկայացնում է առավելապես Գյումրվա մշակույթի ֆոնի վրա, իսկ երևանյան տուն-թանգարանում շեշտադրվում է նրան՝ իբրև հասարակական գործչի ներկայացնելը և առավել մանրամասն է բացահայտում բանաստեղծի գործունեությունն արտերկրում:

Եթե նկարիչ-քանդակագործ Ս. Մերկուրովի տուն-թանգարանը, նշանավոր արվեստագետի կյանքն ու գործունեությունը ներկայացնելով հանդերձ, առավելապես արվեստի թանգարան է, ապա Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի հուշային հատվածն առավել լիարժեք պատկերացում է տալիս աշխարհահռչակ կոմպոզիտորի կյանքի բնական միջավայրի, իսկ երկրորդ հարկի ցուցադրությունը՝ ստեղծագործական գործունեության վերաբերյալ: Երկու թանգարանների շենքերի համեմատությունը ևս ուշագրավ է: Այսպես՝ եթե Ս. Մերկուրովի տուն-թանգարանի շենքը 19-20-րդ դդ. Գյումրու քաղաքային ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից է, որտեղ ապրել է արվեստագետի ընտանիքը, ապա Ա.

Խաչատրյանի թանգարանի շենքը Հայաստանի կառավարության նվերն է կոմպոզիտորին՝ հայրենիքում սեփական տուն ունենալու ակնկալիքով, որի հուշային հատվածը կահավորվել է կոմպոզիտորի մոսկովյան բնակարանից և մերձմոսկովյան ամառանոցից տեղափոխված կահույքով և անձնական իրերով:

Anna ASOYAN (Armenia)

Aram Khachaturian House-Museum, YSU (Yerevan)

E-mail: anna_asoyan@yahoo.com

THE CHARACTERISTICS OF MEMORIAL MUSEUMS BY THE EXAMPLES OF MUSEUMS IN GYUMRI AND YEREVAN

The professional comprehensive study on the memorial museums of Armenia has not been published yet. These types of museums are distinguished by their character, collections, or activities. Memorial museums allow visitors to take an insight not only on the life and work of prominent people, but also the period of social and political life, lifestyle, and cultural features. In the report it was made an attempt to make a comparative examination of some memorial museums in Yerevan and Gyumri. They are Avetik Isahakyan House-Museums in Yerevan and Gyumri, sculptor and composer Sergei Mercuriov House-Museum in Gyumri, and Aram Khachaturian House-Museum in Yerevan. There were examined the issues of the history of establishment of these museums, collections, exhibits and activities.

Քնարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ (Հայաստան)

Հայաստանի ազգային պատկերասրահ (Երևան)

E-mail knarik_avetisyan@hotmail.com

ԳՅՈՒՄՐՈՒ ՄԲ ՅՈԹ ՎԵՐՔ ԵՎ ՄԲ ՆՇԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Մշակութային հարուստ ժառանգություն ունեցող վայրերից մեկն է Գյումրին (Կումայրի), որի բազմադարյան պատմության ակունքները հասնում են Ք. ա. 3-րդից - 1-ին հազարամյակներ՝ անցելով զարգացման բոլոր փուլերը՝ վերելքների ու անկումների շրջաններով: Գյումրու զարգացման ու առաջընթացի նոր դարաշրջանը կապվում է 19-րդ դ. առաջին կեսի պատմական իրադարձությունների հետ, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Վերակառուցվեց բերդաքաղաքը՝ դառնալով գավառի կենտրոն և ռազմաստրատեգիական կարևոր հենակետ, կարճ ժամանակում ավելացավ բնակչության թիվը, պայմաններ ստեղծվեցին մշակույթի, արհեստների ու առևտրի զարգացման համար: Այդ շրջանում են կառուցվել Մբ Աստվածածին (Յոթ Վերք, 1837թ.), Հայ կաթոլիկների (1849-1854թթ.), Մբ Նշան (1859-1864թթ.), Մբ Ամենափրկիչ (1869-1874թթ.), Մբ Գրիգոր Լուսավորիչ (19-րդ դ.) նշանավոր եկեղեցիները:

Ուշ միջնադարին բնորոշ եկեղեցաշինության առանձնահատկությունների և 19-րդ դ. հոգևոր ու գեղագիտական պահանջների հետաքրքիր համադրությունը դրսևորվում է Մբ Նշան և Մբ Յոթ Վերք եկեղեցիների արտաքին ու ներքին հարդարանքում: Դրանք հատակագծային, ծավալատարածական լուծումներով պատկանում են վաղմիջնադարյան գմբեթավոր բազիլիկ տիպին, որը նոր թափ էր առել 17-18-րդ դարերի հոգևոր ճարտարապետության մեջ:

Սրբատաշ սև տուֆից կառուցված Մբ Աստվածածինը (այդտեղ պահվող «Աստվածածնի յոթ վերք» սրբապատկերի պատվին վերանվանվել է Յոթ վերք) արտաքինից արտահայտված չորս անկյունային ավանդատներով, որմնասյուներով ու պատուհաններով զարդարված շինություն է, որի արևմտյան կողմում գտնվող գավիթ-սրահը պսակվում է սյունազարդ զանգակատնով: Արտաքին հարդարանքում նորություն են գույգ

և փնջավոր որմնասյուների ու պատուհանների՝ պատի հարթությունից դուրս եկած երեսակալների ձևավորումը, որում նկատելի են արևմտյան ազդեցության որոշ տարրեր: Ներսի հարդարանքում յուրօրինակը Ավագ խորանի պատկերակալն է, որը տիպական չէ հայկական եկեղեցիներին և կապվում է ուղղափառ եկեղեցու հարդարանքին և հայ իրականություն է թափանցել Հայաստանը Ռուսական կայսրության մաս դառնալուց հետո: Նորություն է նաև եկեղեցու հյուսիսային խորանը զարդարող «Խաչելություն» փայտյա քանդակը, որը հայ կաթոլիկների եկեղեցու սրբություններից է և այդտեղ է տեղափոխվել հետագայում: Պատկերակալի ձևավորմանը առանձնակի վեհություն է հաղորդում հայ տաղանդավոր նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Աստվածածինը Մանկան հետ» սրբապատկերը: Պատերը զարդարող Ավետարանական պատկերները և առագաստների վրա արված չորս ավետարանիչների որմնանկարները ավանդական պատկերագրությամբ և գեղարվեստական արտահայտչականությամբ ամբողջացնում են եկեղեցու հարդարանքը:

Իշխան Ղահրաման Երկայնաբազուկ Արդությանցի կտակած և ժողովրդի հանգանակած գումարով կառուցված Սբ Նշան եկեղեցին որոշ նմանություն ունի Սբ Յոթ Վերքի հետ: Այն նույնպես սրբատաշ սև տուֆից է, արևմտյան կողմում սյունազարդ զանգակատունն է, պատերի վրա սիմետրիկ դասավորությամբ զարդաքանդակ երեսակալներով կլոր ու երկարավուն պատուհաններ են, յուրաքանչյուրի ճակատին՝ զարդանախշ խաչեր: Ավելի գուսպ է եկեղեցու ներսի հարդարանքը, որը կազմված է աղոթասրահի կենտրոնում տեղադրված գմբեսակի չորս հզոր մույթերի առագաստները զարդարող չորս ավետարանիչների պատկերներից, մի քանի սրբապատկերներից:

Գեղարվեստական և պատկերագրական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սբ Յոթ Վերք եկեղեցու արևելյան ճակատը զարդարող «Աստվածածնի յոթ վերք» (տեղադրվել է 1856 թ.) և Սբ Նշանի «Չարչարանաց Աստվածածին» հարթաքանդակները, Սբ Յոթ Վերք եկեղեցում գտնվող 18-րդ դ. անհայտ հայ նկարչի «Աստվածածնի յոթ վերք» սրբապատկերը:

Երկու եկեղեցիների արտաքին հարդարանքում, եթե կլոր ու երկարավուն պատուհանների քանդակագործման սկզբունքը որոշ աղբյուրներ ունի Բագրատունյաց շրջանի, հատկապես Անիի ճարտարապետական դպրոցի հետ, ապա շքամուտքերի վերնամասում ավետարանական պուժեով պատկերաքանդակների առկայությունը կապվում է 17-18-րդ դարերում ձևավորված ավանդույթի հետ: Այդ եկեղեցիների ճարտարապետական ոճի միասնությունը, արտաքին ու ներքին հարդարանքում ազգային գեղարվեստական ավանդույթի և նորամուծությունների համատեղումը դրսևորում են տվյալ դարաշրջանում արմատավորվող աշխարհայացքային փոփոխություններն ու քաղաքային նոր միջավայրի հոգևոր, մշակութային պահանջները:

Knarik AVETISYAN (Armenia)

National Gallery of Armenia (Yereva)

E-mail: knarik_avetisyan@hotmail.com

INTERIOR AND EXTERIOR DECORATION OF GYUMRI'S YOTVERG (SEVEN WOUNDS) AND ST NSHAN CHURCHES

Historical events of the first half of the 19th century determined the new epoch progress and development of Gyumri, when Eastern Armenia became part of the Russian Empire. Renowned churches of the Holy Virgin (YotVerk, 1837), Armenian Catholic Church (1849-1854), St.Nshan (1859-1864), St. Saviour's Church (1869-1874) and St. Gregory the Illuminator Church (19th c.) were built during this period.

Interesting juxtaposition of late medieval church construction characteristics, as well as spiritual and aesthetic demands are examined through the study of exterior and interior decoration of of the Holy Virgin and St. Nshan churches.

The two churches are basilica as built of black tufa. The influence of western culture in certain elements is discernible in the exterior decoration of

Seven Wounds of the Holy Virgin Church, particularly in double and tasseled pillars and window frames.

Inside the church there is a unique decorated predella of the altar, borrowed from the Orthodox Church. Another novelty in the decoration of the Armenian Church is the “Crucifix” wood sculpture placed at the northern altar. Arelic of the Armenian Catholics, it was later transferred here. Of great artistic and iconographic interest are the low-reliefs of “the Holy Virgin” on the eastern wall of YotVerk Church and “Our Lady of Sorrows” in St. Nshan Church, as well as the icon “Seven Wounds of the Holy Virgin” by an unknown Armenian artist of 18th century in YotVerk Church.

Harmony of architectural style of the two churches, combining national tradition and new artistic elements, reflect the change of deep-rooted vision as well as spiritual and cultural demands of the epoch’s new urban space.

Կարինե ԲԱԶԵՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: bazeyan60@yandex.ru

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Մարդու վերարտադրությունը բարդ և երկարատև գործընթաց է, որը բաղկացած է երկու մասից՝ բնական-կենսաբանական (ֆիզիկական) և սոցիալականացման էտապներից: Վերջինիս ընթացքում ապահովվում է անհատի՝ որպես որոշակի սոցիումի անմիջական անդամի ձևավորումը: Սոցիալականացման գործընթացում մարդը հասնում է ֆիզիկական և հոգեբանական զարգացման որոշակի մակարդակի, յուրացնում է տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կենսագործունեության այն ձևերը (տնտեսական և սոցիալական հմտություններ, ծիսական գործառույթներ, վարքի և հաղորդակցման նորմեր), որոնք հնարավորություն են տա-

լիս նրան որոշակի տեղ գրավելու և ինքնուրույն գործելու սոցիումի կառույցում:

Անհատի սոցիալականացման ընթացքում տեղի է ունենում մշակույթի տեղափոխում/շարժընթաց ժամանակի մեջ, այսինքն՝ իրականացվում է մշակութային արժեքների փոխանցում մի սերնդից մյուսին, այդպիսով, պահպանելով մշակութային ժառանգորդությունը: Ընդ որում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փոխանցվում է ոչ թե մշակույթն ընդհանրապես, այլ հենց տեղական, էթնիկ մշակույթը, որի արդյունքում սոցիալականացման գործընթացում տեղի է ունենում էթնոսի՝ որպես սոցիոմշակութային ամբողջության վերարտադրությունը:

Սոցիալականացման գործընթացում առանձնացվում է երկու փուլ՝ առաջնային (մանկական) և երկրորդային (հասուն տարիքի): Առաջին փուլում երեխաները յուրացնում են մշակույթի ամենատարածված, կենսականորեն անհրաժեշտ տարրերը, տեղի է ունենում սոցիոմշակութային նախապատրաստում դեպի հասուն տարիքը: Այս ժամանակ սոցիալականացումն իրականացվում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ դաստիարակությամբ, որը կատարվում էր սոցիալականացման յուրահատուկ ձևերի, եղանակների ու ինստիտուտների միջոցով, որոնք երեխաներին ապահովում էին իրենց առօրյա կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով:

Սոցիալականացման ավանդական ինստիտուտների՝ ընտանիքի, հասակակիցների խմբի և համայնքի գործառույթների շնորհիվ դաստիարակության գործընթացը կատարվում էր որոշակիորեն կազմակերպված ձևերով, որոնք կանոնակարգում էին դրա ընթացքն ու ապահովում սպասելի արդյունքները: Հիշյալ ինստիտուտներն ունեին բազմագործառույթ բնույթ, սակայն իրենց նշանակությամբ հավասարազոր չէին:

Պատմական տարբեր դարաշրջաններում և հասարակական զարգացման տարբեր փուլերում անհատի սոցիալականացման ամենակարևոր և գլխավոր ինստիտուտներից մեկը եղել ու մնում է ընտանիքը: Հենց նա է երեխայի համար ստեղծում կյանքի այն մոդելը, որտեղ նա հետագայում ներգրավվելու է: Ընտանիքի օգնությամբ է երեխան ներգրավվում հասարակության մեջ. ընտանիքն է նրան տալիս անուն, ընդգրկում

ազգակցական համակարգի մեջ, ծանոթացնում նրան հասարակական վարքի նորմերին և այլ մարդկանց հետ հաղորդակցման կանոններին: Այստեղ են երեխաները ձեռք բերում փոխհարաբերությունների առաջին հմտությունները, յուրացնում առաջին սոցիալական դերերը (այդ թվում՝ սեռային դերեր, ձևավորում առնականության և կանացիության գծեր), գիտակցում առաջին նորմերն ու արժեքները: Որպես մակրոմիջավայրի տարր՝ ընտանիքը դառնում է մշակույթի մեջ երեխային ուղեկցողը: Կրոնական ավանդույթները, էթնիկական կարծրատիպերը և բարոյական արժեքները երեխաները յուրացնում են հիմնականում ընտանիքի միջոցով: Այս առումով մեծ էր նաև բանավոր գեղարվեստական խոսքի, մասնավորապես բանահյուսության ասացվածաբանական ժանրերի դերը, որ լայնորեն օգտագործվում էր տան մեծերի կողմից:

Ժողովրդական դաստիարակության հիմնաքարային եղանակներից մեկը աշխատանքային դաստիարակությունն էր, որն իրականացվում էր դեռ մանուկ հասակում երեխային կյանքի տարբեր ոլորտներում ներգրավելով. այդպես նրանք սովորում էին ոչ միայն լսելով ու դիտելով, այլև անմիջական մասնակցությամբ: Կյանքի համար անհրաժեշտ բոլոր հմտությունները, կարողություններն ու փորձը ժառանգաբար փոխանցվում էին հորից որդուն, մորից դստերը, մի ընտանիքից մյուսին: Այսպիսով, հենց ընտանիքում է ձևավորվում անհատի առաջնային սոցիալական էությունը:

Ընտանիքը, այդ կարևորությամբ հանդերձ, երեխայի սոցիալականացման գործընթացում միակը չէ: Որպես երեխայի ինքնազարգացման և փոխադարձ դաստիարակության գործոն՝ շատ մեծ ազդեցություն ունենան հասակակիցների խումբը յուրահատուկ հարաբերություններով ու մշակույթով: Այն առաջին հերթին բավարարում էր երեխաների՝ մեծերի վերահսկողությունից դուրս, ազատ հարաբերություններ հաստատելու պահանջը. փոխադարձ հետաքրքրությունները, շրջապատող աշխարհն ու միմյանց ճանաչելու միասնական ջանքերը բացառիկ կարևոր նշանակություն ունեին: Ընտանիքից դուրս նույնպես պայմաններ էին ստեղծվում անհատի ձևավորման համար, և դրանում կարևոր դաստիարակչական դեր էին խաղում տարբեր տարիքային խմբերը, որտեղ խաղի մի-

ջոցով երեխաները յուրացնում էին մեծահասակների տնտեսական գործունեության եղանակները, զարգացնում մտավոր և ֆիզիկական ունակությունները, ձեռք բերում կամային հատկանիշներ և յուրացնում հասարակական վարքի նորմերը:

Ավանդական դաստիարակության վերոհիշյալ ձևերն ընդհանուր են համայն մարդկության համար, սակայն տարբեր՝ կոնկրետ ժողովրդի կամ դրա առանձին հատվածի դեպքում: Ներկայացվող զեկուցումը նվիրված է սոցիալականացման վերոհիշյալ ձևերի ու եղանակների քննարկմանը Ալեքսանդրապոլի քաղաքային բնակչության օրինակով՝ հիմնվելով գրավոր արխիվային նյութերի վրա, որոնք առաջին անգամ են դրվում շրջանառության մեջ:

Karine BAZEYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: bazeyan60@yandex.ru

FORMS AND MODES OF CHILD SOCIALIZATION IN ALEKSANDRAPOL

The reproduction of a person is a complex and long-term process which consists of two parts: natural-physical and the stage of socialization. Socialization is important in the process of personality formation.

The socialization process can be separated into two stages: primary (children's) and secondary (adult). The present paper touches upon some forms and modes of socialization having the example of Aleksandrapol's urban population. We have based on written archival material which is put into circulation for the first time.

Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: gasmik@mail.ru

**ԹՊՂԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ
ԵՒ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ**

Հայ ժողովրդական սնահավատական գրույցներում, հավատալիքային պատկերացումներում, ինչպես նաև հմայական աղոթքներում ծննդկանին և նորածնին վնասող չար ոգիներից մեկն է թպղան: «Այս ոգու չարամիտ ներգործությունը դիտվում էր որպես յուրահատուկ հիվանդություն՝ թպղոտություն անվամբ: Մինչդեռ բժշկությունն այսօր այդ երևույթը կապում է վեներական ախտերի հետ»¹:

Թպղոտ կանայք իրենց երեխաներին կրծքով չէին կերակրում. կերակրում էին այն կանայք, որոնք երեխաներ են մեծացնում ինչ-որ տևական ժամանակահատված, ապա ուշագնաց լինող երեխային անց էին կացնում ծակ քարերի միջից երեք անգամ²՝ ասելով. «Քուկդ առ, իմս տուր»³ և այլն⁴:

Ծակ քարերից, կենդանիների բերանից (սպանված գայլի բերանը թրջում լայնացնում են, մեծացնում են այդ անցքը և զանազան հիվանդությունների ժամանակ միջով անցկացնում երեխաներին) և կամուրջների տակից (ընդհանրապես անցքերից) հիվանդին անցկացնելով՝ հավատում էին վերջինիս բուժմանը: Անցքերը հաճախ սրբացվում են⁵ ժողովրդի կողմից և ունեն չարահաված հատկություն: Կարծում ենք, թե սա կապված է նորից ծնվելու կամ վերածնվելու, «մորից մեկ»⁶ լինելու գաղափարի հետ:

¹ Նահապետյան Ռ., *Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը*, Եր., 2011, էջ 46:

² Նույն տեղում, էջ 182-183:

³ Գաբրիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 268:

⁴ Բուլանըխում թպղոտ երեխային անց էին կացնում նաև երկու իրար շատ մոտ գտնվող խաչքարերի միջից (Բենսե, Բուլանըխ կամ Հարք գաւառ//ԱՀ, հ.5, էջ 122):

⁵ Օրինակ՝ Շիրակի Հացիկ գյուղի Ծակ քարը (Թոփառվա տարբր):

⁶ Այս արտահայտությունը լայն կիրառություն ունի Շիրակում: Գործածվում է «նոր ծնված» իմաստով:

Բնական ծակ քարերի միջով, ինչպես և կամուրջների տակով անցկացնելով՝ թաղուց բուժում էին նաև Շատախում:

Վերոնշյալի հետ աղերսներ ունի նաև այն, որ Շիրակի Լանջիկ գյուղում թըպըղ ունեցող երեխայի վրա են քաշում «հշու ձագի ֆարտան», այսինքն՝ այն թաղանթը, որով ծնվել է իշուկը, և երեխային յոթ օր պահում էին դրա մեջ՝ թըպըղն անցկացնելու նպատակով¹:

Քրիում թաղա հիվանդություն ունեցող կինը, երբ զգում է, որ հղի է, տասնհինգ օր առավոտները էշի մեզ է խմում, տասնհինգ օր էլ՝ երեխայի խաղալուց հետո: Երեխայի ծնվելուն պես ծննդկանին էշի մեզ են խմեցնում և երեխայի բերանն են լցնում: Ծննդաբերությունից մի քանի օր անց ծննդկանը, մի կին ու մի ազապ աղջիկ միասին մի գիշեր գնում են յոթ տան երդիկների վրա, ման գալիս: Ազապ աղջիկը երդիկից հարցնում է. «Մարիամ, թաղի դեղն ի՞նչ է»: Տանեցիները հասկանում էին, որ տըպըղ ունեցող կին է, վեր էին կենում, մի երկաթի կտոր էին վերցնում, տանում դուրս և տալիս նրանց: Յոթ տներից այսպես հավաքած երկաթը տալիս էին դարբնին: Վերջինս մի ապարանջան էր պատրաստում թևի և մի օղակ՝ պարանոցի համար: Այս ամենը իր վրա կրելով՝ թաղոտ կինը բժշկվում էր²:

Շիրակի Սառնաղբյուր գյուղի ժողովրդական պատկերացումներում «թըպըղը պոլոճանման է, ունի քառասուն ոտք: Երեխայի պնչից ելնում, մտնում է բերանը, հասնում է ջիգարին և ուտում այն»:

Ամփոփելով մեր ձեռքի տակ եղած նյութերը (ժողովրդական զրույցներ, աղոթքներ, դաշտային բանահյուսական և ազգագրական նյութեր, ուսումնասիրություններ)՝ կարող ենք ասել, որ.

ա) Ծննդկան կնոջ և նորածին երեխայի թշնամի համարվող չար ոգի թաղայի հավատալիքն ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է Հայաստանի ազգագրական բազմաթիվ շրջաններում:

¹ Բդոյան Վ., *Հողաբերքի ու տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 1947, էջ 193:*

² Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, *Ս. Հայկունու ֆոնդ, վավերագիր 102, էջ 15:*

- բ) Մեր ուսումնասիրած նյութերում բացակայում է թպղայի՝ իբրև անձնավորված ոգու նկարագրությունը: Այն հանդես է գալիս իբրև հիվանդության հարուցիչ՝ տարատեսակ միջատների (գորտանման ճիճու, կարմիր պոլոճ, քառասուն ոտք ունեցող բոլոճ, խեցգետնանման բազմոտանի և այլն) ու մանր կենդանիների (գորտի կամ գորտանման կենդանի) կերպարանքով:
- գ) Թպղան վնասում է թե՛ ծննդկանին և թե՛ նորածնին: Այն իր գործունեությունն սկսում է դեռ աղջկա ազապության և կնոջ հղիության առաջին շաբաթներից և իր տեսադաշտում պահում մորն ու երեխային՝ մինչև երեխայի երեք կամ յոթ (որոշ դեպքերում մինչև քսանմեկ) տարին:
- դ) Թպղայով «բռնվում» են ծննդկանն ու նորածինը, նաև հայր-ամուսինը¹, իսկ որոշ դեպքերում էլ թպղան անցնում է ժառանգաբար, վարակում է նաև տան փեսային², որը արյունակից չէ ընտանիքի անդամներին:
- ե) Ժողովրդին հայտնի են ծննդկանին ու նորածնին վնասող չար ոգիների դեմ պայքարելու բազմաթիվ միջոցներ ու եղանակներ: Թպղայի պարագայում կայծակի խորհրդանիշ համարվող մետաղների և գանազան իրերի և առարկաների կիրառումից բացի, օգտագործում էին բուժման ծիսահմայական միջոցներ և կենդանական հմայիլներ: Պայքարի միջոցներից մեկն էլ նրանց «խաբելն» է կամ մոլորության ու շփոթության մեջ գցելը: Ժողովուրդը փորձում էր շեղել նրանց ուշադրությունը ծննդկանին՝ Մարիամ, իսկ նորածնին այլակրոնի անուն տալով, երեխային ոչ-խարի մսի հետ կշռելու և վերջինս թաղելու, ուրիշ կնոջ կրծքով կերակրելու միջոցով և այլն:

¹ Լալայեան Ե., Մուշ-Տարօն // ԱՀ, գ. 26, էջ 186:

² Բրդյան Վ., նշվ. աշխ., էջ 201-202:

Hasmik GALSTYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: gasmik@mail.ru

EVIL SPIRIT (TPGHA) IN ARMENIAN FOLK BELIEFS AND SUPERSTITIOUS TALKS

In Armenian folk legends, wishing formulas Tpgha is considered as one of the evil spirits of new-born children and their mothers. Summarizing the material under discussion we can mention that tpgha has ancient sources and has been widely used in numerous parts of Armenia. In our investigation the description of a personified spirit is not present. It appears as a disease with the appearance of various insects and small animals. Tpgha hurts both the mother and the child. In some cases it comes and hurts the groom. There are different methods of struggling against evil spirits. One of the best ways of struggling was the changing of a mother calling her Mariam.

Լիանա ԳԵՎՈՐԳՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ՄՆ պատմական միջավայրի պահպանության պատմամշակութային
արգելոց-թանգարանների պահպանման ծառայություն (Երևան)

E-mail: gip@mail.ru

ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑՕԹՅԱ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հասարակական բազմաբնույթ հարաբերությունների և սոցիալ-մշակութային գործընթացների աստիճանական զարգացման որոշակի փուլում, որպես պատմական անցյալի վերարտադրման և էթնոսի կենսագործունեության պահպանման, ուսումնասիրման և հանրահռչակման ինքնատիպ միջոց դարձան հատուկ առանձնացված, վերակառուցված կամ նորովի ստեղծված այն տարածական համալիրները, որ մասնագիտական

գրականության մեջ ստացել են «բացօթյա թանգարաններ» ընդհանուր անվանումը: Երբեմն դրանց անվանում են նաև «կենդանի պատմության» («living history») թանգարաններ:

Ազգագրության բացօթյա թանգարանները թեև ձևավորվել են պատմական, հնագիտական, տեխնիկական և այլ բնույթի բացօթյա թանգարաններից համեմատաբար ուշ, սակայն կարևորագույն դեր ունեն ազգային կենցաղի ու մշակույթի՝ որպես ազգային ինքնության ձևավորման գործոնի պահպանման, հանրահռչակման և ուսումնասիրման գործում:

Ազգագրության առաջին բացօթյա թանգարանները ձևավորվել են Եվրոպայում արդեն XIX դ. վերջում: Այս ժամանակահատվածը մեծագույն փոփոխությունների փուլ էր այնտեղ: XIX դ. առաջին կեսին տարածաշրջանում ծայր առած պատերազմները, դրանց հաջորդող տնտեսական ճգնաժամերն ու գործազրկությունը մի կողմից՝ պատճառ դարձան բնակչության արտագաղթին դեպի Հյուսիսիային և Հարավային Ամերիկաներ, Կանադա և Ավստրալիա, իսկ մյուս կողմից՝ ուղղակիորեն հարվածեցին ազգաբնակչության աճին, ինչը ցայտուն երևում է ժամանակի ժողովրդագրական ամփոփոգրերում: Սա բացասաբար անդրադարձավ նաև ազգային սովորույթների և առանձնահատկությունների պահպանման գործընթացի վրա, և ազգայինը մղվեց հասարակական հարաբերությունների հետնախորշ: Իրավիճակը որոշակի առումով փոխվեց XIX դ. երկրորդ կեսից, երբ Եվրոպայում ձևավորվեցին տեխնիկական առաջընթացի տարրեր, որպես հետ անք՝ սկսվեցին տարածաշրջանի ինդուստրացման գործընթացները: Սա, մասամբ, մի կողմից՝ կանխեց լայնածավալ արտագաղթն ու բարելավեց տարածաշրջանի ազգաբնակչության թվաքանակի աճի տեմպերը, սակայն մյուս կողմից՝ Եվրոպայի տարբեր երկրների համար պարտադրեց համընդհանուր զարգացման նոր չափանիշներ, որոնք ինքնաբերաբար տանելու էին ազգային յուրահատկությունների համահարթեցման և ազգային ինքնության աստիճանական խաթարման: Այս առումով նման գործընթացների վտանգն առաջինը զգաց շվեդ Արթուր Հագելիուսը, որ Ստոկհոլմի կենտրոնում՝ Դյուրգարդեն կոչվող կղզում, նախաձեռնեց «Nordic Museum» թանգարանի ստեղծման աշխատանքները: Շուրջ մեկ տասնամյակ երկրի տարբեր շրջաններ

րից և նույնիսկ Սկանդինավիայի տարբեր տարածքներից նա գնեց շուրջ 150 շինություն, տեղափոխեց դրանք Դյուրգարդեն և Սկանսես կոչվող վայրում 1891թ. բացեց ազգագրության առաջին բացօթյա թանգարանը, որը տվյալ պահին «Nordic Museum»-ի մասն էր կազմում: Ազգային կենցաղի, մշակույթի և ինքնության պահպանման այս բացօթյա թանգարանն այնպիսի աննախադեպ դեր ու ազդեցություն ունեցավ տարածաշրջանում, որ շատ չանցած՝ նմանատիպ թանգարաններ սկսեցին բացվել ինչպես Եվրոպայում, այնպես էլ աշխարհի տարբեր հաստիքներում, որոնք բոլորն էլ պայմանականորեն կոչվեցին «սկանսենյան տիպի թանգարաններ»:

Այլ ընթացք ունեցավ բացօթյա թանգարանների ստեղծման գործընթացը Հայաստանում: Երբ Եվրոպայում 1891թ. բացվեց ազգագրության առաջին բացօթյա թանգարանը, հենց նույն թվականին, ճակատագրի բերումով, սկսվեցին հայերի առաջին ջարդերն Օսմանյան կայսրությունում: Դրանք ուղեկցվում էին ոչ միայն մարդկանց տեղահանմամբ ու ոչնչացմամբ, այլև հայկական բնակավայրերի ավերմամբ, կամ էլ թուրք և քուրդ խուժանի կողմից դրանց բռնագրավմամբ: Այս գործընթացներն շարունակվեցին մինչև 1923թ.՝ տալով 1,5 մլն. հայության սպանող և հազարավոր գյուղերի ու բնակավայրերի անվերադարձ կորուստ: Իզուր չէ, որ հենց այդ առիթով, XX դ. առաջին քառորդին ազգագրագետներ Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը և հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը բարձրաձայնեցին հայ ազգային արժեքների պահպանման, հայկական կենցաղի, բառ ու բանի արժևորման խնդիրների հրատապությունը: Արևմտյան Հայաստանից տեղափոխված և Երևանում, Էջմիածնում ու Արևելյան Հայաստանի այլ վայրերում հաստատված հայ գաղթականությունը դեռևս շարունակում էր կրել հայ ազգային ավանդույթների ու ինքնության հատկանիշները: Ցավոք, ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ խորհրդային տարիներին գործնականում չիրականացվեցին ազգագրության բացօթյա թանգարանի ստեղծման աշխատանքները: Որպես հետ անք՝ ազգային (առաջին հայացքից երկրորդական թվացող) շատ կարևոր նյութական ու հոգևոր արժեքներ ժամանակի ընթացքում աստիճանաբար անհետացան:

Իհարկե, պետք է նշել, որ XX դ. 20–80-ական թթ. Հայաստանի պատմության թանգարանում, հանրապետության տարբեր շրջանների երկրագիտական թանգարաններում բացվեցին հայ հոգևոր և նյութական մշակույթին նվիրված ցուցադրություններ, իսկ 1978թ. սկսեց գործել Հայաստանի ազգագրության պետական թանգարանը, սակայն բացօթյա ազգագրության թանգարանի ստեղծման գործընթացը մնաց այդպես էլ չիրականացված: Այդ խնդիրը դրվեց 1980-ական թթ., երբ հայ անվանի թանգարանագետ և պատմաբան Լ. Ա. Բասեդյանը գործնական աշխատանքներ ձեռնարկեց Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշահամալիրի տարածքում՝ Հայաստանի ազգագրության թանգարանի կազմում, բացօթյա թանգարան ստեղծելու ուղղությամբ, սակայն քաղաքական գործընթացների արդյունքում այդ գաղափարը ևս մնաց անավարտ:

Հայաստանում բացօթյա ազգագրության թանգարանի ստեղծման գաղափարն այսօր էլ հրատապ է ու արդիական: Նման թանգարանի ստեղծումը հնարավորություն կտա կոնկրետ տարածքում մեկտեղելու պատմական Հայաստանի տարբեր պատմաազգագրական մարզերի կառույցների, կենցաղի ու մշակույթի առավել բնորոշ օրինակները, ներկայացնել դրանց ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև կարևորելու այդ ամենի դերը հետագա ազգագրական ուսումնասիրություններում: Շատ առումներով այն իրական հնարավորություն կստեղծի նաև զսպելու ու սահմանափակելու մեր կանխակալ հարևանների՝ հայկական ազգային արժեքների բազմաթիվ դրսևորումների անհարկի յուրացման նկրտումները: Դա ևս ազգային արժեքների ու ինքնության պահպանման կարևոր միջոց է:

Lusine GEVORGYAN (Armenia)

Ministry of Culture of the RA
Service for the Protection of Historical Environment
and Cultural Museum Reservations (Yerevan)
E-mail: gip@mail.ru

THE SOCIO-ECONOMIC REASONS FOR FORMATION OF ETHNOGRAPHIC OPEN-AIR MUSEUMS

Special separated, renovated or newly established spatial complexes which were commonly called “open-air museums” in academic literature became a unique tool for the reproduction of historical past and the preservation, exploration and propaganda of ethnos liveliness in the certain stage of gradual development of social relationships and socio-cultural processes.

The very first examples of ethnographic open-air museums were formed in Europe at the end of 19th century.

In 1891 when the first ethnographic open-air museum was established in Europe, as fate willed it, the first massacres of Armenians started in Ottoman Empire. The latter ones were followed by not only deportation of people, but also the destruction of Armenian habitats. Due to this circumstance in the first quarter of the 20th century ethnographers Y. Lalayan, St. Lisician and famous Armenian poet Hovhannes Tumanyan raised the issue of the preservation of Armenian values, culture and folklore.

Back in 1980's Armenian famous museologist and historian L. A. Barseghyan initiated practical work in the area of Sardarapat Memorial with the view to forming an open-air museum in the structure of Armenian ethnographic museum, though this idea remained incomplete as a result of political processes.

Nowadays, the idea of Armenian ethnographic museum formation is still urgent and actual. In our opinion, the latter one will give a real opportunity for restraining and limiting aspirations of our neighbors in absorption of Armenian national values. It is also a way for the preservation of national values and identity.

Առաքել ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ (Երևան)

E-mail: arakelyuni@mail.ru

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ,
ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

1. Հայ ազգային մշակույթին, դրա առանձին բաղադրիչներին վերաբերող թեմաներ առկա են հանրակրթական դպրոցի տարբեր աստիճանների ուսումնական առարկաներում, այն է՝ տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» (4-րդ դասարանի դասընթաց), միջին դպրոցի «Հայրենագիտություն» (5-րդ դասարան), միջին և ավագ դպրոցների «Հայոց եկեղեցու պատմություն» (5-9-րդ և 10-11-րդ դասարաններ), «Հայոց պատմություն» (6-9-րդ և 10-12-րդ դասարաններ), «Հասարակագիտություն» (8-9-րդ և 10-12-րդ դասարաններ) և այլ առարկաներ: Թվարկվածներից բացի, թեմային առնչվող ուսումնական նյութեր կան նաև գրականության, երաժշտության, կերպարվեստի և այլ առարկաների բովանդակության մեջ:

Բացի այդ, ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատվել և ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին գործածության են երաշխավորվել «Հայ և համաշխարհային մշակույթ» (7-9-րդ դասարաններ, որից 9-րդ դասարանի դասընթացն ամբողջությամբ նվիրված է հայ մշակույթին), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան) և թեմային առնչվող այլ առարկաներ:

2. Նշված ուսումնական առարկաներում մշակույթային թեմատիկան ներկայացված է տվյալ առարկայի բովանդակային կառույցի տրամաբանական շղթայում: Դա վերաբերում է ոչ միայն բովանդակային միջուկին, այլև թեմային հատկացված ժամաքանակի ծավալին: Մշակույթային հարցերին համեմատաբար ավելի մանրամասն անդրադարձ է արված Հայրենագիտության (որտեղ 34-ժամյա դասընթացի ծավալի գրեթե մեկ երրորդը նվիրված է հայ մշակույթին) և Հայոց եկեղեցու պատմության դասընթացներում: Ուշագրավ է այդ առումով վերջինիս առանձին բաղադրիչներ-

րում մշակութային թեմատիկայի քննարկումը: Այսպես, 6-րդ դասարանի դասընթացի ծավալի կեսից ավելին կազմող «Հայոց եկեղեցու տոները» թեմայում զուգահեռաբար ներկայացված են ինչպես տոնի հոգևոր իմաստը, այնպես էլ՝ ժողովրդական տոնակատարությունը, ինչը ոչ միայն ընդլայնում է ուսումնական նյութի բովանդակային շրջանակները, այլև բարձրացնում ուսուցման արդյունավետությունը: Հայոց եկեղեցու պատմության 11-րդ դասարանի դասընթացի բովանդակության մեծ մասը նույնպես նվիրված է հայ մշակույթի տարբեր ուղղությունների և մշակութային արժեքների ներկայացմանը:

3. Անդրադառնալով հանրակրթական դպրոցում մշակութային հարցերի դասավանդման որոշակի հիմնահարցերի՝ նշենք դրանցից պատմության, մասնավորապես Հայոց պատմության դասընթացում մշակույթի՝ տվյալ դարաշրջանի պատմությունից որոշ չափով առանձնացված ներկայացնելու՝ դեռևս խորհրդային շրջանում ձևավորված ավանդույթը: Խոսքը, բնականաբար, վերաբերում է ոչ թե բովանդակային հարցերին, այլ ուսումնական նյութի կառուցման սկզբունքին: Այդպիսի մոտեցման դեպքում սովորողի մեջ կարող է թյուր պատկերացում ստեղծվել մշակույթի և սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքի մեկուսի գարգացման մասին: Մինչդեռ որևէ դարաշրջանի մասին պատմող ուսումնական նյութն ինքնին վկայում է, որ մշակույթը, չնայած հանրային կյանքի մյուս կողմերից ունեցած իր որոշակի բնականոն առանձնացվածությանը, ընդգրկուն առումով ոչ միայն պայմանավորված է դրանցով և դրանց գարգացման մակարդակով, այլև իր հերթին տվյալ դարաշրջանի հասարակական ու պետական կյանքի գարգացման, հանրության բարեկեցիկ գոյության կարևոր նախապայմաններից է:

4. Եվս մի հիմնախնդիր: Ուսումնական բովանդակության կառուցման հինք հանդիսացող չափորոշիչներում, ծրագրերում և դրանց պահանջներին համապատասխան կազմվող դասագրքերում «մշակույթ» ասելով, որպես կանոն, նկատի է առնվում դրա պրոֆեսիոնալ բաղադրիչը՝ գրականություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն և այլն, սակայն, առանձին բացառությունները չհաշված, գրեթե անդրադարձ չի արվում ժողո-

վրբական կամ կենցաղային մշակույթի տարրերին, ինչը պակաս կարևոր չէ դարաշրջանի պատկերը տեսնելու համար:

Arakel GYULBUDAGHYAN (Armenia)

National Institute of Education, Ministry of Education and Science of RA (Yerevan)

E-mail: arakelyuni@mail.ru

**SOME TEACHING METHODS ON ARMENIAN
ETHNOGRAPHY AND NATIONAL CULTURE IN PUBLIC
SCHOOL**

In different subjects of different grades in Armenian public schools there are topics related to Armenian national culture (or its different aspects): for instance in Elementary School “Me and the World around” (4th grade program), in Middle School “Motherland studies” (5th grade program), in Middle and High school “History of Armenian Church” (5-9 and 10-11 grades), “History of Armenia” (6-9 and 10-12 grades), Social Science (8-9 and 10-12 grades), etc. Apart from the list above there are studying materials in Literature, Music, Fine Arts and other subjects’ syllabuses.

Ministry of Education and Science of Armenia approved to add to teaching plan’s timesheet “Armenian and International Culture” (7-9 grades, from which the whole 9th grade program is about Armenian culture), “Ethnology” (10th grade), “Archeology” (10th grade), “Folklore” (Ancient and Medieval period, 11th grade), etc.

In the subjects mentioned above cultural themes are presented in the logical chain of a particular subject. Moreover, it is not only about conceptual meaning, but also the time provided for that topic. There are relatively more detailed reverberation about cultural issues in Motherland Studies (about one third of 34 – hours program is about Armenian Culture) and History of Armenian Church Program.

Talking about different issues of teaching cultural subjects in Public School, we would like to mention that there is a tradition coming from the Soviet Union to present culture of particular period a little separated (“isolated”)

in the subject of History, specifically History of Armenia. Let's mention that it is mostly about the structure's principle of teaching material, and not about conceptual aspects. With this approach students can have a wrong impression about isolated development of culture and social, economic, political life.

Another issue is that in standards, programs (which are the base of creation of teaching materials) and in text-books (which are made based on requirements of those standards and programs) by "Culture" often they mean just the professional subjects: literature, fine arts, music, theatre, etc. But with small exceptions there is almost nothing about household or popular aspects of culture, which is also important to have general idea about that particular period.

Ալվարդ ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հայաստան)

Հայկական պետական մանկավարժական համալսարանի
պատմության թանգարան (Երևան)
E-mail: aspumuseum@gmail.com

ՇԻՐԱԿԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Մշակույթի և, մասնավորապես, թանգարանների դերը՝ որպես սոցիալ-տնտեսական և էթնիկական խնդիրները լուծելու հզոր գործիք, անհնար է թերագնահատել:

Մշակութային քաղաքականությունը Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, այդ թվում նաև՝ Հայաստանում, կոմունիստական կուսակցության գաղափարական քաղաքականության մասն էր: Այդ տարիներին Շիրակի և Լոռու մարզերի տասնյակ թանգարանները բավականին զարգացած էին՝ լինելով տարածքի կարևորագույն մշակութային կենտրոններ և բնակչության կողմից հաճախ այցելվող վայրեր:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում թանգարանները հայտնվեցին բարդ կացության մեջ, քանզի դժվար էր իրականացնել կրթական ծրագրեր նվազագույն ֆինանսավորման և ազգաբնակչության սոցիալ-հոգեբանական բարդ պայմաններում: Թանգարանների գերխնդիրը հավաքածուներն ու շենքերը պահպանելն էր: Թանգարանային մնացյալ գործառույթները մղվել էին երկրորդ պլան:

Այս խնդիրների լուծումը կարևորեցին նաև տարածաշրջանի այլ երկրների թանգարանային աշխատակիցները, և 2009թ. հունվարի 22-ին մեկնարկեց «Ակտիվացնենք թանգարանները՝ որպես ցկյանս ուսումնառության տարածքներ»՝ A-MUSE-ALL (Activate-Musems-As Lifelong Learning spaces) նախագիծը, որն իրականացվեց Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում 30 ամիս ժամկետով:

Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել թանգարաններին, որ կատարելագործվեն աշխատակիցների արհեստավարժությունը և ինտելեկտուալ կարողությունները:

2009-2010թթ. իրականացվեց կարիքների գնահատում Լոռու և Շիրակի մարզի թանգարաններում: Տարածաշրջանն ունի հարուստ մշակութային ներուժ, թանգարանների ցանց, բարձրագույն կրթությամբ մասնագետներ, որոնք պատրաստակամ էին բարելավելու թանգարանային գործունեությունը ի նպաստ տեղի բնակչության զարգացմանը: Հայաստանի թանգարաններից ծրագրում ներգրավվեցին՝

- Վանաձորի պատկերասրահը
- Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանը
- Ստեփան Զորյանի տուն - թանգարանը Վանաձորում
- Գյումրու քաղաքային ճարտարապետության և կենցաղի թանգարանը
- Հովհաննես Շիրակի թանգարանը
- Մհեր Մկրտչյանի թանգարանը
- Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի թանգարանը
- Ավետիք Իսահակյանի տուն – թանգարանը
- Սերգեյ Մերկուրովի տուն - թանգարանը
- Հովհաննես Թումանյանի տուն - թանգարանը Դսեղում:

Ծրագրի կարևոր խնդիրներից մեկը աշխարհի տարբեր թանգարանների փորձի փոխանակումն ու գիտաճանաչողական այցելությունների կազմակերպումն էր, որոնք կազմում էին ծրագրի զգալի մասը:

Արդյունքում ծրագիրը նպաստեց թանգարանների արհեստավարժությանը և ինտելեկտուալ կարողության մակարդակի բարձրացմանը, ակտիվացրեց թանգարանների մասնակցությունը սոցիալական կրթական գործընթացներին: ԵՄ-ի և թիրախային տարածաշրջանների թանգարանների միջև հաստատվեցին և ամրապնդվեցին կապեր:

Քանի որ ծրագիրը շատ արդյունավետ էր, այս պահին առանցքային մոդուլները կարող են տեղայնացվել և կիրառվել նաև տարբեր երկրների այլ թանգարանների ծառայությունների շարքում:

Alvard GRIGORYAN (Armenia)

History Museum of Armenian State Pedagogical University (Yerevan)

E-mail: aspnumuseum@gmail.com

MUSEUMS OF SHIRAK AND LORI REGIONS AS ACTIVE EDUCATIONAL SPACES

The role of culture and namely the museums, as a strong tool for solving socio-economic and interethnic problems has been underestimated. Cultural policy in the Soviet Union was part of the ideological policy of the Communist Party. Museum system of the post-soviet countries was highly developed, however after the collapse of the Soviet Union, museums in the post-soviet countries were faced with great financial problems, challenges of a market economy and the necessity to reposition themselves as institutions.

Furthermore, growing socio-economic problems in recent years, the global economic crisis are accompanied by increasing political tensions, rising intercultural and interethnic problems throughout the former Soviet Union.

In this critical time within the program of the European Commission “Investing in People: Access to local culture, protection and promotion of cultural diversity” the project “Beyond Boredom, Dust and Decay - Museums as

Life Long Learning Spaces for Intercultural Dialogue (A-MUSE-ALL)” has been launched in 2009.

In Armenia ten museums were part of A-MUSE-ALL. Six of them are located in the region of Shirak, the others in the region of Louri. They range from archaeology museums to fine art museums and also house museums for outstanding personalities from the field of culture, such as poets or actors.

This project showed the importance of the cultural work, the invaluable role and potential of museums and other cultural institutions in museum education.

The main result of the program was transferring existing museums into active educational spaces, increasing professionalism and intercultural competence of museums, developing of museum programs and activities for different target groups, ensuring more active engagement of museums in social learning and inclusion processes.

Գագիկ ԵԹԻՄՅԱՆ (Հայաստան)

Վանաձորի պետական համալսարան
E-mail gagikyetimyan@mail.ru

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՒԼՏՈՒՐ- ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մշակույթը ցանկացած քաղաքակրթության զարգացման ամենակարևոր ցուցանիշներից է, ամեն մի ժողովրդի իսկական դեմքը, այս կամ այն պատմաժամանակագրական փուլում, նրա կենսագործունեության էությունը և նպատակը: Արդի շրջանում, երբ Հայաստանը գտնվում է զար-

գացման անցումային դժվարին փուլում, մեծ նշանակություն է ստանում անհատական և հասարակական մշակույթի բարձր մակարդակի պահանջարկը: Այդ կապակցությամբ այսօր, անկասկած, մեծ հետաքրքրություն պետք է ներկայացնի նախորդ՝ խորհրդային շրջանում իշխանությունների վարած մշակութային քաղաքականությունը և դրա հանրագումարները, քանի որ այն տարիներին էլ երկիրը գտնվում էր հակասական վիճարկելի հաջողություններով սոցիալ-տնտեսական պայմաններում:

Մշակույթը դիտարկվում էր որպես գաղափարախոսության իրականացման կարևոր ոլորտ, իսկ ստեղծագործող մտավորականությունն էլ՝ կուսակցության քաղաքականությանը ուղեկցող զանգված: Մշակույթի ոլորտում պետական քաղաքականության աստիճանական զարգացումը ուղիղ կախման մեջ էր խորհրդային քաղաքացու վրա գաղափարական ազդեցության պահանջարկից: Մշակույթը դիտվում էր որպես ոլորտ, որը կոչված էր նպաստելու նյութական արտադրությանը, կամ այն կառավարությունից աշխատավորությանը որոշակի ժամանակահատվածում հրատապ և կարևոր քաղաքական հրահանգների վերահաղորդման գործիք էր:

Խորհրդային շրջանի մշակութային քաղաքականության պատմական փորձը միշտ չէ, որ միարժեքորեն դրական պետք է գնահատել: Մակայն անհրաժեշտ է նրանում գտնել ռացիոնալը, օգտակարը, մեթոդների ստեղծագործական իմաստավորումը՝ հանրային, մշակույթին, կրթական մակարդակին, արվեստի զարգացմանն ուղղված խնդիրների լուծման գործում:

Խորհրդային կուսակցական, պետական առաջնորդները, չնայած հայտնի գաղափարախոսական սահմանափակումներին, մեծ ուշադրություն էին դարձնում հասարակության մշակութային ու կրթական ներուժի բարձրացմանը, արվեստի տարբեր ուղղությունների զարգացմանը: Մշակույթի մեծ ազդեցությամբ էր, որ խորհրդային երկրում մարդկանց գիտակցության մեջ տիրապետող դարձավ մարքս-լենինյան գաղափարախոսությունը: Նրանց «ոգեշնչողն ու ուղղորդողը» ագրարային երկրից ինդուստրիալ առաջատար պետություն դառնալու ճանապարհին, օգնեց ջախջախելու ֆաշիզմը, վերականգնելու ավերված տնտեսությունը և մեծ

սպասումներով նվիրվելու աշխատանքին՝ հանուն սերունդների պայծառ ապագայի:

Խորհրդային մշակութային քաղաքականության ուղղություններում չկար երկրորդական ոլորտ: Բոլոր ճյուղերի աշխատանքն ուղղված էր մեկ հիմնական խնդրի. Մոսկվայում մշակված գաղափարախոսական արտադրանքը հասցնել անծայրածիր երկրի ամենահեռավոր անկյունը, խորհրդային յուրաքանչյուր քաղաքացու: Այդ ամենահաս քաղաքականության ոլորտում էին կինոն, թատրոնը, գրականությունը, կերպարվեստը, նկարչությունը, ակումբները, գրադարանները, ինքնագործ խմբերը, անգամ զբոսայգիները, մանկական ճամբարները և այլն:

Այս բոլոր գործընթացներում անմասն չէր նաև Հայաստանը՝ իբրև ԽՍՀՄ առանձին հանրապետություն:

Մույն հողվածում ներկայացված է մշակութային մեծ քաղաքականության մի փոքր ոլորտը՝ Խորհրդային Հայաստանի կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցի դերը վերոհիշյալ խնդիրների իրականացման գործընթացներում:

Հետպատերազմյան հենց 1-ին տարիներից իշխանությունները որոշակի խնդիրներ առաջադրեցին ժողովրդական ստեղծագործական տներին: Հատուկ շեշտադրվում էր գեղարվեստական մշակույթի գաղափարաաստիարակչական նշանակությունը:

Պարբերաբար անհրաժեշտ էր մասնակցել Մոսկվայում անցկացվող մշակութային տարբեր ստուգատեսների, որոնց նախնական փուլերը կազմակերպվում էին տեղերում, կամ էլ նախաձեռնել խորհրդային պետության զանազան տոներին նվիրված հանդիսություններ, շուքով անցկացնել ամենակարևոր ու ամենապատասխանատու միջոցառումները՝ «Մեծ Լենինի» ու «Ժողովուրդների հայր Մտալինի» հոբելյանական տաբելիցները:

Իհարկե, երբեմն զավեշտի էին հասնում նմանօրինակ միջոցառումներում ցուցանալությունը, պարզունակությունը, բայց բոլոր թերություններով հանդերձ՝ մշակույթը այս կամ այն կերպ փորձում էին մոտեցնել ժողովրդին, դարձնել նրա ընդհանուր դաստիարակության կարևոր բաղադրիչը, նաև նրա միջոցով իրականացնել համապետական լուրջ ծրագրեր:

Gagik YETIMYAN (Armenia)

Vanadzor State University

E-mail gagikyetimyan@mail.ru

THE ROLE OF CULTURAL-EDUCATIONAL INSTITUTES IN SOVIET ARMENIA IN THE SPHERE OF CULTURAL POLICY LED BY AUTHORITIES DURING THE POST-WAR PERIOD

Culture is the most important factor in the development of any civilization during this or that historical period, the real face of any nation, the aim and essence of its lifestyle. Nowadays as Armenia is in a hard transitional stage, the need for high level individual and social culture has got more importance than ever. So, the policy led by authorities in previous Soviet period must undoubtedly be of great interest as our country during those years was also in an arguable opposing successful social-economic state. Culture was considered as an important sphere of ideological realization and the creating intelligence was just the mass accompanying the policy of the Party.

The historical experience of cultural policy during the Soviet period shouldn't always be estimated as positive, though it is always necessary to find something rational, useful in it as well. The Soviet party leadership mostly paid attention to the development and raise of cultural and educational inner power of society, to the development of different art trends. It was due to the great influence of culture, that Marks-Lenin ideology became leading in the conscious of people in a Soviet country.

As a rule, there was no secondary branch in Soviet cultural policy. All the branches of culture worked for a single basic problem – to lead the ideology worked out in Moscow, to the farthest corners of the boundless country, to every soviet citizen. Cinema, theatre, literature, fine arts, painting, music, libraries, even parks and camps for children were all in the sphere of that ubiquitous policy.

From time to time it was necessary to take part in various cultural reviews held in Moscow or to organize festive occasions devoted to different soviet political holidays. “Great Lenin” and “Stalin – father of nations”

anniversary grand celebrations were the most important and the most responsible ones.

The report presents a small sphere of cultural great policy: Soviet Armenian net of cultural-educational institutes in the realization of the above mentioned problems.

Էսթեր ԽԵՄՉՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: ekhemchyan@yandex.ru

ԱՍՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՐՍԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Կարսի տարածաշրջանի ժողովրդական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթները, որոնք ներկայացնում են հայկական հեքիաթային ժառանգությանը բնորոշ սյուժեների ու մոտիվների տեղական տարբերակները՝ ինքնատիպ հյութեղ ոճով և բանասացական ավանդությամբ: Այդ հեքիաթները, պատմվելով տարածաշրջանում կենցաղավարող բարբառներով, ենթաբարբառներով ու խոսվածքներով, ներառել են Կարսի բառազանձի ու արտահայտչամիջոցների հարուստ, լավագույն, առանձնահատուկ նմուշները՝ իրենց դիպուկությամբ ու բազմիմաստությամբ:

Իրենց կառուցվածքով Կարսի հեքիաթները համահունչ են և նմանվում են մյուս տարածաշրջանների հեքիաթներին: Հեքիաթում սյուժեների, մոտիվների, հերոսների գործառույթների հերթագայությունը խարսխված է ժանրին բնորոշ ավանդական կայուն բանաձևերի վրա, որոնք, ստորաբաժանվելով սկավաձքային, միջնամասային և եզրափակիչ տեսակների, առանց փոփոխության կարող են կիրառվել ցանկացած հեքիաթում:

Հեքիաթային կայուն բանաձևերին զուգահեռ՝ կարսեցի բանասացները իրենց պատումների մեջ ներմուծել են ասույթաբանական ժանրեր (առած-ասացվածք, երդում, սպառնալիք, անեծք, օրհնանք-բարեմաղթություն, դարձված և այլն), որոնց օգնությամբ ավելի են ընդգծել հեքիաթապատումի գործողությունների և հերոսների դերը, առաջ են բերել դրական և բացասական ցանկություններ և ուղղորդել դրանք:

Կարսի ասույթաբանական բանահյուսության հարուստ զինանոցը հեքիաթներում օգտագործվել է ըստ անհրաժեշտության և պահանջի: Դրան նպաստել է ասույթաբանական ժանրերի այլաբանական իմաստը, վերաիմաստավորված փոխաբերական արժեքը, փաստերի ընդհանրացումը, կարճառոտ ու սեղմ հորինվածքով ասելիքը տեղ հասցնելու հնարավորությունը: Երբեմն հեքիաթի եզրափակիչ բանաձևին ավելացվել է հեքիաթի ընթացքից բխող եզրակացություն-առած-ասացվածք, օրինակ՝ «Թագավորը կնիկն էլ, էջն էլ կուտա էս մարդուն, ճամբու կը դնէ: Քոռին էլ կը վոնդէ, թե.- Կորի, գնա, էդոր հըմար են ըսել՝ *քոռից, թոփլից, քաշալից հեռու փախէք*» (Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, № 57(57), էջ 292) կամ «Հարի հիմի, *էղմանների գըլխին նարեգ կը կարթան, օր խելքի գան*» (№ 61(61), էջ 296), որը բարոյախոսական, խրատական նաև ուսուցողական նպատակ է իրագործում՝ ավելացնելով հեքիաթի դերը որպես հասարակության հոգեկան պահանջմունքները բավարարող կարևոր միջոց:

Առած-ասացվածքների կիրառությունը բնորոշ է նաև հեքիաթների միջնամասին և միտված է կա՛մ հերոսի հոգեվիճակը և իրադարձությունների անհուսալիությունը ներկայացնելուն, օրինակ. «Տղեն փոր ու փոշման կերթա տուն, չայրեն կախ, էնպես *օր լուն երեսից ընկնի հազար կըտոր կեղնի*» (№ 5(5), էջ 59), կա՛մ տրագիկումիկ վիճակին անհարիր պահվածքն ու դիպուկ համեմատությունը, օրինակ՝ «Աղի կընիզը մըշկին աշեց, աշեց, ըսավ.- *Հա քու խելքը, հա աղի խելքը ու իմ պորդի խելքը մեկ է*» (№ 66(66), էջ 301), որը հավասարության նշան է դնում տարաբնույթ արարքների միջև՝ ընդգծելու համար դրանց ոչ տեղին լինելը:

Անեծքը իր էությունը հմայական խոսքերի շարքին է դասվում և բացասական զգացումների ու ցանկությունների արտահայտման միջոց է, որի զորությունն աներկբայորեն գործում է հատկապես հեքիաթներում:

Կարսի հեքիաթներում անեծքների կիրառման երկու տիպ է հանդիպում. 1) Անեծք պատճառահետևանքային շղթայով, որն ընթացքի մեջ է դրվում հեքիաթի սկզբնամասում: Սույն անեծքը տրվում է որևէ մեկի (պառավ, դերվիշ) կողմից, ում վնաս է հասցվել կամ ում իրավունքները ոտնահարվել են: Անեծքին հետևում է բնական կարգի խաթարումը. ապա այն վերացնելուն կամ վերականգնելուն միտված գործողությունները: 2) Անեծք, որը կիրառվում է հեքիաթի միջնամասում, կապ չունի հեքիաթի բուն խնդրի հետ, այլ ուղղված է կոնկրետ ինչ-որ մեկին՝ որպես տվյալ պահի և գործող անձի անհատական հատկանիշների ու կարողությունների բացասական որակում, օրինակ՝ «-Հողը՝ գլխիտ, էղել էս տասնհինգ-տասնվեց տարեկան աղջիկ, հեչ մէ բանն էնել չիտես» (№ 3(3), էջ 48):

Օրհնանք-բարեմաղթությունները հեքիաթներում հակակշռում են անեծքներին ու սպառնալիքներին՝ ստեղծելով հոգեբանական ներգործման դրական միջավայր: Դրական ցանկությունները հաջողության գրավական են և ուղեկցում են հերոսին խնդրի իրագործման ճանապարհին. «Պառավը կըսէ.- Որդի, էս էլ չիտեմ, գնա, *աստված գործդ աջողէ*» (№ 2(2), էջ 40):

Առօրյա խոսքում մեծ տարածում և կիրառություն ունեցող մի քանի բառերի միավորմամբ ձևավորված և նոր իմաստ ձեռք բերած լեզվական բանաձև-կաղապարները հեքիաթի համատեքստում ծառայում են պատկերավորման, համեմատության, հոգեվիճակի բացահայտման, այլաբանության, ծածկախոսության և այլ առումներով: Կարսի հեքիաթային դարձվածքների բազմազանությունն առանձնանում է մի քանի տարատեսակներով: Հատկանշական են կրկնվող բառերով դարձվածքները, օրինակ՝ «*մաթալ-մաթալ աշէլ*», «*ռանգ-մռանգ քցել*», «*մալուլ-մալուլ ման գալ*», «*հալալ-գուլալ դուլուղ էնել*», «*կերած-խըմած*», «*մաղիկ-մաղիկ ման գալ*», «*յալվար-յախար ընկնել*», չափազանցությունները, օրինակ՝ «*ասեղ քցես, տեղ չկա*», «*Էն օր թագավորի տղեն ու հարսն էին, էլ ի՞նչ ըսեմ, երկնքի օխտը դատն էին գտնվում*» (№11 (11), էջ 102), այլաբանությունները՝ «Կանցնի խելի վախտ, ախճկա վիճակը կը փոխվի, օրից օր *գոգնոցը կը կարճանա*»

(№ 28(28), էջ 176), «Զաթի ինքըն էլ պատվըցել էր, *արևը կուտա սաղ մընացողներին*, տղեն էլ դառնա կը թաքավոր» (№32(32), էջ 210) և այլն:

Դարձվածքները ունեն նաև եղանակավորող առանձնահատկություն և բացահայտում են տեղական լեզվամտածողության առանձնահատկություններն ու դրսևորման ձևերը:

Քննությունը ցույց է տվել, որ Կարսի հեքիաթներում ասույթաբանական ժանրերը կիրառվել են ըստ անհրաժեշտության և պահանջի: Դրան նպաստել են ասույթաբանական ժանրերի այլաբանական իմաստը, վերաիմաստավորված փոխաբերական արժեքը, փաստերի ընդհանրացման կարողությունը, սեղմ ծավալը:

Ester KHEMCHYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: ekhemchyan@yandex.ru

THE USAGE OF PARIEMOLOGICAL GENRES IN KARS TALES

The fairy tales, realistic tales and animal tales have their notable place in the Kars region folklore. They are representing the local versions of the subjects and motives typical for Armenian tale heritage in unique style and telling tradition. Those tales, being told in the regional living dialects, subdialects and idioms have included in themselves the rich examples of Kars word treasure and means of expression with their precision and multiple meanings.

In parallel with the tale stable formulas, the Kars storytellers have included pariemological genres (proverbs, sayings, swears, threats, curses, blessings, phrases, etc.), by means of which they have underlined the role of the tale actions and the characters, have promoted positive and negative desires and have directed them.

The examination demonstrates that the pariemological genres in Kars tales have been used by necessity and requirement. The alternative meaning of pariemological genres, the reinvented figurative value, the ability of facts generalisation have promoted that.

Մարինե ԽԵՄՉՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: mkhemchyan@yandex.ru

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԵՎ ՆՎԻՐԱՏՈՒ ԹՌՉՈՒՆԸ ԿԱՐՄԻ
ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

Կարսի տարածաշրջանը հարուստ է բազմաժանր ու ինքնատիպ բանահյուսությամբ, որն աչքի է ընկնում հատկապես հրաշապատում հեքիաթներով: Այս տարածաշրջանի հրաշապատում հեքիաթների հերոսների գործառույթները որոշ չափով նույնականանում են ինչպես պատմական Հայաստանի բոլոր պատմագագրական տարածաշրջանների, այնպես էլ աշխարհի տարբեր ժողովուրդների հրաշապատում հեքիաթների գործող անձանց գործառույթների հետ: Հերոսի գործողություններն ուղեկցվում են ամենատարբեր նվիրատուների, խորհրդատուների և օգնականների միջամտությամբ, որոնց շարքում ուրույն տեղ ունի թռչունը:

Թռչունը կապված է մարդու տոտեմական պատկերացումների հետ: Թռչուն-նախնին հնուց ի վեր դրսևորում է գտել հայ ժողովրդական հեքիաթներում: Հեքիաթի հերոսի մեռած նախնու հոգին թռչնի կերպարանքով հայտնվում է նրա ճանապարհին (սովորաբար ծառի տակ հանգստանալիս) կամ երազում: Ախոյանի (վնասատու) կողմից վնասված, երբեմն մեռած կամ քար դարձած, մոտալուտ վտանգին ենթակա հերոսը կարիք ունի միջամտության. վրա է հասնում նվիրատու և խորհրդատու թռչունը: Կարսի հրաշապատում հեքիաթներում նմանօրինակ թռչուն է սոխակը («Ժլատ թագավորի հեքիաթը կամ հազարան բիլբուլ»): Հերոսի նախանձ եղբայրները հանում են նրա աչքերը և գցում գրպանը: Կուրացած հերոսը վերականգնում է իր տեսողությունը սոխակի թողած փետուրով և այն օգտագործել կարողանալու խորհրդով: Ի դեպ, փետուրը առանց աղբյուրի ջրի մեջ թաթախելու ի գորու չէ վերականգնելու տեսողությունը: Երկրի ընդերքից բխող ջուրը կապն է անդրաշխարհի և այսրաշխարհի միջև, իսկ սոխակը՝ հերոսի մեռած նախնու հոգին: Նմանատիպ նվիրատվություն կա նաև «Աղունիկի հեքիաթը» պատումում, որտեղ հերոսը աղավնու փետուրի միջոցով վերականգնում է իր կորցրած ձեռքերը:

Քարացած հերոսի վերակենդանացումը նույնպես իրագործվում է երազում տրված թռչնային խորհրդի օգնությամբ («Ասլանգադեի հեքիաթը»): Ըստ այդ խորհրդի՝ թագավորի տղան պետք է իր նորածին որդուն մորթեր և արյունով լողացներ հերոսին: Կենսարար հեղուկով հիվանդին, մեռածին կամ քար դարձածին լողացնելու մոտիվը տարածված է ոչ միայն հայ ժողովրդական, այլև աշխարհի շատ ժողովուրդների հեքիաթներում: Հեքիաթների մեծ մասում վերակենդանանում է նաև անմեղ գոհր՝ երեխան: Նույն հեքիաթում թռչունը հերոսին զգուշացնում է նաև մոտալուտ վտանգների մասին՝ դրանք շրջանցելու խորհուրդներ տալով:

Հերոսի մեռած նախնու հոգին Կարսի հեքիաթներում (Կարս. հայոց բանահյուսական մշակույթը) դրսևորված է նաև աղավնու կերպարանքով («Մահ չուզող տղան»): Աղջիկների կերպարանափոխված աղավնիները նորածնին օժտում են շնորհներով: Այս նույն հեքիաթում թռչունների (դուշ, ճնճուղ) գործողություններով (տարեկան մեկ փետուր չինարի ծառին ավելացնելը մինչև ծառի ամբողջությամբ ծածկվելը և կտուցով օվկիանոսի ջուրը դատարկելը) առաջ է քաշվում մահկանացուի համար երկարակեցության հնարավորությունը և անմահության գաղափարի ժխտումը:

Կարսի հրաշապատում հեքիաթներում, բացի վերոնշյալ թռչուններից, հանդիպում են նաև վայրի սագը, որը որոշում է հերոսի հետագա ճակատագիրը («Նալ թագավորի հեքիաթը»), թութակը (տուտի դուշ), որը հերոսին նվիրում է անմահական խնձորի կորիզներ («Ալեքսիանոս և Լուսովիկ»):

Որոշ հեքիաթներում որպես նվիրատու և խորհրդատու է հանդես գալիս երախտապարտ թռչունը («Օխտ ախպոր քուրը», «Մինամ թագավորի հեքիաթը» և այլն), որի տված փետուր-նվերը կրակին տալով և կանչի բանաձևով հերոսը դուրս է գալիս անելանելի վիճակներից:

Կարսի՝ շուրջ հիսուն հրաշապատում հեքիաթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նվիրատու և խորհրդատու թռչունը մի շարք հեքիաթներում առանցքային գործող անձ է, որի գործողություններով պայմանավորված է հեքիաթի սյուժեի զարգացումն ու հանգուցալուծումը:

Marine KHEMCHYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail: mkhemchyan@yandex.ru

ADVISING AND DONOR BIRD IN KARS FAIRY TALES

The region of Kars is rich with unique and diverse folklore that is remarkable especially in the fairy tales. The functions of the fairy tales characters of this region in some case are identical with the ones from all the historical-ethnographic regions of historical Armenia, as well as from the various nations of the world. The actions of the character are accompanied by interference of various donors, advisers and assistants, where a bird has its unique place. The types of the birds acting in Kars tales (dove, nightingale, sparrow, goose, eagle, peacock, parrot, etc.) and their functions (moving the character from the underworld and vice versa, reviving of the died character or his body parts, advising the character, changing of character status etc.) are wide.

The research demonstrates that the advising and donor bird in some of the Kars fairy tales is a key character, who is responsible for the development of the tale subject and resolution.

Նյուրա ՀԱԿՈԲՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: galstyan-1966@mail.ru

ԴՎԻՆԸ՝ ԿՐԹԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(ԴՎԻՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՆՈՅԸ)

Չորրորդ դարի 30-ական թվականներին Հայոց Խոսրով Բ Արշակունի թագավորը Արտաշատից Դվին տեղափոխեց իր արքունիքը: 481 թ. «Տանուտեր Հայոց» Սահակ Բագրատունի իշխանը պաշտոնապես մարգպանական Հայաստանի մայրաքաղաք հռչակեց Դվինը: Վդ. երկրորդ կե-

սին՝ Գյուտ կաթողիկոսի Հայրապետության տարիներին (461-478թթ.), Դվին տեղափոխվեց և Հայոց Հայրապետական Աթոռը (Թովմաս Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Սյունեցի, Կարապետ եպիսկոպոս և այլք):

Այսպիսով, Դվինը շուրջ չորս հարյուր տարի դարձավ վաղ միջնադարյան Հայաստանի ոչ միայն վարչական, տնտեսական, առևտրամշակութային, այլև հոգևոր կենտրոնը՝ կոչված ուղղություն տալու տնտեսության, մշակույթի, կրթության և գիտական մտքի զարգացմանը, ներդաշնակ ժամանակի պահանջներին:

Դվինում հրավիրվել են մի շարք կարևոր եկեղեցական ժողովներ (506, 555, 609, 641 թթ.)՝ խնդիր ունենալով պատասխան տալ ծագած կրոնադավանաբանական վիճահարույց հարցերին, վերաբերմունք արտահայտել խիստ վտանգավոր դրսևորումներ հանդես բերող աղանդավորական շարժումներին և գաղափարախոսությանը, դիմակայել կրոնական-եկեղեցական բոլոր կարգի ոտնձգություններին, ընդունել բացառիկ նշանակություն ունեցող որոշումներ, հայոց եկեղեցու ներքին անկախությունն ու առաջնային դերը Արևելյան եկեղեցիների շարքում պահպանելու նպատակով:

Այդ իրավամբ խառնակ ժամանակներում Դվինի կաթողիկոսությունը ոչ միայն դիմակայեց ու գոյատևեց, այլև կյանքի կոչեց հոգևոր և նյութական փայլուն մշակույթ:Նա եղավ արևելաքրիստոնեական ճարտարապետական դպրոցի մշակած ուղղություններից շատերի կյանքի կոչողը, ճարտարապետական շատ կոթողների հիմնարկողն ու հովանավորը:

Ձևավորվեց փիլիսոփայական մտքի հայկական դպրոցը, զարգացում ապրեցին ազգային գրականությունը, պատմագիտությունը, բնաբանական գիտությունները, մաթեմատիկան ու տոմարագիտությունը: Մեծ թափ ստացավ թարգմանական գործունեությունը, ձևավորվեց հայկական թարգմանական դպրոցը, կյանք մտան դպրոցներն ու վանական կրթական համալիրները:

Առաջին Բարձրագույն դպրոցը կամ վարդապետանոցը Հայաստանում, համաձայն տնօրինող կարծիքի, հիմնարկել է Մ. Մաշտոցը. «Գտեալ էս գոմանս՝ յինքն յարեցուցանէր աշակերտալ նմին սովորական աւետա-

րանութեանը, - գրում է նրա վարքագիրը՝ Կորյունը: Այդ նրանք էին, որ հետագայում կոչվեցին «երիցագոյն թարգմանիչք», որոնցից մեկն էլ պատմիչն է:

Մեսրոպյան վարդապետական դպրոցն, անշուշտ, ունեցավ իր հետևորդները, գործրինակ, Վաղարշապատի և Դվինի վարդապետանոցները: Այդ են հավաստում Սահակյան կանոնները, իսկ դրանք պահանջում էին պարտադիր ուսում բոլոր եկեղեցականների համար, որպես թելադրում էր քահանայական բարձր տիտղոսը:

«Վարդապետական ուսումը,- գրում է Ա.Ալպոյաճյանը,- կաւանդուէր քահանայական Ձեռնադրութենէն յետոյ եւ վարդապետական աստիճանի տըւչութիւնը բոլորովին անկախ էր կրթական աստիճաններէն եւ միշտ ավելի բարձր տիտղոս մը կհամարուէր ... իբրև գիտութեան եւ հմտութեան աստիճան»:

Վերոնշյալ դպրոցների վարչությունը հանձնվում էր քորեպիսկոպոսներին կամ էլ եպիսկոպոսական փոխանորդներին. «Եպիսկոպոսք իւրաքանչիւր վիճակաց՝ վանաց եւ անապատից տեսչութիւն եւ հոգաբարձութիւն արասցեն ի լոյս եւ ի պաշտան եւ ի դպրոցս հայել, եւ իւրեանց պաշտանէիւքն կերակրել եւ վայելել ի սրբոցն շնորէ, այլ բոնութեամբ եւ զաւշաքաղութեամբ ինչ ոչ մի իշխեսցեն առնել»:

Վարդապետական ուսում գերազանցապես կարող էին ստանալ նրանք, ովքեր ունեին առնվազն երեք տարվա «քահանայական» կրթություն: Դասընթացների տևողությունը յոթից ութ տարի էր: Ուսուցանում էին տեսական և գործնական գիտություններ: Տեսակներն էին՝ բնագիտություն (բնականն), մաթեմատիկա (ուսումնականն) և աստվածաբանություն: Գործնական դասընթացներում ուսուցանում էին տնտեսագիտություն, քաղաքականություն և բարոյագիտություն (իմաստաբանություն): Ուսուցանում էին նաև փիլիսոփայություն, մեկնողական արվեստ մատենագիտություն և պատմություն, յոթերորդ դարից նաև մանրանկարչություն: Մեծ տեղ էր հատկացվում հունական կրթական համակարգին, «յոթ ազատ արուեստներին», հատկապես Դվինի վարդապետանոցում, որտեղ հունարեն լեզվի ուսուցումը պարտադիր էր:

Շրջանավարտներին, իբրև վարդապետական բարձրագույն կրթության, քարոզչության և դասացության իրավունքի վկայական շնորհվում էր «Վարդապետական գավազան» (օձագուլխ) և մատանի կրելու իրավունք:

Հայաստանում գործող վարդապետարանների մի մասը եղել է հաստատուն, իսկ մի մասը՝ ժամանակավոր, հիմնարկած անհատ հոգևոր բարձրաստիճան գործիչների կողմից, կապված նրանց անհատական գործունեության հետ: Մրանք ունեցել են կարճ կյանք:

Մենաստանները, վարժարաններն ու վարդապետարանները վայելում էին թագավորների մեծագուն իշխանների և բարձրաստիճան հոգևորականության հոգացությունն ու հովանավորչությունը, ինչպես Դվինի վարդապետանոցը Հովհան Օձնեցի կաթողիկոսի հայրապետության տարիներին:

Պատմիչների վկայությունների համաձայն (Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Մխիթար Այրիվանեցի, Ստեփանոս Օրբելյան և ուրիշներ)՝ Դվինի Հայրապետական Աթոռին կից գործել է հոգևոր բարձրագույն դպրոց՝ վարդապետանոց. «տուն ուսուցչի կամ ուսման», «կրթարան ճեմարան» եւ ընդունարան վարդապետութեան»: «Դվինի վարդապետանոց ճարտասանական դպրոցը», ամենայն հավանականությամբ, բացվել է Ղազար Փարպեցու՝ Վաղարշապատից Ամիդ հեռանալուց հետո, երբ Վաղարշապատում փակվեց «Մեսրոպեան ոսկեդարեան» հռչակավոր դպրոցը:

Կարծում ենք՝ Դվինի վարդապետանոցը եղել է «հաստատուն»՝ հիմնված որևէ կաթողիկոսի կողմից (գուցե և Հովհան Մանդակունու՝ 478-490 թթ.), և գործել է այնքան ժամանակ, քանի դեռ հայոց հայրապետները չէին լքել այն:

Դվինի վարդապետանոցում ամենայն սրբությամբ պահպանվում էին Սահակ-Մեսրոպյան դպրոցների կրթական ավանդույթները, «ավանդական կամ հայեցի» ուսուցում: Դպրոցը մշտապես գտնվել է կաթողիկոսների անմիջական հսկողության տակ: Եղիա Քասունին գրում է, որ VI դ. կեսերին վարդապետանոցը վարել է ժամանակի կրթված անձերից մեկը՝ Եզրաս Անգեղացին. «Անգեղացիի մահէն ետքն ալ «Զ» դարուն վեր-

ջին կեսին այն տակավին ծաղկուն վիճակի մեջ էր և կարող աշակերտներ կրուսացներ»:

Դվինի վարդապետանոցի հետ են կապված ժամանակի շատ նշանավոր դեմքեր՝ կաթողիկոսներ, փակակալ եպիսկոպոսներ, պատմագիրներ, աստվածաբան-գիտնականներ, թարգմանիչներ ու մեկնողներ. Դվինի վարդապետանոցում են սովորել՝ Մովսես Եղվարդեցի, Էզրազ Անգեղացի, Կոմիտաս, Եզր, Սիոն Ա Բավոնեցի կաթողիկոսները, Ղևոնդ պատմիչն ու Վրթանես Քերթոզը, «Մեծ ճառասացն ու աստվածաբան-գիտնական Հովհան Մայրավանեցին, «Ստեփանոսն Սինն երկնի և խարիսխն հաւատոյ, վեմն սուրբ եկեղեցոյ», վերջապես երաժշտագետ և թարգմանիչ Գրիգոր Գոզիկը:

Սրանք անուններ են, որ կարող էին փառք ու պատիվ բերել ցանկացած ուսումնական հաստատության, ցուցել այդ հաստատության բարձր հարգն ու պատիվը ժամանակի գիտական մտքի անսահման տիրույթում:

Յավով պետք է նշել սակայն, որ եթե Դվինը հայտնի էր և ընդունված ժամանակակիցների կողմից իբրև վարչատնտեսական, առևտրա-արհեստագործական, մշակութային խոշոր կենտրոն՝ վավերացված պատմիչների (հայ և օտարազգի) վկայություններով և նյութական մշակույթի պեղածո-գտածոների հարուստ տեսականիով, ապա նույնը չի կարելի ասել նրա կրթամշակութային բեղմնավոր գործունեության վերաբերյալ:

Առայսօր Դվինը ներկայացած չէ իր համբավավոր դպրոցով, փառահեղ շրջանավարտներով, որոնք վկայություն են Դվինի՝ որպես կրթական օջախի բարձր համարման խաղացած բացառիկ դերի հայոց կրթամշակութային կյանքում:

Դվինի երկարամյա պեղումների ընթացքում վարդապետանոցը դուրս է մնացել արժանի ուշադրությունից, չի դարձել պեղումների հատուկ առարկա և այսօր առավել քան դժվար է շոշափել նրա տեղադրության հարցը: Մակայն, ըստ գրավոր աղբյուրների հաղորդումների, վարպետանոցը գործել է կաթողիկոսարանին կից, և նրա ավերակները պետք է փնտրել VII դ. կաթողիկոսական պալատի հարևանությամբ բացված մոնումենտալ մուտքով շինության (պահպանված է կիսավեր վիճակում) ավերակներում:

Nyura HAKOBYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

E-mail:galstyan-1966@mail.ru

DVIN AS AN EDUCATIONAL AND CULTURAL CENTRE. THE ECCLESIASTICAL HIGH SCHOOL

In the 30-ies of the fourth century the Armenian king Khosrov Arshakouni moved his royal court from Artashat to Dvin.

In 481 the ruler Sahak Bagradounie officially annouced Dvin the capital of the marzbanate. In the II half of the V century the catholicos Gioud (461-478) moved the residence of the catholicos from Etchmiadzin to Dvin. So, nearly 400 years Dvin became not only the administrative, trade, economic and cultural but also a spiritual center in harmony with the time. The historians Hovhannes Catholicos, Kirakos Gandzaketsi, Mkhitar Ayrivanetsi, Stepanos Orbelyan testify that each person could get high education irregardless of religious category.

The education – writes A. Alboyadjian, after the consecrate into priest was a higher title as for science degree. The graduating students as a certificate were given the right to get a crozier and a ring. In Dvin's high ecclesiastical school were educated Movses Ycghivartetsi Ezras Angeghatsi, catholicos Komitas, Yezr, historian Ghevond, Vrtanes Kertogh.

Theologian scientist Hovhanness Mayravanetsi, musician Grigor Grzik- these are names which could bring respect and honour to any institution.

Մարինե ՀԱՐՈՅԱՆ (Հայաստան)

Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (Երևան)

E-mail. marineharoian@gmail.com, gatmuseum@mail.ru

Ս. ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ՏՈՒՆ – ԹԱՆԳԱՐԱՆԻ՝

ԿԱՄՈ ՆԻԳԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԵՄԻՈՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դարի 60-80-ական թվականներին թանգարանային ցուցադրության նախագծման ոլորտում ձևավորված պատկերասյուժետային կամ առասպելաբանական մեթոդը հիմք դրեց թանգարանային ցուցադրության մի նոր տեսակի, որը հետագայում կոչվեց *հեղինակային ցուցադրություն* կամ *հեղինակային թանգարան*: Այս մեթոդի հիմնադիրներից Տ. Պոլյակովի բնորոշմամբ՝ այն սինթեզում է ճարտասպետության, գեղանկարչության, դիզայնի, թատրոնի, դրամատուրգիայի տարրերը, որի շնորհիվ՝ ցուցադրությունը վերածվում է արվեստի բոլորովին նոր և ինքնուրույն տեսակի: Հայաստանում այս մեթոդն առաջինը կիրառեց նկարիչ-ձևավորող Կամո Նիգարյանը: Նրա ինքնատիպ լուծումներով ձևավորված հեղինակային ցուցադրությունները նոր խոսք էին ոչ միայն Հայաստանի թանգարանային մշակույթում, այլև ԽՍՀՄ-ում ընդունված թանգարանային դիզայնի փիլիսոփայության և գեղարվեստական մտածողության ոլորտում: Կ. Նիգարյանի հեղինակային լավագույն աշխատանքներից էին Երևանի Հեղափոխության թանգարանի(1982թ.), Ե. Չարենցի տուն-թանգարանի(1991թ.) և Գյումրու Ս. Մերկուրովի տուն-թանգարանի երկրորդ ցուցադրությունները (2003թ.):

Ս. Մերկուրովի տուն-թանգարանը հիմնադրվել է 1984թ. քանդակագործի հայրական տանը՝ Գյումրիում, որտեղ արխիվային նյութերի և անձնական առարկաների հետ ներկայացված են նաև արվեստագետի տարբեր տարիների աշխատանքներից: Մերկուրովի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում ժամանակի մտավոր և քաղաքական ընտրանու ներկայացուցիչների հետմահու դիմակները: Վստահորեն կարելի է փաստել, որ նա, այդ արվեստը վերակենդանացնելով, հասցրեց նոր որակի:

Կ. Նիգարյանի գաղափարներով ստեղծված Ս. Մերկուրովի տուն-թանգարանի ցուցադրության հղացքը որոշարկվում է երեք հիմնական սրահներում:

Առաջին սրահում Ս.Մերկուրովի կյանքն ու գործունեությունը ներկայացնող փաստագրական ցուցադրությունն է: Սրահի մի կողմում քանդակագործի ակունքներն են, նրա անցած դժվարին ուղին՝ Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Կիև, Շվեյցարիա, Սյունիսեն, Իտալիա, Ֆրանսիա, իսկ մյուս կողմում նրա վերջին հանգրվանն է՝ *մոսկովյան արվեստանոցը*:

Երկրորդ սրահի ցուցադրության առանցքը մահվան դիմակներն են, որոնք նկարիչ-ձևավորողը ցուցադրել է համաշխարհային քաղաքակրթության երեք խորհրդանիշների ոճով կառուցված ցուցափեղկերի մեջ՝ խորանարդ, զիկկուրատ (աքքադական բուրգ) և եգիպտական բուրգ: Ցուցափեղկերը տեղադրած են Հին Հունաստանի արվեստը խորհրդանշող գույների երանգապնակում պատկերված հունական խաչի վրա, որը քանդակագործի հունական ակունքների խորհրդանիշն է:

Երրորդ սրահում ներկայացվել են կոմունիստական ընտրախավի (Գ.Պլեխանով, Վ.Լենին, Ֆ. Ջերժինսկի, Ս.Կիրով, Յ.Սվերդլով, Մ.Ֆրունզե և այլք) մահվան դիմակները: Պատմական այս բարդ ժամանակաշրջանի նկատմամբ հեղինակի վերաբերմունքն արտահայտվում է վահանակների վրա մետաղե կեռիկներով կախված մահադիմակների և հայերեն ու լատիներեն «Մահացածների մասին կա՛մ լավ, կա՛մ ոչինչ» (De Mortuis aut Bene, aut Nihil) արձանագրությամբ:

Ցուցադրության մեջ կիրառված նշանային խորհրդաբանության, ցուցադրության ստանդարտների խախտմամբ (գրեթե բոլոր ցուցանմուշները դիտողի աչքի մակարդակից ավելի ցածր են տեղադրած)՝ արվեստագետը կարողացել է ցուցանմուշների ներգործությունն այցելուի վրա առավել ազդեցիկ դարձնել:

Արվեստաբան Վիգեն Գալստյանի բնորոշմամբ. «Կամո Նիգարյանի փորձառու, գաղափարական և տեսողականորեն հագեցած ձևավորումը հետազոտում է և հաջողությամբ բացահայտում այն արտասովոր հակասականությունը, որ գոյություն ունի Ս. Մերկուրովի քանդակների մեջ: Ձևավորողի հաջողությունն այցելուին տեքստը ճանաչել և կարդալ ստի-

պելու կարողության մեջ է՝ առանց իջեցնելու արվեստի կարգավիճակը և նվազեցնելու թանգարանային այցի փորձարարական և տրանսցենդենտալ չափումները»:

Marine HAROYAN (Armenia)

Museum of Literature and Art after Yeghishe Charents (Yerevan)

E-mail. marineharoian@gmail.com, gatmuseum@mail.ru

KAMO NIGARYAN'S AUTHORIAL EXPOSITION IN S. MERKUROV'S HOUSE-MUSEUM (SEMIOTIC ANALYSIS)

The way of organizing museum exposition as a “scenario” narrative was highly accepted in the museum sphere from the 60-80s of the previous century, which was related to expanding roll of designer as one of key communicators during organization of museum environment. Such museum expositions are often defined as “Authorial Exposition” or “Authorial Museum”.

The mentioned method was developed in Armenian professional field by designer and artist Kamo Nigaryan. The concept of S. Merкуроv's house-museum's exhibition, created under Kamo Nigaryan's ideas. One can see in the 3 exhibition hall is this museum.

The first exhibition hall is considered as a documentary of S. Merкуроv's life and activity. The representation of the sculptor's hard path from Alexandrapol to Europe can be seen on the one side of the hall, while on the other side one can see his last “haven” – “the Moscow studio”.

The core of the second hall's exhibition is death masks, which was displayed in the cube, ziggurat (Akkadian pyramid) and Egyptian pyramid showcases, constructed in the style of three symbols of the world civilization.

The death masks of the representatives of Communisms' elite (G. Plekhanov, V. Lenin, F. Dzerzhinsky, S. Kirov, Y. Sverdlov, M. Frunze, etc) are exhibited in the third exhibition hall. The author's attitude toward such a complicated historical period is expressed through the death masks hung on the

panels by metal wall hangers, as well as through the following the phrase in Armenian and Latin: “Of the dead, nothing unless good” (De Mortuis aut Bene, aut Nihil).

The semiotics and not standard way of setting of museum objects, environment, materials used by the artist are very influential and powerful mean of communication for different visitors (almost all of the exhibits are installed lower than accepted).

Nigaryan’s authorial exhibitions and innovative approaches were considered to be a new level not only for Armenian museum culture, but also within the framework of accepted museum design philosophy in the USSR.

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: hasmik.har@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հայ աշուղական դպրոցներն ստեղծվել ու գործել են պատմամշակութային այնպիսի միջավայրում, որտեղ պահանջված է եղել ժողովրդապրոֆեսիոնալ բանաստեղծ-երաժշտի արվեստն ու ստեղծագործությունը: Այս արվեստի կամ արհեստի բազմաբովանդակ էությունը աշուղների հնարավորություն է տվել հասարակական բոլոր շերտերի մեջ առաջացնելու հետաքրքրություն ժամանակակից մշակութային, քաղաքական, սոցիալական, ժամանցային բնույթի խնդիրների ու հարցերի շուրջ, գտնել դրանց ինքնատիպ պատասխաններ՝ արժանանալով ունկնդրի անթաքույց համակրանքին:

Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը նույնպես առաջացավ ու զարգացավ պատմամշակութային գործընթացների անմիջական ազդեցությամբ և իր հասարակական պահանջվածությամբ իրագործեց կարևոր մի առաքելություն: Դա հայ ազգային մտածողության նոր որակների յուրացումն էր աշուղական դպրոցի բոլոր ոլորտներում՝ գաղափարական, քարոզչական, երաժշտաբանաստեղծական:

Անշուշտ, այս աշուղական դպրոցը նախ ձևավորվեց որպես աշուղների կենտրոն: Դրան նպաստեցին XIXդ. ռուս-թուրքական պատերազմների հետևանքներով առաջացած պատմաքաղաքական նախադրյալները, որոնց արդյունքում Արևմտյան Հայաստանից գաղթած բնակչության մի զգալի մասը հանգրվանեց Շիրակում՝ Ալեքսանդրապոլը դարձնելով շուրջ 95% հայ բնակչություն ունեցող քաղաք, այդպիսով՝ «ձևավորվելով արևմտահայ արհեստավորառևտրական խոշոր կենտրոններից սերված գաղթականության հիմքի վրա՝ Ալեքսանդրապոլը ժառանգեց դեռևս միջնադարից եկող այն բոլոր համքարային ավանդույթները, որոնք հատուկ էին Կարինին, Կարսին և Բայազետին: Սրանից էլ բխում էր այն հասարակական հարաբերությունների և հասարակական կառույցների բնույթը, որը հատուկ էր արևմտահայ դասական քաղաքային համայնքին»:¹

Հայ աշուղագիտության մեջ վերոնշյալ իրողությունների հիմքի վրա Ալեքսանդրապոլի աշուղական կենտրոնը դիտարկվում է որպես աստիճանաբար ձևավորվող և ներքին համակարգային զարգացման շնորհիվ աշուղական համքարության վերաճող մի կառույց: Մեր ուսումնասիրության արդյունքում նկատելի դարձավ այն կարևոր գործոնը, որի շնորհիվ կարող ենք հիմնավորել հետևյալ դրույթը. XIXդ. 40-ական թվականներից Ալեքսանդրապոլում սկսեց գործել Կարսի հայ աշուղական համքարության յուրօրինակ մասնաճյուղը, որը պատմական դեպքերի բերումով 1880-ականներից արդեն ինքնահաստատվեց որպես նոր դպրոց:

¹ Աղանյան Գ., *Ալեքսանդրապոլի էսնաֆությունները XIXդ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Եր., 2008, էջ 49:*

Որպես կարևորագույն աղբյուր՝ մեր ձեռքի տակ է ավեքսանդրապոլ-ցի աշուղ Խայաթի հուշերը, որտեղ հստակ նկարագրված են Ալեքսանդրապոլում 1846թ. գործող համաքարության բոլոր էական բաղադրիչները:¹

Հայտնի է նաև, որ XIXդ. վերջում, հատկապես Կարս-Ալեքսանդրապոլ և Կարս-Սարիղամիշ երկաթուղիների շահագործման շնորհիվ առավել ամրապնդվեցին միջքաղաքային տնտեսական կապերը: Դրանց մեծ չափով նպաստեցին Կարսի արհեստառնտրական հարուստ ավանդույթները, որոնք պահպանվում էին նույնիսկ ռազմաքաղաքական ծանր պայմաններում: Քաղաքում զարգացման բարձր աստիճանի էին հասել շուրջ վեց տասնյակ արհեստներ,² «որոնց ճնշող մեծամասնությունն առկա է նաև Կարինի և հատկապես Ալեքսանդրապոլի արհեստների ցուցակներում. մի հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է Կարին-Կարս-Ալեքսանդրապոլ արհեստավորական կապերի ու ավանդույթների մեծ ընդհանրությունը»:³

Չնայած հարափոփոխ ռազմական իրադարձություններին, համաճարակներին ու ժողովրդագրական տեղաշարժերին՝ Կարսում մշտապես պահպանվել է հայ ավանդական մշակույթը, որը հենված էր ժողովրդական հավատալիքների, նախնայաց հիշատակի, ազգային սրբերի ու սրբավայրերի վրա: Այս մասին շատ պատկերավոր նկարագրություններ ու տեղեկություններ է հաղորդել Գրպեն՝ Կարսին նվիրված գրքում:⁴

Կարսում հայկական մշակութային տարրը կարողացել է հարմարվել իրեն պարտադրված մշակութային այլ դոմինանտներին: Վերջիններից, անշուշտ, թե՛ գյուղական և թե՛ քաղաքային միջավայրում մեծ ժողովրդականություն է ձեռք բերել նաև աշուղների արվեստը, որը հատկապես գնահատվել ու «հովանավորվել» է հայ արհեստավորական միջավայ-

¹ Խայաթ Ջահրիյան, *Հիշողություններ հին Գյումրիից: ՀՀ ԳԱԱ ՀԱԲ, ԲԲԱ, FFI, էջ 8260-8286:*

² *Ատրպետ, Բնչ ժառանգեցինք, ձեռագիր, Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, գործ 176/ա/, Լենինական, 1933:*

³ *Բազեյան Կ., XIX դարավերջի Կարսի արհեստներն ըստ Ատրպետի «Բնչ ժառանգեցինք» աշխատության: ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտական աշխատություններ, հ. IX, Գյումրի, 2006, էջ 45-46:*

⁴ *Գրպե, Կարս քաղաք, Մոսկուա, 1893:*

րում՝ գեղագիտական ուրույն արժեքների և անփոխարինելի ժամանցային բովանդակության առումներով:¹ Մինևույն ժամանակ այն ծառայել է նաև իշխող դասին և նրա հայրենակիցներին:

Այսպիսով, մինչև Ալեքսանդրապոլում աշուղական կյանքի աշխուժացումը, Կարսում արդեն հայ և թուրք աշուղները համատեղ կյանքով ապրել ու ստեղծագործել են: Այստեղ հիմնականում ընդունված էր թուրքերեն երգերի հորինումն ու ունկնդրումը: Տեղափոխվելով Ալեքսանդրապոլ, որտեղ բնակչության 95 տոկոսը հայեր էին, հայ աշուղներն սկսեցին հորինել հայերեն երգեր: Սկզբում աշուղ Շիրինը, ապա նաև Ջիվանին աշուղական նույն բանաստեղծական տաղաչափական կաղապարներով սկսեց հորինել հայերեն: Այդ երգերը ոչ միայն ընդունվեցին, այլև շատ կարճ ժամանակամիջոցում սիրվեցին ժողովրդի կողմից՝ գնահատելով աշուղների հմտությունն ու տաղանդի ուժը, բանաստեղծական խոսքի արտահայտչականությունն ու գեղագիտական մեծ արժեքը:

Ալեքսանդրապոլի աշուղական համաքարությունը ի վերջո վերաճեց յուրահատուկ դպրոցի՝ քաղաքում ստեղծված հասարակական-քաղաքական նոր՝ ազգային ազատագրական գաղափարախոսության անմիջական ազդեցությամբ: Արդեն 1850-ական թթ. աշուղ Շիրինը այստեղ հայերեն երգերով էր հանդես գալիս, սակայն վճռական քայլը, այնուամենայնիվ, վերապահված էր աշուղ Ջիվանուն: Նա բոլոր հայ աշուղներին հորդորում էր հորինել հայերեն երգեր: Ժամանակակիցները վկայում են, որ այդ գործում Ջիվանուն աջակցել և ուղղորդել է Ղազարոս Աղայանը, որն այդ տարիներին ուսուցչություն էր անում քաղաքում: Բացի երգերի լեզվական բաղադրիչից, Ջիվանին աստիճանաբար ուշադրությունը սևեռեց նաև մեղեդիակերտմանը: Ավանդական աշուղական մեղեդիները յուրահատուկ կաղապարների դեր էին կատարում: Նա կիրառեց և նրա օրինակով ավանդույթ դարձավ նաև նոր՝ հայաշունչ մեղեդիների ստեղծումը՝ աշուղական երգը դարձնելով գրական հայերեն խոսքի և մեղեդու միասնական հորինվածք:

¹ Տե՛ս՝ Թահմիզյան Ն., Սայաթ-Նովան և հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտությունը, Pasadena, CA, 1955, էջ 33:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը Կարսի հայ աշուղական համքարության հիմքի վրա նոր ազգային կենտրոն ձևավորեց:

Hasmik HARUTYUNYAN (Armenia)

Shirak Center of Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: hasmik.har@mail.ru

THE PRECONDITIONS OF ALEXANDRAPOL'S ASOUGH SCHOOL FORMATION

Armenian asough schools have been created and performed in such historical and cultural environment where the folk-professional poet-musician's art and work was on demand. The multifunctional essence of this art or trade has given the asoughs a chance to raise the interest of cultural, social and entertaining issues among all social classes to find their specific answers.

The asough school of Alexandrapol was also created and developed by the immediate influence of historical and cultural processes and made its mission. It was the perception of national mentality in all spheres: ideological, pastoral, musico-poetical.

In Armenian asughology on the basis of the above mentioned facts Alexandrapol's asough center is considered as gradual forming structure. In the course of our study the main factor became important by means of which we can record the following idea- since XIX 40-s in Alexandrapol a separate branch of Armenian asough school worked which by the development of historical events became a new school in the 1880-s.

Հայկ ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ (Երևան)

E-mail: hmelik-adamyam@mail.ru

**XIX ԴԱՐԻ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ**

Հայաստանում՝ մասնավորապես պատմական Շիրակում, բնագիտական ուսումնասիրություններ կատարած գերմանացի ճանապարհորդներից առաջնահերթ ուշադրության են արժանի երկրաբան, Կովկասի երկրաբանության հայր, ակադեմիկոս Հերման Աբիլը (1806-1886թթ.), Բեռլինի համալսարանի պրոֆեսոր և բուսաբանական այգու տնօրեն, բուսաբան և բժիշկ Կարլ Կոխը (1809-1879թթ.), Մյունխենի համալսարանի աշխարհագրության և ազգագրության պատվավոր պրոֆեսոր Մորից Վագները (1813-1887թթ.) և ռուսահպատակ, սակայն ծագումով գերմանացի, Կովկասի թանգարանի տնօրեն, հայտնի բնագետ և բուսաբան Գուստավ Ռադեն (1831-1903թթ.):

Նշված բնագետներից առաջինը Շիրակ է այցելել Կարլ Կոխը՝ դեռևս 1836թ. ամռանը, և 1837-1838թթ. հիմնարար բուսաբանական և բուսաշխարհագրական ուսումնասիրություններ է կատարել Ալեքսանդրոպոլի և Անիի մերձակայքում, Աշոցքի, Ամասիայի և Արթիկի շրջաններում, նկարագրել է գիտության համար մի քանի նոր բուսատեսակներ: Տպավորված Անիի վեհաշուք ճարտարապետությամբ՝ նա բազմամյա խոտաբույսերից մեկն անվանել է ի պատիվ հայկական մայրաքաղաքի՝ *Triglochin ani K. Koch* (Բարսեղյան 1971, Файвух 1981a, б): 1844թ.-ի ապրիլի 11-ին՝ Կարլ Կոխի՝ Հայաստան երկրորդ այցելության նախաշեմին, մեր մեծ հայրենակից Խաչատուր Աբովյանը Թիֆլիսում նրան արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայկական երաժշտական գործիքների և խոհարարական արվեստի մասին (Հակոբյան 2012, Koch 1847):

1843թ. Հայաստան է այցելում Մորից Վագները՝ առաջնահերթ նպատակ ունենալով ուսումնասիրել 1840թ. Արարատի երկրաշարժի պատճառները և հետևանքները: Այդ ճանապարհորդությունը նա կատարում է

Խ.Աբովյանի հետ համատեղ Թիֆլիս-Ղազախ-Իջևան-Դիլիջան-Սևան-Հրազդան-Երևան-Արագած-Գյումրի-Սպիտակ-Ստեփանավան-Թիֆլիս - ուղեգծով (Հակոբյան 2012, Վազներ 1851): Վազները իր հիացմունքն է արտահայտում նաև Ալեքսանդրապոլ քաղաքի կանոնավոր, հարմարավետ ճարտարապետության և նորակերտ բերդի անառիկության և հսկայածավալության վերաբերյալ:

1875թ. Ախալքալաք-Ալեքսանդրապոլ-Հառիճավանք-Արագած-Մաստարա-Հուշակերտ-Սարդարապատ-Էջմիածին-Երևան ուղեգծով Գուստավ Ռադեն Գ. Ի. Սիվերսի հետ համատեղ (Раде 1901), տարածաշրջանային ճանապարհորդություն է կատարում, որը հանդիսանում էր, այսպես կոչված, «աղի ճանապարհի» ամենաբանուկ մասերից մեկը, որով Կողբի աղահանքերից մեծ քանակության աղ էր արտահանվում Թիֆլիս (Օհանյան 1954):

Առաջնահերթ ուշադրության են արժանի համաշխարհային նշանակության երկրաբաններից մեկի՝ Հերման Աբիխի ուսումնասիրությունները: Նա առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել «Հայկական լեռնաշխարհ» եզրույթը (Мелик-Адамян, Хачанов 2010; Melik-Adamyan, Khachanov 2011), բազմիցս բնագիտական, երկրաբանական, ինչպես նաև մշակութաբանական ուղղվածության մանրակրկիտ աշխատանքներ է կատարել Շիրակում և առաջին անգամ այցելել է տարածաշրջան 1844թ. դարձյալ Խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ: 1844թ. հոկտեմբերի սկզբին Ալեքսանդրապոլում Աբիխը մի քանի օր հյուրընկալվել է հայտնի երգահան Նիկողայոս Տիգրանյանի հոր՝ Թադևոսի տանը, իսկ մինչ այդ նա մանրամասն հետազոտում և չափազորում է Անիի պատմամշակութային կոթողները՝ կազմելով մայրաքաղաքի առաջին հատակագիծը (Մուշեղյան 1985; Դուրխանյան 2010; Абих 1879, 1889):

Hayk MELIK-ADAMYAN (Armenia)

Institute of Geological Sciences NAS RA (Yerevan)

E-mail: hmelik-adamyan@mail.ru

NATURAL AND CULTURAL STUDIES OF GERMAN TRAVELLERS IN SHIRAK IN XIX CENTURY

In Armenia, particularly in Shirak region, numerous German travellers conducted natural studies. Among them were the father of the Caucasian geology, academician Herman Abich (1806-1886); professor of Berlin University and director of Berlin Botanical Gardens, botanist and physician Karl Koch (1809-1879); professor emeritus of geography and ethnography of Munich University Moritz Wagner (1813-1887), and director of the Caucasian Museum, famous naturalist and botanist Gustav Raddeh (1831-1903). Karl Koch described several new species, one of which, a perennial plant, he named *Triglochin ani* K. Koch to honor the Armenian capital, being impressed by the magnificent architecture of Ani. Hermann Abich first introduced the scientific term Armenian Highlands. In Alexandropol he studied and measured the historical buildings of Ani and drew the general plan of the capital city. He then stayed at famous composer Nicholas T. Tigranyan father's house.

Անի ՆԱԶԱՐՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: aninazaryan92@yandex.ru

ԳՅՈՒՄՐՈՒԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումն զգալիորեն փոխել է թանգարանային ոլորտը՝ նպաստելով վերջինիս գործառնությունների և լսարանի ընդլայնմանը, ավելին, թանգարանն ընդլայնել է նաև իր գործունեության ոլորտները՝ վերաճելով այլընտրանքային կրթություն, ժամանց, հանգիստ, ինչպես նաև մշակութային քաղաքականությունն ձևավորող և իրականացնող բազմաշերտ կառույցի:

Մեր ժամանակներում ցուցադրությունը տարբեր երկրների այցելուներին առավել մատչելի և ուշագրավ ներկայացնելու համար՝ թանգարանները լայնորեն օգտվում են համացանցային հնարավորություններից: Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում թանգարանների գործունեությունն ու դերը վերաիմաստավորվում են: Այսօր աշխարհի գրեթե բոլոր թանգարաններն ինտերնետային կայքեր ունեն, որտեղ զետեղված են տեղեկություններ մշտական և ժամանակավոր ցուցադրությունների, կազմակերպվող միջոցառումների, վաճառասրահների ու տարաբնույթ նախագծերի մասին: Համացանցի շնորհիվ՝ այսօր լայն տարածում ունեն նաև վիրտուալ թանգարանները, որոնք թվայնացված թանգարանային ցուցանմուշները ներկայացնում են 3D չափով, օժտված են նաև պատկերային ու ձայնային տեղեկատվական հարուստ շտեմարաններով:

Ներկայացվող զեկուցման նպատակը վիրտուալ իրականությունում թանգարանների փոխակերպման և Գյումրու թանգարաններում դրանց հեռանկարների ուսումնասիրությունն է:

Թեման արդիական է, քանի որ թվային աշխարհում թանգարանների ներգրավման քաղաքականությունը նոր մարտահրավերներ է առաջադրում: Ցավոք, այս հնարավորությունը դեռևս լիարժեք չի կիրառվում Հայաստանում: Հաղորդման շրջանակներում կփորձենք քննարկել, թե որքանով են Գյումրու թանգարանները վիրտուալ դաշտում պատրաստ մշակութային ժառանգության պահպանման, փոխանցման և հանրայնացման առաքելության իրականացմանը և տեղեկատվության ու ժամանցի նոր՝ այլընտրանքային ձևերի հետ մրցակցությանը:

Հետազոտությունն իրականացնելիս օգտվել ենք համապատասխան մասնագիտական գրականությունից, վերլուծել աշխարհի առաջատար թանգարանների փորձն ու առանձնահատկությունները և այս համատեքստում՝ քննարկել Գյումրու թանգարանների հեռանկարները: Ուսումնասիրության համար կիրառել ենք պատմահամեմատական, դիտման, հարցազրույցի և փորձագիտական հարցման մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքներն ընդհանրացնելով՝ կարող ենք փաստել, որ այն մտավախությունը, թե համացանցը կարող է նվազեցնել այցելուների և մասնագետների հետաքրքրությունը թանգարանների

նկատմամբ, այժմ հաղթահարված է, քանի որ թվայնացումն ավելի լայն հնարավորություններ ընձեռելով՝

- վերացրեց ժամանակի և տարածության սահմանները,
- ընդարձակեց լսարանը,
- հնարավորություն տվեց ֆինանսական ոչ մեծ միջոցներով ներկայանալի և գրավիչ ցուցադրություններ կազմակերպել,
- խթանեց վիրտուալ ոլորտում *լիդեր* դառնալու մրցակցությունը,
- մեծ հետաքրքրություն առաջացրեց հատկապես երեխաների և երիտասարդության շրջանում:

Ani NAZARYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: aninazaryan92@yandex.ru

MUSEUMS OF GYUMRI IN VIRTUAL SPHERE

Museums, being special cultural centers, deserve to be researched deeply, because of cultural values: local and universal reputation are protected and exhibited there. The report is very actual because in the age of information technologies the new generation knows little about museums.

The main purpose of this work is comprehensively observe in virtual sphere the role of a museums of Gyumri, which have been resounded as cultural capital of Armenia. In the work we are touching upon the following problems:

1. Modernization tendencies in Gyumri museums,
2. The information discussed in online sphere about museums of Gyumri,
3. The advantages and disadvantages of importing information technologies in museums, in the example of Gyumri museums.

For finding the answers of the above-mentioned issues, we have made field researches, visited museums, obtained interviews from specialists and experts of the sphere, literature, local articles and materials as well. Examining the activities of Gyumri museums, we can specify problems that are common in all the museums.

Analyzing the information about museums of Gyumri in virtual sphere, we can mention that decisive measures are not taken and the information that is available is not real and is out of control. Museums are not presented in any website, there is no website where we can find clear and exact information about 8 museums.

Валентина ШКОЛА (Украина)

Бердянский государственный педагогический университет

E-mail: shkolaval@gmail.com

ФОЛЬКЛОРНЫЕ ТЕКСТЫ В ИНТЕРПРЕТАЦИИ ПИСАТЕЛЕЙ АРМЕНИИ И УКРАИНЫ ПЕРВОЙ ТРЕТЬИ ХХ ВЕКА

Фольклор и литература – две исторически последовательные формы художественного сознания. Фольклор и литература – два вида творчества, между которыми происходят процессы взаимовлияния, взаимообогащения, обозначаемые терминами фольклоризм и фольклоризация.

Фольклор – источник литературы. Влияние фольклора на литературу прослеживается в разные периоды их развития. Особенно плодотворным процесс фольклоризма был в эпохи романтизма и модернизма.

На этапе, названном периодом урбанизации, обозначилась общая для культур разных народов тенденция: сужение сферы функционирования фольклорных форм и расширение сферы их авторского использования.

К выдающемуся произведению армянского народного эпоса «Давид Сосунский» обращались прозаики, поэты, драматурги, композиторы, художники, режисеры. Предметом их осмысления были все четыре ветви эпоса. В 1902 году свою версию центральной ветви подал Ованес Туманян в поэме «Давид Сосунский», в 1917 году в поэме «Мгер из Сасуна» четвертую ветвь эпоса обработал Аветик Исаакян. В 1922 году за мотивами народ-

ного эпоса «Давид Сасунский» режиссером Арменом Армяном был поставлен экспериментальный спектакль.

Одной из характерных особенностей эпических произведений есть та, что главное внимание в них сосредоточено на богатырских подвигах героя, все другие качества (нравственные в том числе) выступают на второй план. Однако герой армянского эпоса постаёт глубоко нравственным: он внемлет просьбе старца – отца семи сыновей, воина с противоположного табора. Человеческие качества Давида столь же сильны, как и его боевая удаль.

Украинские исторические песни и думы принадлежат к познейшей эпохе – к XIV веку. В них отражена борьба украинского народа с иностранными захватчиками: турками, татарами, поляками.

К обработке дум, исторических песен обращались Мыхайль Семенко (1892-1937) – лирическая стихотворная драма «Маруся Богуславка» (1921), Фавст Лопатинський (1899 – 1937) – драма «Козак Голота» (1926), Максим Рыльский (1895-1964) – либретто одноактной оперы «Ганджа Андигер. Народна дума» (музыка В. Золотарёва, 1927), Григор Лужницкий (1905-1977) – народная трагедия (иная авторская дефиниция – народная драма) «Ой Морозе, Морозенку...» (1933). Поэтику думы использовал Юрий Яновский (1896-1956) в работе над пьесой «Дума про Британку» (1937).

Интерес армянских и украинских писателей вызвали легенды и предания. На материале народных преданий об острове на озере Ван создал Ованес Туманян легенду «Ахтамар». Легендарную интерпретацию получают некоторые украинские топонимы. Большое количество этих топонимов связано с казаками Запорожской Сечи.

Одним из выдающихся запорожских казаков был Иван Сирко (1605–1680). Легендарный полководец принял участие в 55 битвах, почти всегда выходил из них победителем. Его имя увековечено в думах, песнях, легендах и преданиях, литературных произведениях (например, в 1916 году драму «Про що тирса шелестіла» создал Спиридон Черкасенко (1876-1940)). Образ исторической личности приобрел черты сказочного героя. Легенды и предания повествуют, что и после смерти кошевой атаман

войска помогал запорожцам: те семь лет брали с собой в походы его отрезанную правую руку. Также в народном сознании Сирко выступает как легендарный избавитель, который не умер, но живет, чтобы, в случае надобности, воевать с врагами христианской веры и казацкой вольности.

Сходные мотивы прослеживаются и в армянском эпосе. В легенде «Десница и меч», обработанной Степаном Куртияном, героизмом оборонца родного края Татула восторгаются даже его враги, которые приказывают отрубить правую руку сраженного богатыря.

Свое истолкование легенды о заточенном в пещере царевиче, которую можно трактовать в русле легенд о избавителе подала в 1923 году в исторической трагедии «Артавазд» Екатерина Багатур.

Украинцы своими освободителями называют Устыма Кармелюка и Тараса Шевченко. К образам народных героев обратились Людмила Старицкая-Черняховская (1868-1941) в пьесе «Разбойник Кармелюк» (1926), Савва Головановский (1910-1989) в драматической поэме «Поетова доля» (1939).

Перу Аветика Исаакяна (1875–1957) принадлежит обработка ширакского предания «Сердце матери» о всепрощающей материнской любви. Это предание имеет много сходных черт с произведением украинского поэта Николая Вороного (1871–1938) «Легенда» (1905), В финале которого звучит материнское обращение к преступному сыну, вырвавшему, чтобы угодить любимой, сердце матери: «Мій любий, ти впав... Чи тебе не болить?»¹. Оно близко к словам заботливой ширакской матери: «Господь храни тебя, сынок! / Смотри, о камень не споткнись./ Вернись, сынок, возьми мешок, / Вам без мешка не обойтись»².

В истории Армении и Украины есть страницы, повествующие о том, что, спасаясь от иностранных захватчиков, или в поисках новых земель, их сыны оставляли родные места. Песни о скитальцах-пандухтах характерны

¹ *Армянские легенды и предания [Сост. Л.С.Шахназарян] – Ереван: 1988, с. 55.*

² *Вороний М. Поезії. Переклади. Критика. Публіцистика. [Упоряд. і приміт. Т.І. Гундорової, Автор вступ. ст. і ред. тому Г.Д. Вервес] / Микола Вороний – К.: Наукова думка, 1996, с. 87.*

для армянского фольклора. «Песней песен скитальческого народа» назвал Левон Мкртчян, произведение, которое звучит на устах каждого армянина – песню «Журавли»¹. Журавль для пандухтов, которые грезят об Отчизне, олицетворяет родную землю, домашний очаг: «Высоко ты летишь, Журавль, и все видишь, поцеловать бы мне твои глаза – и ты бы увидел наш дом...» Образ этой птицы священный и для украинцев, многим из которых судьба уготовила жизнь на чужбине: «Глянь, моя дитино, то на Україну через нашу хату журавлі летять». Реальными картинами увиденных страданий переселенцев в далекую Америку, которые на Краковском вокзале ожидали своей дальнейшей участи, вызвано стихотворение «Журавли» Богдана Лепкого: «Кличуть кру-кру-кру / В чужині умру, / Поки море перелечу, / Крилоньки зітру, / Кру-кру-кру...». Это стихотворение стало народной песней (процесс фольклоризации).

В начале XX века профессиональные деятели продемонстрировали интерес и к народному театру. Приемы, образы кукольного театра карагез использовались в агитационных спектаклях, носивших характер народного карнавала. К традициям вертепного (кукольного) театра обращались украинские авторы. Черты вертепной поэтики имеются в произведениях Николая Кулиша, Людмилы Старицкой-Черняховской, Якова Мамонтова, Михаила Шпола. В декабре 1918 года «Молодой Театр» под руководством Леся Курбаса осуществил экспериментальную постановку «Вертеп».

В 20-е годы XX века многие театральные экспериментальные постановки происходили на городских улицах и площадях. Вместе с профессионалами в них принимали участие самодеятельные артисты. Такие постановки состоялись в Гюмри, Киеве, Белой Церкви, Умани и других городах.

Таким образом, фольклор и литература пребывают в процессе постоянного взаимодействия и взаимовлияния. Писатели черпают из усного народного творчества темы, мотивы, образы, разрабатывают народные жанры, подают свои варианты фольклорных текстов.

¹ Мкртчян Л. *Глагол времени. Армянская классическая поэзия V-XVIII веков* /Левон Мкртчян. – М.: Художественная литература, 1977, с. 20.

Valentina SHKOLA (Ukraine)

Berdiansk State Pedagogical University

E-mail: shkolaval@gmail.com

THE FOLK TEXTS IN THE INTERPRETATION OF ARMENIAN AND UKRAINIAN WRITERS IN THE FIRST HALF OF THE 20-TH CENTURIES

The report compares the system of the folk and fiction. An attempt is made to give comparative characteristics in order to find similarities in the two systems. The author deals with the question of changing the art system of the literature – to the folklore.

The prospects of folklore approach within research of poetry and interpretative possibilities based on the synthesis are represented.

The work is devoted to actual problem of the typological similarity and peculiarity of the reception of the folklore elements by Armenian and Ukrainian poets, prose and drama of the XX century.

The works throws light on the peculiarities of interpretation of the folklore motives by Armenian and Ukrainian poets. Such popular commonplaces are images and plots. The systematic survey of those commonplaces gives convincing evidence that the ways of expression of the folklore commonplaces of Armenian and Ukrainian writers were comparable to those of the contemporary European patterns in many respects.

In this paper we have classified the functioning of folklore in the world literature. The author analyses forms and patterns of rethinking the traditional structures of the well-known images and motives.

It investigates the structural-semantic basis of writers literary thinking within the system of archaic folklore genres.

We have investigated the models of transformation of the plot of folklore, and clarified the role of cultural contexts in the works of the writers. The differences between genre and style of the given texts are taken into consideration.

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ,
Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: vahe1996@mail.ru

**ՇԻՐԱԿՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՆԴՈՒՄ ՕՁԻ ԵՎ
ՕՁԱՄԱՆՈՒԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇՈՒՐՁ**

1. Հայոց հավատալիքներում օձերն ընկալվում էին թե՛ չար, թե՛ բարի: Բարի օձերը, մանավանդ, լորտուները, անգամ «հայ» են համարվել, որն, ըստ Մ. Աբեղյանի, վկայությունն է նրանց տոտեմական նախնիներ ըմբռնված լինելու հանգամանքի:
2. Առասպելաբանության մեջ օձի փոխած խորիսի գոյությունը համարվել է նրա պարբերաբար երիտասարդանալու, իսկ օձի խորիսի մեջ մտած գեղեցիկ պատանու դեպքում՝ սրա օձակերպությունից վերստին մարդակերպության անցնելու պահի արգասիք: Շիրակյան հեքիաթներից մեկում այսպիսի մի պատանի «Աղջի՛, ըսավ,- գիտե՛ս, ես օձ չեմ, ես թագավորի տղա եմ»:
3. Այս հեքիաթի (Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IV, էջ 19) հերոսի անունը *Հարբմանի* է: Այս անվան *-մանի* բաղադրիչը «օձ» է նշանակել (<*ման* «ոլորք», «գալար»), որովհետև *մանիճ* (<ման-իճ) նշանակում է «գալարք օձի», իսկ *հարբ-* բաղադրիչը սղված ձևն է գրաբար *համբար* «ամբար, շտեմարան» բառի: Ըստ այսմ, *Հարբմանի* (<*համբար-մանի) նշանակել է «ամբարի օձ», այսինքն՝ «ամբարի (պահապան) օձ»:
4. Հնուց ի վեր Շիրակը հայտնի էր իր հացառատ ամբարներով (Խորենացի, Ա, Ժբ), իսկ հողագործության առաջացման և հացահատիկային բույսերի մշակության անցնելուն զուգընթաց՝ ձևավորվում էր հացահատիկի ամբարների պահապան օձերի պաշտամունքը: Հացահատիկի գող մկների բնական թշնամի օձը դարձել էր հացահատիկ մշակողի դաշնակիցն ու բարեկամը: Այդպես էր անգամ XIX դարավերջին և XX դարասկզբին, ինչպես վկայում է Գ. Սրվանձտյանցը, Ե. Բալայանը, Գ. Հակոբյանը Տարոնի, Արցախի, Գարդմանի, Բասենի վերաբերյալ:

5. Հնում հացառատ էր նաև Վանանդը: Սարդուրի II-ը Շիրակի, իսկ Արգիշտի I-ը Վանանդի առթիվ հիշատակում են նաև ուրարտական գորքերի կողոպտած հացահատիկի ամբարների մասին: Իսկ որտեղ հացահատիկի ամբարներ կային, այնտեղ չէր կարող չլինել օձապաշտություն, ուրեմն, նաև «օձային» ստուգաբանությամբ տեղանուններ:
6. Հայտնի է, որ հնդեվրոպական լեզուներում նախնադարում գործած թաբուի պատճառով օձի անունը հաճախ փոխարինվել է նկարագրական տարբեր անվանումներով: Դրանցից են «հողային», «ընդերքային» ստուգաբանությամբ անվանումները: Այդ շարքում են հայերեն և հունարեն *արգ արմատին հանգող անվանումները: Հայերեն *արգաղայ* «օձ» բառը (-աղ և -այ վերջածանցների համար հմմտ. *կախ-աղ-ան, կենց-աղ, բոր-այ, կր-այ, պախր-այ*) արմատակիցն է *արգասի* «երկիր» և հունարեն *argēs* «օձի ինչ-որ տեսակ» բառերի: Այս նույն արմատն ենք մենք տեսնում Արևմտյան Շիրակի (Վանանդի հարևան) Արգինա բնակավայրի անվան մեջ. *Արգինա-Արգ-ին-այ* (-ին վերջածանցի համար հմմտ. *ամուս-ին, դարբ-ին, լուս-ին, կարգ-ին* և այլն):
7. Եղիշե Չարենցը իր «Երկիր Նաիրի» արձակ երկում բերել է կարսեցիների հավատալիքներին վերաբերող որոշ պատառիկներ: Դրանք վերաբերում են Ախուրյան-Կարսագետի «Վարդանի կամրջին», որն, ինչպես ինքն է նշում, կամուրջ չէ, այլ գետի մեջ ցցված ժայռ հիշեցնող ինչ-որ շինության մնացորդ: Նա նշում է նաև, որ այն հետագայում է վերագրվել Վարդան Մամիկոնյանին: Մնտոխապաշտ կարսեցիների կարծիքով, այդ ժայռի տակ վիհեր էին, որոնց բնակիչները առասպելաբանական տարբեր էակներ էին և «հսկա մի օձ, որ կամրջի «տերն» է՝ կամրջի բարի ոգին» (Երկեր, Եր., 1955, էջ 301):
8. Բնականաբար, «կամրջի տեր, բարի ոգի, հսկա օձի» անունով էլ նախապես կոչվել է «կամուրջ»-ժայռը, այսինքն՝ *Վարդան*-ը եղել է այս ջրային օձի անունը: Մեր կարծիքով, այս անունը այլ ծագում ունի, քան *Վարդան* անձնանունը և բաղկացած է **վարդ*-հ.-ե. **վարդ* արմատից՝ -ան վերջածանցի հավելումով (հմմտ. *բեր-ան, գեր-ան, դերձ-ան, խոր-ան* և այլն): Գր. Ղափանցյանը այս արմատն էր տեսնում *Վարդավառ* տոնի անվան մեջ՝ «ջուր» նշանակությամբ:

9. Մեր կարծիքով, սրանց արմատակիցներն են նաև *Նուարդ* (<նու «հարս» և *վարդ* «ջուր», այսինքն՝ «ջրահարս»), *Վարդգէս*, *Վարդէւան* դիցանունները, *վարդապայ* բառը և ուրարտական դարաշրջանի Վանանդի 'Arda/*Uarda քաղաքանունը: Ըստ այսմ, «Վարդանի կամրջի տեր» Վարդանի անունը «ջրային», այսինքն՝ «ջրային (օձ)» է նշանակում: *Uarda քաղաքը՝ թերևս նույն Կարսը, եղել է այս ջրային օձի պաշտամունքի վայրը, իսկ «Վարդանի կամուրջը»՝ նրա կենտրոնը:

Sargis PETROSYAN,

Lusine PETROSYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: vahe1996@mail.ru

ABOUT THE CULT OF THE SNAKE AND THE CHILD-LIKE SNAKE IN THE REGIONS SHIRAK AND VANAND

In the depths of Indoeuropean mythology were born not only images of Indo-Iranian deity Apam-Napat (“tha son of the waters”) and ancient Armenian deity *Akhur (“the son of the water”), but also images of the ancient Indian deity Ahi-Budhnya (“snakes of the abyss”) and armenian huge aquatic kind snake *Vardan (“aquatic”). From teonym **Akhur* it is going urbonim of Urartian period *Akhuriani* (near modern Sarikhamish) and potamonym *Akhurean* (ancient Armenian name of river Kars), and from teonym **Vardan* it is going mikrotoponym *Vardani kamurj* (“the bridge of Vardan”) in Kars. Teonym *Vardan* we must not confuse with name *Vardan*, which one has quite another origin. Teonym **Vardan* composed from components **vard*<*uadr- (<i.-e. *ued- “water” and suffix -ro) and from suffix -an: For **vard*- < *uadr- compare with names *Nuard*<**Nu-vard*, *Vardges*, *Vardevan*, *Vardavar*, *Vardamarg*, as well as urbonim of Urartian period 'Arda/*Uarda.

The name of fairy-tale hero- the serpentine youth *Habrmani composed from components *hambar “granary” and –mani “snake” (compare with ancient armenin manič “wriggle of snake”) and means “the snake of granary” that is “guardian of the granary”. Appearance of this name must be caused with widespread of plow farming and snake cult in Armenia. In this case is meant that fact, that ancestories of Armenians in regions of Shirak engaged principally with cultivation of corn, and snaks became allies of people in their struggle with mices – pilferers of grain.

Օլգա ՊՈՂՈՍՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

E-mail: Olgapoghosyan85@mail.ru

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(Շիրակի մարզի հաշմանդամ երեխաների օրինակով)**

Ինքնագնահատականը կարևոր դեր ունի անհատի վարքի ինքնակարգավորման և շրջակա միջավայրի հետ նրա փոխհարաբերության, ինչպես նաև ինքնագիտակցության ձևավորման գործընթացում: Չարգացման գործընթացում թերություններ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հիմնախնդիրներին մեծ ուշադրության է արժանացրել Լ.Ս.Վիգոտսկին: Նա կարծում էր, թե չի կարելի սահմանափակվել այն հանգամանքի հաստատագրումով, որ մտավոր հետամնաց երեխաներն ունեն ավելի ցածր բանականություն, թույլ կամք, առավել պարզ հույզեր և այլն, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ հաշմանդամ երեխայի առողջ կողմերը՝ շտկողական հոգեբանամանկավարժական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Հաշմանդամ երեխայի ինքնագնահատականը դաստիարակման սովորական պայմաններում անընդհատ ենթարկվում է կտրուկ և հարկադրական ներգործությունների: Ընտանիքում, հատկապես այն տարիքում, երբ հայտնաբերվում է այս կամ այն հիվանդությունը, ուրախանում են նրա յուրաքանչյուր հաջողության համար: Այս պարագայում երեխան նույնպես հակված է լինում իրեն բարձր գնահատելու շնորհիվ մեծահասակների կողմից իր հանդեպ դրսևորվող ուշադրության ու քաջալերանքի, որոնք բարձրացնում են նրա հավակնությունների մակարդակը: Բայց հենց երեխան հայտնվում է մանկապարտեզում կամ բակի երեխաների խմբում, ձևավորված ինքնագնահատականը միանգամից բեկվում է:

Մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ինքնագնահատականը համապատասխան չէ նրանց հնարավորություններին: Նրանք ընդունակ չեն քննադատորեն գնահատելու իրենց արարքներն ու գործողությունները: Այս տարիքային փուլում բացառապես կարևոր է մեծահասակի կարծիքը. եթե երեխայի ընդունակությունների, անձնային որակների, արարքների գնահատականը առանց բավարար հիմքերի մեծահասակը դրական է համարում, ապա նրա մեջ ձևավորվում է բարձր ինքնագնահատական: Այն դեպքում, երբ երեխայի արարքները շրջապատը գրգռվածությամբ ու դժգոհությամբ է արձագանքում, և նա լսում է միայն կշտամբանքներ, ձևավորվում է անչափ ցածր ինքնագնահատական:

Մտավոր հետամնաց երեխաների անձնային փոխհարաբերությունները և դիրքի գնահատականը դասարանում աստիճանաբար են ձևավորվում՝ կախված սոցիալական հաղորդակցման պահանջմունքից: Ինքնագնահատականը սահմանվում է ուսումնական գործունեության, աշխատանքի և խաղի մեջ հաջողություններով: Հասունացման ընթացքում երեխայի ինքնագնահատականը դառնում է էլ ավելի համապատասխան, ինչը վկայում է անձի զարգացման մասին: Շտկողական ուսուցման շնորհիվ հաշմանդամ երեխաները կարողանում են ճիշտ գնահատել և՛ իրենց, և՛ իրենց գործունեության արդյունքները:

Խմբում միջանձնային հարաբերությունները և ինքնագնահատականը մեծ մասամբ որոշվում են դպրոցականների ուսումնական գործունեության ձեռքբերումներով: Լավ առաջադիմություն ունեցող և համա-

պատասխան ինքնագնահատական ունեցող աշակերտները, որպես կանոն, բարենպաստ տեղ են զբաղեցնում խմբում: Ինքնագնահատականը ոչ միայն երեխայի վարքի և շրջակա միջավայրի հետ նրա փոխհարաբերությունների կարգավորիչն է, այլ նաև կարևոր բաղադրիչ անձնային ինքնագիտակցության ձևավորման գործընթացում: Բարձր դասարաններում հատկանշական է ինքնագիտակցության ավելի բարձր մակարդակը: Մտավոր հետամնաց դեռահասները ավելի իրատեսորեն են գնահատում իրենց հաջողությունները ուսումնական գործունեության մեջ, քան կրթուսեր դասարանի երեխաները: Նրանք կարողանում են նշել որոշ առարկաների յուրացման ընթացքում առաջացած իրական դժվարությունները:

Հատուկ ուսուցման և դաստիարակության հոգեշտկողական ազդեցությունը անձնային որակների վրա արտացոլված է մի շարք հոգեբանական հետազոտություններում [Ի.Պ.Ուշակովա, Գ.Մ.Դուլնև և ուրիշներ]: Հատկապես մեծ դեր է հատկացվում աշխատանքային ուսուցմանը: Մտավոր հետամնաց դպրոցականների գնահատողական չափանիշները փոխվում են աշխատանքային ուսուցման ընթացքում:

Հատուկ դպրոցում գնահատականը դառնում է ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի գործոն միայն այն դեպքում, երբ սովորողները ճիշտ են հասկանում յուրաքանչյուր գնահատականի բովանդակությունը և գնահատման չափանիշները:

Շտկողական ուսուցման գործընթացում մտավոր հետամնաց սովորողների մեծամասնության մեջ տեղի է ունենում համապատասխան ինքնագնահատականի և հավակնությունների մակարդակի ձևավորում: Այս հարցում առաջատար դերը պատկանում է ուսուցչին:

Olga POGHOSYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail: Olgapoghosyan85@mail.ru

**SELF-APPRAISAL PECULARITIES OF CHILDREN
WITH LIMITED ABILITIES**

(By the example of disabled children of Shirak region)

Self-esteem has an important role in the self-regulation of a person's behavior as well as in the formation of the self-consciousness. Many researchers (L.S. Vigotski, I.P. Ushakova, G.M. Dulnev) have paid attention to the issues concerning disabled children's upbringing and teaching. L. Vigotski thought that it was not correct to have a limited idea of mentally disabled children that they had lower mind, weak will, simple emotions, it was necessary to take into account their healthy sides for realizing psychological and pedagogical works of arranging nature. In high classes the higher level of self-consciousness is typical.

Mentally disabled teenagers appraise their success in educational practice fundamentally. The teacher has a great role in teaching activity of mentally disabled children because a formation of self-esteem takes place.

Հռիփսիմե ՊԻԿԻՉՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (Երևան)

E-mail: hripsime-pikichian@rambler.ru

ՇԻՐԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ՝

20-ՐԴ ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ներկայացվող զեկուցումը հիմնված է 1980-1985 թթ. Շիրակի շրջանում կազմակերպված դաշտային հետազոտությունների վրա, որոնք զբաղվել են Լենինական և Մարալիկ քաղաքներում, Լուսաղբյուր, Գու-

սանագյուղ, Ձիթհանքով, Մառնաղբյուր, Բագրավան, Շիրակավան գյուղերում: Գիտարշավային նյութերի հիման վրա փորձ է արվում բնութագրել այդ ժամանակաշրջանին բնորոշ երաժշտական կենցաղը: Ուրվագծվում են նաև հանրության ոչ բոլոր շերտերի համար բաց, այսպես կոչված, ընդհատակում գործող, *մարզինալ* երաժշտական միջավայրերի, կատարողների և երգացանկի նկարագիրը՝ համեմատելով երևանյան իրականության հետ:

Հավաքված դաշտային նյութից կարելի է փաստել, որ խորհրդային տարիներին ստեղծված երաժշտական դպրոցները, ուսումնարաններն ու մշակույթի տների (կուլտուրայի պալատ կամ տուն) ինքնագործ երաժշտախմբերը հիմնականում գործում էին քաղաքում և մեծ ավաններում: Որոշ խոշոր գյուղերի մշակույթի տներում ևս կարելի էր հանդիպել ավանդական նվագարանների կամ երգի-պարի համույթների: Մրանցով պայմանավորված՝ քաղաքային կյանքում հնչող երաժշտությունն առավել բազմառձ ու բազմաշերտ էր, իսկ գյուղական բնակչության կենցաղում, ավանդույթի համաձայն, գերիշխում էին ավանդական նվագարանները, ժողովրդական ու աշուղական երգերը: Քաղաքային բնակավայրերում ամենատարածված ավանդական փողային նվագարաններից էին դուդուկը, զուռնան, պարկապուկը (տիկ), շվին, եղեգնե և մետաղե սրինգները (ղավալ), լարայիններից՝ քամանչան, թառը, հարվածայիններից՝ դիոլը, դափը: Իսկ գյուղական կենցաղում ամենակիրառականը պարկապուկն էր, հովվական եղեգնե և մետաղե սրինգները, զուռնան ու դուդուկը:

Գյուղական բնակավայրերում գործող նվագարանագործ վարպետները ևս ժողովրդական ավանդույթների ու մասնագիտական հմտությունների կրողն ու փոխանցողն էին: Գուսանագյուղի, Ձիթհանքովի և Բագարանի ժողովրդական վարպետների պատրաստած փողային նվագարանները (շվի, սրինգ, պկու, տիկ) կարելի էր գտնել շրջանի գրեթե բոլոր մեծ ու փոքր բնակավայրերում: Իսկ Արևմտյան Հայաստանում լայնորեն տարածված մեծ զուռնաների պատրաստման նրբություններին քաջատեղյակ էր ձիթհանքովցի նվագարանագործ Գևորգ Ալոյանը: Քաղաքի նվագարանագործները հմտացել էին հատկապես փողային մունդը-

տուկավոր, լարային և հարվածային նվագարանների փայտե ու մետաղե մասերի պատրաստման մեջ:

Շրջանի լավագույն ժողովրդական երաժիշտները դասավանդում էին երաժշտական կրթօջախներում (Պիոներների պալատի ժողգործիքների խմբակներ, Կոմիտասի, Շերամի անվան երաժշտական դպրոցներ, Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարան) և նվագում պետական ու ինքնագործ երաժշտախմբերում (Հայֆիլիհարմոնիայի Լենինականի բաժանմունք, Երկաթուղայինների մշակույթի պալատի (Սևյանի տուն) երգի-պարի անսամբլ)¹: Նրանց շնորհիվ՝ ժողովրդական վարպետների կատարողական ավանդույթը զուգորդվում էր դասական երաժշտության չափանիշների հետ՝ ստեղծելով մի նոր ու ինքնատիպ որակ: Ժողովրդական երաժիշտների մյուս խումբը, հավատարիմ մնալով տեղական ու արևելյան նվագարանային կատարողական ավանդույթներին, աշխատում էր Գործիքային երաժիշտների բյուրոյում (ԳԵԲ, նախկինում՝ Ռաբիս²): Եթե Երևանում գործող նույնանուն կառույցի երաժիշտներից շատերը, ժամանակի և պատվիրատուի պահանջներին համընթաց, փորձում էին ավանդական նվագախմբերի կազմը համալրել տարբեր նվագարաններով՝ հնարավորինս բազմառձ ու բազմալեզու դարձնելով երգացանկը՝ ապա Լենինականի թե՛ երաժիշտները, թե՛ ունկնդիրներն առավել ավանդապահ էին: Ըստ այդմ՝ երևանյան ԳԵԲ-ի նվագաձուների եռյակին միանում էին նաև երգիչները, նվագախմբի կազմում հիմնավորվում էին կլարնետն ու ակորդեոնը, իսկ դափի գործառույթները նեղացվում էին՝ սահմանափակելով միայն սգո արարողակարգով, որը տարիներ անց՝ ամբողջովին փոխարինվեց դիոլով: Մինչդեռ Լենինականում գերիշխում էին ավանդական փողային եռյակները՝ դաստա (դուդուկ, դամ դուդուկ, դափ կամ՝ փոքր զուռնա, դամ, դիոլ, երբեմն նաև՝ կլարնետ) կամ սազանդար-

¹ Դուդուկահարներ Կարո Չարչոլյան, Լևոն Մադոյան, Ժորա Սիմոնյան (Չախալ ժորա), Սուրեն Գրիգորյան, Մկրտիչ Մալխասյան (Մըկըլ), Կարապետ Մելիսյան, թառահար Խաչիկ Զատիկյան և այլք:

² Այս կառույցը պետության կողմից ստեղծվել էր դեռևս 1920-ական թթ.՝ բնակչության երաժշտական պահանջները ուրախության և սգո արարողությունների ընթացքում սպասարկելու նպատակով:

ների նվազախմբերը (թառ, քամանչա, դուդուկ, դափ)՝ իրենց բնորոշ նվագացանկով և կատարողական ավանդույթով:

1980-ական թթ. երևանյան կենցաղում ռաբիս ոճի երաժշտությունը թե՛ ձայնագրությունների, թե՛ կենդանի կատարումների առումով ավելի ազատ էր տարածվում և հասանելի էր սոցիալական ու տարիքային տարբեր խմբերի այդ երաժշտության երկրպագուներին: Աստիճանաբար դուրս գալով «ընդհատակից», թեև այն չէր դադարում քննադատվելուց՝ իբրև ցածրորակ, անճաշակ կամ ազգային ավանդույթից հեռացած երաժշտական ուղղություն, այսուհանդերձ, չէր ազդում երկրպագուի բարոյական վարկանիշի վրա: Ուշագրավ է, որ Լենինականի Ռաբիս կառույցում այդ երաժշտությունն, ըստ էության, չէր արմատավորվում, և թե՛ հանրության, թե՛ երաժիշտների կողմից դիտարկվում էր իբրև երևանյան իրողություն:

Եթե երևանցիների կենցաղում ռաբիսի կենդանի կատարումները հնչում էին հիմնականում սզո արարողությունների և խնջույքների ժամանակ, ապա գյումրեցի Ալիկ Գյունաշյանին կարելի էր լսել Լենինականի երկաթուղային կայարանի հարակից ճաշարաններից մեկում, որն ընկալվում էր իբրև հանրության կողմից մերժված՝ առավելապես ստորին խավի տղամարդկանց տարածք: Հետաքրքիր է, որ հասարակության շրջանում հարգանք վայելող երիտասարդ և ավագ սերնդի տղամարդիկ անգամ խուսափում էին ի տես բոլորի այցելել այդ վայրը՝ վախենալով ձեռք բերված վարկանիշը կորցնելուց ու ասեկոսեների առիթ դառնալուց: Այս *մարզինալ* միջավայրը հատկապես տաբու էր հարգարժան ընտանիքների կանանց համար, քանզի իգական սեռի ցանկացած այցելու կարող էր վատ համբավ ձեռք բերել, որը ճակատագրական կդառնար թե՛ իր, թե՛ ընտանիքի համար:

Hripsime PIKICHYAN (Armeina)

Institute of Art NAS RA (Yerevan)

E-mail: hripsime-pikichian@rambler.ru

MUSICAL LIFE OF SHIRAK IN THE 80s OF THE 20th CENTURY

The present report is devoted to the most popular musical instruments and musical styles widely spread among the population in Leninakan and nearby villages in the 80s of the 20th century.

On the base of the materials of scientific expeditions an attempt is made to give the outline of the musical life typical to the mentioned period. The attitude of different social strata towards the folk, bard, urban, preferable music, musical instruments, musical genres and performers are of great importance.

Within the framework of the issues being discussed, an attempt will be made to present the so called marginal musical environments and performers, acting in underground, that were not available for all the layers of the society and to compare them with the Yerevanian reality.

Անի ՍԱՀԱԿՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

E-mail: sahakyanani@mail.ru

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԼՈՐ ՍՈՂԵԼՈՎ

Ժամանակակից աշխարհում, տնտեսությունների զլորալացմամբ պայմանավորված, միջմշակութային հետազոտություններն անհրաժեշտ են բիզնես գործունեության արդյունավետությունը բարձրացնելու հա-

մար, այն նպաստում է գործարար հարաբերությունների կատարելագործման ուղիների հայտնաբերմանը: Մյուս կողմից՝ համաշխարհային ասպարեզում մենեջմենթի միջազգային մոդելների ուսումնասիրումը թույլ կտա որոշել դրանց կիրառության արդյունավետությունը Հայաստանի համար և բացահայտել վարքագծի անձնային մոդելը, որը հաշվի է առնում ազգային մշակույթի արժեքները և ժամանակակից կյանքի իրողությունները: Մեր ուսումնասիրություններում կիրառել ենք միջմշակութային կառավարման ժամանակակից **ԳԼՈՒ** (Global Leadership and Organizational Behavior Effectiveness) հետազոտական նախագիծը, որին մասնակցել են սոցիոլոգիայի և կառավարման գիտությունների տարբեր ոլորտների 160 հետազոտողներ: Այս հետազոտությունը իրականացվել է 1990-ական թվականներին. հիմնական նպատակն էր մշակել մոդել, որը թույլ կտար հասկանալ և կանխատեսել մշակութային չափանիշների կամ փոփոխականների ազդեցությունը հասարակությունում առաջնորդության արդյունավետության և կազմակերպչական մշակույթի վրա: ԳԼՈՒ նախագծի հետազոտողները ուսումնասիրել են մշակույթը սովորույթների և արժեքների մակարդակներով, ուսումնասիրությունները իրականացրել են ֆինանսական ծառայություններում, սննդամթերքի արտադրական գործարաններում, հեռահաղորդակցման կազմակերպություններում, որոնք գտնվել են 62 երկրներում: Հարցմանը մասնակցել են միջին օդակի 17 000-ից ավելի մենեջերներ: ԳԼՈՒ նախագծի մշակած մոդելում առանձնացվել է ազգային մշակույթի բնորոշման 9 չափանիշներ՝ անորոշությունից խուսափում, իշխանությունից հեռավորություն, ենթակառուցվածքային հավաքականություն, խմբում հավաքականություն, գենդերային հավասարություն, մարդասիրական կողմնորոշում, ինքնավստահություն, հաստատակամություն, առաջխաղացում, ապագայի կողմնորոշում:

Հայաստանում գործող առևտրային կազմակերպություններում ազգային մշակույթի բնորոշման համար կիրառել ենք ԳԼՈՒ նախագծի կողմից մշակված երկու հարցաթերթիկները՝ ալֆա և բետա, որոնց միջոցով կարողացել ենք բացահայտել կազմակերպչական և հասարակական մշակույթների սովորույթներն ու արժեքները: Ղեկավարները մասնակցել են հարցմանը, որն ըստ առևտրային կազմակերպությունների, մասնավոր-

րապես առևտրային բանկերի, կաթնամթերքի և գարեջրի արտադրության, հեռահաղորդակցման, տեքստիլ արտադրության միջին օղակի, չի հակասում ԳԼՈԲ նախագծի պահանջներին:

Հարցման հիմնական նպատակն էր բացահայտել կազմակերպչական և հասարակական մշակույթի 9 չափանիշները Հայաստանի համար՝ ըստ ԳԼՈԲ մոդելի:

Այս մոդելի հիման վրա իրականացված հետազոտությունների արդյունքում կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

- *Անորոշությունից խուսափում* չափանիշի ցուցանիշը ցածր է հասարակությունում և միջին է կազմակերպություններում: Պետք է նշենք, որ սա բնորոշ է անցումային երկրներին, որտեղ մարդիկ դեռևս չեն կարողանում պահպանել կարգուկանոնը, չեն հարմարվում տարբեր ոլորտների բարեփոխումներին:
- *Իշխանությունից հեռավորություն* չափանիշի ցուցանիշը մեծ է Հայաստանում, որը նշանակում է, որ իշխանության և հասարակության այլ անդամների միջև հեռավորությունը մեծ է, սակայն մենեջերները ակնկալում են, որ ապագայում այն ավելի քիչ ակնհայտ կլինի:
- *Ապագայի կողմնորոշում* չափանիշի ցուցանիշը հասարակությունում և կազմակերպություններում մոտ է միջին ցուցանիշին: Չնայած երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակին՝ մարդիկ հավատում են, որ ապագայում ավելի լավ է լինելու և ձգտում են բարելավել իրենց կենսամակարդակը:
- *Հասարակությունում ենթակառուցվածքային հավաքականության* չափանիշի ցուցանիշը մոտ է գլոբալ միջին ցուցանիշին, իսկ խմբում հավաքականության դեպքում նույնիսկ մոտ է բարձր ցուցանիշին, որը պայմանավորված է ճնողի և երեխայի, մեծի և փոքրի ազգային մշակույթի առանձնահատկություններով: Ինչպես նաև պետք է նշենք, որ Խորհրդային Միության տարիներին անհատի ազատությունը սահմանափակված էր, և մարդիկ իրավունք չունեին անհատապես արտահայտվելու: Թեև Խորհրդային Միությունը փլուզվել է, սակայն մարդկային հոգեբանությունը դեռևս շարունակում է նույնը մնալ, և ժամանակ է անհրաժեշտ, որ նոր սերունդը փոխի այն:

- *Գենդերային հավասարության* չափանիշի ցուցանիշը մոտ է գլոբալ ցուցանիշի բարձրակետին: Պետք է նշենք, որ հայերը, կարևորելով մոր դերը ընտանիքում, բարձր պաշտոններում կնոջը դեռ նախապատվություն չեն տալիս, թեև օրենսդիր, գործադիր և դատական կառույցների բարձր օղակում կան կանայք, և պահպանվում են նրանց ներկայության թվաքանակի միջազգային չափանիշները:
- *Հաստատակամության կամ համառության* չափանիշի ցուցանիշը մոտ է նվազագույնին, իսկ կազմակերպություններում միջին է, որը պայմանավորված է այս եզրույթի սխալ ընկալմամբ: Այն հասարակությունում և կազմակերպություններում հիմնականում համարում են բացասական: Փոքր պետություն ունեցող ազգերին բնորոշ է հաստատակամության կամ համառության ցածր ցուցանիշ, քանի որ նրանք կախված են գերտերությունների քաղաքականությունից:
- *Մարդասիրական կողմնորոշումը* չափանիշի ցուցանիշները միջինից բարձր է հասարակությունում, իսկ կազմակերպություններում՝ միջինից ցածր, որը պայմանավորված աշխատանքային միջավայրով և աշխատանքի պահանջներով:
- *Առաջխաղացման կամ արդյունքների կողմնորոշում* չափանիշի ցուցանիշը ցածր է, որ բնորոշ է անցումային երկրներին, որտեղ ղեկավարները դեռևս չեն կարողանում ընտրել իրատեսական նպատակներ և համապատասխան արդյունքներ:

Ani SAHAKYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail: sahakyanani@mail.ru

IDENTIFICATION OF THE FEATURES OF NATIONAL CULTURE IN THE ARMENIAN COMMERCIAL ORGANIZATIONS BY MODERN GLOBE MODEL OF INTERCULTURAL MANAGEMENT

Contemporary intercultural studies are needed to increase the efficiency of business operations; it contributes to the identification of ways to improve

business relations. On the other hand, the study of international management models in the world will allow determining the effectiveness of their application for Armenia and finding its own model of behavior, which takes into account the values of national culture and the realities of modern life. In our studies we have used modern intercultural management GLOBE (Global Leadership and Organizational Behavior Effectiveness) research project, which was attended by 160 researchers from different fields of sociology and management sciences. GLOBE is a long-term programmatic research effort designed to explore the fascinating and complex effects of culture on leadership, organizational effectiveness, economic competitiveness of societies, and the human condition of members of the societies studied. The major purpose of the Project GLOBE was to increase available knowledge that is relevant to cross-cultural interactions. The GLOBE researchers measured culture at different levels with both practices and values existed at the levels of industry (financial services, food processing, telecommunications), organization (several in each industry), and society (62 cultures). The nine cultural dimensions they identified as independent variables are Uncertainty Avoidance, Power Distance, Institutional Collectivism, In-Group Collectivism, Gender Egalitarianism, Assertiveness, Future Orientation, Performance Orientation, and Humane Orientation. Mid-level managers of commercial organizations in Armenia have participated in our survey. The main purpose of the survey was identifying 9 criteria for Armenian organizational culture and social, according to the GLOBE model. The following conclusions we can do in our research:

- *Uncertainty avoidance* dimension is below the average in society and organizations. It should be noted that this characteristic of transitional countries where people are still unable to maintain law and order, do not adjust to reforms.
- *Power distance* dimension in Armenian is large, which means distance between that authority and other members of the society is great, but managers expect that it will be less evident in the future.

- *Future orientation* dimension in the society and organizations is around the average. Despite the economic and political situation the people believe that the future will be better and strive to improve their lives.
- *Institutional Collectivism* dimension is average, but In-Group Collectivism is high, which is determined by the parent and child, large and small with the characteristics of the national culture
- *Gender equality* dimension is high. It should be noted that Armenia attaches importance to the role of the mother in the family, but still do not give preference to women in senior positions.
- *Assertiveness* dimension in society is low and it is medium in the enterprises which are determined by the wrong perception of this term. In generally it is regarded as negative characteristic in society and organizations.
- *Humane Orientation* dimension is average in the society and the organizations, which is due to the working environment and job requirements.
- *Performance Orientation* dimension is low, which is typical of the transition states, where leaders are still unable to choose realistic goals and relevant results.

**Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ,
Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)
E-mail: sahakyanani@mail.ru, E-mail: vard-rosa@mail.ru

**ԿՐԵԱՏԻՎ ՔԱՂԱՔ. ԷԹՆՈՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ
(Գյումրի քաղաքի օրինակով)**

2004թ. քաղաքները համախմբելու նպատակով ստեղծվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ աշխարհի Կրեատիվ (ստեղծագործ) քաղաքների ցանց, որն արվեստն ու մշակույթը դիտարկում է իբրև այդ քաղաքների տնտեսական զարգացման հիմնական ելակետ, իսկ վերջնական նպատակը սոցիալական, տնտեսական և մշակութային առաջընթացին նպաստելն է:

Մինչ օրս կրեատիվ քաղաքների շարքում ընդգրկվել են 19 երկրի 31 քաղաք, որոնք միմյանց հաղորդակցվում են մշակութային փորձով ու ձգտումով, սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարով:

Մարդկային միտքը, ցանկությունները, մոտիվները, ստեղծագործական հնարավորություններն ու երևակայությունը շատ հաճախ դիտարկվում են որպես քաղաքների զարգացման ռազմավարական հայեցակարգ:

Կրեատիվ քաղաքի կենսական ուժը մարդն է: Կրեատիվությունը մարդու մտքի տարածությունն է՝ ենթադրելով բազում մտքերի տարածությունների առկայություն: Ըստ էության, մշակույթը և ստեղծագործ արարումը ներհյուսված են: Ստեղծարարությունը քաղաքների համար կենսուժ է, որ մշտապես օգնում է մարդկանց ապրելու՝ ավանդույթի սահմանները հաղթահարելով: Մշակութային ռեսուրսները հիմնային արժեքային բաղադրիչներ են, որոնցով էլ վերաիմաստավորվում է քաղաքի ստեղծագործական ներուժը: Ինչ խոսք, անցյալի ժառանգությունն ընդունակ է ոգեշնչելու և ապագայի հանդեպ վստահություն ներշնչելու: Այս համատեքստում անչափ կարևոր է ճշտել, թե ինչպե՛ս է ձևավորվում քաղաքը նորարարությունների կենտրոն դարձնող միջավայրը: Ի՞նչ սկզբունքներով են պայմանավորված այն մոտեցումները, որոնք միտված են քաղաքային միջավայրի զարգացմանը:

- ա) Նոր մտածելակերպ ունեցող մարդկանց ընդգրկում համայնքի զարգացման ծրագրերում, համալիր և ամբողջական մոտեցում քաղաքի հիմնախնդիրները վերլուծելիս, որը արմատապես կարող է փոխել որոշումների ընդունման մեթոդները,
- բ) քաղաքի ստեղծագործական պոտենցիալի և ռեսուրսների գնահատում, քաղաքային կյանքի կառավարման նոր եղանակներ,
- գ) ստեղծագործական գործունեության ընթացքում կիրառվող նոր հասկացություններ ու բառերայիններ (նոր երևույթի համար՝ նոր գնահատում):

Առհասարակ մշակութային ժառանգությունը պատմության, հասարակության կոլեկտիվ հիշողության հետ կապն է, ամրապնդում է մեր կենսական զգացողությունն ու ընկալումը և կարող է մեզ նախապատրաստել ապագայի հետ հանդիպման: Ամեն դեպքում մշակութային ժառանգությունն անցյալի ստեղծագործական փորձի ու ձգտումների հանրագումարն է, իսկ ստեղծագործության արգասիքը հնարավորություն է տալիս հասարակությանն առաջ ընթանալու: Կրեատիվությունը միշտ չէ, որ նոր գաղափարներով է պայմանավորված, հաճախ դրսևորվում է հնի հանդեպ նոր մոտեցմամբ: Մշակույթի բոլոր մակարդակները՝ լեզուն, օրենքները, տեսությունը, արժեքները, ամեն հաջորդ սերնդի կողմից միաժամանակ կարիք ունեն վերաիմաստավորման ու վերաթարմացման: Բոլոր դեպքերում մշակութային ռեսուրսները պետք է կենսագործել ողջախոհության սկզբունքներով՝ համապատասխանեցնելով հասարակության իրական հնարավորություններին:

Կրեատիվությունը ներկայանում է որպես թաքնված հնարավորությունների դրսևորում և մարդկային պոտենցիալի ստեղծագործական կիրառում: Այն թելադրում է վերանայել ընթացակարգերը և գործող սկզբունքները, հետևաբար նաև ապագայում գործարկվող սցենարները:

Ընդհանրապես, գյումրեցու ստեղծագործ մտածողությունն առավելապես դրսևորվում է հարուստ երևակայության, ճկուն մտքի, հնարամտության, հումորի, ոչնչից ինչ-որ բան ստեղծելու կարողության մեջ՝ այս ամենը մշակույթի ընկալման ձևերով: Քաղաքի առանձնահատկությունը կրեատիվության ինքնատիպ ընկալման մեջ է, որը գաղտնագրում է այն

կրողների աշխարհը: Նրանց կրեատիվությունը ներառում է հիմնախնդիրների հանդեպ ոչ միայն բարձր զգայունակություն, այլև մտքի հակասականություն: Պարադոքսների քամին ասես պտտվում է Գյումրի քաղաքի վրայով... Ոչ հեռավոր անցյալում քաղաքն ընկալվում էր անվտանգության ու վստահության բացակայությամբ: Այսօր՝ գերխիտ ժամանակներում, գյումրեցին, շնորհիվ ստեղծագործ լինելու, ոչ դրական ազդակները տրանսֆորմացնում է՝ վերածելով ստեղծագործական էներգիայի, արդյունքի:

Կրեատիվությունը մարդկային հոգեկան ապրումների վերարտադրություն է և ինֆորմացիա ազգի ու գենոֆոնդի ինքնապաշտպանական մեխանիզմների մասին: Կոնկրետ Գյումրու կրեատիվ լինելը դրսևորվում է ազգաբնակչության պատմական հիշողության, ներքին ռեսուրսներին ապավինելու ու հանրային շփումների շնորհիվ, քանի որ կան ազգային կորեր, որոնք էքստրեմալ իրավիճակներում նորովի դրսևորումներ են ստանում:

Ազգային ծեսերն ու տոները, արհեստներն ու արհեստավորական ավանդույթների պահպանումը նպաստում են ազգաբնակչության հոգեկան հավասարակշռմանը, հզորացնում քաղաքի հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, ակտիվացնում ներքաղաքային մշակութային կյանքը, ստեղծում միջմշակութային հաղորդակցման հնարավորություն, նոր սերնդի մեջ դրական վերաբերմունք ձևավորում ավանդական արժեքների հանդեպ՝ նպաստելով ավանդույթների փոխանցմանը:

Karine SAHAKYAN,

Roza HOVHANNISYAN(Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: vard-rosa@mail.ru: E-mail sahakyanani@mail.ru

CREATIVE CITY: ETHNOPSYCHOLOGICAL ASPECTS (On the example of Gyumri city)

In 2004 the UNESCO Creative Cities Network was created to promote cooperation with and among cities, that network considers culture as the main component of economic development and its final aim is to foster social, economic

and cultural success. Until now 31 cities of 19 countries make up this network which work together towards a common objective placing cultural experience and tendency at the heart of their development plan.

Human mind, wishes, motives, creative chances and imagination are very often considered to be tactical conception for the development of these cities.

Vital power of a creative town is the human being. Creativity is the space of human mind which supposes the existence of numerous minds. Essentially culture and creativity are interwoven.

Creativity is a vital power for cities which always helps people to survive by overcoming the borders of tradition. In Gyumri creativity is manifested in the collective memory of the population, its inner resources and public contacts as there are national curves that get new manifestations at extreme situations.

National rituals and holidays, trades and the preservation of handicraft traditions contribute to the populations' mental balance, strengthen the city's psychological protective mechanisms, activize cultural life of cities, create chances of intercultural communication, and build up positive attitudes towards traditional values among the new generation.

Արմենուհի ՍՏԵՓԱՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

E-mail: j.santuryan@mail. ru

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ն Ե Ր Գ Ա Ղ Թ Ա Ծ Ս Ի Ր Ի Ա Հ Ա Յ Ե Ր Ը (ազգագրական անդրադարձ)

Միրիան հայկական գաղթօջախ է եղել դեռևս շատ հեռավոր ժամանակներից: Ըստ Հր. Աճառյանի՝ հայոց նախնագույն գաղթականական հարաբերություններն այս երկրի հետ վաճառականության պատճառով էր:¹

XIX դ. հայ բնակչության հաստատված վայրերն են նաև Հալեպի շրջակա գյուղերը (Մեյդան, Դավուդիե, Շեյխ Մաքսուդ և այլն), Հյուսիսս-

¹ Աճառյան Հր., *Հայ գաղթականության պատմություն*, Եր., 2002, էջ 398:

յին Սիրիայի Ջեզիրիե նահանգը Գամըշը՝ Դեր Ջոր ավաններով, Քեսաբի և Լաթաքիայի շրջանները՝ Գարագուրան, Եաղուբիե, Դընըմիե ավաններով:¹

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքերի իրականացրած հայկական ջարդերի հետևանքով նշված վայրերում կենտրոնացել է մոտ 30.000 տարագիր հայ: Նրանք Կեսաբիայից, Ադանայից, Սսից, Այնթապից, Ուրֆայից, Տիգրանակերտից տարագրվածներն էին: Նրանց ավելացան և Կիլիկիայի հանձնումից հետո այնտեղ գտնվող հայերը: 1925թ. Հալեպում և շրջակայքում հաշվվում էր մոտ 8000, Դամասկոսում՝ նույնքան հայ:²

XX դ. իրականացած հայրենադարձության տարիներին Սովետական Հայաստան ներգաղթեցին հազարավոր սիրիահայեր: Միայն 1921 թ. (հայրենադարձության առաջին փուլում) ներգաղթեց 3000 մարդ:

Վերջին տարիներին (XXI դ. երկրորդ տասնամյակի սկզբին) Սիրիայում գոյություն ունեցող հակամարտությունը՝ կառավարական և հակակառավարական կողմերի միջև, բերեց քաղաքական բախումների ու ռազմական գործողությունների, ինչի հետևանքով հայ համայնքը հայտնվեց կրակի գոտում:

Դեռևս 2005թ. Սիրիայի հայ բնակչությունը կազմում էր 100.000 մարդ:³ Մինչև քաղաքացիական պատերազմը, ըստ Սփյուռքի նախարարության տրամադրած բանավոր տվյալների, Սիրիայի հայ համայնքը 60-80 հազար էր կազմում: Տարբերությունն ակներև է:

Սիրիահայերը հիմնականում ներգաղթել են Հալեպից, կան և Գամըշլիից, Լաթաքիայից, Դամասկոսից եկածներ: Հարկ է նշել, որ նրանք հիմնականում (բացառությամբ Գամըշլին ու շրջակայքը) քաղաքաբնակներ են՝ ի տարբերություն XX դ. ներգաղթած սիրիահայերի, որոնք առավելապես գյուղաբնակ էին և ավելի հեշտ էին բնակություն հաստատում Երևանից դուրս այլ վայրերում: Սակայն ներկայիս սիրիահայերը կտրականապես հրաժարվում են Երևանից դուրս այլ վայրեր մեկնելուց՝ ասե-

¹ *Սուրիահայ տարեցոյց, Պէյրութ, 1929, էջ 218, 222:*

² *Հայաստանի կոչնակ, Պէյրութ, 1925, էջ 794:*

³ *Дияспора в цифрах // Ереван, июнь, 2005, с. 103. 319.*

լով. «Եթե Երևանում գործ չկա, ուրիշ տեղեր առավել անհույս է»: Այս առումով թերևս ուշագրավ է, որ Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանում բնակություն են հաստատել Գամրջլիից տեղափոխված շատ ընտանիքներ, որոնք հաջողությամբ զբաղվում են գյուղատնտեսությամբ և Երևանում հաստատված մյուս սիրիահայերի համեմատ առավել գոհ են իրենց վիճակից¹:

Ներգաղթած սիրիահայերի առաջնահերթ խնդիրներն են բնակարանն ու աշխատանքը, ապա սնունդը, հագուստը և այլն: Օգնություն է ստացվում տարբեր միջազգային կազմակերպություններից՝ միջազգային Կարմիր խաչից, Միջեկեղեցական դրամական ֆոնդից, Հայ բարեգործական ընդհանուր միությունից, Համահայկական ընդհանուր օգնության ֆոնդից, որոնք բոլորն էլ ոչ պետական հովանավորներ են:

Միրիահայերի կարծիքով, պետությունը բավականին անհոգ է իրենց բնակարանով ապահովելու հարցում, և նրանք ստիպված են այն գնել կամ վարձակալել սեփական միջոցներով, որը բավականին սուղ լինելով՝ բոլորին հասանելի չէ.² ստացվում է, որ բնակարան վարձակալելն ու աշխատանք գտնելը ներգաղթողի անձնական խնդիրներն են, որ ինքը պետք է լուծի, ինչը ներկայիս գործազրկության և աշխատատեղերի բացակայության պայմաններում, կարելի է ասել, անհնար է: Աշխատատեղեր տրամադրելու հատուկ նստ առաջարկները խիստ անբավարար են:

Ներգաղթողների սոցիալական կազմը հիմնականում ներկայացնում են տարբեր բնագավառների արհեստավորներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում ավտովերանորոգողներն ու ավտոմեխանիկները: Սակայն

¹ Այդ են վկայում հեղինակի գրառած նյութերը Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանից 2013-2014թթ. գործուղումների ընթացքում:

² Տեղին է նշել, որ Երևանի բնակարանատերերը, օգտվելով առիթից, այս պարագայում բարձրացրին վաճառվող և հատկապես վարձակալվող բնակարանների գները (ինչն անկում էր ապրել ծավալված արտագաղթի պատճառով): Բնակարանների գների սղաճն ու անստաշեյիությունը դժգոհություն են առաջացնում ներգաղթածների շրջանում:

տեղական դաշտում մրցակցությունը մեծ է, և քչերին է բախտը ժպտում աշխատանք գտնել այդ ասպարեզում:

Հայաստան գալով՝ շատերը մտադիր են ժամանակ շահել, պատերազմական գործողությունները դադարելուց հետո վերադառնալ, քաղաքացիություն ստանալ և իբրև Հայաստանի քաղաքացի՝ հեռանալ այլ երկրներ: Ինչ վերաբերում է Երևանի մասին նախնական պատկերացումներին, ապա դրանք բավական մշուշոտ են եղել: Լսել էին, որ Հայաստանից շատերը հեռանում են, բայց պատճառներն իրենց հայտնի չէին: Հայաստանում նրանք տեսան գործազրկություն և մթերքի բարձր գներ, ինչը նրանց հանկարծակիի բերեց: Շատերը մտահոգ են, որ ունեցած գումարը սպառվելուց հետո շատ տագնապալի վիճակ կստեղծվի, և մտածում են վերադառնալ՝ ապավինելով բախտին: Սա ավագ և միջին սերունդն է:

Տեղափոխված սիրիահայերի սեռային կազմում գերակշռում են կանայք, մանավանդ ընտանիքների մայրերը, որոնցից շատերը եկել են արդեն Հայաստան բնակություն հաստատած իրենց (թեկուզ չափահաս) երեխաների կողքին լինելու համար և նրանց հետ կիսում են տեղի պայմաններին հարմարվելու բոլոր դժվարություններն ու խոչընդոտները:

Սույն հաղորդման մեջ փորձել ենք ընդհանուր առմամբ անդրադառնալ նաև լեզվական մշակույթի խնդրին, որը կարևոր դերակատարում ունի եկվոր և տեղաբնակ շերտերի փոխընկալման և փոխներթափանցման հարցում:

Այս պահին երևանաբնակ տարաշերտ հասարակության մեջ մասնագետի աչքը կարող է առանձնացնել սիրիահայերի՝ սուբթյոնիկ հատկանիշներով ձևավորվող խումբը: Այդ հատկանիշներից գլխավորը լեզվական մշակույթն է:

Հատկապես զբոսաշրջության ժամանակահատվածում Հայաստան այցելած սփյուռքահայերի մեջ առանձնանում են սիրիահայերը, որոնք, լինելով արաբախոս, քրդախոս միջավայրից, խոսում են մաքուր արևմտահայերենով՝ ի տարբերություն այլ երկրներից ժամանածների, որոնք հաճախ խոսում են տվյալ երկրի լեզվով կամ շատ են օգտագործում օտարալեզու արտահայտություններ (մանավանդ անգլերեն, ֆրանսերեն), ինչն իսկույն մատնում է նրանց որտեղից լինելը: Հարկ է նշել նաև, որ ընդունող

հասարակության և եկվոր խմբերի փոխընկալումներում այսօր ձևավորված դիմելառճը նույնպես կարևոր է և տանում է մերձեցման՝ պայմանավորված վերը նշված խմբերի երկուստեք հանդուրժողականությամբ (tolerance). այսպես եկվոր խմբերն անվանվում են սիրիահայ կամ սիրիացի, ընդունող հասարակությունն անվանվում է հայաստանաբնակ (հայաստանցի) կամ երևանաբնակ (երևանցի), քանի որ եկվորները տեղավորվել են հիմնականում Երևանում (քիչ մերձակայքում):¹

Բոլոր ազգերի համար երկրի ժողովրդագրական պատկերը պահպանելն ազգային անվտանգության կարևոր խնդիր է:

Այսօր Հայաստանի հասարակությունը շատ ավելի հանդուրժող է, քան XX դ. հայրենադարձության տարիներին էր: Արևմտահայ և արևելահայ հատվածների միջև բավականին մեղմացել է մենք-ի ու դուք-ի իրարամերժ հակասությունը, սակայն ամբողջական և միասնական դառնալուն դեռ շատ բան է խանգարում: Ներկայումս անկախացած Հայաստանի պայմաններում (չնայած չթուլացող արտագաղթին) նկատվող թեկուզ և անկանխատեսելի ներգաղթի թույլ միտումները կարգավորելուն ուղղված գործողությունները ծրագրավորված մտեցում են պահանջում:

Իրական ներհոսք ունենալու համար պետք է դադարի արտահոսքը, ինչի համար որոշակի պայմաններ են անհրաժեշտ:

¹ Տե՛ս Ստեփանյան Ա., Սիրիահայերը Երևանում (ազգագրական անդրադարձ) // Ավանդականը և արդիականը հայոց մշակություն (Ղ. Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջ 317-327):

Armenuhi STEPANYAN (Armenia)

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yereva)

E –mail: j.santuryan@mail. ru

SYRIAN EMIGRATES IN THE REPUBLIC OF ARMENIA (Ethnological survey)

The report considers the displacement of Armenians from Syria into Armenia. In the result of the war in the Middle East according to official data about 20000 Armenians moved to Armenia from different regions of Syria. During the last years half of them decided to stay in Armenia.

The current process makes ethnographical observations possible such as the questions of changing their identity (subethnic identity), adaptation to new conditions , the ideas of the Motherland and Foremotherland, living conditions, contacts with the native people, etc.

In the issue we mention and emphasize the tolerance of the native people towards the new comers nowadays and we compare the behaviour of the natives in 1946-1948 and 1960-1970-es when emigration and immigration took place as in present.

A thruthful appraisal of contemporary actions will affect national security.

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ARCHITECTURE AND ARTS

Սաթենիկ ԵՆՈՔՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: satenik.enokyan@mail.ru

ՇԻՐԱԿԻ ՔԱՌԱՆԻՍ ԿՈԹՈՂՆԵՐԸ

Հուշասյուններ, թևավոր խաչեր և քառանիստ կոթողներ: Թերևս այս խմբերից ամենից մեծ ենթախումբը կազմում են քառանիստ կոթողները, քանի որ ներկայումս առկա տվյալների համաձայն՝ Հայաստանի տարածքում հայտնի են 252 կոթողներ: Այս քանակի մեջ ներառված չեն Արևմտյան Հայաստանի և Վրաստանի տարածքում գտնվող կոթողները:

Այս ենթախումբը, որ կոչվում է քառակող կամ քառանիստ, ի տարբերություն հուշասյունների, որոնց վրա առկա են դեկորատիվ բնույթի պատկերներ, այստեղ գերակշռում են ֆիգուրատիվ բնույթի պատկերներ:

Գոյություն ունի քառակող կոթողների երկու ենթախումբ՝ Շիրակի և Գուգարքի:

Շիրակի շրջանի կոթողները տարբերվում են Գուգարքի կոթողներից: Շիրակի խմբի կոթողները միջին չափերի են, այսինքն՝ 2մ, իսկ Գուգարքի խմբի կոթողներն ունեն 4-6մ բարձրություն: Շիրակի կոթողները քանդակված են կարծր տեսակի քարից, իսկ Գուգարքի կոթողները ֆիզիտային տուֆից են, որը բավականաչափ նուրբ է, և այդ տեսակի վրա հնարավոր է ավելի նուրբ աշխատանք կատարել: Քանի որ Շիրակի կոթողները չափերով փոքր են, ուստի պատկերաշարը սահմանափակ է, իսկ Գուգարքի կոթողների վրա սյուժեները ավելի շատ են: Քառակող հուշարձանների պատրաստման եղանակը նույնն է, ինչպես հուշասյանը (պատվանդան, սյուն, վերևում փոսիկ և ազատ խաչ): Շիրակի կոթողների վրա հաճախ հանդիպում ենք ականթի տերևներ: Որպես կանոն՝ Շիրակի կոթողները անկյունում ձևավորված են որմնասյուների նման: Կոթողների վրա սուրբ կերպարների հետ մեկտեղ տեսնում ենք պատվիրատուների՝ դոնատորների պատկերներ: Կոթողները պարունակում են հին և նորկտակարանային սյուժեներ: Օր.՝ Գառնահովիտ գյուղից գտնված կոթողի վրա առկա է Աբրահամի զոհաբերության տեսարանը, որը հինկտակա-

րանային տեսարան է: Քառակող կոթողները գտնվում են կա՛մ եկեղեցու կողքին, կա՛մ գերեզմանոցի տարածքում, որոնց ուսումնասիրողը եղել է Գարեգին Հովսեփյանը, և ըստ նրա՝ դրանք գերեզմանային հուշարձաններ են, սակայն այս վարկածը հերքվել է:

Շիրակի խմբի կոթողներում առավել հաճախ հանդիպում են սկանթատերներ, որոնք առկա են կողքերի, վերևի և ներքևի մասերում: Օր.՝ Քասախում գտնվող պատվանդանի վրա պատկերված է հավասարաթև խաչ, որը շրջապատված է խաղողի որթով, սակայն ի տարբերություն Գուգարքի խմբի, Շիրակի խմբում խաղողը հազվադեպ է պատահում: Շիրակի համար խաղողի որթի պատկերումը բացառիկ է: Շիրակում ծաղկային բնույթի տարրեր քիչ են հանդիպում, ինչը չենք ասի Գուգարքի մասին: Շիրակի կոթողների վրա շատ են խաչային հորինվածքները, դրանք ավելի շատ հանդիպում են այստեղ, քան Գուգարքում: Ընդ որում, խաչային հորինվածքները հանդիպում են պատկերագրական տարբեր ձևերով: Շիրակում առկա են անհավասարաթև խաչեր շրջանակի մեջ, նաև պատկերված են ձգված համաչափությամբ խաչեր: Օրինակ, Մուղնու կոթողի վրա առկա են խաչային հորինվածքներ, որոնք թևերով են:

Պատվանդանի և խոյակի վրա, ելնելով չափից, պատկերվում է հավասարաթև խաչը, իսկ նիստի վրա ձգված համաչափությամբ է, որը համապատասխանեցվել է նիստի ընդհանուր ձևին: Այստեղ ուղղահայաց թևերը ձգված են, իսկ հորիզոնական թևերը՝ ավելի կարճ: Շիրակի խմբում խաչային հորինվածքների հետ հանդիպում է աստիճանաձև հիմքին դրվող խաչային հորինվածք, որը խորհրդանշում է Գողգոթան: Շիրակի կոթողների վրա հաճախ պատկերվում է խաչվառ, իսկ ինչ վերաբերում է նորկոտակարանային թեմաներին, որ այս կոթողների վրա նորկոտակարանային տեսարանները սահմանափակ են:

Ամբողջ Շիրակի կոթողների մեջ առկա է Քրիստոսի ընդամենը երեք պատկեր: Պատկերված է Քրիստոսի դեմքը՝ լուսապսակով: Հաջորդ պատկերը, որ կապվում է նորկոտակարանային թեմաների հետ, Տիրամայրն է: Տիրամոր պատկերումը շատ է և հանդես է գալիս հողիզիդրի պատկերագրական տիպով: Օր.՝ Թալինի կոթողի վրա պատկերված է Տիրամայրը՝ Քրիստոսը ծնկներին, և Տիրամայրը՝ հրեշտակապետերի ուղեկցությամբ:

Շիրակի կոթողների վրա հանդիպում ենք լուսապսակով ֆիգուրների, որոնց ձեռքին բաց գիրք է: Այստեղից կարելի է ենթադրել, որ պատ-

կերվում է ավետարանիչ կամ առաքյալ: Այսպիսի ֆիգուրների ձեռքերին առկա է նաև խաչ-գավազան: Կենդանագլուխ պատկերների ինը օրինակ կա, որոնցից ութը գտնվում է Շիրակում, իսկ մեկը՝ Օձունի կոթողի վրա, ինչը նշանակում է, որ այդ կենդանագլուխ-պատկերը, ձեռքին կախած գավազան, գլխին լուսապսակ, երկար մազերով, բավականին տարածված է եղել Շիրակում: Գրականության մեջ նշվում է՝ այս կենդանակերպ-պատկերը ներկայացնում է խոզագլուխ Տրդատին: Սակայն համաձայն նոր տեսակետի՝ այդ կերպարը ներկայացնում է քրիստոնեական սրբերից մեկին՝ Քրիստափորին:

Շիրակում կան նաև պատվիրատուների (դոնատորներ) պատկերներ, որոնք միշտ աղոթողի դիրքով են: Հագուստները տարբերվում են Քրիստոսի առաքյալների հագուստներից, ձեռքներին չունեն լուսապսակ, խաչ-գավազան:

Satenik YENOKYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: satenik.enokyan@mail.ru

SHIRAK TETRAHEDRON MONUMENTS

Obelisks are four-winged crosses and monuments. Perhaps the biggest subgroup comprises four groups of monuments as the currently available data, the 252 famous monuments in Armenia. This number does not include the monuments in Western Armenia and Georgia. This subgroup is called a square or tetrahedron, unlike obelisks, on which there are decorative character images, character images are dominated by figurative.

There is a four-sided monument in two subgroups, Shirak and Gugarq. Shirak region differs from Gugarq heritage monuments. Shirak group of monuments are of moderate size, i.e. 2 m and a height of 4-6m Gugarq group of monuments. Shirak monuments carved from solid types of stone, monuments and Gugarq tuff.

Because Shirak's monuments are of small size, the gallery is limited, and there are many more plots on Gugarq monuments. Square monuments in the method of preparation is the same as the obelisk (pedestal, pillar, on top of the dimple and the free cross). We combine acanthus leaves often meet Shirak on

monuments. Typically, Shirak monuments are like pillars shaped like a corner. Monuments of St. with characters we see customer's (donors) images together. Monuments include the Old and New Testament stories. For example, Garnahovit village found at the scene of Abraham's sacrifice on the obelisk, which is in the Old Testament scene. Quadrilateral monuments are located in or next to the church or cemetery, who was student Garegin Hovsepyan and according to him, these grave sites, but this hypothesis is refuted.

Shirak group most often occurs in acanthus monuments that are available next to the upper and lower parts. For example, on the pedestal pictured Kasakh equal-cross, surrounded by grape vine, but unlike Gugark Group, Shirak Group grapes are rare. Shirak is exceptional for vine view. Shirak nature is rare floral elements. Moreover, cross compositions appear in the picture in different ways. Shirak is available in different crosses, as depicted in the elongated proportions crosses. Pedestal and on the socket, based on the amount, equal to the cross depicted, while sitting on the elongated proportions, which corresponds to the common form. We meet on the monuments Shirak halo figures, holding an open book. It is assumed that the picture of the evangelist or apostle. These figures are also cross-arms wand. There are 9 images of animal-head examples, eight of which are located in Shirak and one monument on the village, which means that the animal-head image that is depicted with long hair and a halo, and cross-stick in his hand, was quite common in Shirak. According to the literature of this animal presents Pig-head Trdat. But according to the statement, this new image of the Christian saints, Christopher.

In Shirak there are also customers (donors) images that are always praying position. Clothes are different from Christ's apostles clothes, and there is not a cross-wand.

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (Երևան)

E-mail: Lilitkarapetyan90@mail.ru

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՑՂՆԱՅԻ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Նախիջևանի քանդակային առավել ուշագրավ օրինակներից են Ցղնայի Սբ Աստվածածին եկեղեցում պահպանվածները: Այս եկեղեցին հիմնադրվել է 12-13դդ. և հետագայում մի քանի անգամ վերանորոգվել է: Ընդ որում, 17-րդ դ. Սբ Աստվածածին եկեղեցին վերանորոգելու համար Ցղնայի իշխանները նվիրատվություններ են կատարել, որի մասին եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին կա արձանագրություն¹: Ցղնայի Սբ Աստվածածին եկեղեցում կրկնվում է հարդարման այն սկզբունքը, որն առհասարակ բնորոշ է Նախիջևանի հուշարձաններին: Կամարի տակ քառանկյուն շրջանակի մեջ է տեղադրված Տիրամոր բարձրաքանդակը: Տիրամայրը աջ ձեռքով գրկել է Հիսուսին, իսկ ձախով հավաքում է երկար զգեստի փեշերը: Հորինվածքի վերին մասում՝ աջ և ձախ կողմերում, պատկերված են մեկական հրեշտակներ, որոնք թագադրում են Տիրամորը: Վերջինս ներկայացված է «Երկնային թագուհի» տիպով: Հորինվածքի մակերեսի մեծ մասը զբաղեցնում է Տիրամոր հագուստի մոդելավորումը, որի մեղմիկ գծերը գեղանկարչական ալիքներ են ստեղծում, իսկ հագուստի երկու ծայրերն անկյուններում կազմում են վոյյուտաններ՝ նմանվելով ճարտարապետական ձևերին: Տիրամոր գրկում Հիսուսը «կորել է» հագուստի ծայրերի մեջ, և նրա մարմինը գրեթե ամբողջությամբ ձուլվել է Տիրամոր հագուստին: Հիսուսն աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախով բռնել է երկրագնդի սիմվոլը: Հորինվածքին առանձնահատուկ հմայք է հաղորդում դեմքերի մշակումը, ընդ որում, քանդակագործը անհատականացման որևէ փորձ չի արել, ընդհանուր նմանություններ կան Տիրամոր, Հիսուսի և հրեշտակների դեմքերի մշակման մեջ: Առավել տպավորիչ է Տիրամոր դեմքի մշակումը. նշաձև աչքերը, փոքրիկ բերանը, կլոր ու լեցուն

¹ *Մյվազյան Ա., Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Եր., 1978, էջ 35:*

այտերը փոքր-ինչ թերի մշակումով կրկնվում են Հիսուսի և հրեշտակների դեմքերի մշակման մեջ: Տիրամայրը աչքի է ընկնում բացառիկ սանրվածքով, մինչդեռ սովորաբար նա պատկերվում է գլխաշորով: Յղնայի բարձրաքանդակում Տիրամոր ճակատին իջնում է մազափունջ, այնուհետև սանրվածքը շարունակվում է հյուսքերով, որոնք միմյանցից տարբերվում են երկրաչափական զարդանախշերով: Տիրամոր «փափուկ» սանրվածքն ավարտվում է գնդիկազարդ թագով, որն ամբողջացնում է նրա վեհաշուք տեսքը:

Հրեշտակները մի ձեռքով պահում են թագը, իսկ մյուսով աջակողմյան հրեշտակը մեղմորեն հպվում է Տիրամոր ուսին, ձախակողմյանը՝ Հիսուսի լուսապսակին, ընդ որում, մազերը և լուսապսակը նույնանում են Տիրամոր թագին և սանրվածքին: Նույնը նկատում ենք հրեշտակների հագուստի մոդելավորման մեջ, պարզապես ծալքերը առավել մեղմ են: Յղնայի Տիրամոր բարձրաքանդակը ուշ միջնադարյան քանդակագործության լավագույն օրինակն է, որտեղ վարպետը ստեղծել է կոտ հորինվածք և հասել գեղարվեստական բարձր մակարդակի: Ա. Այվազյանը, վերլուծելով այս հորինվածքը, նշում է՝ «Առաջին հայացքից Յղնայի այս պատկերաքանդակը եվրոպական արվեստի ուշմիջնադարյան դպրոցների ազդեցությունը կրելու տպավորություն է թողնում, որն ի չիք է դառնում, երբ հիշում ենք Գոթթն գավառի 17-18-րդ դդ. նիստնուկացը, կանանց տարագը: Այս պարագայում արդեն Յղնայի Աստվածամոր քանդակը նախ և առաջ տպավորվում է որպես աստվածատեսք գողթուհու, սիրասուն ու հպարտ, երիտասարդ մայր»¹:

Մեր կարծիքով, տվյալ հորինվածքում տարազի պատկերում գոյությունն չունի, որն է զարդանախշ կամ հատկանշական տարր հագուստի վրա չկա, որը թույլ կտար որոշել՝ նմա՞ն է արդյոք Գոթթնի 17-18-րդ դ. տարագին, թե՞ ոչ: Տիրամոր հագուստը պարզապես ընդգծում է նրա վեհաշուք հանդարտությունը և թագադրման պահի հանդիսավորությունը: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ Տիրամայրը գեղջուկ կնոջ չի կարող մարմնավորել թեկուզ թագի և հագուստի առկայության պատճառով: Ա. Այվազյանի վերոհիշյալ կարծիքը, ամենայն հավանականությամբ, բխում է իր

¹ Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 36:

իսկ հայտնաբերած տեղեկությունից, ըստ որի՝ եկեղեցու 1683թ. վերանորոգմանն օժանդակել են ցղնեցիներ, և հետաքրքրական է, որ տղամարդկանց կողքին նշվում են նաև կանանց անուններ՝ Նանա, Սառա, Մարթա և այլն¹: Իսկ Աստվածամոր քանդակը թվագրվում է 1683թ., այսինքն՝ վերանորոգման արդյունք է: Հետևաբար այստեղից կարող է բխել Տիրամորը գողթնուհուն նմանեցնելու միտումը, սակայն ելնելով բարձրաքանդակի պատկերագրական առանձնահատկություններից՝ նկատենք, որ Տիրամոր բարձրաքանդակում աշխարհիկացման տարրերը առավել քիչ են:

Հետաքրքրական են նաև Սբ Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի բարձրաքանդակները: Որմնակամարների տակ՝ քառանկյուն շրջանակի մեջ, պատկերված են Պողոս և Պետրոս առաքյալները, որոնք իրենց գլխավերևում միասին պահում են շրջանակի մեջ պատկերված խաչը: Ա. Այվազյանն այն տեսակետն է հայտնում, որ Պողոս առաքյալը բռնել է խորհրդանիշ բանալին, իսկ Պետրոսն ուսին դրել է գավազան²: Ուսումնասիրողն առաքյալների նման պատկերագրությունը կապում է 7-8-րդ դդ. հայ արվեստի ավանդույթների հետ, սակայն չի մանրամասնում կոնկրետ օրինակներով:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ բանալիներով պատկերվում է ոչ թե Պողոսը, այլ Պետրոսը, քանի որ Քրիստոսը Պետրոսին է հանձնել երկնային բանալիները: Սա ակնհայտ է նաև հայ քանդակագործության մեջ, ինչպես 7-րդ դարով թվագրվող Էջմիածնի տաճարի գմբեթի արտաքին հարդարանքում, որտեղ Պետրոսը պատկերված է բանալիներով: Նույնը նկատում ենք նաև Սբ Ստեփանոս Նախավկա (17-րդ դ.) եկեղեցու թմբուկի հարդարանքում: Պողոս առաքյալի պատկերագրությանը հանդիպում ենք նույն դարաշրջանին պատկանող Էջմիածնի Մայր տաճարի խորանապատնեշի որմնանկարներում, որտեղ Պողոսը գավազանով է, իսկ Պետրոսի ձեռքին նկատում ենք ստրիբուտը՝ գույգ բանալիները: Ընդ որում, թե՛ Պողոսը, թե՛ Պետրոսն ունեն նույնանման գիրք: Ավելացնենք նաև, որ պատկերագրորեն համընկնում է նաև առաքյալների մորուքների ձևը. Պետրոսը պատկերվում է առավել ծանր և կլորավուն,

¹ Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 36:

² Այվազյան Ա., նշվ. աշխ., էջ 37:

Իսկ Պողոսը համեմատաբար երիտասարդ և սրածայր մորուքով: Այս քննությունը հիմք է տալիս պնդելու, որ Յղնայի Սբ Աստվածածին եկեղեցու արտաքին հարդարանքում բանալիներով ֆիգուրը Պետրոսն է, իսկ գավազանովը՝ Պողոսը:

Lilit KARAPETYAN (Armenia)

Institute of Art NAS RA (Yerevan)

E-mail: Lilitkarapetyan90@mail.ru

THE EXTERIOR DECORATION OF THE HOLY VIRGIN CHURCH TSGHNAY IN NAKHICHEVAN

The most well known compositions of Tsghnay are the reliefs of St. Virgin and Poghos, Petros apostols, which are on the west and south facades of the church. These two compositions are differnt and have various sculptural handwriting. They belong to the same sculptural school.

The most important part of the church is the bell tower which is emphasized cultural connections of the regions Ayrarat and Nakhichevan.

Անի ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հայաստան)

Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ (Երևան)

E-mail: ashothaykazun@gmail.com

ԳՅՈՒՄՐՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց աշխարհում դարեր ի վեր ընդունված է եղել և այսօր էլ ընդունված է երկրային կյանքից հեռացած մարդկանց շիրիմները բարեկարգելու, դրանք տապանաբարերով և տարատեսակ հուշարձաններով զարդարելու սովորույթը:

Այս ավանդույթը առկա է նաև Գյումրիում: Այստեղ կան երեք քաղաքային գերեզմանատներ՝ երկուսը քաղաքի հարավում, երրորդը՝ նոր գերեզմանատունը, դեպի Վանաձոր տանող խճուղու հյուսիսային հատվածում:

Թիվ մեկ գերեզմանատունը (որը ամենահինն է) գտնվում է Երևանյան խճուղուն զուգահեռ արևելյան հատվածում:

Այստեղ պահպանվել են 18-րդ դարի երկրորդ կեսերի, 19-20-րդ դարերի ինչպես նաև ոչ մեծ թվով ժամանակակից գերեզմաններ: Այս գերեզմանատանը կարելի է հանդիպել տարատեսակ հորինվածքներով գերեզմանների: Գերակշռող տեսակը տապանաքարային տիպի գերեզմանն է: Հանդիպում են նաև դամբարանային, մենայունային, խաչքարային, քարոց կարգ, ինչպես նաև խառը լուծումներով հորինվածքներ:

Գյումրու թիվ 1 (հին) գերեզմանատանը առկա է «տապան» տիպի տապանաքարային հորինվածքը, որը մեզ Հայաստանի այլ բնակավայրերի գերեզմանատներում չի հանդիպել: «Տապան» տիպի հորինվածքը իրենից ներկայացնում է ուղղանկյուն տուֆե սալի վրա, չորս «ոտքերն» հանգչող ծավալուն ուղղանկյուն խորանարդ, որը իր բոլոր նիստերի վրա ունի ուղղանկյուն և գոգավոր դեպի վեր փոփոխվող ձևավոր տաշվածքաերեր, որոնք առանձին գեղագիտական կերպար են հաղորդում ընդհանուր հորինվածքին: Տապանատիպ այս գերեզմանաքարերի վրա կան հանգուցյալի անուն/ազգանունը, ծննդյան և մահվան թվականները ցուցող տաշածո գրություններ: Թիվ 1 գերեզմանատանը մեծաքանակ են հարթ (սալաձև), հարթ ձևավոր (եզրերում գեղազարդ), խորանարդաձև, խորանարդաձև՝ վերնամասում գլանաձև, եռանկյունաձև (վրանատիպ), կրկնակի վրանատիպ և այլ լուծումներով գերեզմանները:

Գերեզմանատան ընդհանուր համայնապատկերում առանձնանում են մենայունային հորինվածքները, որոնք շարված և տաշված են սև քարից, քառանկյուն լուծում ունեն, վերնամասում քարե (մետաղե) թևավոր խաչերով զարդարված: Հետաքրքրական է, որ թիվ 1 գերեզմանատանը հանդիպող՝ հատկապես դամբարանային և մենայունային հորինվածքներում լայն կիրառում են գտել Գյումրու 19-րդ դարին պատկանող, բնակելի և հասարակական շենքերին բնորոշ ճարտարապետական շատ

տարրեր (քիվեր, մեդալիոններ, ծաղկաշղթաներ, ծաղկեփնջեր, ձևավոր շրջանակներ, տարատեսակ խորհրդանշանային հարթաքանդակներ, խաչեր, ստալակտիդներ, բուսական և երկրաչափական պատկերներ և այլն):

Այս հուշարձանների շարվածքը, քարերի տաշման և հարդարման եղանակներն ու տեխնիկան նույնպես նույնանման են Գյումրու բնակելի, հասարակական և պաշտամունքային կառույցների կառուցման և հարդարման ոճերի հետ, հանգամանք, որ կասկածի տեղիք չի տալիս և հաստատում է, որ դրանք նույն վարպետների գործերն են և տեղական շինարարագեղագիտական պահանջների և վարպետության ավանդությամբ կառուցված հուշարձաններ:

Գերեզմանաքարերը, անկախ իրենց հորինվածքային ձևերի, լի են արձանագրություններով: Արձանագրությունների տառատեսակները հիմնականում երկաթագիր են, մասամբ (հատկապես նոր հորինվածքներում)՝ գեղագիր: Տաշվածքի տեխնիկայով՝ ուղղանկյուն փորվածքի տեսքով են արված, առավել տարածված եղանակը քերվածքագիրն է (հարթ և գոգավոր քերվածքով)¹, իսկ սեպագիր ոճը գրեթե բացակայում է: Որոշ գերեզմանների շուրջպատերը (ավանդաբար տուֆե, բազալտե սալերով կամ քարերով շարված) մետաղակուռ, կոփածո ցանկապատեր ունեն, զարդարված ձուլածո (այլումիսից) տարատեսակ լուծումներով (խաչեր, հրեշտակներ, ծաղկազամբյուղներ և այլն):

Երկրորդ քաղաքային գերեզմանատունը գտնվում է Ղարիբջանյան խճուղու հարավային հատվածում: Այստեղ հիմնականում 20-21-րդ դարերի թաղումներ են, ավելի բարեկարգ է, կանաչապատ, քան առաջինը: Գերեզմանների ձևավորման հորինվածքային լուծումները հիմնականում սալատապանաքարային, խաչքարային, քանդակային (քարից, մետաղից քանդակված) և խառը լուծումներ ունեն: Դրանք անցուղիների աջ և ձախ կողմերում առանձնացված հորինվածքներ են:

¹ Քերվածքի դեպքում «հանվում» է սալի հարթության հղկված և փայլեցված մակերեսից 1-2մմ շերտ, որը կարող է լինել տառերի լայնության չափով հարթ կամ գոգավոր (վերջինը՝ ջրերի հեռացման նպատակով):

Գյումրու N 3 գերեզմանատունը, որ երեքից ամենանորն է, առանձնանում է նրանով, որ այստեղ են գտնվում Արցախյան հերոսամարտի ժամանակ զոհված գյումրեցի ազատամարտիկների եղբայրական գերեզմանները՝ բարեկարգ ձևուղու աջ և ձախ կողմերում համախմբված նույնատիպ տապանաքարերով և պատկերաքանդակ ուղղանկյուն սալերով համադրված հորինվածքներով:

Ի դեպ, Գյումրու երկրորդ գերեզմանատանն է գտնվում Սպիտակի ահեղ երկրաշարժի զոհերի գերեզման-ձեմուղին:

Գյումրու երեք գերեզմաններին բնորոշ է քարագործ-վարպետ, ճարտարապետ, քանդակագործ համագործակցությունը: Այստեղ հեղինակային խմբերով ստեղծագործել են ճարտարապետներ՝ Հակոբ Զիվանյանը, Ռուդիկ Գյոզայանը, Սուրեն Կուրազյանը, Ռաֆայել Եղոյանը, Աշոտ Միրզոյանը, քանդակագործներ՝ Զավեն Կոչտոյանը, Արտուշ Պապոյանը, քարագործ-վարպետներ՝ Մկրտիչ Մխիթարյանը, Հարություն Խաչատրյանը (Բիձա), Շեկ Վալոդը, Նիկոլ Բաղդասարյանը, Մնացական Խաչատրյանը, վարպետներ Արմոն, Գրիշը, Սիմոնը և այլք:

Ընդ որում՝ հետաքրքրական է, որ հին և հմուտ վարպետները քարը նախ հարթեցրել են, իրենց ենթադրյալ չափերին համապատասխան, ապա նախընտրած հարթությունների վրա, տեղում գծագրել և ապա տաշել են թե՛ զարդերը, թե՛ տառերը և թե՛ պատկերները (օգտագործել են քանոն (մետաղական), կարկին (մետաղական), քարտաշի գործիքներ (ի դեպ, այսպես է աշխատել նաև ճարտարապետ Հակոբ Զիվանյանը): 20-րդ դարում սկսել է տարածում գտնել շաբլոն-տրաֆարետների եղանակը (երբ հորինվածքը նախապես գծվում է թղթի վրա, ապա անցկացվում քարին և հետո տաշվում): Մեր օրերում գրեթե վերացել է առաջին մոտեցումը (Գյումրիում դեռ այսպես է աշխատում վարպետ Բիձան) և ավելի տարածում են գտնում մեքենայական տաշվածքն ու փորագրությունը, ինչը հատկապես խաչքարային արվեստը միօրինականացնելու միտում ունի:

Գյումրու գերեզմանատներում (հատկապես N 2) հանդիպող ոչ շատ քանդակային (դիմաքանդակ) լուծումների մեջ առանձնանում են Զավեն Կոչտոյանի պլաստիկ նուրբ լուծումներով քանդակները, որոնք տաշված են պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Խաչքարային արվեստ-

տում առանձնանում են Հակոբ Ջիվանյանի խաչքարերը, որոնք նոր խոսք են ավանդական խաչքարագործության համատեքստում: Դրանք ծավալային են, տաշված չորս կողմից, լույս ու ստվերի ակտիվ ներգործության շնորհիվ խաչքարներն ունեն կլոր քանդակին բնորոշ հորինվածքներ:

Հարկ է նշել, որ Գյումրիում, բացի այս հիմնական երեք գերեզմանատներից, պահպանվել է նաև Երկրորդ աշխարհամարտի ընթացքում զոհված գերմանացի զերինների և ռուս-թուրքական պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշ-համալիրը՝ «Պատվո բլուրը», որտեղ էլ գերեզմանները համեստ տապանաքարերով են և ժամանակակից հուշապատով:

Համեմատելով Գյումրու երեք գերեզմանատների մեմորիալ հուշարձանները, նաև հանրապետության այլ բնակավայրերի մեմորիալ կառույցները միմյանց՝ հանգում ենք հետևյալ եզրակացության.

- ա) Դրանք ինքնատիպ, Գյումրու և Շիրակի տարածաշրջանի ճարտարապետական և գեղագիտական ավանդույթների շրջանակում արված կոթողներ են:
- բ) Իրենց ինքնատիպ տիպաբանական և գեղագիտական առանձնահատկություններով լրացնում են Հայաստանի մեմորիալ կառույցների հարուստ շղթան՝ դառնալով հայ մշակութային ժառանգության մասեր:
- գ) Մեմորիալ հուշարձանների տիպաբանական շղթայում առկա է քարտաշ վարպետների մոտ ընդունված՝ պապից-թոռանը հմտության և վարպետության, արհեստի գաղտնիքների փոխանցման ավանդույթը:
- դ) Գյումրու գերեզմանատների հուշարձանները պահպանման և խնամքի կարիք ունեն:

Գյումրու մեմորիալ կառույցների հետագա ուսումնասիրությունները կնպաստեն, որ առավել գիտական և բազմակողմանի վերլուծություններ կատարվեն՝ ի շահ հայ ընդհանուր մշակութային արժեքների բացահայտմանն ու պահպանմանը:

Ani HAYKAZUN GRIGORYAN (Armenia)

National Museum-Institute of Architecture (Yerevan)

E-mail: ashothaykazun@gmail.com

TYPOLOGICAL AND ARTISTIC FEATURES OF THE MONUMENTS IN GYUMRI'S CEMETERIES

The article presents the analyses of the artistic and typological features of three cemeteries (namely tombs, gravestone, sepulchres, memorial structures) of Gyumri – two of them situated in the southern part of the city, and the third - the new one situated on the northern section of the highway taking to Vanadzor. Comparisons have been made with the memorial monuments of other cemeteries in Armenia. In the result of studies, we have come to a conclusion that, due to their unique typological and artistic peculiarities, Gyumri's memorial monuments come to supplement the rich variety of the memorial structures of Armenia thus becoming important parts of the Armenian cultural heritage.

Further studies of Gyumri's memorial monuments will contribute to making deeper scientific and more comprehensive analyses in the interest of identification and preservation of the common Armenian cultural values.

Աշոտ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հայաստան)

Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ (Երևան)

E-mail: ashothaykazun@gmail.com

**ԽԱՉԱՏԱԿԻ ԱՍՏԻՃԱՆԱԶԵՎ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿԻՐ-ԵՐԿԻՆՔ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հայ ժողովրդի կողմից սիրված և լայն զարգացում գտած հուշադրական կոթողների (արտաշեսյան սահմանաքարեր, քառանիստ և կլոր սյունաձև և այլն) շարքում առանձնանում են խաչքարերը: 301թ. քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունելուց հետո խաչը իր ամենատարբեր դրսևորումներով դառնում է քրիստոնեության խորհրդանշանը: Այն սկսվում է պատկերվել պաշտամունքային կառույցների, հուշադրական կոթողների, կիրառական արվեստի գործերի վրա:

Ըստ Վդ. պատմիչ Ազաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորչի ջանադրությամբ, պաշտամունքային նպատակով փայտե, մետաղե և ապա քարակերտ «թևավոր» խաչեր՝ տերունական խաչի սուրբ նշաններ են կանգնեցվում Վաղարշապատում նահատակված արբերի վկայարանների, ավերված մեհյանների տեղերում, գյուղերում, փողոցներում, ճանապարհների կեռմաններում և հրապարակներում՝ որպես պահապան և ապավեն¹:

Նոր կրոնի տարածման գործընթացում, քրիստոնեական հավատի հիմնարար գաղափարների ակտիվ քարոզչությանը զուգահեռ, կարևորագույն տեղ էր հատկացվում արբագան (ծիսապաշտամունքային) տարածքի ստեղծմանն ու կազմակերպմանը՝ ի դեմս քրիստոնեական տաճարի ու բացօթյա կոթողի²: Բացօթյա կոթողի գործառույթը, անշուշտ, կրելու էին նախ՝ IV-VII դդ. քառակող, բազմակող և կլոր սյունաձև կոթողները՝ դրված

¹ Մաղումյան Ս., Գուգարքի մեմորիալ կոթողները, Եր., 1980, 80 նկ., էջ 3:

² Պետրոսյան Հ., Խաչքար, Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 10:

աստիճանաձև խարիսխների վրա, և ապա VIIդ. կեսերից լայն տարածում գտած խաչքարերը:

Խաչքար-կոթողը մի կողմից՝ հայտարարում և հաստատում էր նոր կրոնի (քրիստոնեության) հաղթանակը հին (հեթանոսական) կրոնի նկատմամբ, մյուս կողմից՝ սրբագործում էր այն տարածքը, որտեղ պիտի կառուցվեր նոր հավատքի տաճարը, և որտեղ պիտի ապրեին նոր հավատքը դավանողները:

Հարկ է նշել, որ մինչ քրիստոնեությունն էլ Հայկական լեռնաշխարհում արդեն կային սրբազան տարածքի գաղափարները, ինչպես նաև տաճար և կոթող հակադրությունները¹:

Մինչ քրիստոնեական շրջանն էլ Հայկական լեռնաշխարհի մեր նախապապերի աշխարհընկալման, փիլիսոփայական պատկերացումների շրջանակներում արդեն հստակ տարբերակվում էին երկիր-երկինք, երկնքին մոտ, դեպի երկնային անսահմանը ձգտող սար-գագաթների (Արարատներ, Արագած, Նեմրոթ, Բյուրակն լեռներ և այլն), աղբյուրների, գետերի, լճերի (ծով)՝ որպես սրբազան տարածքների մասին հստակ դիրքորոշումներ և համոզմունք, որի արդյունքում այդ վայրերում (սարի գագաթներին, բլուրների բարձրադիր մասերում, քարաժայռերի վրա, գետի ակունքներում, լճերի հարևանությամբ) պիտի կառուցվեին զոհասեղաններ, տաճարներ և այլ տիպի պաշտամունքային կառույցներ:

Մեզ հետաքրքրողը այս դեպքում խաչատակի աստիճանաձև հորինվածքն է: Խաչքարի վրա այսպիսի պատկերներ են հայտնվել VII դարից սկսած և հետագայում շարունակվելով՝ պարբերաբար կիրառվել, վերածվել են զարդարիկ տարրերի (հիմնականում շրջանակաձև «Կյանքի ծաղիկների») և աստիճանաբար կորցրել իրենց նախնական նշանակությունն ու պատկերը: Աստիճանաձև խաչատակի հորինվածքների ենք հանդիպում Դսեղի կոթողի, VIIդ. աստիճանային պատվանդանի (Յուզդան), թևավոր խաչի (XIIIդ.) աստիճանաձև պատվանդանի, Ախթալայի Մարիամ Կյուրիկյանի խաչքարի (1188թ.), եռաստիճան խաչատակի տակդիրի, Մանահինի Մարգսի խաչքարի (1215թ.) երկաստիճան խաչատակի տակդիրի, Մանահինի Հովհաննես քահանայի խաչքարի (1227թ.), ուղղ-

¹ Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 10:

անկյունից բլրատիպի (եռանկյունաձև) անցումով զարդարիկ խաչատակի տակդիրի, Հաղբատի գրատան միջանցիկ (XII-XIIIդդ.) խաչքարի խաչատակի եռաստիճան տակդիրի, Հաղբատի մեծ գավթի խաչքարի (XIIIդ.) քառաստիճան գնդիկավոր խաչատակի տակդիրի, Քոբերի Տերունական խաչքարի (Այգեհատի ձորում), 1291թ., խաչատակի քառանկյունաձև ճակտոնով տակդիրի, Արդվիի գերեզմանատան խաչքարերից մեկի (1581թ.) խաչատակի տաճարատիպ տակդիրի և տասնյակ այլ (ի դեպ, Հայաստանի գրեթե բոլոր շրջանների, ինչպես նաև պաշտամունքային կառույցների պատերի մեջ ագուցված) խաչքարերի վրա: Այսչափ հաճախ կրկնվող մեկ, երկու, երեք, չորս, հինգ, յոթ, ինը և այլ քանակի աստիճաններով հորինվածքները, ինչպես նաև քառանկյուն, տաճարատիպ, հետագայում գնդիկավոր, ապա զարդարիկ շրջանակաձև (ներգծված քառանկյան մեջ), բուսական (կենսաց ծառի խորհրդանշանային իմաստով) պատկերների կրկնությունը խաչի (կենտրոնական, առանցքային, շեշտադիր) հորինվածքի ներքնամասում, պատահական չէին կարող լինել:

Եթե խաչ-խաչքարերը տեղադրվում էին ի նշան հին պաշտամունքի վերացման և նոր քրիստոնեության հաղթանակի, և եթե խաչանշանը արդեն ընկալվում էր որպես քրիստոնեության խորհրդանշան, ապա խաչատակի տակդիրն էլ համապատասխանաբար պիտի խորհրդանշեր այն հին հավատքը, դրա խորհրդանիշը, որին որ հաղթել էր քրիստոնեությունը:

Ս. Սաղումյանը կարծում է, թե խաչատակի աստիճանաձև հորինվածքները Գողգոթան են խորհրդանշում, Գողգոթայի բլուրը, որտեղ խաչվեց Քրիստոսը: Նկատենք, որ Քրիստոսին խաչեցին (երկնային ամենահզոր, պայծառ, լուսատու աստղի, Արեգակի խորհրդանշան՝ խաչով), և խաչը տեղադրված էր Գողգոթայի բլրի գագաթին (դեպի վեր՝ երկնային սահմանին մոտ):

Ըստ Հ. Պետրոսյանի սրբազան կառույցի երևան գալու առաջին ընթացակերպը (սցենարը) կապվում է հնի՝ հեթանոսականի կործանման և նրա տեղում նոր տիեզերակարգի ստեղծման հետ: Ըստ էության, սա նաև ծրագրային մի ցուցում էր, որին հետևելով՝ հետագայում Տրդատն ու Գրի-

գորը կործանում էին հեթանոսական մեհյանները և նրանց տեղը խաչեր կանգնեցնում¹:

Չմոռանանք, որ հեթանոսական մեհյանները՝ որպես հորինվածքներ, նախատիպեր չէին, դրանք արդեն կառուցված էին աստիճանաձև հզոր խարիսխների վրա (օրինակ, Մուծածիբի տաճարը) և իրենց հորինվածքային ձևերով փորձում էին վերարտադրել իրենցից ավելի վաղ հորինվածքները՝ բլուր տաճարները, որոնք էլ իրենց մեջ խտացրել էին մեկ այլ նախատիպի կերպարային առանձնահատկությունները (սար, գագաթ, երկիր-երկինք կապ և այլն):

Այս նախատիպի կայացումը մինչև նրա պատկերային կամ առարկայական դրսևորումները, հստակ մեկնաբանված են Անտուան Մեյեի կողմից. հայերենը զուգահեռ երկու ձև է ստեղծել «երկնքի» և «երկրի» համար: Այս զուգահեռությունը համապատասխանում է այն բանին, ինչը մեզ հայտնի է հին հնդեվրոպական լեզուներում այդ երկու հասկացությունների տարածման մասին: Վեդայական երգերում երկինքը «հայրն» է, երկիրը՝ «մայրը»...²: Հեջտ է նկատել, որ այս նախնական պատկերացումները երկնքի ու երկրի, արականի ու իգականի մասին դարերի ընթացքում հասել են քրիստոնեական շրջան, Հայր Աստվածը երկնքում է, որդի Քրիստոսը համբարձվեց երկինք և նստեց հոր (Աստծո) գահի աջ կողմում, Մարիամ Աստվածածինը երկրի վրա ծնեց Քրիստոսին, Քրիստոսը հայտարարեց, որ այսուհետև ինքն է ճշմարիտ արեգակը և այլն: Արևի հնագույն խորհրդանշանը, աշխարհի չորս կողմերը, լույսը (հավատ և ճշմարիտ խոսք) տարածող խաչանշան-խաչապատկերը դարձավ քրիստոնեության խորհրդանշան և իբրև հաղթանակի նշան՝ դրվեց բլուր տաճար³ խորհրդանշանային պատկերի աստիճանավոր բլրի (գիկկուրատ) վրա՝ ավերելով հեթանոսական հավատքի տաճարը և այլն:

¹ Հ. Պետրոսյան, նույն տեղը, էջ 10:

² Անտուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևանի պետական համալսարանի հրատարակություն, Եր., 1978, 822 էջ, էջ 229:

³ Գրիգորյան, Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական նախատիպերի զուգահեռների համեմատական վերլուծությունը, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2012, 228 էջ, էջ 178-179:

Ընդ որում, այս անցումը առավել հստակ տեսանելի է պաշտամունքային կառույցների ճարտարապետության մեջ: Եթե նախնական պաշտամունքային ծես արարողությունը կարող էր կատարվել ուղղակի բնության մեջ (սար, գագաթ, բարձունք, քարածայր, ջուր, ծառ և այլն), դարերի ընթացքում անհրաժեշտ է դառնում արդեն «սրբացված», առանձնացված, բնական տարածքներում ձեռակերտ գոհասեղաններ կառուցել, բնական բլուրների գագաթներին պարզունակ (կլոր կամ քառանկյուն հատակագծային լուծումներով) պաշտամունքային կառույցներ կանգնեցնել՝ «ամրացնելով» բլուրի լանջերը շրջանակաձև դեպի բլուրի գագաթը փոքրացող պարիսպներով¹, հետագայում՝ տաճարները կառուցել բարձր աստիճանաձև խարիսխների վրա (օրինակ՝ Տեկորի տաճարը), իսկ արդեն քրիստոնեության տարածման վաղ շրջանում (նույն Տեկորի տաճարի օրինակով)² միանավ կամ եռանավ պաշտամունքային սրահները «ծածկել» գմբեթներով: Այսինքն՝ նախնական հավատքի ցուցիչները դեպի երկինք էին ձգտում, հետո դրանց ձեռակերտ հորինվածքները աստիճանաբար «իջան» դեպի երկիր (Աստծո երկրային տուն), սակայն խարիսխների և գմբեթների (խաչի ավարտով) հորինվածքներում իրենց մեջ պահպանեցին երկրից դեպի երկինք և հակառակը՝ փոխկապակցվածության բնափիլիսոփայական և խորհրդաբանական ընկալումների նախատիպային ամենատարբեր դրսևորումները:

Ուստի խաչքարային արվեստի՝ որպես հայ մշակութային ուրույն տեսակի հորինվածքային ձևերի, տիպերի և նախատիպերի բազմակողմանի ուսումնասիրումն ու դրանց խորհրդաբանական ստուգաբանու-

¹ Տե՛ս Թորանանյան Թ., *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 291:*

² Ալենհայտ Է, *որ Տեկորի տաճարի ինը աստիճանով պատվանդանի վրա հենված տաճարի հորինվածքային նախատիպը պետք է փնտրել բլուր-տաճարի կերպարում (բլուրի՝ զիկկուրատի) գագաթին շինված փոքրիկ պաշտամունքային կառույցի նմանությամբ: Տեկորի տաճարի հորինվածքում նկատելի է նաև, թե ինչպես սրահավոր (բազիլիկ) տիպը վերափոխվում է գմբեթավորի, այս դեպքում կարծես թմրուկ-վեղարը նույնպես կրկնում է բլուր-տաճարի նախատիպը, և ինչպես խաչքարի դեպքում այստեղ «Աստծո երկրային տունը» ևս ավարտվում է խաչանշանով:*

թյունը, կօզնեն խորացնելու և լրացնելու հայ ինքնության ապացույցների անընդհատելի գիտատեսական հիմնավորումների տեսական շղթան:

Ashot HAYKAZUN GRIGORYAN (Armenia)

National Museum-Institute of Architecture (Yerevan)

E-mail: ashothaykazun@gmail.com

SYMBOLIC ETYMOLOGY OF THE STEPPED BASE OF THE KHACHKARSIN THE CONTEXT OF THE EARTH-SKY NATURAL-PHILOSOPHIC PERCEPTION

The khachkars are particularly distinguished among the memorial monuments loved and widely developed by the Armenian people (Artashesid border stones, square, round-column, etc). Since 301, after adopting the Christianity as a state religion in Armenia, the cross in various expressions has become the symbol of Christianity appearing on different religious buildings, memorial monuments, and creations of applied art.

In the process of spreading the new religion, along with active propaganda of the fundamental ideas of the Christian faith, an important place was allocated to the creation and organization of the sacred (worship) space, namely, the establishment of the Christian temple and the open-air monument¹. First of all, the function of such open-air monuments would bear the quadrihedral, multihedral, and round-column monuments of IV-VII centuries set on the stepped base and then the khachkars widely used since the middle VII century.

Even before the Christian period, in the framework of the philosophical ideas of the world perception, the positions and credos of our ancestors related to the earth-sky, closeness to heaven, mountain-tops stretching towards the deep of space (the Ararat, as the mountain of Noah's ark and the salvation of mankind), Aragats, Nemrut, Byurakn mountains, etc), fountains, rivers, and

¹ H. Petrossyan. *Khachkar, the origin, function, iconography, semasiology*. Yerevan, 2008, 480 pp., p. 10:

lakes (sea) were clearly differentiated as sacred areas. In the result, those places - the top of the mountains, the upland parts of the hills, the rocks, the riverheads, and lakes were chosen for building different types of religious buildings including altars and temples.

This tradition actually continues in Christianity. The khachkars as symbols of faith, their multi-style ornaments and icons bear the cultural influence of the previous times. Apart from it, in the decoration of the monuments, the secular and religious themes¹ arising from the Armenian traditional interests dominate. It means that the cross, square, circle, triangle, and other geometric images, as well as plant and animal compositions depicted on the khachkars, would have had their prototypes and prior meanings before their reconsidered application in the Christian period.

The ancient rituals of worship were performed simply in the natural environment (mountain, top, hill, rock, water, tree, etc.). Upon centuries, the people needed to build hand-made altars in the already sanctified natural places and then to erect simple religious structures on the tops of the hills (circular or square) at the same time “strengthening” the hill slopes with circular walls² narrowing to the top. At a later stage, the temples were built on the high stepped basement (for example Tekor Temple), while in the early periods of spreading Christianity (again on the example of Tekor Temple)³, the single-aisle or three-aisled halls were “covered” with domes. Thus, if the indicators of the previous faith used to stretch towards the sky, afterwards their hand-made compositions gradually descended to the earth (God’s earthly home). However, in the compositions of basements and domes ending with crosses they

¹ S. Ssghumyan, *The mentioned work*, p. 4

² See T. Toramanyan, *Materials on the history of the Armenian Architecture*, Yerevan, YSU Publishing House., 2013, 864 pp., p. 291

³ *It is evident that the prototype of the Tekor Temple with its nine-step basement can be observed in the appearance of the hill-temple similar to the small religious structure built on the top of the hill. In the composition of the Tekor Temple, one can notice the re-formation of the basilica into a dome-type structure and in this case, it seems that the drum-dome repeats the prototype of the hill-temple and, like the khachkar, here as well, the God’s earthly home is ended with a sign of cross.*

preserved the diverse prototypical expressions of the natural-philosophic and symbolic perceptions for the earth-sky and vice versa relationship.

Therefore, the comprehensive study of the forms, types, and prototypes of the khachkar art as a unique Armenian cultural kind and their symbolic etymology will help to deepen and complement the theoretical chain of the uninterrupted scientific substantiations of the Armenian identity evidences.

Մուրադ ՀԱՍՐԱԹՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (Երևան)

E-mail: muradhasratyan@rambler.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ XVII –XVIII ԴԴ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի XVII–XVIIIդդ. ճարտարապետությունը օժտված է ինքնատիպ ու արժեքավոր առանձնահատկություններով, որոնց շնորհիվ կարևոր տեղ է գրավում հայկական շինարարական արվեստի բազմադարյան պատմության մեջ: Այն անկումային չէր, ինչպես անբավարար ուսումնասիրության պատճառով ժամանակին նշվում էր մի շարք ընդհանուր բնույթի ուսումնասիրություններում, այլ ունի անվիճելի ձեռքբերումներ:

Ուշ միջնադարում ձևավորվեցին տարածաշրջանային ստեղծագործական դպրոցներ Սյունիքում, Արցախում, Վասպուրականում, Նախիջևանում: Նրանց ոճական հատկանիշները, առաջին հերթին, դրսևորվեցին եկեղեցական ճարտարապետության մեջ, որովհետև մյուս ժանրերի կառուցվածքները (քաղաքացիական, ամրաշինական, ինժեներական) ունեն ողջ Հայաստանի համար ընդհանրական բնորոշ գծեր:

Ստեղծագործաբար վերամշակվեցին պաշտամունքային և աշխարհիկ կառույցների հայտնի հորինվածքները և ստեղծվեցին մի շարք նորերը:

XVII–XVIII դդ. եռանավ բազիլիկները էական տարբերություններ ունեն վաղ միջնադարի նույնատիպ կառուցվածքներից. ավելի քիչ են ձգված և, հիմնականը, երեք նավերն էլ ներառված են ընդհանուր երկթեք ծածկի տակ: Իսկ երկարության կրճատման միտումը բերեց իր նախատիպը չունեցող, միայն մեկ զույգ մույթով եռանավ բազիլիկների ստեղծմանը, որը նորույթ էր հայ ճարտարապետության մեջ:

Ի տարբերություն միջնադարի՝ XVII–XVIII դդ. եկեղեցիները և նրանց կից գավիթներն ու սրահները կառուցվում էին մեկ շինարարական փուլով, որն իր կնիքն էր դնում հուշարձանների այդ ավանդական տիպի ճարտարապետության վրա: Աչքի է ընկնում նրանց բազմազանությունը. գավիթները բաժանվում են մի շարք տիպաբանական խմբերի, իրենց ենթատիպերով, որոնցից նորաստեղծ և այդ դարերի արգասիք են սրահ-զանգակատները:

XVII դ. ստեղծվեց աշտարակաձև զանգակատների նոր՝ երկհարկ (եռայարուս) հորինվածքը, որի տարածումը պայմանավորված էր Էջմիածնի Մայր տաճարի նորակառույց զանգակատան նպատակադրված կրկնության ձգտումով:

Հայաստանի ուշ միջնադարի վանքերի ու անապատների համալիրների քաղաքաշինական սկզբունքները վերլուծելիս բացահայտվում են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետական մտածողությանը: Առաջինը համալիրում մեկ դոմինանտի՝ միակ եկեղեցու առկայությունն էր: Երկրորդը կառուցապատման կանոնավոր ուղղանկյուն լուծումն էր: Երրորդը համալիրների աշխարհիկ շինությունների պարագծային կառուցումն էր:

Աշխարհիկ ճարտարապետության ինքնատիպ ու նորույթ հանդիսացող կառուցվածքներից են Արցախի ու Մյունիքի մեկիքական ապարանքները, որոնք ներդաշնակ զուգակցում են պալատական, ժողովրդական բնակելի տան և ամրոցի հորինվածքները:

Հայկական կամրջաշինության՝ միջնադարում մշակած կոնստրուկտիվ և ճարտարապետական սկզբունքները հաջողությամբ կիրառվեցին նաև XVII–XVIII դդ. և Հայաստանի այդ ժամանակաշրջանի բազմա-

թռիչք կամուրջները դարձան ողջ Արևելքի ինժեներական մտքի նվաճումներից:

Եկեղեցական շենքերի ճակատների հարդարանքի համակարգի կազմակերպումը (հատկապես Նախիջևանում և Ատրպատականում) ստացավ ճարտարապետությունից համեմատաբար անկախ, ինքնուրույն ստեղծագործական խնդրի նշանակություն:

Հայաստանի ուշ միջնադարի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը բարենպաստ չեղավ ճարտարապետական-շինարարական կյանքի համար, այն ընթացավ պատերազմների, թշնամիների ասպատակությունների ու ավերածությունների պայմաններում: Մակայն այս դժվարին ժամանակաշրջանում հայ ճարտարապետությունը կարողացավ ոչ միայն պահպանել, այլև զարգացնել իր ավանդներն ու նվաճումները՝ դառնալով կապող օղակ իր պատմության միջնադարյան և ժամանակակից փուլերի միջև:

Mourat HASRATYAN (Armenia)

Institute of Art NAS RA (Yerevan)

E-mail: muradhasratyan@rambler.ru

ACHIEVEMENTS AND PROPERTIES OF ARMENIAN ARCHITECTURE FROM XVII-XVIII CC.

Because of distinctive and valuable peculiarities, Armenian architecture from XVII-XVIII cc. possessed an important place in the history of architecture. It is fact that the regional schools in architecture of Syunik, Artsakh, Vaspurakan and Nakhichevan reactivated just in this period. Creatively redeveloped some renown ecclesiastic and secular buildings and formed several new building types. Technologically it was used to hold the construction of churches, gaviths and halls within one phase as one ensemble. Just in the focused centuries created tower-like multistory compositions combining belfries and other functions. The monastic complexes or the convents were merely of rectangular layout. Their harmony conducted the main church as hierarchy and the secular buildings as background on the perimeter. Original

were the new princely mansions built in Syunik and Artsakh regions. The Armenian multi-bay bridges were really “flight of thoughts” for Eastern architecture as general.

However despite of political and social critical conditions, as well as existing invasions and wars throughout the country, late medieval Armenian architecture registered outstanding achievements which bridged the medieval tradition into the modern era.

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ (Հայաստան)

Երևանի գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

E-mail: araxmargaryan@gmail.com

1960 – ԱԿԱՆՆԵՐԻ ՇԻՐԱԿԻ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

1960-ական թթ. Խորհրդային Հայաստանի կերպարվեստում սկսված վերափոխման, դրան «մարդկային նկարագիր» հաղորդելու զգուշավոր փորձերի ազդակները ընդգրկեցին նաև Շիրակը, մասնավորապես՝ նրա կենտրոն Լենինականը: Այստեղ ևս, ինչպես ամենուր, կերպարվեստի տարբեր տեսակներում ու ժանրերում ստեղծված հաստոցային գործերում գերիշխող մնում էր սոցիալիստական ռեալիզմը՝ նրան բնորոշ գունապլաստիկ մտածողությամբ, իրապաշտական-ֆիգուրատիվ կերպարանավորմամբ, նմանակող-ընդօրինակող ռեալիստական մեթոդով:

Շիրակում ծնված տաղանդավոր գեղանկարիչների բոլոր՝ Հ. Անանիյան, Ռ. Աթոյան, Շ. Սարգսյան, Էդ. Արծրունյան, Ա. Մելքոնյան, Խ. Վարդպարոնյան, Ս. Միրզոյան, Գ. Կարապետյան, Մ. Թոքմաջյան, ներկայացնում էր խորհրդահայ կերպարվեստի վառ գունապնակը: Այս սերնդի նկարիչների գործերում կարևորվում են ստեղծագործող անհատի գեղարվեստական ինքնատիպ մտածողությունը, աշխատանքներում արտացոլվող ենթակայական ընկալումներն ու մտեսցումները, ոճական ու-

րույն ձեռագիրը: Կերպարվեստի տարբեր տեսակներում ու ժանրերում ստեղծված հաստոցային գործերում՝ նկարներում ու քանդակներում, մեծ ուշադրություն է դարձվում մարդու ներաշխարհին, նրա հոգեկան բարդ ապրումներին, հուզական տարբեր վիճակներին ու տրամադրություններին, կենդանի ապրումներին: Ծագումով գյումրեցի նկարիչներ Հ. Անանիկյանի, Ռ. Աթոյանի ստեղծագործության առանցքում Գյումրին է, նրա հին ու նոր կերպարը, մարդիկ ու բարքերը («Պուլոզ Մուկուչ», «Թոքմաջենց Սերոբը», «Ֆռնչի Միմոնը»):

Նրանց կողքին երևան են գալիս նկարիչներ, որոնց աշխատանքներում կարևորություն է տրվում նախ և առաջ նկարչի ինքնատիպ մտածողությանը, սուբյեկտիվ ընկալումներին, ոճական ուրույն ձեռագրերին, արտահայտչական զինանոցին. 1960-ականներին իրենց ստեղծագործական ուղին են սկսում Հայաստանի ժամանակակից արվեստի նորարար ու վառ ներկայացուցիչները՝ ծնունդով շիրակցի գեղանկարիչներ Մինաս Ավետիսյանն ու Աշոտ Հովհաննիսյանը, որոնք կանգնած էին արվեստի հիմքերի վերափոխման ճանապարհին: Այն, ինչը հայտնի է «Շիրակի գունազգացողություն» անվամբ, առավել բնութագրական է Մինաս Ավետիսյանի ու Աշոտ Հովհաննիսյանի ստեղծագործություններին, որոնցում գույնը ստանում է դրամատիկ հնչեղ երանգավորում, իսկ կերպարները՝ խորհրդանշական արժեք: Պատահական չէ, որ ժամանակակից արվեստի ակունքներում կանգնած՝ «5-ի ցուցահանդեսի» 5 ներկայացուցիչներից 2-ը՝ Ալեքսանդր Գրիգորյանը և Մինաս Ավետիսյանը ծնունդով շիրակցի էին:

Շիրակցի նկարիչների կողքին 1960-ականներին Լենինականում ապրել ու ստեղծագործել են սփյուռքից ներգաղթած գեղանկարիչներ Հակոբ Հակոբյանը, Պետրոս Կոնտուրաջյանը: Հ. Հակոբյանի լավագույն բնանկարներում՝ «Փողոց Լենինականում», «Լենինական. Կիրովի փողոց», «Բակ», «Ուշ աշուն», «Վաղ գարուն», նկարիչը բացահայտել է քաղաքի ու նրա գողտրիկ փողոցների մետաֆիզիկական լռությունն ու մոնումենտալ գեղեցկությունը:

Araks MARGARYAN (Armenia)

Yerevan State Academy of Fine Arts Gyumri Branch

E-mail: araxmargaryan@gmail.com

SHIRAK SCHOOLS OF PAINTING IN 1960-s

In 1960s the careful efforts in the painting of Soviet Armenia to change it, to give it “human description” also concerned Shirak, in particular its centre Leninakan. Here, as anywhere, the socialistic realism with its characteristic colour-plastic mentality, realistic-figurative picturing and imitating-simulating realistic method dominated in the machine work of different types and genres of fine arts. The constellation of talented painters, born in Shirak – H. Ananikyan, R. Atoyan, Sh. Sargsyan, Ed. Artsrunyan, A. Melkonyan, Kh. Vardparonyan, S. Mirzoyan, G. Karapetyan, M. Tokmajyan- represented the rich palette of Soviet Armenian painters. The most important and worthy thing in the painters` works of that generation is the artistic original mind of a creative personality, subjective perception and approach in his work, stylistic specific handwriting. In the machine work of different types and genres of fine arts, in pictures and sculptures, a great attention is paid to the inner world of a man, his psychical complicated feelings, various emotional conditions and mood, alive feelings. The core of the works of Gyumri-born painters H. Ananikyan, R. Atoyan is Gyumri, its old and new image, people and customs /«PolozMukuch», «TokmajSerob», «French Simon»/.

Beside them there are the painters in works of whose a great importance is attached to a painter’s original mind, subjective perception, stylistic specific handwriting, expressive arsenal. In 1960s Armenian modern art innovative and outstanding representatives Shirak-born painters Minas Avetisyan and Ashot Hovhannisyans started their way of changing the art basic principals. The notion «Shirak colour sense» is more characteristic to the work of Minas Avetisyan and Ashot Hovhannisyans, in which the colour gets a dramatic sounding shade, and the personages get a symbolic significance. It is no coincidence that 2 out of 5 of representatives «Exhibition of the 5», modern

art beginners, are Aleksandr Grigoryan and Minas Avetisyan who were born in Shirak.

Painters immigrated from Diaspora Hakob Hakobyan, Petros Konturjyan lived and created in 1960s in Leninakan. Creating the best landscapes of H. Hakobyan, i.e. «A Street in Leninakan», «Leninakan: Kirov street», «Yard», «Late Autumn», «Early spring» the author reveals the metaphysical silence and monumental beauty of the city and its lovely streets.

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ (Հայաստան)

Երևանի գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

E-mail: araxmargaryan@gmail.com

ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հետերկրաշարժյան Գյումրու կարևորագույն մշակութային խնդիրներից է գեղանկարիչների մոնումենտալ ստեղծագործական ժառանգության պահպանումը: Մինասի ստեղծած որմնանկարները՝ «Թորոս Ռոսլինի ծնունդը», «Խաչքարի մոտ», «Գորգ են գործում» (Անալիտիկ սարքերի, Ստրոմաշինա, Գավանումետր գործարաններում), այսօր գտնվում են աղետալի վիճակում և պահպանման ու վերականգնման կարիք ունեն: Նմանատիպ վիճակում են նաև Ռ. Աթոյանի, Հ. Հակոբյանի, Հ. Մինասյանի ստեղծած որմնանկարները քաղաքի տարբեր հատվածներում: Խ. Վարդպարոնյանի «Վերածնունդ» որմնանկարը ոչնչացված է Գուլպայի ֆաբրիկայի տարածքում, որտեղ այժմ գտնվում է «Միլենիում» ռեստորանը: Ֆ. Մանուկյանի ֆլորենտական տեխնիկայով արված «Սասունցիների պար» խճանկարը նախկին Երկաթուղայինների պալատում գտնվում է խարխուլ ու կիսավեր կառույցում ու ենթակա է ոչնչացման....

Քաղաքում արձաններ կանգնեցնելը տարերային բնույթ է ստացել երկրաշարժից հետո, երբ նորօրյա Գյումրիում տեղադրվել են բազում հուշարձաններ: Որպես կանոն՝ դա կատարվել է՝ առանց հաշվի առնելու

տեղանքի կապը հուշարձանների հետ, տվյալ քանդակի կանգնեցման նպատակահարմարությունը, թե ինչ ուղերձ ունի: Մյուս կողմից՝ անմխիթար է որոշ հուշարձանների վիճակը քաղաքում, ինչպես, օրինակ, Արա Սարգսյանի ռելիեֆը (նախկին Սևյանի, այժմ՝ Ղանդիլյանի պուրակում): Ոչնչացման եզրին է Աստղի հրապարակում նախկին, բարձրահարկ հյուրանոցի շքամուտքի դիմաց գտնվող ռելիեֆը (Ֆ. Մանուկյան):

Քանդակագործ Զավեն Կոշտոյանի ստեղծագործական ժառանգության ճակատագիրը անորոշ է ու դրամատիկ: Յուրաքանչյուր արվեստասեր քաղաք նրա գործերը կամբողջացնելու մեկ տանիքի տակ, կհիմներ թանգարան: Թիվ 1 երաժշտական դպրոցի բակում գտնվող Ջուրակահարի արձանը մոռացության է մատնված, իսկ Ամենափրկչի դիմաց գտնվող երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը տեղահանվել ու տեղափոխվել է Անի թաղամասում գտնվող եկեղեցու բակ:

Երկրաշարժից հետո՝ 1997թ.-ից, Գյումրիում կազմակերպվում և անցկացվում են Ժամանակակից արվեստի փառատոն-ցուցահանդեսներ, ավելի հայտնի Բիենալե անվամբ: Անցկացված 8 Բիենալեների ընթացքում Գյումրի այցելեցին բազում հայտնի արվեստագետներ աշխարհի տարբեր կողմերից, ներկայացվեցին տասնյակ ինստալյացիաներ, պերֆորմանսներ, վիդեոարտներ և ժամանակակից արվեստը բնութագրող այլ տեխնիկաներ, սակայն Բիենալեի ժառանգությունը մնաց վիզուալ հարթությունում, նյութերի մեծ մասը ոչնչացավ, ցրվեց, չարխիվացվեց¹: Ավելի հեռատեսության և շրջահայացության դեպքում հավաքված նյութի հիման վրա Գյումրին այսօր կունենար Ժամանակակից արվեստի հետաքրքիր հավաքածու:

Այսօր իրավիճակը հետերկրաշարժյան Գյումրիում հիշեցնում է Յուրգեն Հաբերմասի «անցյալի արդիականություն» արտահայտությունը՝ անցյալի ժամանակակից լինելու փաստը²: Մշակութային հարուստ ա-

¹ *Բացառություն են կազմում Բիենալեի կատալոգները, ինչպես նաև՝ ԵՊՄՈ Գյումրու մասնաճյուղում ներկայացված դիպլոմային աշխատանքը /Գ. Գուսարենկո «Գյումրու Բիենալեն»*

² *Хабермас Ю. Модерн-незавершенный проект, 1998: Ст' у http://Krotov.info/lib_sec/22_h/1/hab/haber_1.htm.*

վանդությունը ունեցող Գյումրիի հայտնվել է մշակութային երկփեղկման դաշտում: Քաղաքն ունի ստեղծագործական ներուժ, չունի այն զարգացնելու հնարավորություն, ունի նկարչական դպրոց, չունի նկարչական դպրոցի շենք: Ունենալով բազմաշնորհ նկարիչներ՝ չունի պատկերասրահ, Ժամանակակից արվեստի թանգարան:

Araks MARGARYAN (Armenia)

Yerevan State Academy of Fine Arts Gyumri Branch

E-mail:araxmargaryan@gmail.com

POST- EARTHQUAKE CULTURAL PROBLEMS IN GYUMRI

One of the most important cultural problems in Gyumri of post-earthquake period is painters` monumental creative inheritance conservation. Fresco paintings created by Minas, “ToromRoslin`s birthday”, “At Khachkar”, “They are waving carpet” /at factories of Analytic equipment, Strommashina, Galvanometer/, are now in critical condition and require conservation and restoration. R. Atoyan, H. Hakobyan and H. Minasyan`s created fresco paintings at different places in Gyumri are in the same condition. Kh. Vardparonyan`s fresco «Renaissance» was destroyed at the hosiery factory territory, where «Millennium» restaurant is situated now. Mosaic “Sasun people dance”, creative by F. Manukyan`s Florentine technique, is in shabby and tumble-down building of former Railway palace and is liable to destruction...

The condition of the sculptures in Gyumri is also disconsolate. AraSargsyan`s relief sculpture /at former Sevyanpark, now Ghandilyan park/ is in a disconsolatecondition. F. Manukyan`s relief sculpture in front of the former multistoried hotel front door at Astghi square is on the verge of destruction.

Now the situation in Gyumri post-earthquake period reminds Yurgen Habermas` expression «modernity of the past» concerning the fact that the past is modern. Gyumri with rich cultural traditions has turned out to be in cultural duality. The city has creative inner power, but does not have the opportunity to develop it, has a school of painting, but has no building for the school of painting. Having talented painters, it does not have a picture gallery, a modern art museum.

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ (Հայաստան)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (Երևան)

E-mail nahatakyan@gmail.com

**ԵՂԵԳՆԱՄՈՐ (ՉԱՆԳԼԻ) ՏԱՃԱՐԻ ԴԵՐԸ ԶԱՐԳԱՑԱԾ
ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Տվյալ հոդվածում անդրադարձել ենք հայկական ճարտարապետության զարգացած միջնադարի պաշտամունքային կառույցներից մեկի՝ Եղեգնամոր տաճարի ճարտարապետությանը, որը, հենվելով հայկական վաղքրիստոնեական ճարտարապետական ձևերի վրա և իր դարի ոճական նորարարությունների վրա, առաջ է բերել հետաքրքիր դրսևորում, ինչը կարիք ունի առանձնահատուկ հետազոտության:

Տաճարը գտնվում է պատմական Մեծ Հայքի Այրարատ նահանգում՝ Կարսից ոչ հեռու: Նրա անվանումը մեզ հասել է մի քանի տարբերակով՝ Եղեգնամոր (Պ. Մուրադյան), Լենախշորի (Տակայշվիլի) և Չանգլի (Չանկլի, Ն. Սարգսյան): Տաճարը թվագրվում է X-XI դարերով: Տարրությանը այն կարծիքին է, որ Եղեգնամորի տաճարը կարող է հարել X դ. ինչպես Տայքի, այնպես էլ Անի-Շիրակի պաշտամունքային կառույցներին: Ըստ Ե. Տակայիշվիլու՝ Եղեգնամորի տաճարի վրացերեն արձանագրությունները ցույց են տալիս, որ այն եղել է հայ-քաղքեղոնական եկեղեցի:

Եղեգնամոր տաճարը պատկանում է խաչաձև հատակագծով կենտրոնազմբեթ եկեղեցիների տիպին, որտեղ գմբեթային համակարգը լուծված է յուրահատուկ կերպով: Եղեգնամոր տաճարի հատակագծային լուծումների համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ այն սերում է վաղքրիստոնեական հայկական ճարտարապետությունից, որի ներկայացուցիչներն են Կոշի, Մասունիկի, Հնեվանքի և այլ եկեղեցիներ: Տաճարը հատակագծային լուծումներով հարում է ինչպես IX-X դդ. Տայքի և Գուգարքի ճարտարապետական (Խախու, Օպիգա, Միջնաձոր, Շատրերդ, Խոժոռնի վանք և այլն), այնպես էլ Անի-Շիրակի IX-XI դդ. դպրոցներին (Կարմիրվանք, Օղուզլուի եկեղեցի և այլն):

Եղեգնամոր տաճարի ծավալատարածական հորինվածքի վերլուծությունները ցույց են տալիս, որ նրա արտաքին համաչափությունները, երկթեք տանիքների թեքությունները, կոնստրուկտիվ կամարների և թաղերի տիպերը, տրոմպաառագաստային համակցված փոխանցման մեթոդի կիրառությունը համընկնում են Տայք-Գուգարքի և Անի-Շիրակի հայկական միջնադարյան դպրոցների կառույցների ճարտարապետական լուծումներին:

Տաճարի՝ զարդամոտիվներով ամենահագեցած հատվածը գմբեթն է: Թմբուկի հիմնական դիմագիծը կազմում են դեկորատիվ կամարաշարը, եռանկյունի հատակագծով խորշերը, հորիզոնական ճոխ գոտիները, որոնք նման են հատկապես Իշխանի տաճարի թմբուկի հարդարանքային լուծումներին: Ընդհանրապես, իր համաչափությամբ, կատարման տեխնիկայով և զարդամոտիվներով Իշխանի և Եղեգնամորի եկեղեցիների գմբեթները ունեն բավականաչափ նմանություններ:

Եղեգնամոր տաճարի արևելյան ճակատին աչքի է ընկնում պրոֆիլավոր սյունափնջերով դեկորատիվ կամարաշարը, որի ներսում ուղղանկյուն հատակագծով հարթ խորշեր են: Հատկապես վերջին մոտիվը նույնպես Տայք-Գուգարքի ճարտարապետական առանձնահատկություններից է, որը կիրառվել է դպրոցի գրեթե բոլոր նշանավոր պաշտամունքային կառույցներում (Օշկ, Իշխան, Խախու, Չորդվանք, Պարխար, Տբեթ և այլն): Հատկանշական է, որ նմանատիպ խորշեր որոշ տարբերություններով առկա են նաև Անիի Մայր տաճարում, Մարմաշենում և այլն:

Եղեգնամոր տաճարում կիրառվել են երկու տիպի պատուհաններ՝ կամարունքով պատուհաններ և ամբողջությամբ շրջանակի մեջ առնված ուղղանկյուն պատուհան: Վերջինը մեր կողմից պայմանականորեն անվանվել է «փակ» տիպի: Այս տիպը ծագում է Տայքի և Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցից:

Այսպիսով՝ Եղեգնամորի տաճարի ճարտարապետությունը սերում է վաղքրիստոնեական հայկական ճարտարապետությունից և կարևոր օղակ է զարգացած միջնադարի հայկական ճարտարապետության կայացման համար: Լինելով հայ-քաղբեղոնական համայնքի տաճար՝ այն կրել է մեծ ազդեցություն հատկապես Տայք-Գուգարքի հայկական ճար-

տարապետական դպրոցից, ինչը դրսևորվում է տաճարի հասակագծային, ծավալատարածական, կոնստրուկտիվ և դեկորատիվ-հարդարանքային լուծումներում: Բացի այդ, Եղեգնամոր տաճարը, գտնվելով Տայք-Գուգարքի և Անի-Շիրակի հայկական միջնադարյան ճարտարապետական դպրոցների խաչմերուկում, կրում է երկու դպրոցների նվաճումները և ոճական առանձնահատկությունները, այդպիսով, կարևորելով իր դերը հայկական ճարտարապետության մեջ:

Davit NAHATAKYAN (Armenia)

National University of Architecture and Construction of Armenia (Yerevan)

E-mail nahatakyan@gmail.com

THE ROLE OF EGHEGNAMOR (CHANGLI) TEMPLE IN THE ARMENIAN MEDIEVAL RELIGIOUS ARCHITECTURE

The report presents one of the religious buildings of Armenian architecture in Developed Middle ages, which, basing on the achievements of early Christian Armenian architecture and stylistic innovations of the era, demonstrates an interesting solution needed to be studied specially.

The temple is located in Ayrarat historical province, not very far from Kars city. In our days, it is known with different names: Eghegnamor (P. Muradyan), Lenakhorshi (Takayashvili), Changli or Chankli (N. Sargsyan): The temple dates back to the 10th-11th centuries. T. Marutyanyan thinks that the temple of Eghegnamor could be one of the religious buildings of Tayk as well as Ani-Shirak's architectural school. According to E. Takayashvili, the Georgian stone inscriptions on the temple show that it is was a church of Armenian-Chalcedoinas.

The temple of Eghegnamor belongs to the central-domed cross-planned typology of the churches, where the constructive system of the dome has an original solution. The comparative analysis of planar solutions of Eghegnamor temple show that it comes from early Christian Armenian architecture, the part of which are also Kosh, Sasunik, Hnevanq and other churches. The planar solutions of the temple are similar to the religious buildings of Tayk and

Gugark's architectural school in the 9th-10th centuries (Khakhu, Opiza, Mijnadzor, Shatberd, Khojhorni, etc.), as well as to the Ani-Shirak's school in the 9-th-11th centuries (Karmirvank, Oghuzlu churches, etc.).

The analyses of volumetric composition of Eghegnamor temple show that its proportions, gable roofs (two sloping sides), constructive vaults and arches types, pendentives-tromps combined system match with the same structures of the buildings of Tayk-Gugark's and Ani-Shirak's medieval architectural schools.

The most ornamented part of the temple is the dome. The image of the drum is created by the decorative archade, the triangle niches, and horizontal rich belts. The drum of Eghegnamor temple is very similar to the one of Ishkhan temple. In general, these two temples have many similarities in their composition, proportions, construction technique and ornamental solutions.

On the eastern facade of Eghegnamor temple a decorative archade with profiled group-columns is highlighted, inside of which we can see rectangular niches. The last is one of the features of Tayk-Gugark's architectural school which is applied almost on each emblematic religious building of the school (Oshk, Ishkhan, Khakhu, Chordvank, Parkhar, Tbet, etc.). It should be mentioned that the same motive of niches is used on Ani's Cathedral, Marmashen and other churches, however, there are some differences.

Two types of windows are applied on Eghegnamor temple: arched windows and rectangular framed windows, which has been conditionally named "closed" by us. The origin of rectangular framed windows is Tayk-Gugark's architectural school.

Thus, the architecture of Eghegnamor temple comes from early Christian Armenian architecture and is an important link for the development of Armenian Medieval Architecture. Being a temple of Armenian-Chalcedonian community, it was influenced mainly from Armenian Tayk-Gugark's architectural school. This influence is expressed on planar, volumetric, constructive and decorative solutions of the temple. Besides, being on the crossroad of Tayk-Gugark's and Ani-Shirak's architectural schools, it presents the stylistic features and achievements of both schools, highlighting its role in Armenian architecture.

Դավիթ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (Երևան)

E-mail: dkertmenjian@gmail.com

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Ժառանգված պետական ուսումնական հաստատությունների կողմից ստեղծվեցին նաև նոր տիպի ուսումնական հաստատություններ: Փաստորեն, ձեռնարկվեցին գոյություն ունեցող բազմաթիվ ուսումնական համակառույցների արդիականացման միջոցառումներ, այդ թվում և՛ շուրջ երեք տասնյակ նոր շենքերի կառուցումը: Ներկայացվող հաղորդման նպատակն է անկախության տարիների նորակառույց ուսումնական շենքերի ճարտարապետական ուսումնասիրությունը: Գիտական խնդիրներ են նրանց ցանկավորումը, ինչպես նաև՝ տիպաբանական, հորինվածքային և շինարարական բնութագրումը: Բնականաբար, ակնարկվող կառույցներն զգալի թիվ են կազմում: Համապատասխանաբար կարևորվում է նրանց վերլուծությունն ու համակարգումը:

Ուսումնական շենքերի ճարտարապետությունը հին անցյալ ունի ինչպես միջազգային, այնպես էլ հայկական իրականությունում: Նրանք, ունենալով կոռ տիպաբանական համակարգ, վերջին տասնամյակներում նաև բովանդակային ու հորինվածքային նոր զարգացում ապրեցին, որ կարելի է բնութագրել կառուցված շենքերի ներքոհիշյալ կարգերով և առանձնահատկություններով:

1. Անկախ ծրագրով դպրոցներ, ինչպես՝ Դիլիջանի «Միջազգային միացյալ դպրոց» օրինակով կառուցված համալիրը և Երևանի «ԱՅԲ», ԵՊՀ-ի համակարգում գործող «Հայկական վիրտուալ քոլեջը», Էջմիածնի «Էրնեկյան», Աղետի գոտու՝ Գյումրու Բայրոնի անվան անգլիական, ֆրանսիական, ավստրիական, Մաշտոցի անվան, թիվ 31 դպրոցները, Ստեփանակերտի նորակառույց շինարարական պրոֆտեխնիկական դպրոցը և այլն:

2. Ազատ ծրագրով դպրոցներ, ինչպես՝ Երևանում, Գյումրիում, Ստեփանակերտում գործող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիական կենտրոնները և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ իրականացված «Հայորդյաց տների» ցանցը և այլն:
3. Հոգևոր դպրոցներ, ինչպես՝ Վազգենյան հոգևոր ճեմարանը Սևանում, Գարեգին Ա կաթողիկոսի կրթական կենտրոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:
4. Միջազգային համագործակցությամբ ուսումնական նոր հաստատություններ, ինչպես Երևանում կառուցված Ռուս-հայկական համալսարանը, Լոմոնոսովի համալսարանի մասնաճյուղը, Քալիֆորնիայի Լոս Անջելեսի համալսարանի մասնաճյուղը, Եվրասիական քոլեջը, Ռոբերտ Շումանի անվան Եվրոպական համալսարանը:
5. Ակադեմիական ծրագրով հաստատություններ, ինչպես՝ ռազմական և ոստիկանական ակադեմիաները, Երևանի՝ Աճառյան, Շիրակացի, Քըրք Քրքոբյանի անվան, Մաշտոցի, Գլաձորի համալսարանները, «Բալատոն» հունգարական քոլեջը Գյումրիում և այլն:
6. Հորինվածքային և շինարվեստի առումներով, կառուցված շենքերը միահյուսում են ավանդական, ռացիոնալ ու նորարարական ճարտարապետության ոճական առանձնահատկություններ: Նորարարական ուսումնական համակառուցներից հատկապես նշելի են Հայաստանի Ամերիկյան համալսարանի համալիրի նորակառույց հատվածն ու բիզնես կենտրոնը, Եզնիկ Մոզյան շինարարական պրոֆտեխնիկական դպրոցը Ստեփանակերտում, «ԱՅԲ» դպրոցը Երևանում, Դիլիջանի միջազգային քոլեջը, ուշագրավ է Գյումրու՝ Բայրոնի անվան դպրոցը տարածական ու վարչական կազմակերպման նորարար սկզբունքներով և այլն:

David KERETMENJYAN (Armenia)

Institute of Art NAS RA (Yerevan)

E-mail:dkertmenjian@gmail.com

NEW DEVELOPMENTS OF EDUCATIONAL BUILDINGS IN ARMENIAN ARCHITECTURE FROM INDEPENDENCE PERIOD

The Armenian contemporary architecture passed an active development phase of educational establishments within the period of Independence. Next to many renovations around 30 new complexes were built which have their peculiarities.

Typologically most of the buildings are of independent and free type schools. Among them are two religious seminaries and other special colleges. Notable is the fact that certain part of the schools and colleges created as Armenian- foreign cooperation, as well as are of academic type of schools.

Compositionally the contemporary educational complexes in Armenia are of traditional and rational styles. Attractive are the schools having modern innovative attitudes too, such as : the new extension of “American University of Armenia”, the “American University Business Center” involving the “Armenian Virtual College”, the “ Eznik Mozyan Construction Technical College” in Stepanakert, the “Vazgenian Seminary Center” in Sevan, the “United World College” in Dilijan, the “Ayb” senior school in Yerevan, the English school called after Lord Byron in Gyumri, etc..

Արմենուհի ԱՎԱԳՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

E-mail: arm5_83_7@mail.ru

ՄԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Լեզուն մտածողության արտահայտման միջոցն է, տվյալ ժողովրդի (ազգի կամ ցեղի) լեզվամտածական և հոգեբանական գործունեության կրողն ու արտահայտիչը: Լեզվական նյութը հնարավորություն է տալիս լավագույնս պարզելու և ներկայացնելու կոնկրետ ժամանակաշրջանում կամ ընդհանրապես տվյալ լեզուն կրող ժողովրդի հասարակական, սոցիալական զանազան հարցեր: Այս տեսակետից կարևոր է *անուն-ազգանուններում* սեռի քերականական կարգի դրսևորման (իմաստային ու քերականական), դրա արտահայտման միջոցների ուսումնասիրությունը, յուրահատկությունների բացահայտումը հայերենում:

Ժամանակակից բազմաթիվ հնդեվրոպական ու սեմական (արաբերեն) լեզուներում գոյություն ունի *քերականական սեռի* կարգը՝ ըստ որի էլ արտաքին աշխարհի առարկաները բաժանվում են *արական, իգական, չեզոք* (ռուսերեն, գերմաներեն) կամ *արական, իգական* (ֆրանսերեն) սեռերի, ինչը, եթե լեզուների զարգացման նախնական շրջանում հիմնված էր համապատասխան տրամաբանական կատեգորիայի վրա, ապա հասարակական գիտակցության զարգացման որոշ ավելի բարձր աստիճանում արդեն իրական սեռի ճանաչման հետևանքով զրկվել է իր տրամաբանական հիմքից և դարձել սոսկ քերականական երևույթ: Այս պատճառով էլ շատ լեզուներ, որոնք նախկինում ունեցել են քերականական սեռ, հետագայում կորցրել են այն, «մինչդեռ բնական սեռի կատեգորիան արտահայտելու համար ստեղծել և ստեղծում են նորանոր միջոցներ»¹:

¹ Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 486:

Հայերենը չունի սեռի քերականական կարգ, բայց, իբրև հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ հանդիսացող լեզու, չի բացառվում, որ հնագույն ժամանակներում ունեցել է քերականական սեռ, սակայն 5-րդ դարից մեզ ավանդված գրավոր-գրական լեզվում այդ քերականական կարգն արդեն կորցրել էր: *Բնական սեռն* արտահայտելու համար լեզվում գոյություն ունեն գանազան միջոցներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ **բառակազմական** (*-ուհի*, հնում նաև՝ *դուխտ* ածանցները) և **իմաստային-իմաստաբանական** (բառերի իմաստային խմբերը՝ յուրաքանչյուրն իր սեռին ու տեսակին համապատասխան): Ինչպես՝ *մարի-վարուժան*; *կով-ցուլ*, *եզ* և *այլն*:¹ Հայերենում կա սուսկ մեկ հիմնական բաժանում՝ *բառային արտահայտությամբ՝ կին (աղջիկ)* և *տղամարդ (տղա)*: Նման իմաստային տարբերակում առկա է նաև կենդանական աշխարհի մի շարք անվանումներում /ինչպես՝ *մարի* (եզ աղավնի)–*վարուժան* (արու աղավնի), *կով* (եզ)–*ցուլ*, *եզ* (արու)/, ինչը, սակայն, համատարած դրսևորում չունի և ընդգրկում է մասնակի փաստեր:

Առաջադիր հարցի տեսանկյունից ուշադրության է արժանի հատկապես (կանանց) **անձնանունների** քննությունը, նրանց իմաստների ու կազմության յուրահատկությունների դիտարկումը, ինչպես լեզվի նախորդ շրջաններում, այնպես էլ այժմ: Նշվեց, որ հայերենը չունի *բնիկ իգական իմաստի արտահայտման ցուցիչ ածանցներ*, բացառությամբ հին շրջանում պարսկերենից փոխառնված *-ուհի* ածանցի, որ գործածվել և այժմ էլ գործածվում է «աղջիկ, կին, իգական սեռի ներկայացուցիչ» նշանակությամբ՝ սովորական անուններից կազմելով իգական սեռի անուններ:

Մինչ *-ուհի* ածանցի փոխառումը, հին հայերենում իգական անունների կերտման գործում ակտիվ է եղել *դուխտ* բառը, որ նշանակել է *դուստր*, *աղջիկ*: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, այդ լեզուներում նույնպես այս արմատը «ճիշտ նման հայերենի՝ գործածուում է **իգական հասունկանուններ** շինելու համար»:² Սա այժմ անկենսունակ արմատ է կամ ածանց, այն ավելացել է *միայն տղամարդկանց անձնանունների վրա՝*

¹ Հայերենում սեռի քերականական կարգի հարցի, արտահայտման միջոցների խնդրին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում:

² Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 682:

դրանցից կերտելով իգական անձնանուններ, այնինչ՝ *ուհի*-ն կենսունակ է նաև այսօր ու իգական սեռի անուններ է կերտում *արական սեռի անձնանուններից* (Տիգրան–Տիգրանուհի, Արմեն–Արմենուհի), ինչպես նաև՝ որոշ *ածականներից իգական սեռի անձնանուններ* և անվանումներ (սուրբ – Սրբուհի և սրբուհի (*սուրբ կին* նշանակությամբ)), *ցեղանուններից կամ ազգերի անուններից իգական սեռի անուններ* (ինչպես՝ հայ – հայուհի, թուրք – թրքուհի, իտալացի – իտալուհի), *անձի գրադմունք, վիճակ, մասնագիտություն ցույց տվող կամ միջանձնային հարաբերություններ արտահայտող հասարակ անուններից՝ իգական սեռի հասարակ անուններ* (գեղջուկ – գեղջուկուհի, խոհարար – խոհարարուհի, նկարիչ – նկարչուհի):

Առավել ուշագրավ են հայերեն *ազգանունները*, որոնց հիմքը գերագանցապես *տղամարդկանց* (*արական սեռի*) *անվանումներն* են՝ *-յան* վերջավորության հավելումով /երբեմն էլ՝ *-ունց, -ունի*։ *ինչպես՝ Սաքունց, Թոխունց, Աստունի /Աստվածատուր< աստ + ունի, բայց նաև՝ Աստոյան (ՏԱ, ՀԱԲ, էջ 25)/¹* ինչը այնքան էլ տարածված չէ, այլ որոշակի հատվածի (Տավուշ, Արցախ և սահմանամերձ մի շարք տարածքների) բնակչության ազգանուններում ենք հանդիպում։ Ռուսաստանաբնակ հայերի շրջանում առավել տարածված է *-յանց* վերջավորությունը՝ *Մանուկյանց (ՏԱ, ՀԱԲ, էջ 25), Հեքիմյանց // Հեքիմյան(ՏԱ, ՀԱԲ, էջ 201)*, ինչպես՝ *Արսենյան, Դանիելյան, Հովհաննիսյան, Կիրակոսյան և այլն*։ Այս իրողությունը ազգային խոր արմատներ ունի և պայմանավորված է հայ իրականության մեջ տղամարդու դերի առաջնայնությամբ ու կարևորությամբ։ Մեր հասարակությունն իր անդամներին «խմբավորում» ու «ճանաչում» է ազգի հիմնադիր մեծի (տղամարդ ավագի) անունով, որի անունով էլ կոչվում է տոհմը՝ *Կիրակոսենք, Սկրտիչենք և այլն*։ Գյումրեցին (ինչպես նաև լոռեցին, դիլիջանցին) նման դեպքերում կհարցնի՝ «*n՝ունցեն ես*», այսինքն՝ *n՝ը/ի/ կամ n՝ւմ* տոհմից ես։ Քննարկվող հարցի տեսանկյունից ուշագրավ հագամանք է այն, որ *մասնագիտություններից ազգանվան հիմք* են հանդես գալիս գերագանցապես *տղամարդու գրադմունք*, մասնագիտություն հանդիսացողները, որոնք ժամանակակից աշխարհի գլոբալացման արդյունքում

¹ Տե՛ս Ավետիսյան Տ., *Հայոց անձնանունների բառարան*, Եր., 2000, էջ 25:

գուցե դարձել են նաև կանանց զբաղմունք, բայց կոնկրետ ազգային-ազգաբազմական աղբյուրների տվյալներով, հասարակական ընկալմամբ բնորոշ են եղել արական սեռի ներկայացուցիչներին, ու էական չէ, թե արմատը բնիկ հայեցի, թե փոխառյալ ձև է: Այսպես՝ *Ասք/կ/արյան* /*Ասքար*՝ ար., արաբ. «*զինվոր*»¹ յան¹, *Դարբինյան*, *Դուրզարյան*, *Կոշկակարյան* և այլն: Ասվածը չի բացառում, սակայն, իգական անձնանուն, իգական սեռին բնորոշ մասնագիտության, մակդրային և այլ հիմքով ազգանունների գոյությունը հայերենում: Օրինակ՝ *Աստղիկյան* /*Աստղիկ*՝ *իգ.*, *բնիկ*, *ԺԵ դ.*⁺ յան²:

Ասվածը փաստում է, որ հայերենում անուն-ազգանունների մեջ արտահայտվող սեռային տարբերակվածությունը ինքնանպատակ կամ պատահական դրսևորման արդյունք չէ, այլ ունի ազգային ու մշակութային խոր արմատներ և պայմանավորված է ժողովրդական մտածողությամբ, հասարակական ներքին կառուցվածքի տրամաբանությամբ:

Armenuhi AVAGYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail: arm5_83_7@mail.ru

THE MANIFESTATION OF THE CATEGORY OF GENDER IN ARMENIAN NAMES AND SURNAMES

The Armenian language lacks the grammatical category of gender; however, being a part of the Indo-European family of languages, one of its separate branches, it may have had grammatical gender. But it must be stated that no traces of the category under discussion could be found in the literary language of 5th century although there were different means for expressing natural gender which can be conditionally subdivided into two groups: word-building (suffixes -uhi and formerly also -dukht) and semantic-semasiological (semantic groups of words in line with their gender and type accordingly; for

¹ *Տե՛ս S. Ավետիսյան, նույն տեղում, էջ 25:*

² *Նույն տեղում:*

instance, bull-cow, ox etc). Armenian has only one main subdivision expressed lexically: woman (girl) and man (boy).

The survey of proper names makes it clear that Armenian lacks suffixes originally indicating feminine gender except for the Iranian-borrowed suffix – uhi which serves to make names of feminine gender.

The basis of Armenian surnames mainly comprise male/masculine gender/names ending in the inflection –yan /for instance: Arsenyan Kirakosyan, etc./, sometimes –unts, –uni, as well as –yants. E.g. Sakunts, Astuni but also Astoyan, Manukyants/. The present fact is predetermined by the leading role of the man in the Armenian reality. Specialty names peculiar to man are derived from masculine surname basis, the latter having probably turned into female specialties in the result of globalisation; but according to concrete national-demographic sources they were peculiar to the male and it does not matter whether the basis is purely Armenian or it is borrowed, for instance, Darbinyan, Durgaryan, Koshkakaryan, etc.

The gender difference between Armenian names and surnames is deeply rooted in national culture and is determined by the national ways of thinking and the logic of inner social organisation.

Լիլիթ ԱՎԵՏԻՍՅԱՆ (Հայաստան)

Հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան)

E-mail: lilit.avetisyan1981@mail.ru

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ
ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

Գոյականական կայուն կապակցությունները (այսուհետև՝ ԿԿ)՝ որպես մասամբ կամ ամբողջությամբ նորիմաստավորված կամ ոչ փոխաբերական նշանակություններ արտահայտող պատրաստի վերարտադրելի

լեզվական միավորներ, հին հայերենում զգալի տեսակարար կշիռ ունեն: Ուշագրավ են մասնավորաբար քրիստոնեական վարդապետությանն առնչվող այդօրինակ ԿԿ-ները, որոնք, անշուշտ, գրաբարում մեծ քանակություն են կազմում:

Սույն զեկուցման մեջ իմաստաբանության դիտանկյունից անդրադարձ է կատարվում այդ կարգի ԿԿ-ներին գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ. «Դարձվածքը ներառում, կուտակում և պահպանում է շրջապատող աշխարհի մասին մեր պատկերացումները, իր տեսակի մեջ մշակութային հուշարձան է, տվյալ ժողովրդի անցյալի և ներկայի հայելի»¹:

Ա. Գոյականակն ԿԿ-ների իմաստային տիպերը:

1. Վերաիմաստավորում չունեցող (ոչ փոխաբերական) ԿԿ-ներ: Ի տարբերություն ազատ կապակցությունների, որոնք ձևավորվում են խոսելու ընթացքում, վերաիմաստավորում չունեցող ԿԿ-ները հատկանշվում են պատրաստի վերարտադրելիությամբ: Հմնտ. Որդի Աստուծոյ (Աստծո միածին որդի՝ Քրիստոս), խորան սրբութեան (տաճար), կեանք յաւիտենականք (անմահություն):

2. Վերաիմաստավորված (դարձվածային) ԿԿ-ներ: Ըստ ԿԿ-ների բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի՝ առանձնացվում են իդիոմներ և միաբևեռ դարձվածային միավորներ (ԴՄ-ներ):

ա) Միաբևեռ ԴՄ-ներ: Հետևյալ ԿԿ-ների (գերադաս կամ ստորադաս) անդամները հանդես են եկել վերաիմաստավորված (դարձվածային) նշանակությամբ. աչք հոգւոյ (ներքին՝ հոգևոր տեսողություն), լուսաւոր վարդապետութիւն (քրիստոնեություն), գառն Աստուծոյ (Հիսուս Քրիստոս):

բ) Իդիոմատիկ ԴՄ-ներ: Այդ կարգի ԴՄ-ներին բնորոշ է ամբողջական վերաիմաստավորումը. տուիչ պարգևաց (Աստված), աւագ աչք (միտք), դուռն դժոխցոյ (տանջանք):

¹ Мальцева Д. Г., Национально-культурный аспект фразеологии, АДД, М., 1990, с. 32.

Բ. Գոյականական ԿԿ-ների իմաստային խմբերը: Հին հայերենի գոյականական ԿԿ-ներում տարբերակվում են հետևյալ իմաստային (թեմատիկ) խմբերը.

1. Սուրբ Երրորդությանն առնչվող ԿԿ-ներ. Բան Հօր, Սուրբ Հոգի, նկարագիր էությունն Հօր:
2. Սուրբ Գրքին վերաբերող ԿԿ-ներ. Գիրք ժողովողի, Աստուածեղեն գիրք, Օրհնութիւն Օրհնութեանց:
3. Եկեղեցուն և հոգևորականությանն առնչվող ԿԿ-ներ. Խորան սրբութեան, կարգ եկեղեցւոյ, մայր վանուց:
4. Աստծո և աստվածայինի գոյությանը վերաբերող ԿԿ-ներ. Նշանք աստուածայինք, տապանակ վկայութեան, շնորհ Աստուծոյ:
5. Հավատին և անմահությանը վերաբերող ԿԿ-ներ. Խաչի հնազանդութիւն, Յոյս կենաց, արքայութիւն Աստուծոյ:
6. Հավատավոր քրիստոնյային, ինչպես նաև քրիստոնէություն քարոզողին վերաբերող ԿԿ-ներ. Ժառանգ արքայութեանն, բանք ժողովողի, ուխտաւոր Աստուծոյ:
7. Չարին և հավիտենական գեհենին վերաբերող ԿԿ-ներ. Ժառանգ գեհենին, լիճ հրոյ, կապանք մահու:

Քրիստոնէական վարդապետությանն առնչվող հինհայերենյան գոյականական ԿԿ-ների իմաստային յուրահատկություններն արտացոլվում են խոսքային միջավայրում՝ առավելագույնս ցայտուն դրսևորելով քրիստոնյա մեր ժողովրդի հոգևոր մշակույթի և լեզվամտածողության յուրահատկությունները:

LILIT AVETISYAN (Armenia)

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (Yerevan)

E-mail: lilit.avetisyan1981@mail.ru

THE SEMANTICS OF SUBSTANTIVAL STABLE COMPOUNDS RELATING TO THE CHRISTIAN ARCHIMANDRITY IN OLD ARMENIAN

The substantival stable compounds (therefore SC) are redy reproducing language units, which characterized with semantically transfiguring (partly or fully) or non-metaphorical meanings. They are of considerable number in old Armenian. They are interesting especially substantival SC relating to the Christian archimandry, which certainly are of considerable number in old Armenian.

In the level of old Armenian on synchronic basis the semantics of substantival SC relating to the Christian archimandry are scrutinized in the present report.

In professional literature it is mentioned that the phrase involves, accumulates and conserves our imaginations about the surrounding world, it is a specific cultural monument, the mirror of the past and the present of the given nation¹.

A. The semantic types of substantival SC.

1. Non –metaphorical SC. This SC characterized with ready reproduction unlike the non-stable compounds, which are formed in the communication act: Որդի Աստուծոյ, խորան սրբութեան, կեանք յախտենականք.

2. Semantically transfiguring (phraseological) SC. The semantically transfiguring SC ae include idioms and unilateral phraseological units (PU).

a) Unilateral PU. The components of following SC are characterized with semantically transfiguring (phraseological) meanings: աչք հոգւոյ, լուսաւոր վարդապետութիւն, զանն Աստուծոյ.

¹ See Мальцева Д., Национально-культурный аспект фразеологии, АДД, М., 1990, с. 32.

b) Idiomatic PU. They are characterized with complete semantic transfiguration: տուիչ պարզևաց , աւագ աչք, դուռն դժիւնց.

B. The semantic groups of substantival SC. Among substantival SC of old Armenian semantic (thematic) following groups are distinguished:

1. SC relating to the Saint Trinity: Բան Հօր, Սուրբ Հոգի, նկարագիր էութեանն Հօր.
2. SC relating to the Biblia: Գիրք ժողովողի, Աստուածեղէն գիրք, Օրհնութիւն Օրհնութեանց.
3. SC relating to the Church and the clergy: Խորան սրբութեան, կարգ եկեղեցւոյ, մայր վանուց:
4. SC relating to the God and the existence of godlike: Նշանք աստուածայինք, տապանակ վկայութեան, շնորհ Աստուծոյ:
5. SC relating to the belief and the eternity: Խաչի հնազանդութիւն, Յոյս կենաց, արքայութիւն Աստուծոյ:
6. SC relating to the religious Christian and the preacher of Christianity: Ժառանգ արքայութեանն, բանք ժողովողի, ուխտաւոր Աստուծոյ:
7. SC relating to the evil and the eternal hell: Ժառանգ գեհեմին, լիճ հրոյ, կապանք մահու:

The semantic specifications of substantival SC of old Armenian relating to the Christian archimandritry are expressed in the speech environment and more brightly demonstrate the characteristics of clerical culture and linguothinking of Christian our nation.

Ջեմմա ԲԱՌՆԱՍՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ (Երևան)

E-mail: barnasyanjemma@rambler.ru

**ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Բառակազմական միջոցներից համահայերենյան գործառույթ են դրսևորում բառաբարդումը և ածանցումը: Հայերենը հնդեվրոպական այն լեզուների թվին է պատկանում, որոնք ունեն գարգացած բառաբարդություն՝ երկու և ավելի լեզվական միջոցների (արմատական ձևեր, բառեր ու բայահիմքեր) համադրումով: Բառաբարդություններն առաջանում են հիմնականում երեք ճանապարհով՝ շարահյուսական կապակցություններից, լեզվում եղած բառակազմական կաղապարներից և բառափոխառություններից:

Շարահյուսական կապակցություններից բառաբարդությունների առաջացումը տեղի է ունենում բառերի՝ երկարատև միասին գործածվելու պարբերաբար կրկնվելու հետևանքով, ինչը նպաստում է առավել սերտ ու միասնական իմաստ արտահայտելուն և մեկ բառային միավորի վերածվելուն:

Մեր ուսումնասիրության առարկան Կարնո բարբառի խոսվածքներում առկա բառակազմական միջոցներից բառաբարդմանն առնչվող հետաքրքիր իրողություններն են: Աշխատանքը կատարելիս հենվել ենք բարբառագիտական գիտարշավների ընթացքում բարբառախոսներից գրաված նյութերի, ինչպես նաև Կարնո բարբառով ավանդված բանահյուսական հարուստ ժառանգությունից քաղված տեղեկությունների վրա: Այս աշխատանքի շրջանակներում ներկայացնում ենք ինչպես հայերենի բարբառներում առհասարակ, այնպես էլ Կարնո բարբառի խոսվածքներում բառակազմական մեծ հաճախականություն դրսևորող հարադրական և կրկնավոր բարդություններին առնչվող որոշ հետաքրքիր իրողություններ:

Անվանական հարադրությունները գործառական մեծ հաճախականություն են դրսևորում Կարնո բարբառի խոսվածքներում: Ասենք, հա-

րադրվում են բառային հոմանիշներ՝ առարկան կամ երևույթն առավել ընկալելի դարձնելու նպատակով, ինչպես՝ *կար-կարգրդան, տեղ-սըտար, քար-քրոա* և այլն: Կարնո բարբառում նմանատիպ հարադրությունների համար սովորական է նաև *ու* շաղկապով բառաբաղադրություն կազմելը՝ *տեղուսըտար, քօկուբուս, քարուքրոա*: Այս իրողությունը համատարած է բարբառների գերակշիռ մասում:

Շատ դեպքերում բառիմաստն առավել ընկալելի դարձնելու, որոշակի նրբիմաստ հավելելու նպատակով հարադրության կազմում հայերեն բառաձևի հետ կիրառելի են նույնիմաստ փոխառյալ բառեր, ասենք, Կարնո բարբառի Շիրակի տարածքի խոսվածքներում շատ գործածական են *սէր-սավդա, խօսկ-խօրատա* և հայաբանության արժեք ունեցող նմանատիպ այլ ձևեր:

Գործառական մեծ հաճախականությամբ են հանդես գալիս հատկապես զուգադրական բայերը, որոնց բաղադրիչները սովորաբար կազմվում են հոմանիշ, մերձիմաստ բայերի կապակցությամբ՝ արտահայտելով միմյանց զուգորդվող գործողությունների միասնություն: Հայերենի բոլոր բարբառներին հասուկ է երկու դերբայով անշաղկապ հարադրություն կազմելը, տվյալ դեպքում՝ Կարնո բարբառում՝ *էրտալ-գալ, ուղէլ-խըմէլ, պայէլ-շայէլ, հակաձ-կարաձ, հ'ընգաձ-հ'էլաձ* և այլն: Բայական հարադրությունների ամենագործածական տեսակը բայի և այլ խոսքի մասի (գոյական, ածական, դերանուն, մակբայ) համադրությունն է: Այսպես՝ *լսել* հասկացության դիմաց Կարնո բարբառի Մարմաշեն, Ագատան, Գետք գյուղերի խոսվածքների գրանցումներում առկա է *հ'անգաջ էնէլ* հարադրությունը՝ *ուշադրություն դարձնել* նրբիմաստով: Շատ գործածական է հայաբանության արժեք ունեցող *յօլա էրտալ* հարադրությունը՝ *հարմարվել, համակերպվել* նրբիմաստով: Ընդ որում՝ թուրքերենից փոխառյալ *յօլ* (ճամփա) բառն այլ բառով փոխարինելիս կորչում է նրբիմաստը: Դրանով է պայմանավորված այդ և նմանատիպ ձևերի գործառական հաճախականությունը: Նույնը կարելի է ասել նաև *օյաթ էնէլ* հարադրության մասին, որին հասուկ է *վերջին պատվերը տալ* կամ *կտակել* իմաստը:

Կարնո բարբառի տարբեր խոսվածքներում բառաբարդման նախընտրելի ձևեր են կրկնավորները, որոնց բնորոշ են հնչյունների հավել-

ման և անկման երևույթները՝ կրկնաբանությունն աննկատ դարձնելու և խոսքին լրացուցիչ արտահայտչականություն հաղորդելու միտումով:

Ասենք՝ *ալ/ար-ձալ/ար, ամբախ-գամբախ, անուշ-չանուշ* և այլն:

Հարադրական և կրկնավոր բարդությունները Կարնո բարբառում շարունակում են մնալ կենսունակ:

Jemma BARNASYAN (Armenia)

Institute of Language NAS RA (Yerevan)

E-mail: barnasyanjemma@rambler.ru

SEVERAL WORD-FORMATIVE REALITIES IN KARNÓ DIALECT

As in the Armenian language in general, among the word-formative means affixation and stem-composition were constantly used in Armenian dialects as well. The Armenian language belongs to the number of Indo-European languages that have advanced stem-composition with two and more language notional units (basic types, words, verb frames).

Stem-compositions in the Armenian language are basically originated in three ways: syntactic combinations, word-formative patterns that exist in the language and word naturalization. The appearance of stem-compositions from syntactic combinations occurs as a result of long-term joint usage and recurrent word repetition that gives the expression more close and consistent meaning and helps in the formation into a single lexical unit.

Our object of study among word-formative means in Karno Dialects is especially interesting realities related compounding. Making the work we relied on the materials written from the dialect speakers during our dialectical expeditions as well as on the informations from rich folklore heritage of Karno dialect.

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ (Երևան)

E-mail: gasparyan.1947@mail.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Վերածնունդը եվրոպական գրական-մշակութային-պատմական իրողություն է, որը գրականության մեջ և արվեստի մյուս ճյուղերում ձևավորվեց XIII դարի վերջերին ու XIV դարում և գոյատևեց մինչև XVI-XVII դարերը: Տարբեր երկրներում ստացավ տարբեր անվանումներ՝ ռենեսանս, ռեստավրացիա, կլասիցիզմ:

Վերածնունդը՝ որպես շարժում, սկզբնավորվել է Իտալիայում: Հիմնական դեմքը Ֆրանչեսկո Պետրարկան էր, իսկ Դանտեն համարվում էր կա՛մ նախակարապետ, կա՛մ անցումային փուլ: Վերածնունդ նշանակում էր վերածնել: Այսինքն՝ հաղթահարել կաթոլիկ եկեղեցու հազարամյա բռնատիրությունը՝ դոգմաներ, հավատաքննություն, ազատամիտ գաղափարների հալածանքներ, որ սկիզբ առավ քրիստոնեությունը պետական-պաշտոնական կրոն ճանաչելուց հետո, և կամուրջ նետել դեպի 4-րդ դար՝ հեթանոսության և անտիկ գրականության վերջը, այդպիսով վերածնել ու շարունակել մոռացված դասական արժեքները, շրջանառության մեջ դնել դասականների երկերը և շարունակել նրանց ավանդույթները:

Սա այն է, ինչը բնորոշ է եվրոպական վերածնունդին, ինչն առանձին երկրներում՝ Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, եվրոպական այլ երկրներ, ավելի ուշ՝ Ռուսաստան, դրսևորեց իր յուրահատկությունները, և որոնց մասին կա հսկայական գրականություն:

Բուն «եվրոպական վերածնունդ» եզրույթի իմաստաբանությամբ ե՞րբ է սկզբնավորվել հայկական վերածնունդը: Հայագետները հայկական վերածնունդը տանում են մինչև 10-12-րդ դարեր, տալիս Նարեկացու, Շնորհալու և այլ անուններ: Բայց արդյոք դա վերածնո՞ւնդ է՝ բառի բուն եվրոպական իմաստով և ոչ թե պայմանական: Ո՛չ, դա վերածնունդ չէ, այլ աշխարհիկացում: Իսկ ինչո՞ւ վերածնունդ չէ, որովհետև հայ գրականությունը չունեցավ ընդհատում, ինչն ունեցավ եվրոպական գրականությունը:

նր: Հայ գրականության մեջ ինչ 5-րդ դարում էր, նույնը, ավանդույթների բնականոն շարունակությամբ, հասավ Նարեկացուն և Շնորհալուն, իսկ Ֆրիկից և հաջորդներից սկսած՝ խորացավ աշխարհիկացման գործընթացը, ինչն արտահայտվեց գրաբար-միջին հայերեն լեզվական փոփոխությամբ և պատկերվող նյութի աշխարհիկացմամբ՝ սեր, բնություն, իրական կյանքի ազդակներ և այլն:

Վերածնունդը՝ որպես շարժում, ենթադրում էր անտիկ գրականության վերածնունդ, մինչևեռ հայ իրականության մեջ անտիկ շրջանի գրականության նմուշները ոչնչացվել էին, իսկ հնագույն բանահյուսական պատառիկներն այդ շրջանում գրականություն չմտան: Այսինքն՝ բառի բուն իմաստով, ինչպես եվրոպական գրականության մեջ էր, հայկական վերածնունդ տեղի չունեցավ:

Հայկական վերածնունդը՝ որպես այդպիսին, եզրույթի բուն նշանակությամբ, տեղի է ունեցել ավելի ուշ՝ 18-րդ դարում, և հիմնավորապես կապվում է Մխիթարյան միաբանության ծրագրած հայագիտական գործունեության հետ: Նրա՛նք էին, որ վերածնեցին արդեն իսկ մեռած գրաբարը, նրա՛նք էին, որ վերածնեցին և գիտական ծանրակշիռ աշխատասիրությամբ հրատարակեցին հնագույն մատենագիրների երկերը, նրա՛նք էին, որ նոր շունչ պարգևեցին հայոց բառազանձին՝ այդ ամենն ի մի բերելով բառարանների մեջ:

Ահա սա՛ է եվրոպական վերածնունդի համարժեքը, իսկ 10-րդ դարից հայ իրականության մեջ սկզբնավորված աշխարհիկացման գործընթացը պատմամշակութային ա՛յլ շարժում է և ունի ա՛յլ բացատրություն:

Այս և հարակից այլևայլ հարցեր մանրամասնորեն կներկայացնենք զեկուցման մեջ:

David GASPARYAN (Armenia)

National Institute of Education, Ministry of Education and Science of RA (Yerevan)

E-mail: gasparyan.1947@mail.ru

THE ARMENIAN RENAISSANCE (Time and Peculiarities)

When was the Armenian Renaissance born, considering the semantics of the term “authentic European renaissance”? Armenologists stretch the Armenian Renaissance up to the 10-12 centuries. They mention the names of Narekatsi, Shnorhali and others. But is it really Renaissance in the true European sense of the word, and not its conventional meaning? No, that is not Renaissance, that is secularization.

And why this is not Renaissance because Armenian literature didn't have the intermission/ in its development which European literature had had under the strong influence of the Catholic Church for about one thousand year within IV – XIV centuries. Whatever there was in the Armenian literature in the V-th century, the same was there with the natural continuation of traditions up to the period of Narekatsi and Shnorhali. Since the 13-th century starting with Frik and his successors, the process of secularization went deeper and took strong roots in Armenia.

It was expressed by the linguistic transition from Grabar (Classical Armenian) to Middle Armenian and by the secularization of fiction, which is love, nature, real life.

Renaissance, as a movement, presupposed the renaissance of the ancient literature, whereas the samples of the ancient literature in the Armenian reality were destroyed and small pieces of ancient folklore didn't come into the literature of that period. So in the true sense of the word, as it was in the European literature, the Armenian Renaissance didn't happen.

The Armenian Renaissance, as such, in the true sense of the term, happened much later, in the 18-th century and is mainly connected with the Armenian activities planned by the Mxitaryan miabanutyun, who were those very people who gave rebirth to the dead Grabar (Classical Armenian) and with

their weighty hard work published the works of ancient scripts, giving new breath to the treasury of the Armenian word-stock restoring the name in the dictionaries.

This is the Armenian equivalent of the European Renaissance, as for the process of secularization in the Armenian literature, beginning from the 10-th century, this is another historic-cultural movement and has another explanation.

Սուսաննա ԶԱՔԱՐՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

E-mail:mlian84@mail.ru

**ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԸ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հատկանվանագիտությունը գիտության այն յուրահատուկ բնագավառն է, որը հետազոտման առարկա է թե՞ լեզվաբանների, թե՞ պատմաբանների, թե՞ աշխարհագրագետների համար, որոնցից յուրաքանչյուրը իր տեսանկյունից է ուսումնասիրում հատուկ անունները՝ կարևորելով և դիտարկելով հարցը ինչ-որ տեղ ընդհանրության մեջ:

Հատկանվանագիտության դրսևորումներից է տեղանուններն ուսումնասիրող գիտակարգը՝ տեղանվանագիտությունը, որը լեզվաբանության և հումանիտար մի շարք այլ գիտությունների՝ պատմագիտության, ազգագրության, ժողովրդագրության, հնագիտության, մշակութաբանության, աշխարհագրության շփման եզրում է: Տեղանունները հատուկ անունների մի դաս են, որ վերաբերում են լայն առումով աշխարհագրական միավորներին՝ սկսած օվկիանոսներից, մայրցամաքներից և աշխարհամասերից մինչև առանձին շինությունները, փողոցները, արահետները, աղբյուրները, առուները, քարանձավները, փարախները և այլն:

Այսօր տեղանուններ կան նաև Երկրագնդից դուրս՝ Լուսնի, Հրատի (Մարս), Արուսյակի (Վեներա) վրա: Հետևաբար տեղանվանագիտությունը կարելի է տարածել ամբողջ տիեզերքի վիճակում՝ նրա ոլորտի մեջ առնելով նաև երկնային մարմինների՝ մոլորակների, նրանց արբանյակների, աստղերի, աստղաբույլերի, գալակտիկաների, համաստեղությունների անունները:

Տեղանունների և անձնանունների ուսումնասիրությունը կարևոր է որևէ երկրի և ժողովրդի մշակույթն ու պատմությունը ամբողջական ներկայացնելու առումով: Որքան խորանում ենք դեպի անցյալը, այնքան նվազում են գրավոր աղբյուրները, և դրան զուգընթաց աճում է հատուկ անունների նշանակությունը: Որոշ տարածքների ազգային-լեզվական հին վիճակի վերաբերյալ առկա միակ աղբյուրը հատուկ անուններն են՝ մեծ մասամբ վկայված բանավոր ճանապարհով: Կան նաև լեզուներ, որոնց վերաբերյալ մեր գիտելիքները սահմանափակվում են մի քանի տասնյակ կամ հարյուր բառով, գլխավորապես հատուկ անուններով: Դրանց համար օգտագործվում է «հատկանվանական լեզուներ» («Ономастические языки») եզրը:

Տեղանունների հավաքումը, դասակարգումը, հետազոտությունը, կարգավորումը և խնամքը կենսականորեն կարևոր են պետությունների համար՝ կառավարումն արդյունավետ կազմակերպելու առումով, ուստի ամեն երկիր ստեղծում է իր տարածքի տեղանուններով զբաղվող հատուկ ստորաբաժանումներ, ընդունում է օրենքներ տեղանունների վերաբերյալ, ստեղծում շտեմարաններ, բառարաններ ու տեղեկատուներ:

Տեղանունները կարևոր են նաև պատմալեզվական առումով: Ի տարբերություն հատուկ անունների այլ դասերի (անձնանուններ, տիեզերական մարմինների անուններ և այլն)՝ նրանք չեն փոխառվում: Տվյալ տարածքում որևէ լեզվով կազմված տեղանվան առկայությունը անպայմանորեն հետևանք է տեղանվան ստեղծման պահին այդ լեզուն կրողների առկայության: Այնինչ, օրինակ՝ անձնանվան առկայությունը բոլորովին չի ենթադրում այդ անունն ստեղծած էթնիկական տարրի գոյությունը տվյալ տարածքում. անձնանունը կարող է մուտք գործել նաև մշակութային

շփումների միջոցով՝ հաճախ միջնորդավորված ազգային-լեզվական երրորդ հանրությամբ:

Երկրանունների շարքից առանձնացրել ենք և մեր հաղորդման մեջ կներկայացնենք Հայաստանի լեռնանունները:

Լեռները մեր ազգային կերտվածքի, մեր ինքնության ու հպարտության անխոս վկաներն են, և իզուր չէ, որ հայկական լեռնանուններից շատերը մեր գրողների ու բանաստեղծների ներշնչանքի այնպիսի գորեղ միջոցներ են եղել, որոնց գործածմամբ ստեղծվել են բանաստեղծական գոհարներ:

Հիշենք Ավ. Բահակյանին՝

«Արարատի ծեր կատարին դար է եկել վայրկյանի պես ու անցել...»:

Susanna ZAQARYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail:mlian84@mail.ru

THE PLACE OF MOUNTAIN NAMES IN THE SYSTEM OF TOPONYMIES

Mountains are speechless witnesses of our national creation, our essence and pride, and that's why the vast majority of Armenian mountain names were such powerful means of inspiration for our writers and poets, with the use of which poetic masterpieces were created. Avetik Isahakyan writes: "A century as a second has come to the old peak of Ararat and has passed..."

The science of proper names, as a scientific category, is a part of lexicology as its subsection, though some scientists consider it as a separate branch of linguistics. This is the very specific sphere of science, which is the subject of investigation for both linguists, historians and geographers, and each of them studies proper names from his point of view, giving importance and observing the matter somewhere in generality.

The main problems of the science of proper names interest many scientists of the world. The interest towards the science of proper names and the science of place names has increased since the middle of the 20th century.

The science of place names, i.e. the scientific category studying place names, is in the boundary of lexicology and some other sciences of the humanities, such as, historical science, ethnography, demography, archaeology, cultural science and geography.

Place names are a group of proper names, which refer to geographical units in the broad sense beginning with oceans, continents and mainlands up to separate buildings, streets, paths, springs, brooks, caves, enclosures, etc.

Nowadays there are place names outside the Earth as well: on the Moon, Mars, Venus. Consequently, the science of place names can be spread throughout the whole space involving the names of celestial bodies, such as planets, their satellites, stars, groups of stars, galaxies, constellations.

The study of place names and proper names is especially important to introduce the whole picture of culture and history of the given country. The deeper we go to the past the fewer literary sources become and at the same time the significance of proper names increases. The only existing sources of national-linguistic identity for some regions are proper names. There are also languages of which our knowledge is limited to only a few dozens or a hundred words, mainly proper names. In this case the 'onomastic languages' border is used.

The collection, sorting, investigation and regulation of place names are vitally important for states to organize their government effectively. So every state creates special departments dealing with the place names of its area, passes laws concerning the place names, makes up data bases, dictionaries and reference books.

In a historical-linguistic sense, place names are also important, which unlike other classes of proper names (personal names, names of space bodies, etc.) are not borrowed.

The availability of a place name created by some language in the given area is necessarily the result of the presence of the bearers of the given

language at the moment of the creation of that place name. Whereas, for example, the presence of a place name doesn't necessarily assume the existence of the ethnic element creating that name in the given area: the personal name can also occur through cultural intercourse.

Place names, or as they are often called geographical names, are divided into several groups: names of waters (seas, lakes, rivers, streams, canals, reservoirs, wells, springs, waterfalls, swamps, downpours), names of localities (cities and towns, villages, fortresses, dwellings, monasteries, deserts, convents), names of buildings (temples, palaces, inns, bridges, squares, streets, roads, chapels, sanctuaries, pillars, other monuments, pens barns, etc.), names of shapes of the earth (plains, ruptures, hills, hollows, faults, canyons, gorges, etc.), names of physical-geographical other objects (forests, gardens, parks, fields, pastures, etc.), names of cosmic bodies (stars, planets, satellites, comets, constellations, groups of stars, etc.), names of administrative units (countries, worlds, provinces, states, regions, districts, neighborhoods), etc.

In the series of the shapes of the earth the names of hills, i. e. the names of mountains, have important place and great spreading. They are especially important for such a mountainous country as Armenia is.

Լիլիթ ԹՈՎՄԱՍՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
E-mail:lilit-aragac@mail.ru

**ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԳՅՈՒՄՐՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԸ ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ**

Լեւոն Բարսեղյան, «Զամբո». 32 պատմություն և մեկ վիպակ: «Զամբո»-ն ընթերցողի սեղանին դրվեց մեկ-երկու ամիս առաջ: Հեղինակի առաջին գիրքն է՝ բոլոր առաջիններին խիստ բնորոշ անկեղծությամբ ու

առանց ավելորդ պաճուճանքի, որտեղ չկա ընթերցողի վրա ներագդելու ճիգ ու ջանք, ու թվում է՝ հեղինակը պարզապես ցանկացել է պատմել մեկ-երկու հետաքրքիր դրվագ իր կամ մեկ ուրիշի կյանքից: Այսպես, եթե հակիրճ ներկայացնելու լինենք «Ձամբո»-ն:

Հոդվածում քննության են առնված Լ. Բարսեղյանի «Ձամբո» գրքի մի քանի պատմվածքներ, որտեղ հեղինակի գեղարվեստական պատկերների, նկարագրությունների, տիպական, կոլորիտային կերպարների ու ինքնօրինակ վերլուծությունների միջոցով բացահայտվում է Լենինական-Գյումրու՝ ավանդապահ, հոգևոր կենցաղով ապրող, ներքին բնանկարներով հարուստ, խորհրդավոր, առեղծվածային, անկշռելի ու չփոփոխվող քաղաքի պատկերը:

Լ. Բարսեղյանին ճանաչողները քաջ գիտեն՝ «լեննագանցի» լինելու նրա ձևն ու ընկալումները, տեղյակ են, որ հեղինակն այս քաղաքը գիտի ճիշտ այնպես, ինչպես սեփական ձեռքերի մատներին է ծանոթ, ու այստեղ է, որ տրամաբանության նժարին հավասարակշռվում է հեղինակի՝ քաղաքը շերտ առ շերտ բացահայտելու զարմանալի կարողությունը: Քննության առնվող նյութում մեզ հետաքրքրում է նրա պատմվածքների բովանդակության, հատկապես, թեմատիկ, գաղափարական ու գեղարվեստական համակարգի մի քանի էական առանձնահատկություններ՝ Լենինական-Գյումրին բացահայտող նկարագրությունների առանցքում: Հեղինակը գաղափարական ու գեղագիտական նպատակադրումների իրականացմանը հասնում է խոստուն նկարագրություններով: Առանցքում քաղաքն է ու քաղաքի մարդիկ՝ ապրելու իրենց կերպով: Քաղաքն իրենցով ամբողջացնող կերպարներին Լ. Բարսեղյանը «մերոնք» է անվանում՝ զարմանալի անկեղծությամբ ու ականատեսի ճշմարտախոսությամբ մանրամասնորեն կերտելով քաղաքի մարդկանց նկարագիրը:

Գյումրին ավանդապահ քաղաք է, ծնունդ, կնունք, հարսանիք, թաղում անելու իր կարգուկանոնն ունի, հստակ դերակատարումներով հերոսներն ու ինչ-որ տեղ, ինչ-որ մեկի կողմից չգրված, բայց խախտման ոչ ենթակա օրենքների իր համակարգը: Ինչպես ամենուր, այստեղ էլ մարդկային հոգեբանությունը սոցիալական հարաբերությունների արդյունք է: Հեղինակն այս իմաստով էլ կարողանում է ստեղծել գեղարվեստական

համոզիչ մթնոլորտ՝ մտքի թարմություն ու սրություն, հայացքի դիպուկություն ու դիտողականություն, ներքին բախումներ, հյութեղ պատկերներ, որտեղ հենց այնպես վերացական խոսքեր չեն հնչում:

Լ. Բարսեղյանի գեղարվեստական մտածողությունը բարդ է, ինչպես մեր ժամանակն ու մեր օրերի մարդը, լեզուն՝ առավել առօրյա-խոսակցական, քան բառացիորեն, գրական: Գրել այնպես, ինչպես խոսում են. հեղինակ-ընթերցող երկխոսության բանալին հեղինակը հենց այս սկզբունքի մեջ է գտել: Այսպես, օրինակ՝ մերուաղջիկ, լեզուբերան, ազգուերամ, եսիմով, հերուտղա, պուրլիգանձի, խորաթա, մուզիկանտ, օդբաթ. շարքը երկար կարելի է շարունակել. «Զամբո»-ի հայերենը լեոնբարսեղյանական է, գրիչը՝ դիպուկ, ասելիքը՝ համոզիչ: Պատմվածքների առանձին հատվածներ գեղարվեստական առինքնող ուժով ու համոզչությամբ են հնչում, հուզական անկեղծ ապրումների ու զգացմունքների թանձրացում են՝ առանձնահատուկ պարզությամբ ու հաճախ ամփոփված միայն մեկ նախադասության մեջ:

Լ. Բարսեղյանի հերոսը ժամանակակից մարդն է, մեզնից յուրաքանչյուրը՝ իր բոլոր թերություններով, թուլություններով, թաքս ու շիտակ կողմերով: Բոլոր կարծիքներն ապրելու իրավունք ունեն. հեղինակի համոզումն է, իսկ արձակով գալիս է ապացուցելու՝ պետք չէ հերոսներ որոնել. հերոսը մեր ժամանակների մարդն է, ու գրական կերպարի հոգեբանական առանձնահատկությունները բխում են ազգային, այս պարագայում տարածաշրջանային առանձնահատկություններից, ու այստեղ է, որ ամբողջանում է կերպարների հոգեբանական կառույցը: Կերպարներից ոչ մեկը, ի մասնավորի՝ լենինականցի-գյումրեցիներից և ոչ մեկը տուրք չէ գրական սխեմաների, հերոսները կադապարված չեն նախապես գծված շրջանակներում և հոգեբանորեն համոզիչ են:

Քննության առնված պատմվածքների գերակշռող մեծամասնության մեջ հեղինակն օգտագործում է ինքնակենսագրական փաստեր, վավերագրողի ճշգրտությամբ ու առաջին դեմքով ներկայացնում այդ պահի իրադրությունն ու մարդկանց: Թվում է՝ գործ ունենք կենսապատում վեպի հետ՝ առանձին պատմվածք-գլուխներով: «Զամբո»-ն «շնչող» գիրք է բոլորիս մասին ու բոլորիս համար:

Lilit TOVNASYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail:lilit-aragac@mail.ru

THE AESTHETIC IMAGE OF LENINAKAN-GYUMRI IN LEVON BARSEGHYAN'S PROSE

Several stories from the book "Jambo" by Levon Barseghyan are under consideration. The image of Leninakan-Gyumri, the image of this traditional, rich in inner sceneries, mysterious, anagogic, rigid and invariable town living with spiritual life, is depicted through the author's fictional images, descriptions, typical and colorful characters and unique analyses. The writer's prose has a spectacular emotional influence. The author achieves realization of ideological and aesthetic objectives through introducing the variety of human features, characters and types, simple and complicated relationships.

Լալիկ ԽԱՉԱՏՏՅԱՆ (Հայաստան)

Հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան)

E-mail: lingual51@mail.ru

ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՀԱՄԵՄՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶ ՄԱՏՅԱՆՈՒՄ

Պատկերավոր համեմատությունները (ՊՀ) լեզվական այնպիսի կառույցներ են, որոնք արտահայտում են համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարբերության միջոցով¹:

¹ Հմմտ. Բաղիկյան Խ., ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջեր 126-127, 140, 260-263: Назарян А. Фразеология современного французского языка, М., 1987, էջք 111-125, 194-199: Բեդիրյան Պ., ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 50-51:

ՊՀ-ները՝ իբրև լեզվական միավորներ, բնութագրվում են որոշակի հատկանիշներով, ուստի կարելի է դրանք դասակարգել ըստ ներբառաթային իմաստային հարաբերությունների (հոմանիշներ, հականիշներ), ըստ ձևաբանական արժեքի (ածականական, բայական և մակբայական), ըստ տարբերակների, ըստ շարահյուսական գործառնությունների և այլն:

Ստորև կանդրադառնանք ածականական ՀՊՄ-ների քննությանը Աստվածաշնչի գրքերում¹:

Աստվածաշնչում այդ կարգի կապակցությունները հանդիպում են կառուցվածքային տարբեր տեսակներով՝ թե՛ ածականական բաղադրիչներով և թե՛ առանց դրանց: Հմնտ.

Քաղցր է քան զմեղու խորիսիս (Սաղ. ԺԸ. 11): Ոչ է գլուխ *չար քան զգլուխ օձի* (Սիրաք. ԻԵ. 22): *Իբրև զաշտարակն Դաւթի* պարանոց քո (Երգ. Դ. 4): Հոտ հանդերձից քոց *իբրև զհոտ կնդրկի* (Երգ. Դ. 11): *Իբրև զթել որդան* են շրթունք քո (Երգ. Դ. 3):

Ածականի արժեքով ՊՀ-ները բաժանվում են երկու տեսակի՝

ա) Երկգագաթ ՊՀ-ներ (ածական+նախադրությամբ կապակցություն). Մի՛ ոք ... *պիղծ իբրև զԵսաւ*, որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնս վաճառեաց (Եբրա. ԺԲ.16): *Քաղցր է նա քան զմեղու խորիսիս* (Սաղ. ԺԸ.5):

բ) Միագագաթ ՊՀ-ներ (նախադրություն+խնդիր). Եւ էր թիւ որդւոցն Իսրայելի *իբրև զաւագ ծովու անչափ եւ անթիւ* (Ովսէ. Ա. 10): Ձի արարից գնա մերկ ... եւ կարգեցից գնա *իբրև զերկիր անջուր* եւ սպանից գնա ի ծարաւոյ (Ովսէ. Բ.3):

Միագագաթ կառույցները դառնում են երկգագաթ կապակցությունների սերիչ կաղապարներ, երբ ածականական բաղադրիչները շարադասական դիրքի փոփոխության հետևանքով դառնում են գերադասանդամ՝ արտահայտելով համեմատելի հատկանիշ, ինչպես՝

իբրև զաւագ ծովու անչափ - անչափ իբրև զաւագ ծովու

իբրև զաւագ ծովու անթիւ - անթիւ իբրև զաւագ ծովու

Գրաբարի ածականական ՊՀ-ների շարքում որոշակի շերտ են կազմում այն կապակցությունները, որոնք արտահայտում են *գունային*

¹ Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երեւան, 1997:

հատկանիշ՝ իրենց կազմում ունենալով գունանուն որևէ բաղադրիչ: Քննելով Աստվածաշնչի՝ գունային ՊՀ-ների իմաստաբանությունը՝ նկատում ենք, որ այդ կարգի կառույցների գերադաս բաղադրիչների դերում, որպես կանոն, հանդես է գալիս գունանվան համակարգի միջուկներից մեկը: Այդպիսի կապակցությունների իմաստային հիմքում ընկած է տվյալ միջուկի գունային ենթադաշտի և համեմատելի առարկայի գունային հատկանիշի ընդհանրությունը: Հմնտ.

Եւ ծագեաց արեւ ի վերայ ջրոցն, եւ ետես Մովսբ զջուրսն *կարմիր իբրեւ զարիւն* (Դ. Թագ. Գ. 22): Վարսք նորա կռածոյք՝ *սեաւ իբրեւ զագոաւ* (Երգ. Է. 11): Եւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա *սպիտակ իբրեւ զձիւն* (Մատթ. ԻԸ. 3): Զուարթագին են այք նորա ի գինոյ և *սպիտակ ատամունք քան զկաթն* (Ծննդ. ԽԹ. 12): Եւ գլուխ նորա եւ հերքն *իբրեւ զասր սպիտակ եւ որպէս զձիւն* (Յայտ. Ա. 14):

ՊՀ-ները շարահյուսական մակարդակում կարող են կատարել ստորոգելիի գործառույթ. այդ դեպքում գունանվան միջուկային անդամները հանդես են գալիս *եւ, լինել, առնել* վերացական բայերի (խոնարհված) ձևերի հետ: Հմնտ.

Լուա՛, եւ *քան զձիւն սպիտակ եղեց* (Մադ. Ծ. 9): Արեգակն *եղել սեաւ իբրեւ զկապերտ այծեայ* (Յայտ. Զ. 12):

Միևնույն գունանուն բաղադրիչով ՊՀ-ներն ստեղծում են աստիճանավորում (գրադացիա). երկրորդ կապակցությունն ընդգծում է առաջինի գունային նշանակությունը՝ նրան հաղորդելով սաստկական իմաստ: Հմնտ. Եւ գլուխ նորա եւ հերքն *իբրեւ զասր սպիտակ եւ որպէս զձիւն* (Յայտ. Ա. 14):

Որոշակի կառույցներում կարող է գեղչվել գունանուն բաղադրիչը. նման դեպքերում նախադրության խնդրի դերում հանդես են գալիս գունանվան միջուկի եզրային անդամները: Հմնտ. Եւ հեր գլխոյ նորա *իբրեւ զբոց հրոյ* (Դան. Է. 9):

Այստեղ գեղչվել է *կարմիր* գունանունը, փոխանակ՝ *կարմիր իբրեւ բոց հրոյ (հրոյ* ձևը սեռականով ավելադրություն է) – «կրակի (բոցի) նման՝ պես կարմիր, կարմիր ինչպես կրակը՝ բոցը՝ կրակի բոցը» և այլն:

Ածականական ՊՀ-ները, պայմանավորված բառային երկփեղկված իմաստներով, կարող են հանդես գալ նաև մակբայի բառաքերականական դերով՝ ցուցաբերելով խոսքիմասային տարարժեքություն: Այդօրինակ կապակցությունների երկփեղկված խոսքիմասային արժեքներն իրացվում են շարահյուսական մակարդակում.

1. *ըստ օրինակի* - ած. «նման, հավասար», մկբ. «նմանությամբ», 2. *մահու չափ* - ած. «անսահման», մկբ. «չափազանց», 3. իբրև զառիծ – ած. «համարձակ», փխբ. «առաջնորդ», մկբ. «քաջաբար»: Հմմտ.

Վրեժ *մահու չափ* դովալ խնդրեսցի (Զաք., Ե. 3), - ած.: Եւ մեք ելցուք *մահու չափ* մարտնչել ի վերայ օրինացն (Բ. Մակ. ԺԳ. 14): Զի ես եմ *իբրև զառիծ* ի վերայ տանն Յուդայ (Ովսե. Ե. 14),-աձ.: Որսացեալ եմ *իբրև զառիծ* (Յովբ. Ժ. 16),-մկբ.:

Ածականական ՊՀ-ները գրաբարի ինքնուրույն և թարգմանական երկերում ունեն ընդգծված ոճական-արտահայտչական գործառույթ և որոշակի դեր են խաղում դարաշրջանի պատմագեղարվեստական և թարգմանական երկերի պատկերավորման համակարգը բնութագրելիս: Այդպիսի կապակցությունների իմաստային և կառուցվածքային ուսումնասիրությունը լեզվաբանական արժեքից բացի, վեր է հանում նաև հայերեն պատկերավոր լեզվամտածողության նախնական շերտերն ու մեզանում գործածվող կառույցների սերիչ կաղապարները:

Lalik KHACHATRYAN (Armenia)

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (Yerevan)

E-mail: lingualal51@mail.ru

FIGURATIVE EXPRESSIONS WITH THE VALUE OF THE ADJECTIVE IN THE HOLY BIBLE

The figurative expressions with the value of the adjective in the original and translated works, written in grabar (Old Armenian), particularly in the Holy Bible, have underlined stylistic-expressive function and play a certain role in characterizing the system of works of historical fiction of the epoch.

In the figurative expressions with the value of the adjective two full-semantic components are present, where the adjectival component is a dominant member, such as *քաղցր քան զմեղր* (sweeter than a bee), *հասու քան զուր* (sharper than a sword), *չար քան զթոյնս օձից* (more evil than a serpent's poison), etc.

The semantic-constructional analysis of the adjectival figurative expressions occurring in the Holy Bible show that one-peak constructions may turn into generative molds for double-peak combinations. In this case the adjectival components as a result of change of the syntactic position become dominant members and express a comparable property, e.g.

իբրև զաւազ ծովու անչափ - անչափ իբրև զաւազ ծովու (boundless as the sand of the sea)

իբրև զաւազ ծովու անթիւ - անթիւ իբրև զաւազ ծովու (countless as the sand of the sea)

իբրև զերկիր անջուր - անջուր իբրև զերկիր (waterless/arid as the earth)

Among adjectival figurative expressions there occur combinations with components denoting colour where the adjectival component (colour name) is related to the construction noun+preposition, e.g. *սպիտակ իբրև զձիւն* (white as snow), *սեւ իբրև զագրաւ* (black as a raven), *կարմիր իբրև զրոց* (red as a flame) and so on.

In the books of Bible figurative expressions with the value of the adjective have underlined stylistically-expressive value.

Մարիետա ԽԱՉԱՏՐՅԱՆ (Հայաստան)

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

E-mail: hayoclezviambion@mail.ru

**ՄԱԿՂԻՐԸ Վ. ԹՈԹՈՎԵՆՑԻ «ԿՅԱՆՔԸ ՀԻՆ
ՀՌՈՎՄԵՍԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ» ՎԻՊԱԿՈՒՄ**

Զեկուցման մեջ քննության է առնված Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (տե՛ս Վ. Թոթովենց, Երկեր, Եր., 1957) վիպակի լեզուն բաղադրող միջոցներից մեկը՝ մակդիրը: Վիպակի լեզուն ընդհանրապես և լեզվական միջոցներից մեկը՝ մասնավորապես գնահատելու համար հիմք ենք ընդունել երկի գեղարվեստական արժեքը. վիպակը «մի անհատի կենսագրության խոստովանությունը լինելուց վերաճում է մի ամբողջ սերնդի գեղարվեստական կենսագրության, սերունդ, որը ցավագին գալարումներով վերապրում է նահապետական հարաբերությունների փլուզումն ու հայրենի օջախի վրա կախված արհավիրքի ծանրությունը, որը տառապանքի ու ցավի միջից անրջում է լուսավոր եզերքներ»¹: Սերունդը բազմաշերտ է՝ «բարձրատոհմիկ անձանցից մինչև ցնցոտիապատ գյուղացիներ. նրանք բոլորն էլ ապրում են մի աշխարհում, որը լի է անցողիկ քաղցրություններով և տևական դառնություններով»: Ներկայացվող հարաբերությունները, հասարակական շերտերը, ուրախություններն ու դառնությունները, մանկության լուսավոր ու թախծալի վերհուշերը արտացոլվում են համապատասխան լեզվով, որի գեղագիտությունն արտահայտող հզոր միջոցներից մեկը մակդիրն է: Թոթովենցը վարպետորեն է գործածել գեղարվեստական այս հնարքը՝ խորապես ընկալելով նրա մասնահատկությունները՝ իրականության անվրեպ արտացոլում և հուզական վերաբերմունքի դրսևորում: Մակդիրի հմուտ ընտրություններով Թոթովենցն ապահովել է գեղարվեստական խոսքի կարևորագույն հատկանիշներ՝ պատկերավորություն և հուզականություն,

¹ Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Եր., 1986, էջ 146:

որոնց շնորհիվ վիպակը ճանաչվել է իբրև իսկական «արվեստի նմուշ» (Ավ. Իսահակյան):

Հույզը թերևս գեղարվեստական խոսքի ամենաբնորոշ հատկանիշն է, սակայն ծնվում է միայն այն դեպքում, երբ բանահյուսվածքը անսխալ է, գաղափարապես հազեցած ու ճիշտ: Նման դեպքերում ոչ միայն բառերի փոխաբերական գործածությունները, այլև համագործածական շատ բառեր, խոսքի պահանջով, նաև գրողին տրված՝ բառերն իրենց իսկական իմաստներով գործածելու վերին շնորհով ու կարողությամբ պայմանավորված, ձեռք են բերում հուզական, բովանդակային և արտահայտչական լրացուցիչ երանգներ՝ անհատականացնելով, ինքնատիպ դարձնելով հորինվածքը, որի արժեքը, անկասկած, առաջացրած տպավորությունն է: Ահա. «Ես նայեցի մորս կանչած ուղղությամբ և տեսա լուսինը, որ մանիշակագույն մթնշաղում, *մուգ-կապույտ* լեռան վրա նստել էր: Այնքան *մեծ* էր այդ լուսինը» (11): Ուշադրություն դարձնենք փոխաբերական պատկերին. լուսնի անձնավորումը սովորական նստել բայով է իրականացվել, սակայն անչափ տպավորիչ է, մնայուն: Ընթերցողը կարծես գեղանկարում տեսնում է մթնշաղի մանիշակագույնն ու լեռան մուգ կապույտը, որ խոսքից դուրս նշված առարկաների բնական հատկանիշները կարող էին լինել և ընդամենը անվանողական արժեք ունենալ, մինչդեռ այստեղ դրանք սոսկ գույներ չեն, նաև մակդիր-խորհրդանիշեր են, որ համատեղում են ապրված պահի երանության ու այդ ամենի անդարձ կորստյան մորմոքի զգացողությունները: Վիպակի ժանրային առանձնահատկությունը, Թոթովենցի բանաստեղծական խառնվածքը, նրա մեջ ապրող հայրենապաշտությունը, սիրելի մարդկանց, անցած դեպքերի հանդեպ վերհուշերը ծնում են անեզրական կարոտ, և գործածված գույները դառնում են այդ կարոտի գույները, անհետացած հայրենական եզերքի, սիրելի մոր, մանկության օրերի կարոտի: Այդպես նաև *մեծ* բառը լուսինը բնութագրելիս դարձել է մանկան աշխարհընկալումն արտահայտելու միջոց: Հետագայում՝ կյանքի անվերջ դեգերումներում, այդքան մեծ լուսին այլևս չտեսավ...

Թեև փոխաբերական մակդիրներն ինքնին հուզականությամբ են օժտված, սակայն գրողից պահանջվում է բառընտրության բացառիկ

հմտություն և բառի գեղագիտական արժեքի ճիշտ զգացողություն, որպեսզի գործածած մակդիրը ծառայի նպատակին:

Ասվածը Թոթովենցի լեզվին բնորոշ է, և դա կնկատվի գոհարների պես շաղ տված նրա մակդիրներից ցանկացածը վկայակոչելիս: Ծառի սաղարթների բանաստեղծական պատկերներ մեր գեղարվեստական խոսքում հաճախ են հանդիպում: Ահա Թոթովենցը գրում է. «Կեսօրին նստում էին «ճաշի» ազարակի *ամենաթևակոր ծառի* տակ...» /76/: Խոսքի ուժը իմաստով շատ հայտնի, սակայն լեզվամտածողությամբ բոլորովին թարմ ու նոր այս բառակապակցությամբ է ապահովվել, որի մեջ ամփոփված է նաև հայրենի ազարակի ծառ ու թփի հանդեպ սիրո ու կարոտի նրբին ապրումը: Նույնպիսի բացառիկ զգացողությամբ Թոթովենցը գործածում է *մռայլաթև մուրթ* և *արևային խնդություն* մակդիրային կապակցությունները՝ դրանք հակադրելով միմյանց՝ ընդգծելու համար մշակների ծանր աշխատանքն ու բաղձալի հանգստի զգացումը: Նա գրում է. «...Բայց մշակներն ավելի խորը խնդությամբ, քան ամբողջ աշխարհը, ողջունում էին վերջալույսը, ողջունում էին նրանք մռայլաթև մուրթը արևային խնդությամբ, որովհետև մուրթը բերում էր նրանց տառապանքի թեթևացում, հանգիստ, անսահմանորեն խորը հանգիստ» /77/: *Խորը խնդություն* և *անսահմանորեն խորը հանգիստ* մակդիրային կապակցությունները խոսքից դուրս դրական հարիմաստ ունեն, սակայն բերված հատվածում նրանց դերակատարությունն այլ է. նրանք ընտրված են՝ ընդգծելու մշակների անուրախ առօրյայի դառնությունը: Փաստորեն Թոթովենցը իրականությունը մակդիրի միջոցով է ներկայացնում իր թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունքի զուգորդումով: Մակդիրների հուզական և դատողական արժեքներով Թոթովենցը լուծում է կարևորագույն հարցեր՝ խոսքի բովանդակության ճշտություն, կերպավորման արվեստ, հուզականություն և պատկերավորություն: Զգացմունքների արտահայտման տեսակետից անհամեմատելի է գրողի գործածած քնարական մակդիրների դերը, այսպես՝ «Այդ անէացած աշխարհի կապույտ մոխրում այժմ էլ, զգում եմ, կաթում է այդ վարդենու արյունը...» /20/: *Անէացած* բառի և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստները, սիրո և տրտմության, նաև *կապույտ մոխիր* մակդիրային կապակցությունը կարոտի ու երազի միա-

խառնված ապրումներով աննախադեպ հուզականությամբ են պարուրում յուրաքանչյուրին, իսկ վարդենու արյունելու անընդհատելի զգացողության պատկերը մշտակա է դարձնում անվերադարձ հեռուներում մնացած հինավուրց հայրենիքը: Այդպես նաև՝ *թոշկոտուն և կարկաչուն մի աղջիկ /56/, մթնշաղի կախարդական ժամեր /71/ և, և, և...*:

Թոթովենցը գործածել է և՛ պարզ, և՛ բաղադրյալ մակդիրներ (մուգ գույնի հայհոյանք -113), բազմաթիվ են առարկայական և բայական (ցավագին ժպտում էր -51), նկարագրական (հերկուլեսյան որդի -51), քնարական (հրակարմիր ու մեծաթև վերջալույս, աստղահնչուն զիշեր – 173), չափազանցական (ամոթի անգութ ճանկեր -70), մակդիրների գործածությունները՝ սովորական ու շրջուն շարադասություններով՝ ինելահեղորեն տոնական թափ /60/, արծաթյա թաս՝ մեջը լիքը նոր կթած կաթով /172/ և այլն, և այլն...

Այս ամենով Թոթովենցի խոսքի գեղագիտությունն է ապահովվում՝ համատեղ ճոխություն և չափավորություն, համաչափություն և բազմազանություն:

Marieta KHACHATRYAN (Armenia)

Gyumri State Pedagogical Institute

E-mail: hayoclezviambion@mail.ru

EPITHET IN THE NOVEL “LIFE ON THE ANCIENT ROMAN ROAD” WRITTEN BY V. TOTOVENTS

The present paper discusses the epithet as one of the literary devices depicting the language of the novel written by V. Totovents “Life on the Ancient Roman Road” /see V. Totovents, Works, Yerevan, 1957/.

For the purpose of evaluating the language of the novel in general and one of the literary devices in particular, the literary merit of the work is taken into consideration; as an “autobiographical confession” the novel develops into a “literary biography of a whole generation, a generation that painfully survives

the breakdown of patriarchal relations, a generation that suffers torments and dreams of bright lands¹".

The generation is multilayered, consisting of "the honorable and the poor; they all live in a world filled with momentary delight and never-ending bitterness". The relationships, social layers, joy and sorrows, happy and grievous memories of childhood are depicted by the relevant language, an epithet being one of the powerful means to describe its aestheticism.

V. Totovents has proficiently used this literary device, understanding all its peculiarities as a means of precise reflection of reality and manifestation of emotional behavior. By skillfully chosen epithets V. Totovents filled the narrative language with the most important features of description and emotiveness. Due to them the novel is known as a real "art sample" /A. Isahakyan/.

An emotion is perhaps the most specific feature of fiction, however it is revealed only when folklore is unerring, rich in ideas and accurate. V. Totovents provides all these by using unique metaphorical epithets, which cover the most essential value of speech, its power and impression.

Ольга ХАРЛАН (Украина)

Бердянский государственный педагогический университет
E-mail: olhakharlan@ukr.net

**АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ СОВРЕМЕННЫХ
УКРАИНСКО-АРМЯНСКИХ ЛИТЕРАТУРНЫХ
СВЯЗЕЙ НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА "ВСЕСВІТ"**

Журнал "Всесвіт" – один из самых старых украинских литературных журналов, который издается с января 1925 года. Он основан выдающимися украинскими писателями Василием Елланом-Блакитным и Мыколом Хвильевым, художественно редактируемый Александром Довженко. За 90

¹ S. Aghababyan, *History of the Armenian Soviet Literature*, V.1, Yerevan, 1986, p. 146.

лет своего существования журнал напечатал более полтысячи романов, тысячи повестей, поэтических подборок и драматургических произведений, тысячи статей, исследований, эссе, репортажей, интервью авторов из 105 стран мира в переводах с 84-х языков мира.

В 2012г. один из номеров был полностью посвящен литературе, искусству, истории и другим вопросам культурной жизни Республики Армения¹.

Содержание номера имеет традиционный характер: это рубрики "Поэзия", "Проза", "Писатель. Литература. Жизнь", "Информации", особый раздел – поздравления официальных лиц. Рубрика "Поэзия" открывается статьей Мирона Нестерчука "Армянская поэзия в украинских переводах"², в которой отмечается необходимость издания новейших поэтических антологий, которые бы открывали неизвестных авторов. Мини-антология журнала включает 12 имен поэтов, различных по стилистике, жанровым предпочтениям: Метаксе, Усик Ара, Баграт Алекян* и др. Прозаические страницы содержат образцы малой прозы: путевые очерки, рассказы, новеллы. Объединяющими для авторов стали темы общечеловеческие: любовь, счастье, трагедийность современного мира. Прозаики обращаются как к современной жизни, так и к историческому прошлому. Интересной является публикация отрывка из исторической хроники "История Хотинской войны" Ованнеса Каменаци (перевод и статья Александра Божко). Особое значение имеет публикация культурологических исследований Рубена Ангаладяна, в которых он представляет собственное видение выдающихся личностей (Егише Чаренц, Сергей Параджанов, Фрунзик Мкртчян), а также размышляет над вопросами становления Еревана как культурной столицы страны и нации, феномена образа матери у армян в XX веке и др. В последней рубрике предлагается краткая информация об Институте древних рукописей "Матенадаран" имени Месропа Маштоца и Союзе писателей Армении. Привлекает внимание и оформление номера: на 3 страницах обложки представлены отпечатки старинных книг XII века, из архивов Матенадарана, а на одной – изображение карты Армении на фоне региона.

¹ *Всесвіт: незалежний літературно-мистецький та громадсько-політичний журнал.* – 2012. – № 1–2. – 296 с.

² *Нестерчук М. Вірменська поезія в українських перекладах / Мирон Нестерчук // Всесвіт.* – 2012. – № 1–2. – С. 19–21.

* *Фамилии и имена передаются в украинской транскрипции.*

Среди переводчиков – Нина Сапотницкая, Анаит Татевосян, София Шестерненко, Дмитрий Дроздовский, Раиса Карагезян, Нина Харчук и др.

Для украинского читателя произведения подавляющего большинства писателей, предложенных в журнале, – неизвестны. Открытие новых имен, тем, жанров – важный вклад в вопросы украинско-армянских культурных связей.

Olga KHARLAN (Ukraine)

Berdiansk State Pedagogical University

E-mail: olhakarlan@ukr.net

ACTUAL ISSUES OF MODERN UKRAINIAN-ARMENIAN LITERARY CONNECTIONS IN THE PAGES OF "UNIVERSE" ("VSESVIT")

Journal "Universe" ("Vsesvit") – one of the most famous Ukrainian literary editions, has been published since January 1925. During the 90 years of its existence, the journal published more than five hundred novels, thousands of stories, collections of poetry and dramatic works, thousands of articles, studies, essays, reports, interviews of authors from 105 countries of the world with translations of 84 languages.

In 2012 one of the issues was entirely devoted to literature, art, history and other matters of cultural life of the Republic of Armenia [1].

The content of the issue has traditional character: these rubrics "Poetry", "Prose", "Writer. Literature. Life", "Information." Poetic mini-anthology of the journal includes 12 names of poets, different in stylistics and genre preferences: Metakse, Usik Ara, Bahrat Alekian¹ and others. Prosaic pages contain images of short fiction: travel essays, short stories, novels. Uniting for authors became the universal themes: love, happiness, tragedy of the modern world. Prosaists referred to as the modern life and the historical past. Interesting is the publication of excerpts from historical chronicle "History of Khotyn war" by Hovhannes Komenatsy (translation and article by Oleksandr Bozhko). Of particular importance is the publication of Cultural Studies by Ruben Angaladyan. The final rubric offers a brief information about the Institute of Ancient Manuscripts

¹ Surnames and names are transferred to the Ukrainian transcription.

"Matenadaran" named after Mesron Mashtots and the Union of Writers of Armenia. Among the interpreters are-Nina Sapotnitskaia, Anait Tatevosian, Sofia Shesternenko, Dmitrii Drozdovskii, Raisa Karahezian, Nina Kharchuk and others.

For the Ukrainian reader works of the overwhelming majority of writers, proposed in the magazine is unknown. The discovery of new names, themes, genres is an important contribution to the issues of the Ukrainian-Armenian cultural connections.

Մերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: serhayr@mail.ru

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐԴԻ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ

Առայսօր հայ լեզվաբանության մեջ քիչ բան է արված լեզվի ու այն կրող հանրության փոխհարաբերության, մասնավորապես, տեղական խոսվածքների հասարակական տարբերակվածության խնդրի գիտական մեկնաբանման ուղղությամբ: Այդուհանդերձ, հանրալեզվաբանության համար հետաքրքիր անդրադարձներ կան վերջին տասնամյակներին լույս տեսած որոշ աշխատություններում (տե՛ս Է. Աղայան, «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը», Թ. Ղարազյուլյան, «Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը», «Ակնարկներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի»): Առայժմ միակ աշխատությունը, որտեղ հանգամանալի քննության են առնվել տեղական խոսվածքի հասարակական տարբերակվածության հարցերը, Հ. Զաքարյանի «Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում» մենագրությունն է:

Վերջին տասնամյակներին մեր ժողովրդի կյանքում կատարվող աննախադեպ իրադարձություններն անբեկանելի կնիք են թողնում մայրենիի զարգացման ընթացքի վրա՝ երևան հանելով հանրության ներկա հասարակական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական, մշակութային և այլ պայմանների ազդեցությունը հատկապես արդի խո-

ասկցական հայերենի և մասնավորապես նրա տեղական խոսվածքների վրա: Դրա լավագույն վկայություններից է Գյումրու ժամանակակից լեզվավիճակը, որի ուսումնասիրման քաղաքը (հատկապես հարուստ ավանդույթների տեր)՝ որպես մշակութային, կրթական ու տնտեսական կենտրոն, նաև լեզվի զարգացման գործում ունի շոշափելի կշիռ ու առաջատար դեր: Այն լեզվական համակարգում կատարվող տեղաշարժերին արձագանքում է ավելի արագ, տեղաշարժեր, որոնք արդյունք են ոչ միայն լեզվի ներքին կառուցվածքային հարաբերությունների, այլև արտալեզվական գործոնների ազդեցության:

Յուրաքանչյուր լեզվական հանրություն, կախված ժամանակից, իր բնակչության էթնիկական առանձնահատկություններից, այն հասարակական-տնտեսական կացութաձևից, որում գտնվում է, իր սոցիալական ապրելակերպից, բարոյահոգեբանական վիճակից և շատ այլ հանգամանքներից, բնութագրվում է որոշակի հասարակական հատկանիշներով: Դրանց մի մասը (հարցվողների տարիքը, սեռը, բարբառային պատկանելությունը և այլն) ունի ընդհանրական արժեք, որովհետև էական է լեզվական բոլոր հանրությունների համար, որոշ հատկանիշներ էլ կարող են ուղղակիորեն կապված լինել տվյալ հանրության յուրահատկությունների հետ: Այսպես, Գյումրու պարագային որպես լեզվահատկանիշներ կարևորվում են նաև այն ժողովրդագրական տեղաշարժերը, որ թելադրվեցին 1988-ի երկրաշարժով, քաղաքի վերակառուցման առանձնահատկությունները, նրա հատակագծային փոփոխությունները, ռուսալեզու տարրի (մասամբ նաև՝ երկլեզվակիր) առկայությունը քաղաքում, օրավուր աճող արտագաղթ-արտահոսքի հետևանքով նրա բնակչության թվի զգալի նվազումը, հարակից գյուղական բնակչության (հատկապես Ջավախքի)՝ դեպի քաղաք միգրացիոն հոսքի ակտիվացումը և տնտեսության գրեթե համատարած կաթվածով պայմանավորված սոցիալական (աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, եկամուտ և այլն) ծանր վիճակը:

Ճշգրտվել է ոչ միայն էական արտալեզվական գործոնների, այլև հարցվողների քանակը, հարցման է ենթարկվել 1800 մարդ, ընտրվել են հանրալեզվաբանական ուսումնասիրության տեսակետից կարևոր այնպիսի զուգաձևություններ, որոնք ներկայացնում են լեզվական բոլոր մա-

կարդակները՝ հնչյունական (բառասկզբում ձայնավորների շնչեղացված արտասանություն, բառամիջում խուլ բաղաձայնների ձայնեղացում), բառային (բառակազմական գրական ձևերի փոխարեն խոսակցական ձևերի գործածություն, օտարաբանությունների, ժարգոնի, հասարակական երանգավորում ունեցող բառ-արտահայտությունների օգտագործում և այլն), քերականական (հոլովման, խոնարհման, համաձայնության, խնդրառության) և այլ գուգաձևություններ: Հարցաթերթերում ընդգրկվել են նաև հարցեր, որոնք հնարավոր են դարձնում հարցվողի հասարակական բնութագրի ստեղծումը:

Գյումրու արդի լեզվավիճակի առանձնահատկությունների քննությունը տակավին սկզբնային փուլում է, դեռ մեծ ծավալի աշխատանք է պետք նրա արդյունքներն ի մի բերելու, տեսական եզրակացությունների հանգելու, օրինաչափություններ բացահայտելու նպատակով: Այնուամենայնիվ, հիմա արդեն, ի թիվս այլ եզրահանգումների, կարելի է աներկբայորեն արձանագրել, որ հետխորհրդային տարիները նպաստավոր չէրան այն դրական միտումների կայունացման ու խթանման առումով, որոնք բավականին պարզորոշ դիտվում էին հանրապետության երկրորդ քաղաքում լեզվական վիճակի բարելավման մեջ մինչև անցյալ դարի ութսունական թվականների վերջը:

Sergo HAYRAPETYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail: serhayr@mail.ru

ON SOME ISSUES OF GYUMRI'S MODERN LANGUAGE SITUATION

The necessity of the study of the language situation of Gyumri's utterance is of mature matter. Each linguistic society, depending upon time, its ethnic peculiarities, social and economic manner, social state, moral and psychological and other circumstances is characterized by definite social features. One part of them has universal value (age, sex, dialectal belonging of the questioned people) as it is important for all linguistic society, some

attributes can be directly connected with some peculiarities of the society. Thus, in case of Gyumri the demographic settlements, as linguistic attributes, are attached importance which were conditioned by the earthquake of 1988, the considerable inflow of population from rural residences to Gyumri (especially from Javakhq), the reconstructive works of the town, the existence of Russian-speaking element in the town (partially bilingual) as well as day by day increasing migration-outflow conditioned by social extreme state(work, occupation, specialization, income, etc).

Not only extralinguistic functions, but the number of the questioned people has been verified in the report. 500 people(during 2008-2010) have been questioned, as well as from paralinguistic standpoint such important parallels have been chosen that present all linguistic levels: phonetic (production of initial vowels, vocalizing of consonants), lexical(instead of word-forming literary forms usage of spoken forms, usage of jargons, foreign words), grammatical (case, pluralization, agreement, government), In the questionnaire we have included two types of questions: linguistic by means of them we get paralinguistic data and social ones that make the interviewer's social character clear.

The investigation of Gyumri's language situation is of new beginning and a great deal of work must be done to have theoretical conclusions for summing the results. Therefore, we can undoubtedly record that the post-Soviet years did not foster the stabilazation of positive tendencies for the improvement of the language situation until 80-s. that was quite clearly evident in the second town of the republic.

Հայկ ՀԱՐՈՑԱՆ¹, Նելլի ՀԱՐՈՑԱՆ² (Հայաստան)Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ ¹Երևանի պետական համալսարան ²

E-mail: haroyan@mail.ru

ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՆՃԱՐԵՂ ՍՈՒՐԲԸ.
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Դարեր շարունակ, ընդհուպ մեր օրերը, Մատեանն ընկալվել ու մեկնաբանվել է որպես Աղոթագիրք: Նման մոտեցումն էապես աղքատացնում է ստեղծագործության բովանդակությունը, քանզի շրջանցվում կամ անտեսվում է ստեղծագործության բուն էությունը, այն է՝ *Ողբերգություն* լինելու իրողությունը: Մատեանը բազմաթեք ու բազմիմաստ ստեղծագործություն է, որի իրական բովանդակությունը բացահայտելու համար պետք է գերծ մնալ պատմականորեն ձևավորված կարծրատիպերից և հարազատ մնալ նրա ոգուն և ոչ թե տառին, բովանդակությանը և ոչ թե ձևին: Ըստ էության, Մատեանը ձևով կրոնական, բովանդակությամբ համամարդկային հնչեղություն ունեցող գործ է, որը գրված է դարաշրջանի մտայնության ոգով, այն է՝ մարդկային մեղքերի խոստովանության, աղոթքի տեսքով (հայտնի է, որ խոստովանական ինքնամերկացումը անհատի ինքնաարտահայտման կրոնական ձևն էր միջնադարում, բավական է հիշել Օգոստինոսին): Այն իր տեսակի մեջ անգերազանցելի, բազմաշերտ ու բարձրարժեք, այլաբանություններով ու ծածկագրություններով լեցուն *Ողբերգության* Մատեան, իրեն իսկ՝ Նարեկացու բնութագրությամբ՝ մի «երաշակերտություն ...բազմաստեղյան»՝ հասցեագրված երկրի վրա հաստատված բոլոր բանական էակներին, նրանցից ոմանց՝ իբրև «աղերս-աղաչանաց», իսկ ոմանց՝ «խրատ բարեաց». «...առ ամենայն հասարական կեցեալ յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի,...առ դէմս աղաւթից այսու մատենիւ մատակարարեցի»¹ (ընդգծ. -Հ.Հ., Հ.Ն.): Նարեկացու ողբանվագ

¹ Նարեկացի Գր., Մատեան ողբերգութեան, Աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա.Ա.Ղազինյանի, Եր., 1985, Գ-Բ:

նորոգ Մատեանը անձնական Ես-ի միջով բեկված և անանձնականի վերածված, Մարդ-Աստված փոխհարաբերության համատեքստում, կրոնական խորհրդանիշերի միջոցով մարդկային կյանքի ողբերգությունը, «կյանքի մրկակածուփ ծովի մեջ խողխողվող» բանականի ցավը, այն է՝ բանական գոյի ողբերգությունը պատկերող գործ է: Մատեանը «կործանված հոգու», «հոգևոր անլուր խորտակման» հասած մարդու ողբն է, «ողբն աշխարհի», ողբերգություն, որը համընդգրկուն է ու համատիեզերական և առաջանում է մարդկային և աստվածային սկիզբների, բարու և չարի անհաշտ պայքարից, հզորի ու անզորի բախումից: Ի դեպ, ինչպես Մատեանը, այնպես էլ նրանում պատկերված Ողբերգությունը բազմաշերտ է. մի կողմից՝ այն իրական կյանքի և քրիստոնեական իդեալի միջև միջնադարում ծայրահեղության հասած օտարման ու խորացող հակասության արտացոլումն է, մյուս կողմից՝ արդյունք է հոգևոր երկվության՝ «*էության ներհակ մասերի պատերազմի*», գոյի էությանը հասու լինելու բանականության հնարավորությանների սահմանափակության, նրա հակասականության ու երկփեղկվածության գիտակցման: Մատեանը նախևառաջ պետք է ընկալել որպես Քրիստոսի ուսմունքի նորովի մեկնաբանություն, այն է՝ քրիստոնեական հավատի նորացման, եկեղեցու բարենորոգման նպատակով ստեղծված գործ: Իրեն իսկ՝ հեղինակի վկայությամբ իր աշխատությունը ավետարանական գաղափարների, Քրիստոսի ուսմունքի, «կենսատու խորհուրդների» «հանդիսավոր մեկնաբանությունն» է, որի առանցքը հավատի նոր շենքի կառուցումն է. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց զհաւատոցն շինուած կառուցից»: Նարեկացին համոզված է, որ Աստված իբրև ճշմարիտ հավատի ապացույց ավելի սիրով ու բարեհաճորեն կընդունի նույնիսկ «զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս, քան ի պատարագն բոլորապտուղ, մատուցեալ ծխոյն բարդութեան»: Հավատի նոր շենքի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված էր եկեղեցու «բարգավաճման ու շենացման» մտահոգությամբ: Բանն այն էր, որ եկեղեցու քարոզած միջնորդավորված, դոգմատիզացված հավատը, իր վերացականությամբ ու մանվածապատ բնույթով այլևս չէր բավարարում հավատացյալ մարդու բարոյախմացական, բանական պահանջունքները, ուստիև չէր կարող նպաստել նրա հոգևոր վերա-

փոխմանն ու կատարելագործմանը: Ահա թե ինչու հավատի և բանակա-
նության, եկեղեցու ուսմունքի և իրական կյանքի միջև խորացող հակա-
սությունը, Աստծուց՝ մարդու օտարումը հաղթահարելու ճշմարիտ միջոց
Նարեկացին համարում է բանականության հիմքի վրա կառուցվող լուսա-
վորված, նորացված հավատը: Իսկ ըստ Նարեկացու՝ մաքրագործման և
փրկության գործում աստծու բարեգթությունը բավարար չէ, անհրաժեշտ
է մարդու կամքի ու բանականության գործադրումը: Նարեկացու համար
ճշմարիտ հավատի աղբյուրը ոչ թե «Տիրոջ երկյուղն է», ոչ թե վախն ու
հատուցման գիտակացությունը, այլ Մերը և Իմացությունը: Հետևաբար,
միայն իմաստավորված, լուսավոր հավատն ու գիտակցված ազատ սերն
են ի գորու վերակերտելու մարդուն ըստ Աստծու պատկերի ու նմանու-
թյան: Այսպես, ուրեմն, անմիջական, բանական իմացության վրա խա-
րխվող հավատը համարելով առաքինությունների զարգացման, մարդու
հոգևոր վերափոխման ու կատարելագործման միջոց և իր Գիրքը դարձ-
նելով հոգևոր կամուրջ ոչ միայն Մարդու և Աստծու, այլև մարդկանց
միջև, Նարեկացին դրանով իսկ քրիստոնեական վերացական մարդասի-
րությանը հաղորդում էր գործնական բնույթ. շեշտադրում էր հավատի
այսկողմնային, երկրային ուղղվածությունը, նրա մարդամետ բնույթը:
Ավելին, Աստծուն մերձենալու իմացական գործընթացը համարելով մար-
դու մարդկայնացման պայման ու միջոց, մարդկանց հոգևոր միասնու-
թյան ստեղծման գործընթաց՝ նա առավել ակնհայտ ու առարկայական էր
դարձնում նաև մարդկության միասնության գաղափարը:

Նարեկացին չի ընդունում որպես բացարձակ ճշմարտություն
քրիստոնեական կրոնի անկյունաքարային նշանակություն ունեցող այն
դրույթը, որի համաձայն՝ մարդը տառապում է սեփական մեղքերի, ի բնե
չար լինելու պատճառով, քանզի դա կնշանակեր ի չիք դարձնել, իմաս-
տազրկել մարդու ինքնակատարելագործմանն ուղղված ջանքերը: Նա
շատ լավ է գիտակցել, որ մարդը միայն մեղքերի, այն է՝ չարի կրող չէ,
որովհետև այդ պարագայում նա բոլորովին կկորցնեք աստծու պատկեր
լինելու բնութագրությունը և կարժեզրկվեր: Ուստիև Նարեկացին, թեև
ընդունում է մարդու «խակամիտ», «ի բնե չար» լինելը, բայց ի գիտություն
ունենալով ջրհեղեղից հետո Աստծու խոստումը. թե «Այլևս չեմ պատժելու

մարդուն, քանի որ նրա չարությունը իր մանկությունիցն է» (Գլ., Ը, 21), հավատում է մարդու հոգևոր-բարոյական հասունացման, ինքնակատարելագործման հնարավորությանը և չարի վերացումը անմիջականորեն կապում է մարդու իմացական զարգացման, նրա ինքնաճանաչողության ու աստվածաճանաչողության խորացման հետ: Այսպիսով, Նարեկացին իմացության խորացման մեջ է տեսնում չարի/մեղքի/ վերացումը և այն՝ իբրև հոգևոր, «աստվածային սկզբունք» (Հեգեյ), վերածում Մարդ-Աստված հակադրության հաղթահարման, նրանց հաշտեցման և մարդկային վիշտը փարատելու միջոցի:

Իբրև հանճարեղ մտածող Նարեկացին նկատել է նաև բանականության երկփեղկվածությունն ու հակասականությունը, բանականության ընդունակության մեջ թաքնված ինքնակործան հնարավորությունները: Ըստ Նարեկացու՝ մարդու երկրային գոյությունը առավել ողբերգական է դառնում կեցության իմաստին և գոյի էությանը հասու լինելու մարդկային բանականության հնարավորությունների սահմանափակության գիտակցումից:

Hayk HAROYAN¹, Nelly HAROYAN² (Armenia)

Gyumri State Pedagogical Institute¹

Yerevan State University²

E-mail: haroyan@mail.ru

THE GREAT SAINT OF THE MEDIEVAL AGE: GRIGOR NAREKATSI

The Narek should be comprehended as a new approach to Christian doctrine having the aim to renew the Christian belief, to rebuild the church. It is very important and principal circumstance which hasn't become the cornerstone for covering the masterpiece yet.

According to St. Gregory, his book is a solemn interpretation of vital pieces of advice for Christian doctrine and ideas where the most important issue is the new building of faith.

Gregory of Narek's masterpiece is a book of unexceeding, multilayer and valuable allegories and cryptographics.

It is not correct to see it as only book of prayers as it doesn't enlight the essence of the work, that is the fact of the Tragedy. In order to cover the real essence of the book, one should avoid the historic stereotypes and remain faithful to its spirit but not to its form.

In the book in the context of relations between Man and God the tragedy of human life lies in expressing the mental existence. The tragedy is also multilayer on the one hand in its deepening controversy of real life and Christian ideal, on the other hand in its spiritual duality.

Գոհար ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: goharharutyunyan5@gmail.com, gohararseniharutyunyan@mail.ru

ՍԱՍՈՒՆՑԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆՅԱՆԻ «ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՋԱԼՈՒԹՅԱՆ» ԳՐՔՈՒՄ

Զեկուցումը նվիրված է լիբանանահայ գրող Սիմոն Սիմոնյանի՝ 1968թ. լույս տեսած «Լեռնականներու վերջալույսը» գրքին: Ընդհանուր ակնարկ նետելով Սիմոն Սիմոնյան գրողի մտածողությանը և ոճին՝ մի քանի տողով անդրադարձել ենք ժողովածուի մասին հրապարակված կարծիքներին և գրքի բերած նորությանը: Քանի որ «Լեռնականներու վերջալույսը» ժողովածուն բազմաշերտ և բազմաբովանդակ ստեղծագործություն է, մեկ զեկուցման շրջանակում փորձել ենք դիտարկել այն, մեր կարծիքով, առավել կարևոր մի քանի տեսանկյունից:

Սկզբում անդրադարձել ենք սասունցի հերոսների բնավորության ընդհանուր և էական գծերին, նրանց աշխարհընկալմանը և հոգեկերտվածքին՝ առանձնացնելով մի քանի կարևոր պատմվածքներ: Որոշակի

նմանություն գտնելով՝ ըստ անհրաժեշտության համեմատել ենք Միմոն Միմոնյանի և սփյուռքահայ գրողներ Կարո Սասունու, ինչպես նաև Հակոբ Կարապենցի հերոսներին: Հանգել ենք այն եզրակացությանը, որ հերոսների նմանությունը ոչ թե գրական ազդեցության, այլ իրականության արտացոլման հետևանք է:

Այնուհետև անդրադարձել ենք գրքում անուղղակիորեն արծարծված մի կարևոր հարցի՝ ազգային - ազատագրական պայքարին և տարագիր սասունցիների՝ դրա հանդեպ ունեցած վերաբերմունքին: Հանգել ենք այն եզրակացությանը, որ հեղինակը և նրա հերոսները համակարծիք են ազգային - ազատագրական պայքարին առնչվող մի շարք հարցերում:

Ապա անդրադարձել ենք սասունցի հերոսների և նոր իրականության, օտար սովորույթների ու բարքերի, ինչպես նաև հին և նոր սերունդների բախմանը:

Վերջում համեմատել ենք Միմոն Միմոնյանի և Մուշեղ Գալշոյանի՝ 1980թ. լույս տեսած «Մարութա սարի ամպերը» ժողովածուի սասունցի հերոսներին՝ հանգելով այն եզրակացությանը, որ նրանց ներկայացման մեջ Միմոն Միմոնյանը թերևս, պայմանավորված քաղաքական որոշակի հանգամանքներով, ավելի շատ է պահպանում սասունցու բնավորության տոհմիկ գծերը:

Ամփոփելով զեկուցումը՝ հանգել ենք այն եզրակացությանը, որ Միմոն Միմոնյանի «Լեռնականներու վերջալույսը» ժողովածուն նշանակալից երևույթ է սփյուռքահայ գրականության մեջ՝ կարևոր ոչ միայն կորսված հայրենիքի ու նրա բնակիչների ճանաչողության, այլև զուտ գրական - գեղարվեստական տեսանկյունից:

Gohar HARUTYUNYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: goharharutyunyan5@gmail.com, gohararseniharutyunyan@mail.ru

"HEROES FROM SASOUN IN THE BOOK "THE SUNSET OF MOUNTAINEERS" OF SIMON SIMONYAN

Our report is devoted to the book of Armenian writer from Lebanon Simon Simonyan "The sunset of mountaineers" which was published in 1968. Throwing a general look at the mentality and style of Simon Simonyan as a writer, we later talked about the opinions proclaimed about this collection, and the novelty of the book with a few words. As the book "The sunset of mountaineers" has many slices and rich content, we have tried to observe it by the several points of view which are important.

At first we have talked about the character of heroes from Sasoun. We have generally talked about the main traits of their character, their world view and psychology. We have chosen some stories for that aim. We have found similarities among the heroes of Simon Simonyan and heroes of another Armenian writers from Diaspora Karo Sasuni and Hakob Karapentz. We have concluded that this similarities are the results of reflection of reality not the consequence of literary influence.

Then we have talked about an important issue - the national struggle of Armenians for their freedom. We have concluded that the author and his heroes have the same opinion about some points of this struggle and its defects. We have talked about the conflict between heroes from Sasoun and new generation, between old habits and foreign country.

At last we have compared Simon Simonyan's book with Mushegh Galshoyan's book "The clouds of mountain Maruta" which was published in 1980. We have concluded that Simon Simonyan's heroes from Sasoun protected their wellborn traits more than Mushegh Galshoyans heroes. Probably this fact is stipulated by some political circumstances.

Մարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան)

E-mail: marina-arutunyan@mail.ru

ԳՐԶՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1639-1670 թթ.

Գրչության արվեստը՝ որպես արվեստի մի ճյուղ, ստեղծվել է հին աշխարհում և լայնորեն տարածվել է միջնադարում¹: Դարեր ի վեր ստեղծված, ազգային մշակութային ժառանգության մաս կազմող հազարավոր ձեռագրեր օտար զավթիչների ասպատակումների հետևանքով կա՛մ ոչնչացվել, կա՛մ վնասվել են: Ինչպես պատմական Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում գրված և ընդօրինակված հայկական ձեռագրերից շատ քչերի պատմական ճակատագիրն է առավել ցայտուն դրսևորվել: Արցախի մի շարք վայրերի ձեռագրերի պատմական ժառանգությունը գրեթե չի պահպանվել: Արցախի մի շարք գրչատներում 1639-1700 թթ. գրված ձեռագրերի մի մասն է հասել մեզ: Խնդիրն այն է, որ հայ ժողովուրդը ստեղծված ձեռագիր մատյանները թշնամիների ասպատակումներից և ոչնչացումից փրկելու համար հաճախ դրանք թաքցրել է աննպաստ պայմաններում, որպես հետևանք՝ բազմաթիվ հայկական ձեռագիր գրքեր անդարձ կորստի են մատնվել, մագաղաթի, թղթի, կաշվե և մետաղյա կազմեր քայքայվել են: Փրկված ձեռագրերի մի մասը ներկայումս պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Այս հարցի ուսումնասիրության նպատակն այն է, որ ցույց տրվի, որ չնայած այդ ծանր փորձություններին, այնուամենայնիվ հայ մշակույթի

¹ Միջին դարերում եղել են գրչությամբ զբաղվող և այս արվեստում մասնագիտացած հատուկ անձինք, որոնք կոչվել են «գրիչներ»: Գրիչներն իրենց գրատումների մեջ անվանվում են «գծող», «ծաղկող», «մրող» և այլ անուններով: Գրիչները, ձեռագրեր ընդօրինակելուց բացի, տեքստերի վերջում թողել են գրատումներ (հիշատակարաններ, հիշատակագրություններ), որոնցում նշել են արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության, հանգամանքների, գրության վայրի, պատվիրատուի, ժամանակի քաղաքական իրադարձությունների և այլ հիմնահարցերի մասին: Տե՛ս Ս. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 301:

անխոնջ ներկայացուցիչներին հաջողվել է պահպանել հազարավոր ձեռագրեր և փոխանցել մատաղ սերնդին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում պահպանվել են մոտ 5 տասնյակից ավելի ձեռագրեր: Մյուս կողմից էլ՝ ընդգծվի Արցախի գրչության կենտրոնները ժամանակին հայոց լեզվի, հայոց պատմության, հայկական մշակույթի և ընդհանրապես Հայաստանին ու հայությանը վերաբերող թեմաներով, իրականացրել են գիտահետազոտական և ուսումնական գործունեություն: Ժողովուրդը այդ ձեռագրերի միջոցով հաղորդակից է դարձել անտիկ ու միջին դարերի գիտության և մշակույթի նվաճումներին:

Արցախի գրչագրության արժեքային համակարգում կարևորում են Սարգիս արքեպ. Հասան-Ջալալյանցի, Մակար եպս. Բարխուդարյանի, Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի, Ե. Լալայանի, Գարեգին Հովսեփյանի, Օ. Եգանյանի, Հակոբ Թովճյանի և ուրիշների ձեռագրական հավաքածուների դերն ու նշանակությունը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում շարունակում էին գործել դեռևս միջնադարում ձևավորված հայկական գրչության կենտրոններ: Դրանց զուգահեռ բացվեցին նորերը. Արցախում հայտնի են՝ Դադիվանքի (նաև՝ Դադոյի), Ամարասի, Գանձասարի (եղել է Մատենադարան), Գոչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում մեկիքանիստ Տող գյուղի անունով՝ Տող), Խանաձախի (ԼՂՀ Ասկերանի շրջան), Ավետարանոցի, Խզնավար գյուղի (ԼՂՀ Քաշաթաղի շրջան), Չարեքա վանքի, Փառիսոսի, Երից Մանկանց վանքի, Ծարա երկրի, Սբ Հակոբա վանքի, Եղիշե Առաքյալի վանքի, Սբ Աստվածածին եկեղեցու (Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում), Հիրիերի (Հերիերի), ինչպես նաև Արցախի հյուսիսարևելյան հատվածի մի շարք վայրերի գրչության կենտրոնները, որոնց մանրամասն կանոնադառնանք մեր հաղորդման մեջ:

Հարցի գիտական ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում հետևյալ թվահամարների ներքո պահվող ձեռագրերը՝ 223, 2404, 3542, 3647, 3856, 4053, 4176, 4281, 5072, 7840, 7606, 7687, 10882, 11060 և այլն, տպագիր

սկզբնաղբյուրները, պարբերական մամուլում զետեղված արժեքավոր նյութերը, հայ և օտար լեզուներով հրատարակված գրականությունը:

Marine HARUTYUNYAN (Armenia)

Institute of History NAS RA (Yerevan)

E-mail: marina-arutunyan@mail.ru

THE ART OF WRITING IN ARTSAKH IN 1639-1670

Despite the difficult historical period, miniature painting and ornaments painting continued to develop in Artsakh in 1639-1700. The ones were mainly made in manuscripts, which are preserved in the Matenadaran.

The theme of miniature art was varied. Among them were remarkable narrative miniatures and portraits of saints: "Annunciation", "Birth ", "Baptism," "12 apostles" "Crucifixion ", "Evangelist" "Title Page of Matthew ", "St. Mary", "Altar," " Jesus Christ" and so on.

Forms of decoration art were reflected in the clothes, houses, tools, human bodies, manuscripts and books as well in various historical and architectural monuments, gravestones.

Հայկանուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ (Երևան)

E-mail: mtatev@mauil.ru

ԿԱՍ ԲԱՅՐ ՈՐՊԵՍ ԲԱՅԵՐԻ

ԵՂԱՆԱԿԱԺԱՍՄԱՆԱԿԱԶԵՎԵՐ ԿԱԶՍՈՂ

ԿՈՒ, ԿԸ, Կ- ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՆԱԽԱՀԻՄՔ.

Ուսումնասիրության նպատակն է եղել փաստացի հիմքեր գտնել 55 տարի առաջ, բարբառագիտության դասախոսության ընթացքում ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի արտահայտած այն մտքին, թե բայակազմիչ բարբառային *կու* մասնիկի նախահիմքը կարող է լինել *կամ* բայը:

Այդ գործին նպաստել են 5-րդ դարի հոգևոր գործիչ, մատենագիր, թարգմանիչ, 451թ. Վարդանանց պատերազմին հաջորդած բոլոր արհավիրքներն իր անձի վրա կրած և Խոստովանող անունը վաստակած Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից» թարգմանական գործի՝ մեր կողմից բնագրային համաբարբառի կազմումը և այնտեղից ի հայտ բերված փաստերը:

Խոստովանողի այս գործը թարգմանված է 4-րդ դարի հոգևոր գործիչ, Գլակա վանքի վանահայր Եփրեմ Ասորու հեղինակած աշխատությունից:

Խոսքի այդ կառույցներում ստորոգյալը կազմված է *կամ* և մեկ այլ բայի խոնարհված ձևերով ու նույն ժամանակաձևով, կազմելով սակայն բայական մեկ միավոր, որոնց դեպքում պահպանվում է դիմային և թվային համաձայնությունը: Խոսքն անշուշտ չի վերաբերում *կամ* բայով կազմված ուրիշ բազմաթիվ բայական հարադրություններին, այլ միայն նրանց, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նշված հարցի քննության համար: Ժամանակային և եղանակային առումով ամբողջական բայական բաղադրությունը, դրվելով ներկա ժամանակաձևով, արտահայտում է սակայն պայմանական եղանակի ապառնի ժամանակի՝ ապագայում կատարվելիք գործողության գաղափար, բացի մի օրինակից, որում արտահայտված է ներկայի իմաստ:

Կազմությունները կիրառության մեջ են մտել տարբեր դեմքերով ու թվերով, դրական և ժխտական խոնարհումներով:

Չբավարարվելով Խոստովանողի գործում եղած փաստերով՝ ուսումնասիրվել են նաև 5-րդ դարի մյուս մատենագիրների գործերը, որոնցից Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի աշխատանքներում ի հայտ են բերվել գործածության երկուական, իսկ Եղիշեի մոտ մեկ օրինակներ:

Երևույթն ավելի շատ ու տարածուն բնույթ է կրում առաջին դարի սկզբի իմաստասեր, հայերենագետ Փիլոն Հեբրայեցու աշխատությունների հայերեն թարգմանված 1200 էջ կազմող մեծածավալ գործերում:

Ի հայտ բերված փաստերը ապացույց են մեծ գիտնականի հայտնած գաղափարին:

Haykanush HOVHANNISYAN (Armenia)

Institute of Language NAS RA (Yerevan)

E-mail: mtatev@mauil.ru

VERB “KAM” (I AM) AS A CONSISTENT BASIS FOR TENSE AND MODE FORMING –KU, -KE,- K PARTICLES.

The goal of the study is to find out a factual basis for the idea expressed during a lecture 55 years ago by Ararat Gharibyan, who claimed that the historical basis for dialectology “ku” particle can be the verb “kam” (I am).

The translated works of 5th century religious figure, historian, translator Abraham who suffered from all the calamities of Vardanants War of 451 and was given the name Abraham Confessor, as well as the compilation of original work and the evidences identified there had a great contribution to this study.

This work of Confessoris translated from the works of a 4th century religious figure, Abbot of Glak monastery Ephrem Syrus.

In these word structures the predicate consists of the verb “kam” (I am) and the forms of another verb in the same tense, which altogether form one verbal score in which the number and face categories of the verb are being preserved. The point, of course, does not apply to many other verbs or verbal structures, apart from those which are of interest for the investigation of this particular question. In terms of time and form composition the whole verbal structure being used in present tense expresses the meaning of conditional form of future tense though, except from one example when it shows the meaning of present tense.

The structures were put into use in different faces and numbers, as well as in positive and negative forms.

Considering the evidences presented in Confessor’s work insufficient the works of other authors of the 5th century were also studied. Among them two examples in Agatangeghose’s and Pavstos Buzand’s and one in Eghishe’s works were identified.

The phenomenon is more spread and common in large-scale works (1200 pages) of a first-century philosopher Philon, which were translated into Armenian. The evidences identified are consistent with the idea of the great scientist.

Միլվա ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ (Հայաստան)

Վանաձորի պետական համալսարան

E-mail: margarita-2015m@mail.ru

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ԳՐԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

Հոդվածում ազգային ինքնությունը քննվում է որպես յուրօրինակ աշխարհագրացողություն և աշխարհըմբռնում, որի շրջանակում ազգը (անձը) փորձում է գնահատել իրեն, հասկանալ իր նմանությունն ու տարբերությունը մյուս մարդկանցից, ազգերից: Այսինքն՝ այն ես-ի և ուրիշի հարաբերությունն է, որտեղ, իհարկե, առաջնային է ես-ը (Եթե ամեն ինչ չափ է, ապա ինքնությունը ես-ի (էթնոսի) ինքնաչափումն է, ինքնագնահատականը):

Փորձելով ընդհանրացնել «ինքնություն» հասկացությունը մեկնաբանող էսենցիալիստական և կոնստրուկցիոնիստական մոտեցումները՝ ինքնությունը բնորոշվում է որպես ինքնաստեղծ, ինքնաճանաչ, ինքնակառավարվող, բազմաչափ երևույթ՝ աշխարհի (մյուս ազգերի) հետ հարաբերության իր հիմնարար սկզբունքներով և արժեհամակարգով:

Փիլիսոփայական հայացքով յուրաքանչյուր հակադրություն (ինքնության դեպքում «ես և ուրիշ», «մենք և նրանք», «մերոնք և ձերոնք», «Բարեկամ և թշնամի») միաժամանակ նույնություն է և տարբերություն, ուստի ինքնության երևույթը հեղինակը ևս քննում է ընդունված երեք հիմնարար բաղադրիչների շրջանակում՝ նույնություն, տարբերություն, նաև հիշողություն (հիշողություն, թերևս նույնության և տարբերության չափումներով):

Ուշտպանված ինքնության համար նշվում է, որ.

1. հիշյալ եզրույթներից մեզանում առավելապես պատմական հիշողությունը, իսկ անցյալ դարասկզբից սկսած՝ ցեղասպանության վերհուշն է դարձել ազգային ինքնությունը անվտանգ պահպանելու, հայությանը համախմբելու կարևոր գործոն: «Չկա ինքը (անհատը), չի լինի նաև ինքնություն» վտանգների փորձառությամբ (Ս. Ոսկանյան):

Կարևորվում է ազգային գաղափարախոսության դերը, որում արտացոլվում են ազգային իդեալները, քաղաքական և ռազմավարական ծրագրերը, ազգի ինքնագիտակցության հիմնարար սկզբունքներն ու գաղափարները թեև այս հարցում կան նաև տարակարծություններ:

2. Հռոլվածում է լեթոսի պատմական հիշողությամբ ամրագրված: /«Ես իմ անցյալն եմ»-Մարտր/ արժեքային հիմնարար կողմնորոշիչների շրջանակում առանձնացվում է նաև դիցաբանական աշխարհըմբռնման (որպես կոլեկտիվ գիտակցության ձևի) նշանակությունը՝ կարևորելով ամենից առաջ հայ դյուցազնավեպում «գաղտնագրված» ուղերձների ընկալումը:

3. Ինքնության կարևոր բաղադրիչներից նույնության և տարբերության առումով քննվում է սեփական լեթոսից օտարման, ապաշնորհ կառավարման հետևանքով անհատ-հասարակության կապի խզման (սոցիալականացման խոչընդոտներ), ազգային հպարտության, արժանապատվության խաթարման վտանգների հարցը: «Հայրենիքում անգամ միշտ ներկա-բացական է հայը» (Հ. Մաթևոսյան): Կարևորվում է այն, թե ես-ի նույնացումը մենք-ին ի՞նչ արժեքների շրջանակում է կատարվում, ո՞վ է հերոսը, առաջնորդը:

4. «Ես և ուրիշը» հարաբերության մեջ ավելի շատ ուրիշի, օտարի կարծիքը (օտարի վրա հույս դնելը), որակումները, որոշումներն ենք կարևորում, քան մեր ժողովրդի, մինչդեռ հաղթող է նա, ով ինքն է արժեքներ թելադրում. «Ինձ մի՛ նայիր, ես եմ նայում» (Մ. Ֆուկո): Անորոշությունը ծնում է նաև գոյաբանական խնդիր: «Մեր ինքնության մեջ ինքնահերքում, ինքնախարազանում կա» (Հ. Մաթևոսյան):

5. Ազգը (անհատը)՝ որպես եզակին բազմազանության մեջ (առանձնահատուկի և ընդհանուրի հարաբերություն), իր անվտանգ ինքնությունը ապահովող անփոխարինելի խթան է պահում հայրենիքի կերպարը՝ հայրենիքի՝ որպես կենսական հոգևոր ուժի:

Այս առումով հայրենիքի, պետության անվտանգության խնդիրն անբաժան է «պաշտպանված ինքնության» խնդրից, առանձնապես աշխարհաստիճանում հայության բազմակի ինքնության պայմաններում:

6. Ժամանակակից աշխարհում զուգահեռաբար ընթանում են իրարամերժ գործընթացներ՝ մի կողմից՝ համաշխարհայնացում, այն խթանող աշխարհքաղաքական փոփոխություններ՝ տարածաժամանակային պատկերացումների փոփոխություն, տնտեսական, քաղաքական, մշակութային համընդհանրացում, շփումների անընդհատ ընդլայնում:

Մյուս կողմից՝ տեղայնացում՝ ազգակենտրոն, էսակենտրոն տրամադրություններ, ինքնության, «ո՞վ ենք մենք» հարցի որոնումներ:

Հաթինգտոնի բնորոշմամբ՝ մի կողմից՝ գլոբալացում, մյուս կողմից՝ «ինքնության համընդհանուր գլոբալ ճգնաժամ»: Արդյունքում ազգային, կրոնական, մշակութային, հաճախ նաև՝ ենթամշակութային խնդիրների սրացում:

Այսպիսով, գլոբալացումը ևս դառնում է ինքնության փորձություն: Եվ փոխակերպվող աշխարհի արժեքների խելամիտ յուրացումով էլ կորուզվի մեր անկրկնելիության, ինքնության նորացման և արդիականացման կենսունակությունը:

Silva HOVHANNISYAN (Armenia)

Vanadzor State University

E-mail: margarita-2015m@mail.ru

NATIONAL IDENTITY ISSUES (LITERARY AND PHILOSOPHICAL OBSERVATIONS)

The report discusses national identity as a unique world-perception, within which a nation /an individual/ seeks to value oneself, grasp one's resemblance and difference with and from other people or nations. That is to say, it is the relationship between one's own self and another's self, where, surely, one's own self takes priority. /Provided everything is a dimension, then identity is the self-assessment and self-regard of one's self /ethnos//.

Trying to summarize the essentialist and constructionist perspectives of the notion of identity, the latter is characterized as a self-created, self-governing complex notion with its fundamental principles and value system of the relations with the world /other nations/.

From the philosophical perspective, each contradiction /in case of identity – “Self and Other”, “We and they”, “Ours and theirs”/ is both identicalness and difference, thus, the author as well discusses the notion of identity within the confines of the three main acknowledged components: identicalness, difference, and also memory, the latter being, probably, in terms of identicalness and difference.

What is mentioned on maintaining identity is as follows:

1. From the terms mentioned above the most historical one for us is *memory*. And starting from the early 20th century genocide anamnesis has been the significant factor to maintain national identity and to unite Armenians /in conversance with “If one doesn’t exist, identity won’t exist either” dangers (Voskanyan A.) /.

2. What is valued is the role of national ideology, where national ideals, political and strategic projects, fundamental principles and ideas are reflected.

3. The importance of "mythological worldview" / as a collectivistic understanding / is highlighted within the basic value orientations, which are withheld in the historical memory of the ethnos. /“I am my past” (Sartre)/ highlighting first the perception of hidden messages in the epic heroic novel.

4. In terms of “identicalness” and “difference”, issues such as isolation from ethnos, split between the individual and society /socialization barriers/ resulting from ungifted management, national pride, and the danger of marring the dignity are discussed. /“Even in the fatherland an Armenian is both present and absent.” (Matevosyan, H.)/ What is valued is within what value system do we view “oneself” and “ourselves” as identical, who the hero and the leader are.

5. We value the opinions and evaluations of others /hope in others/ more than those of our own nation in “Me and another” relation. However, the winner is the one who opposes his/her own values. /Don’t look at me. I am the one who is looking (J. Derrida) / Uncertainty can also create an ontological issue. / There is self-denial in our identity (Matevosyan H.) /.

6. As a unique one in a diversity /the relation between the single and the whole/, a nation /an individual/ holds fatherland’s image- an existent spiritual power, as an invaluable stimulus to maintain one’s identity. In this

regard, the issue of maintaining identity is inextricable from that of country's and homeland's security issues, especially in case of the multiple identities of widespread Armenians.

7. Nowadays two controversial processes are happening simultaneously: globalization on one side, with geopolitical changes affecting globalization, such as altering space-time perceptions, integration of economic and political cultures, ongoing communication extension, and localization on the other, with ethno- and egocentric attitudes, concerns and for identity and "Who we are" question.

According to Hattington, it's globalization on one side and "Identity Crisis" on the other. As a result, national, religious and cultural, often subcultural issues become more intense.

Thus, globalization also becomes an identity challenge. And it is through the sentient perception of the shifting world values that the vitality of our uniqueness and identity realization will be determined.

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: marine.kazaryan.81@mail.ru

ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՆՔԻՑ» ՇԱՐՔՈՒՄ

Մեր զեկուցման մեջ քննության են առնված արդի հայ գրականության նշանավոր դեմքերից մեկի՝ Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի մի շարք առանձնահատկություններ:

Հովհ. Գրիգորյանի բանաստեղծությունները՝ իրենց յուրատեսակ վերնագրային ընտրությամբ, մեր առջև բացում են մարդ-գրողի ներաշ-

խարհը, բացահայտում այդ ներաշխարհի ամենանվիրական ու թաքուն անկյունները:

Բանաստեղծի ծննդավայրի և մանկության պատկերը առավել տեսանելի է դառնում «Հրեշտակներ մանկության երկնքից» շարքի մի քանի բանաստեղծություններում, որոնց զգալի մասը հեղինակը կառուցում է վերհուշի սկզբունքով՝ փոքր հատվածների մեջ մի ամբողջ կյանք պատկերելով: Հակիրճ ու դիպուկ նկարագրություններով, ինչը բանաստեղծի ոճի բնորոշ հատկանիշներից է, հեղինակը կարողանում է վերականգնել իր ուրախ և անուրախ մանկությունը:

Կյանքի անցողիկության փիլիսոփայությունն յուրատիպ մեկնաբանություն է ստացել Գրիգորյանի պոեզիայում: Նրա երկերը կյանքի և մահվան մասին հետաքրքիր խորհրդածություններ են, որոնց զուգահեռները, առավել ընդլայնված, նկատելի է նաև «Գերեզմանիա» վիպակում:

Հոր կերպարը Գրիգորյանի պոեզիայի կարևոր մոտիվներից է: Նրա ստեղծագործության կենտրոնում կանգնած է հայրը, իսկ մայրը դառնում է օժանդակ կերպար: «Հրեշտակներ մանկության երկնքից» ժողովածուի մի շարք բանաստեղծություններ հոր նկատմամբ անկեղծ և պաշտամունքի հասնող սիրո դրսևորումներ են, որոնցում բավականին կենդանի երևում է բանաստեղծի հայրը:

Հովի. Գրիգորյանը անդրադարձել է նաև մոտալուտ մահվան գաղափարին: Եվ բանաստեղծը, որ ըմբոստանում է հոր մահվան դեմ, զարմանալիորեն իր մահվան մասին խոսում է արդեն իսկ դրան հոգեբանորեն պատրաստ, ներքին հանդարտությամբ, առանց տագնապի՝ հասկանալով կյանքի անցողիկությունը, մահվան անխուսափելիությունը, կյանքի շարունակականությունը, որդու ապրելով հոր հարատևությունը:

«Հրեշտակներ մանկության երկնքից» շարքում Հովի. Գրիգորյանը բանաստեղծականացրել է Գյումրին: Ծննդավայրի մասին գրած նրա բանաստեղծությունները կարող ենք համարել Գյումրու մասին քաղաքագություն, որը գյումրեցիների՝ իրենց քաղաքի նկատմամբ ունեցած մեծ սիրո ապացույցն է, հին Գյումրու ամբողջական պատկերը, նրա բնակիչների նիստուկացը՝ երջանկության ու դժբախտության մասին ունեցած իրենց պատկերացումներով:

1988թ. ավերիչ երկրաշարժը իր արձագանքը գտավ Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում: Նրա բանաստեղծությունները դարձան երկրաշարժի և պատերազմի բերած սարսափները սեփական մաշկի վրա անմիջականորեն զգացող ցաված հոգու արտահայտություն: Նա գրեց մի շարք բանաստեղծություններ, որոնցում խոր ցավով պատկերեց հայրենի եզերքի անդառնալի կորուստը, համընդհանուր ցավի ու տառապանքի մթնոլորտում ապրող բնակիչների հոգեվիճակը: Քաղաքը դարձավ բանաստեղծի սրտում փորված վիթխարի գերեզմանոց, ինքը՝ ողբերգակ, իսկ նրա ողբը՝ գյումրեցիների և ողջ հայության ողբը:

Բանաստեղծություններում անձնական ցավը և ազգային ողբերգությունը արտահայտված են միաձույլ, որոնցում բացահայտվում է տառապած որդու և քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված մարդու հոգեվիճակը:

Գրիգորյանի բանաստեղծություններում լավում է երկար կսկծող մի ձայն, որը չի մոռանում երգել նաև բացվող արշալույսների ուրախ երգը: Թեև նա երբեմն տրվում է հուսահատության, այնուամենայնիվ նրա երգերը պարուրվում են ոչ թե մռայլ, այլ վառ գույներով՝ ամփոփելով կյանք ու լավատեսություն, սեր և հավատ:

«Հրեշտակներ մանկության երկնքից» շարքում փնտրում և գտնում ենք Հովհաննես Գրիգորյան բանաստեղծ-մարդուն, որ ձգվեց դեպի իր մանկությունը, ապրեց իր մանկության երկնքի հրեշտակների հետ, նրանց կողքին:

Հովհ. Գրիգորյանն իր բանաստեղծություններում մնաց հասուն մի մանուկ, որն ապրել էր խենթություններով լի մանկության և պատանեկության տարիներ: Իրական կյանքից ծնված նրա բանաստեղծությունները դարձան նրա դեմքը, որը ուրախ պահերին հիշեցնում է մանկան դեմք, իսկ երբեմն էլ ակոսվում՝ ցույց տալով իր հոգու տառապանքը:

Marine GHAZARYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: marine.kazaryan.81@mail.ru

THE IMAGE OF THE POET'S HOMETOWN AND CHILDHOOD IN HOVHANNES GRIGORYAN'S "THE ANGLES FROM CHILDHOOD'S SKY" POEM COLLECTION

Hovhannes Grigoryan's poems with the help of their unique titles show the poet's personality and the inner world, revealing the most desired and shady parts of it.

The image of poet's hometown and childhood is mostly noticeable in his "The Angles from Childhood's Sky" book, which he has composed relying on his personal memories, expressing the whole life in small passages.

There is an original explanation and personal attitude of the philosophy of short-lasting life in Grigoryan's poetry, he emphasizes very interesting aspects of existential problems, which are evolved and deepen especially in his last fiction-"Gravemania" novel.

The character of Hovh. Grigoryan's father is one of the most important literary motives of his poetry. There also can be felt poet's pure love and devotion towards his father which turns into worship.

Grigoryan examines the idea of up-coming death. The poet who has never put up with the idea of losing his father, unexpectedly writes about his own death calmly, without fears accepting that life doesn't last forever and the death is unavoidable.

In "The Angles from Childhood's Sky" book Grigoryan demonstrates Gyumri artistically. The poems devoted to the hometown can be considered as the urban poetry that has ever created about Gyumri, which proofs Gyumrian's love towards their town. In Grigoryan's poetry the whole image of old Gyumri is illustrated, which gives the idea about dweller's past happiness and tragedy as well.

In his poems Hovhannes Grigoryan has also reacted to the destroying earthquake of Gyumri. He has written a lot of poems, in which he illustrates the unrecovered hurt and unrestored loss of his fatherland.

Although it may seem surprising, the poet has optimistic worldview which rises from past sorrows and sufferings.

Լուսինե ՂԱՄՈՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ (Երևան)

E-mail:lgamoyan@mail.ru

**«ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ
ԱՌԱԾ-ԱՍԱԳՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ տեղ է հատկացվում բառային միավորների իմաստային քննությանը: Հազուստ իմաստն արտահայտող բառերի բազմազան նշանակություններն ու փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում ինչպես բազմաբնույթ դարձվածային միավորների, այնպես էլ առած-ասացվածքների առաջացման համար:

Առած-ասացվածքները, որոնք ունեն ճանաչողական և իմացական արժեք, առանձնացնելով դարձվածային միավորներից, դարձրել ենք ուսումնասիրության առարկա «հազուստ» իմաստային դաշտում՝ պայմանականորեն բաժանելով ենթադաշտերի.

1. «հազուստ և հազուստի մաս» արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ.
2. կտորեղեն և կարի պարագաներ» արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ.
3. «գլխի ծածկոց» իմաստ արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ.
4. «ոտնաման» իմաստ արտահայտող բառերով կազմված առած-ասացվածքներ:

Ուսումնասիրության ընթացքում նկատել ենք, որ հայկական առած-ասացվածքների լեզուն բազմաթիվ ու բազմազան բարբառների ու ենթաբարբառների ընդհանրություն է: Ամենից շատ Արարատյան դաշտավայրի (Երևան, Էջմիածին, Աշտարակ, Օշական և այլն) բնակիչների կենդանի խոսակցական բարբառն է, ապա նաև Արևմտյան Հայաստանի (Մուշ, Ալաշկերտ, Սասուն, Վան, Մոկս և այլն) և մի շարք ուրիշ վայրերում ապրող հայերի բարբառները:

Առածները կայունությամբ և քերականական հատկանիշներով պատրաստի, վերարտադրելի կառույցներ են, որոնք ամենից առաջ հանդես են գալիս ստորոգական ձևավորվածությամբ, հետևաբար ունեն միայն հաղորդակցական արժեք, սակայն կան նաև այնպիսիները, որոնք ունեն անվանողական արժեք:

Իբրև արտահայտչական ներգործուն միջոց՝ չափազանց նշանակալից դեր է խաղում հնչյունանմանությունը: Այստեղ ամենից առաջ հանդիպում ենք ձայնավոր ու բաղաձայն հնչյունների նմանությամբ ստեղծված ռիթմական միավորների:

Որպես լեզվական երևույթ՝ պատկերավորությունը ևս մեծ դեր է կատարում առած-ասացվածքներում: Պարզության և սակավ բառերով շատ բան ասելու հիմնական հատկության հետ դրանք աչքի են ընկնում նաև տեսանելիությամբ, բնութագրումների դիպուկությամբ:

«Հագուստ» իմաստն արատահայտող բառերով էլ ժողովուրդը առած-ասացվածքների մեջ կարողանում է խտացնել ու արտահայտել մեծ ու խորը մտքեր, զգացումներ ու խրատներ, ինչպես՝ *շտապելը վնաս է՝ «Յորդանիդ գյորա ոտդ մեկնի»*, *«Էրեսն աստառից չեն կտրի»*, *երազանք՝ «Տկորի մտքից օրը տասնհինգ գազ կտավ է անցկենում»*, *խաբուսիկ արտաքին՝ «Ամեն սև հագնող տերտեր չէ»*, *եսամոլ և շահասեր՝ «Ձատիկն եկավ, չունիմ կապա, ո՛վ որ ընե ինձի կապա, անոր կըսեմ՝ հաճի պապա»*, *ծույլ, անբան՝ «Տարին տասներկու ամիս, գուլպեն կէնիմ մեկ տոտիս»*, *ձրիակեր, պատրաստին վայելող՝ «Մուֆթա պատանք կուզե, որ ոտները մեկնե»*, *մարդկային զգացումներ, ճաշակ, սեռ, տարիք՝ «Ալ էլ հագնի կը սագի, շալ էլ հագնի կը սագի»*, *գաղտնիք, գաղտնապահություն՝ «Աչքովդ տես, փեշովդ ծածկե»* և այլն:

Այսպիսով, առած-ասացվածքների կառույցներն ընդգրկում են տարբեր իմաստային դաշտեր, որոնց բաղադրիչներով էլ հենց կարող են արտահայտել ժողովրդի աշխարհայացքն ու հոգեբանությունը: Դրանք, աչքի ընկնելով իրենց պարզությամբ, պատկերավորությամբ, բնութագրումների դիպուկությամբ ու գունագեղությամբ, արտահայտում են կենցաղային հարաբերություններ ու հասկացություններ:

Lusine GHAMOYAN (Armenia)

Institute of Language NAS RA (Yerevan)

E-mail:lgamoyan@mail.ru

“CLOTHING” WORD-MEANING FIELD IN SAYING-PROVERBS.

Saying-proverbs with their stability and grammatical features are ready, reproductive structures, which have communicative value. They can include different semantic fields in them the components of which themselves may express the worldview and psychology of the nation. The language of saying-proverbs in the “clothing” word meaning field is the generality of various and multiple dialects and sub-dialects. As a linguistic phenomenon, the imagination plays a great role in saying-proverbs. As an expressive and effective means quite great role plays also the intonation.

With the help of words expressing meaning of clothing, people can accumulate and express great and deep ideas, emotions and moralities in saying-proverbs. Being unique in their simplicity, imagination, eloquence and accuracy they also express social relationships and notions.

Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ (Հայաստան)

Ս. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարան (Երևան)

E-mail: karenmatevosian@gmail.com

ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳՐԻՉ-ՀԵՂԻՆԱԿ ԱՆԻՒ ՇՐՋԱՆԻՑ

Հայ պատմիչների երկերի ձեռագրերի ուսումնասիրությունների ընթացքում հնարավոր եղավ գտնել որոշ նոր հեղինակների անուններ: Վերջիններս ոչ թե առանձին մատենագրական երկեր են ստեղծել, այլ իրենց ընդօրինակած մատյաններում որոշ հավելումներ են կատարել, սակայն դրանք այնքան նշանակալից են, որ իրավամբ այդ գրիչները կարող են միջնադարյան փոքր հեղինակների շարքին դասվել: Նրանցից եր-

կուսը, դատելով գրված տեղեկությունների բնույթից, Անի-Շիրակ շրջանից են եղել:

Առաջինը *Հայրապետ վարդապետն* է, որը հավանաբար ապրել է 13-րդ դարում և ընդօրինակել է Մատենադարանի թիվ 1897 Ժողովածուն, որի մեջ՝ Սամվել Անեցու Ժամանակագրությունը: Հայրապետը բնագիրն օժտել է փոքրաթիվ, սակայն հետաքրքրական ընդմիջարկություններով: Նա ոչ միայն մի քանի նոր տեղեկություններ է մուծել, այլև որոշ դեպքերում Սամվել Անեցու տեղեկություններին բացատրական բնույթի ավելացումներ կատարել: Դրանց մեջ առավել աչքի զարնողը Անի-Շիրակին վերաբերող հատվածներում կատարված հավելումներն են: Օրինակ, Մարմաշենի հիմնադրման մասին Սամվել Անեցու գրածին նա ավելացրել է, որ Վահրամ Պահլավունին Աբուղամրի թոռն էր, իսկ Փրկչի եկեղեցու՝ երկրաշարժից փլվելու մասին տեղեկությունը լրացրել է՝ նշելով, որ այն կառուցել էր Ապլղարիք մարզպանը: Առավել հետաքրքրական է Հայրապետ վարդապետի ընդմիջարկությունը, որը վերաբերում է Անիի Մայր տաճարի կառուցմանը: Ինչպես հայտնի է Սմբատ Երկրորդի՝ եկեղեցու սկսած շինարարությունը կիսատ մնաց թագավորի անժամանակ մահվան պատճառով, և այն շարունակվեց նրան փոխարինած եղբոր՝ Գագիկ Առաջինի կնոջ՝ Կատրամիդե թագուհու հովանավորությամբ: Ցայժմ մասնագետների համար անհայտ էր մնում, թե շինության մինչև ո՞ր մասն է կառուցվել Սմբատի ժամանակ: Եվ ահա Հայրապետը նշում է՝ աստիճանները, որ պիտի հասկանալ գետախարսիսը և քարերի երկու շարքը («...չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն...»)՝ փաստելով նաև, որ այդտեղ գրվել է Սմբատի անունը: Մայր տաճարի հյուսիսային պատի արևելյան անկյունում պահպանվել է այդ գրությունը, որը գտնվում է գետնախարսիսին հաջորդող քարերի երկրորդ շարքի վրա: Պարզ է, որ Անիի Մայր տաճարի մասին այսպիսի մանրամասներ հաղորդող գրիչը պիտի անպայման եղած լիներ տեղում, իր աչքով տեսած լիներ գրությունը: Հասկանալի է նաև, որ նա գիտակցել է այդ փաստի կարևորությունը, դրա համար է մուծել իր ընդօրինակած մատյանում:

Հաջորդ գրիչը դարձյալ 13-րդ դարում ապրած *Յոհանն* է (հիշատակարանում իրեն կոչում է «Յոհան գրիչ»), որն ընդօրինակել է պատմա-

գրական երկերի մի բացառիկ արժեքավոր ժողովածու՝ Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը: Այստեղ Յոհան գրիչը հիմնականում Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի և մասամբ Արիստակես Լաստիվերցու երկերի մեջ լուսանցքներում մի շարք հավելումներ է կատարել, դարձյալ գլխավորապես Անի-Շիրակի պատմությանը վերաբերող հատվածներում: Դրանցում մատնանշվում է, օրինակ, որ 5-րդ դարի նահատակ Տեառնթագի նշխարները գտնվում են *Շիրակ գավառի Բեռնոն գյուղի* եկեղեցում (որը հենց *Տեառնթագ* է կոչվում), որ Դավիթ Սահառունին կառուցել է *Մրենի* եկեղեցին, իսկ Աբաս Բագրատունին կառուցել է *Անիի Փոքր Կաթողիկեն*, Վահրամ Պահլավունին կառուցել է *Մարմաշենը*, Սմբատ Մագիստրոսը՝ *Բազնայրը*, որ Տրդատը *Անիի Գազկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու* ճարտարապետն է (վարդպետ), Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը թաղվել է *Հռոմնոսի վանքում*, և վերջապես, որ Ալփալանից հետո *Անին* երկրորդ անգամ գրավել է վրաց Դավիթ թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին թաթարները գրավել են *Անին* և ողջ աշխարհը: Դժվար է անգամ պատկերացնել, որ այս տեղեկությունները կարող էր փոխանցել, ասենք, Վասպուրականում, Սյունիքում, Գուգարքում կամ վերը թվարկված բնակավայրերից հեռու գտնվող մեկ այլ տեղում ապրող մի գրիչ: Սա գուտ Շիրակի, իսկ ավելի ստույգ՝ Անիի շրջանի բնակչին հասու տեղեկությունների պաշար է, և կարծում ենք, թե Յոհանն Անիի շրջանում ապրած գրիչ է եղել: Նրա հայտնած տեղեկություններից մի քանիսը՝ Անիի Փոքր Կաթողիկեի, Տրդատ ճարտարապետի՝ Գազկաշենը կառուցելու և Սարգիս Սևանցու թաղման տեղի մասին, առայժմ այլ աղբյուրներից հայտնի չեն:

Այսպիսով, Մատենադարանի թիվ 1897 ձեռագրում Հայրապետ վարդապետի, իսկ թիվ 2865 ձեռագրում Յոհանի կատարած ընդմիջարկություններն ու հավելումներները թույլ են տալիս նրանց համարել Անի-Շիրակի շրջանում ապրած գրիչներ: Միաժամանակ նկատի ունենալով նրանց հայտնած տեղեկությունների կարևորությունը պատմական և մշակութային տարբեր հարցերի առնչությամբ, այս երախտավորներին իրավամբ կարելի է կոչել գրիչ-հեղինակներ:

Karen MATEVOSYAN (Armenia)

Matenadaran Scientific Research Institute of Ancient Manuscripts named after

Mesrop Mashtots (Yerevan)

E-mail: karenmatevosian@gmail.com

TWO NEW SCRIBE-AUTHORS OF THE ANI REGION

During the study of the literary manuscripts in Matenadaran written by historians, some new names of authors were discovered. They have not created their own bibliographic literary works, but the addition they have done to the works are so important, that they qualify the scribes to be considered as medieval semi-authors. Judging by the nature of the written information, two of them were from the Ani - Shirak region.

The first one was Hayrapet vardapet, who has probably lived in the 13th century, and has copied the #1897 manuscript in the Matenadaran collection, including the Chronology by Samvel Anetsi (Samvel of Ani). Hayrabed has endowed the original works with limited, but interesting interpolations. The more eye-catching among the additions are in the parts referring to Ani - Shirak. For example: Samvel Anetsi has written about the founding of Marmashen, and Hayrapet has added that Vahram Pahlavuni was the grandson of Abughamr. He then added that ruler Ablgharib Marzpan build the Prgitch church (church of the Savior). Hayrapet has also added information about the part of the Main Cathedral in Ani which was built during the reign of King Smbat, the stylobate and the two rows of walls where the name Smbat is written (that inscription is still in place). It is obvious that the scribe who conveys such details must have been in that place at the time.

The second scribe Johan, also lived in the 13th century, and has copied the #2865 manuscript in the Matenadaran. He has done additions, mainly referring to the history of Ani - Shirak in the works of Stepanos Taronetsi Asoghik (Stepanos Asoghik of Taron), and Aristakes Lastiveratsi. Some of the information he has conveyed about the construction of Ani's Small Cathedral church by King Abbas, or Trdat being the Architect of Gagkashen Sourp Grigor church, and Sarkis Sevanetsi Catholicos (Catholicos Sarkis of Sevan) being buried at the Horomos monastery are the only sources for these revelations to date. These and other additions confirm that Johan has undoubtedly lived in the Ani - Shirak region.

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

E-mail: hasvrej@mail.ru

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Օրորոցայինը՝ իբրև բանահյուսության կարևոր ժանր, գիտակցվում է որպես տեքստ՝ կայուն կառուցվածքային առանձնահատկություններով: Կրկնվող լեզվական միավորները կիրարկվում են օրորոցային տեքստի ամբողջ ընթացքում: Սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ բանաձևերում առկա կրկնակները գրեթե միշտ նույնն են, քանի որ ունեն մեկ հիմնական՝ քնաբեր գործառույթ: Երբեմն սկսվածքային ու եզրափակիչ բանաձևերը օրորոցային տեքստի կառուցվածքում չեն երևում, մնում են քողարկված (հատկապես տեղեկատվական գործառույթ ունեցող օրորներում): Մակայն վերջիններս պարունակում են կարևոր տեղեկատվություն օրորոցայինի ունկնդրի, ինչպես նաև բանասաց-օրորասացի մասին: Կայուն բանաձևերը օրորոցային տեքստի համապատկերում բազմազան են և մեծաքանակ: Մեր կողմից ուսումնասիրվող լեզուների (անգլերեն, հայերեն), օրորոցային տեքստերը ունեն կառուցվածքաստեղծ կայուն՝ նույնասկիզբ, նույնավերջ միավորներ: Միջաբերենք բանաձևային սկսվածքների վառ օրինակներ՝ քաղված անգլալեզու և հայ օրորոցային տեքստերից. Oh, hush thee, my baby; Lulla, lulla, lulla, bye, bye; Bye, bye, bye; Օրո՛ր, օրո՛ր, Լուրի՛կ, լու՛րիկ, Հայրուրուրի՛, հայրուրուրի՛, Լալա ասեմ, քունդ տանի, Նանի՛կ, նանի՛կ: Տեքստի կառուցվածքում լայն կիրառություն ունեն վերոնշյալ բառային միավորները: Այս բառերը ունեն «հանգիստ», «լուռ», «լսելի», «խաղաղ» բառային իմաստները: Օրինակ՝ լուրի բառը բարբառային բառարանում ունի լուռ նշանակությունը (>ր ձայնադարձմամբ):

Հիշյալ բառերը հանգիստ, խաղաղ քուն պարզելու հորդորներ են: Տեքստերում առկա վերոնշյալ բառերը իրականում խորքային են, քանի որ բառերի իմաստների մեջ կան թե՛ հիպնոսի, թե՛ քնելու, թե՛ երգողի և թե՛ տեքստի հասցեատիրոջ մասին տեղեկատվություն: Օրորների տեքստերում բավականին շատ կիրառվող նանի (նան, նանիկ) բառային միավոր-

ները ունեն մի շարք դրսևորումներ: Ահավասիկ՝ նանի կամ նանիկ բառերը արտասանում են երեխային քնեցնելիս: Այստեղից էլ՝ հայ լեզվամտածողության մեջ ունենք նանիկ անել, նանիկ կարդալ, նանիկ ասել, նանիք: Նանի բառը տալիս է մեզ նաև երգողի մասին տեղեկություն. այն ունի նան, մայր, մայրիկ իմաստները: Ի դեպ, նանիկ նշանակում է նաև չար երեխա: Նկատելի է, որ նանի ասեմ-ը հայ ժողովրդական օրորոցայինների հատուկ սկզբվածքի բանաձև է:

Bye –bye բառը բազմիցս հիշատակվում է անգլալեզու օրորոցային տեքստերում: Հայ օրորոցային տեքստերում ևս նկատում ենք նաև bye կրկնակի հայերեն տարբերակը. Նենի՛, նենի՛, բա՛յ, բա՛յ: Հավանաբար անգլալեզու Lulla (lu-lu)-ն առնչություններ ունի հայերենի լալլա (լալլա, ասել, լալլալ անել) բառերի հետ:

Lulla (lu-lu) –ն ևս հնչյուն է եղել և ասվել է երեխային քնեցնելու ժամանակ: Հատկանշական է այն, որ վերոնշյալ բառերի մեծ մասը բայ է, գործողություն կատարող:

Օրորոցային տեքստերի մեջ երբեմն բառի նախնական իմաստը մթագնվում է, չի ընկալվում ուղղակիորեն: Տեքստի կառուցվածքում բառերը, անընդհատ կրկնվելով, ստեղծում են խաղաղ միջավայր, որ կարող է քնաբեր լինել երեխայի համար: Վերոնշյալ բառերը կարող են դառնալ ոճական հնարներ, որոնք ներազդում են երեխայի ենթագիտակցությանը: Տեքստերի կառուցվածքում հաճախ օրոր հիշեցնող Bye, lulla, lulla, Ա՛-ա՛, է՛- է՛-է՛, օ՛ր-օ՛ր-օ՛ր , լալլա՛յ և նման այլ կրկնակները արտահայտում են օրորասացի զգացմունքները՝ երբեմն հիացմունք, երբեմն էլ ցավ, հուզմունք: Քանի որ վերոնշյալ կրկնակները պայմանավորված են օրորասացի վերաբերմունքով, խառնվածքով, ուստի կարող են նաև բազմիմաստ լինել և ունենալ տարաբնույթ կիրառություններ և մեկնություններ: Կառուցվածքային տեսակետից ուշագրավ են այն օրորոցային տեքստերը, որոնք ունեն կրկնակների տրոհումներ (օրո՛ր- օր՛, լալլա՛յ- լալ՛, լա՛յ):

Բանահյուսական օրորոցային տեքստի կառուցվածքում աչքի են ընկնում հատկապես ժողովրդական բառ ու բանի լիաբուռն և ինքնաբուխ կիրառումը: Ժողովրդական խոսքի ճկունությամբ է նաև պայմանավորված օրորների կրկնակների պարբերաբար փոփոխումը. մի դեպքում՝

օրո՛ր, օրո՛ր, մյուս դեպքում՝ է՛, է՛, է՛, ա՛, ա՛, ա՛: Ըստ Էդ. Աղայանի «Հայերեն բացատրական բառարան»-ի՝ է –ն երկար բացականչություն է եղել օրորի ամեն տան վերջում, որտեղից էլ ունենք է անել (նանիկ անել, քնել), է ասել (օրոր ասել) ժողովրդական արտահայտությունները: Վերոնշյալ կրկնակները, պարբերաբար կրկնվելով, երբեմն կորցնում են բովանդակային նշանակությունը:

Կրկներգը օրորոցային տեքստի կառուցվածքային գերակա բաղադրիչ է: Տեքստի մեջ բառերի կրկնությունը ավելի է ընդգծում, սաստկացնում օրորասացի հիմնական նպատակը: Այն օրորոցային տեքստի պարագայում կարևոր դերակատարություն ունի, քանի որ վերջինս օրորոցայինի հիմնական իմաստաբովանդակային միավորն է: Օրորոցային տեքստը կարող է ունենալ երկտող, եռատող, քառատող կամ մեծածավալ կառուցվածք: Օրորոցային տեքստերի կառուցվածքային տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում այն օրորները, որոնք ունեն փոփոխակներ կամ ավանդականի և հեղինակային օրորի ձուլվածք են: Ժամանակային գործոնը տեքստի կառուցվածքում կարևոր խնդիր է, քանի որ պատմական զարգացման համատեքստում ցանկացած օրորոցային տեքստ կարող է ունենալ կառուցվածքային փոփոխություններ:

Օրորոցային տեքստերի կառուցվածքաիմաստային արտահայտությունները պայմանավորված են ասացողի հաղորդակցական նպատակով և նպաստում են վերջինիս իրականացմանը: Վերոնշյալից բխում է, որ օրորոցայինի յուրաքանչյուր տեքստ կարող է ոչ թե մեկ, այլ բազմաթիվ ռճական հնարների ու կրկնակների ամբողջություն լինել:

Hasmik MATIKYAN (Armenia)

Shirak Center for Armenian Studies NAS RA (Gyumri)

E-mail:hasvrej@mail.ru

THE STRUCTURE OF A LULLABY TEXT

Lullaby, as an important genre of folklore, is realized as a text with stable structural peculiarities. The report focuses on linguistic units of lullaby texts (English and Armenian). An attempt is made to group them according to

their structural characteristics. The structure of a text is how it is put together. The lullaby text should have a beginning, a middle and an end.

The beginning of a lullaby text introduces the main idea of lullaby- to sleep the child. The lullaby singer wants to catch the listener's /child/ attention and hint at what is to come. The middle part of the text touches upon the main idea, thought of a lullaby singer. The ending is an important part of a lullaby text because it sums up the piece of text. It is noteworthy that the above-mentioned parts of a lullaby text have one main function –to help the child to sleep. It is a well-known fact that lullaby is a soothing song sung to children. The purpose of lullabies vary.

The large number of lullaby examples from English and Armenian societies suggests that lullabies are universal and have similar structures. Like working and wedding songs, it is a special genre tied to its function- to soothe the child.

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Հայաստան)

Երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիր

E-mail: karine.martirosyan2011@yandex.ru

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐԴԸ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ԱՖՈՐԻՍՏԻԿ ՄՏՔԵՐՈՒՄ (Լեռ Կամսար «Կարմիր օրեր»)

Թերևս օրինաչափ է և տրամաբանական, որ 30-ականների մաս-դացով անցածների համար 1953 թվականը պետք է համարել, այսպես ասած, «նոր կյանքի» սկիզբ: Ահա 1953-1958թթ. են ամփոփված Լեռ Կամսարի «Կարմիր օրեր» օրագրում, որը, պայմանավորված սուբյեկտիվ հանգամանքներով, խախտելով ժամանակագրական հաջորդականու-թյունը, առաջինն է գրողի անտիպ օրագրերից (օրագրությունների սկիզբը համարվում է «Մահապուրծ օրագիրը»՝ 1925-1935թթ.):

«Կարմիր օրեր» օրագրում Լեռ Կամսարի մտքերը զարգանում են մի քանի հիմնական ուղղություններով:

1. Ինքնակենսագրական մանրամասներ, բնականաբար, կապված քաղաքական իրադարձությունների հետ:
2. Քաղաքական իրադարձությունների պատկերը՝ նեղ և լայն առումներով, քաղաքական ենթատեքստով մտքերը, որտեղ բոլոր պետությունները անձնավորված են: Խոսքը վերաբերում է համաշխարհային անցուդարձին ներքաշված պետություններին և քաղաքական ենթատեքստով նյութերի «հերոսներին», որոնք շարունակ շարժման մեջ են:
3. Գրականություն և ժամանակաշրջան. հեղինակը լայն և ընդգրկուն անդրադարձ է կատարում ժամանակի հայ գրողներին՝ թե՛ նրանց, ովքեր հայտնի, հարգված անուններ են, թե՛ նրանց, ովքեր իբրև գրող «դեռ չեն ծնվել», թեև իրականում արդեն իրենց ֆիզիկական կյանքն ավարտելու վրա են:
4. Մոցիլավական վիճակ, որը, ինչ խոսք, բխում է քաղաքականից:
5. Առած-ասացվածքներ և աֆորիստիկ մտքեր:

Բոլորը փոխկապակցված են, և աֆորիստիկ մտքերի տարանջատումը կրում է սոսկ պայմանական բնույթ: Գրողի այս մտքերը առանձնակի խորությամբ են բացահայտում իրականությունը: Աֆորիզմներով խոսելը կապված է տաղանդի, մեծ կենսափորձի հետ, հետևաբար դրանք ավելի առատ են մեծ գրողների երկերում, որտեղ դրսևորվում են դրանց փիլիսոփայական միտքը, կյանքի երևույթները քննելու և ընդհանրացնելու կարողությունը:

Կամսարյան խոսքում սրանք մի մեծ խումբ են կազմում: Գրողի բոլոր մտքերը, հյուսվում են քաղաքական հենքի վրա, ասել է թե՛ տեքստում անպայմանորեն միաձուլվում են այն խոսքին, որը ժամանակի և իրականության նկատմամբ գրողի վերաբերմունքն է արտահայտում:

Չնայած մենք խոսում ենք Լեո Կամսարի միայն «Կարմիր օրեր» օրագրի մասին, սակայն նրա բոլոր գրքերն են հազեցած ասույթներով, աֆորիզմներով, որոնք առավել պայմանավորված են պահի հրատապությամբ, ժամանակաշրջանի նկարագրությամբ: Պայմանականորեն դրանք անվանել ենք քաղաքական աֆորիզմներ. գրված են քաղաքական շնչով, բայց ունեն մեկ առանձնահատկություն. թերի են իբրև լիարժեք աֆորիզմ ներկայանալուց, որովհետև միակողմանի են, այսպես ասած. Բացակա-

յում է մյուս կողմը, այսինքն թե՛ միայն պատմականության մեջ կարող են արդիական հնչեղություն ունենալ, և նաև սա է այն տարբերությունը, որ առկա է գրողի՝ արդեն «բուն» աֆորիզմների և սրանց միջև. առաջինները արդիական են բոլոր ժամանակների համար (տոների և հիշատակի օրերի մասին, գործազրկության մասին, գերեզմանոցների տարածքների խնդրի մասին, կեղծ գիտնականների և նրանց ստացած անարժան կոչումների ու աստիճանների մասին, ծախսու մամուլի և պատվերով գրականության մասին): Ընտրություններ, բարեգործություն, չարագործություն, ազատությունն՝ իբրև անչափելի ու անկշռելի մեծ արժեք, ժամանակի ճշմարտության և, անշուշտ, սոցիալիզմի մասին, իհարկե, յոթ կողպեքով փակված... մարդկային կարծիքի մասին և բազմաթիվ այլ հարցեր է առաջ քաշում գրողը, սակայն նրա մտքերի ու որոնումների, նաև սուր քննադատության կիզակետում կառուցվող և կամ կառուցվելիք սոցիալիստական հասարակարգն է, սոցիալիզմն ու կոմունիզմը, և այս ամենի անդրադարձը մարդու վրա: Եկել են այնպիսի օրեր, երբ մարդն ապրում է ինչպես դարվինյան ժամանակներում՝ գոյության կռիվ, երբ թելադրողը բնությունն ինքն է. ահա թե ինչ է կատարվում և ինչպիսի վիճակում է հայտնվել մարդը: Ասույթների մի ամբողջական շարք ուղղակի այս իրականությունների բնորոշումն է ներկայացնում:

Պետք է անպայման շեշտել մեկ կարևոր հանգամանք. մի կողմից՝ սա այն ժամանակաշրջանն էր, որն իր առջև խնդիր ուներ դրված՝ մարդուն զրկել մարդկային դիմագծից, մյուս կողմից՝ գրողը խոսում է մարդու մասին, համարձակորեն բարձրացնում է նրան հուզող հարցերը, բացահայտում անլուծելի խնդիրները, ի վերջո, բաց տեքստով կերտում է ժամանակի մարդու ամբողջական դիմագիծը:

Գրողն ունի իր աշխարհայացքը, աշխարհընկալման ինքնահատուկ ձևը: Այս ամենն իր արտահայտությունն է գտնում նրա փիլիսոփայական խոհերում, որոնք գործերում արտահայտվում են աֆորիստիկ մտքերով: Գրողին բնորոշ այս մտածողությունը խոսքը դարձնում է ավելի հյութեղ, խոր և առավել տեսանելի: Առանձնացնելով այս մտքերը՝ կարելի է ստեղծել Լեո Կամսարի ասույթների առանձին ժողովածուն:

Karine MARTIROSYAN (Armenia)

Gyumri Educational Complex of Yerevan Management University

E-mail: karine.martirosyan2011@yandex.ru

**THE MAN OF THE TIME IN LER KAMSAR'S
APHORISTIC THOUGHTS
(LER KAMSAR “RED DAYS”**

The report represents Ler Kamsar's aphoristic thoughts. Such thinking is characterizing of the writing and it is expressed in all diaries.

All the works of Ler Kamsar are flavored with sayings and aphorisms as well, which are more conditioned by the moments' emergency and the time depiction. Conventionally we named them political aphorisms, aphoristic thoughts, which are written in mere political breath, but have the peculiarity, which differs them to be as real aphorisms: as they are unilateral, that's to say the other side is absent and it can have modern importance only in its history. And this is the difference existing between the writer's "original" aphorisms and the above-mentioned ones. The first ones are contemporary for all the times. So, they are about events and commemoration days, unemployment, about cemeteries' territory problem, false scientists and their unworthy degrees and honors, about the reptile, corrupted press and ordered literature. The writer has his own typical world vision, attitude and ideology. All these find their reflection in his philosophical meditations. And in his works, they are presented by apothegms and through aphoristic way of thinking. The similar ideas are common in the books. So, the writer has a typical way of thinking which makes the speech deeper, more succulent and visible. By choosing these ideas we can make a separate digest of Ler Kamsar's dictums.

Հայկանուշ ՄԵՄՐՈՊՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ (Երևան)

E-mail: haykanushm@mail.ru

**ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ԲԱՌԱՇԵՐՏԻ ՄԱՍԻՆ**

Փոքր Ասիայի կամ արևմտյան Բարբառախամրի Կարնո բարբառը¹ կը ճյուղի ամենամեծ բարբառներից է, որի սահմանները ձգվել են մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե, իսկ կենտրոնը եղել է Կարինը:

XIX դ. սկզբին տարածքի բնակիչների մեծ մասը տեղաշարժվել է դեպի Արևելյան Հայաստան և Վրաստան (Ախալցխա, Ախալքալաք, Թբիլիսի): ՀՀ-ում Կարնո բարբառը լեզվական հաղորդակցության միջոց է Շիրակի դաշտի և հարակից բնակավայրերի բարբառախոսների համար:

Մեր ուսումնասիրության թեման Կարնո բարբառի կրոնաեկեղեցական իմաստային (թեմատիկ) բառաշերտն է, հատկապես դրա կարևոր և գործուն բառախումբը:

Ա) *Հավատք և հարակից իմաստ արտահայտող բառախումբ*: *Հավատալ* բայը գրական լեզվի հնչյունական կազմը պահպանել է Ախալցխայի, Ախալքալաքի և այլ խոսվածքներում: Նինոծմինդայի Գանձայի ենթախոսվածքում գանցված են երկրորդ վանկի *ա* ձայնավորի կորստով *հավտալ* և *հավդալ* հնչատարբերակները: Կարսի Քյուրագդարայի և Ծպնիի ենթախոսվածքներում հանդիպում է *ավդընալ* անորոշ դերբայը՝ բառակզբի *հ* հագագի անկումով, երկրորդ վանկի դրափոխված *ա* ձայնավորի *ը*-ի փոխվելով, նաև *ա* խուլ պայթականի ձայնեղացումով:

Հավատ գոյականը Կարնո բարբառում պահպանում է գրական հայերենի հնչյունակազմը, որի հոմանիշն է նույնարմատ *դին-հավադ* կրկնավորը: *Դին* (թուրքերեն *din*՝ «կրոն, հավատք») արմատ-նախամասնիկը սլյակ դեպքում ունի մեկնողական, աշխարհիկ բովանդակություն-

¹ *Բարբառային դասակարգումն ըստ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 123:*

նից տարանջատող արժեք և ընդգծում է բարդության կրոնական բովանդակությունը (թարգմանաբար՝ «հավատ-հավատ»)։

Հավատ բառի նույնարմատ *անհավատ* հականիշը Կարսում ունի *կրոնապաշտ*, Կարսի Տայլար գյուղում՝ *թոնրակցի*, *կուռ ու կրոնապաշտ* հոմանիշները։ Վերջին օրինակում *կուռ* բաղադրիչը սաստկացնում է *անհավատ* հասկացության իմաստը։

Հավատացյալ բառի բարբառային համարժեքներից են *քրքիստոնա* (Ախալցխա), *հոգեվախ* (Շիրակ), *կնքված* (Կարին), *նասրանի՛* և այլն։ Էրզրումի տարածքում հարցումներ կատարելիս գրանցեցինք *հավատք* արտահայտող մի քանի բառ։ Կարինում, Թորթումում, Բասենում, Նարմանում, Երզնկայում և այլուր հայերին անվանում են *քարշը-քարշը՛*², այլն *քարշը // քարշըկ՛*³, այսինքն՝ «քրիստոնյա և մահմեդական հայերի (կամ քրդերի, թուրքերի) խառնամուսնությունից ծնված»։

Բ) *Քրիստոնեական հավատքի խորհրդանշանների բարբառային անվանումները*։ Քրիստոնեության խորհրդանշան խաչը Կարնո բարբառում գրական հայերենին բնորոշ *խաչ* անվանումից բացի, ունի *խա՛չ* բացականչական նշանով տարբերակ՝ որպես ասելիքը հաստատելու երդման ձև։ *Խաչ* բառով են կազմված Շիրակի խոսվածքի *խաչկալ* (1. «եկեղեցու վեմ քարի վրա շինված կառույց»⁴, 2. «խաչի պատվանդան»⁵), աշխարհիկ բովանդակությամբ՝ *խաչք* («երդիկ»), *խաչերգաթ* և այլ բառերը։

«Խորհրդավոր ընթրիքով» պայմանավորված բառապաշարային կարևոր միավորներից է *հաղորդություն* բառը, որը Ախալքալակի խոսվածքում ունի *քաշենք* հոմանիշը. Այն գործածվում է նաև «մկրտություն» իմաստով։ Հաղորդության սուրբ հացն անվանում են *նըշղար* (Ախալքալակի Աբուլ), *նըխշարք* (Վերին Բասենի Ալիճագրակ), *բ՛օկոն* (Կարսի Փաղրվան և Ուզունքիլիսա, Բասենի Գոմաձոր) և այլն։ Հաղորդության գինուն Բասենի խոսվածքում անվանում են *բ՛ աժկի*։ Տվյալ դեպքում առկա

¹ Կարծում ենք՝ *նասրանի-ն «նազովրեցի»* բառի *հնչյունափոխված ձևն է, որից էլ՝ հայ նասրանի՛ սաստկական իմաստով*։

² Թուրքերեն՝ *karşılaşmak* - «հանդիպել», *karşı* - «հակընդդեմ, ընդդիմակաց»։

³ Թուրքերեն՝ *karışık* «խառք»։

⁴ Տե՛ս՝ *Ամատունի Ս.*, *Հայոց բառ ու բան*, էջ 267։

⁵ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ.2, էջ 287։

է *բաժակ* → *հաղորդության գինի* իմաստային անցումը՝ պարունակողի և պարունակյալի առնչության հիմունքով:

Անձը քրիստոնյա է դառնում օժան՝ մկրտության միջոցով, որը կատարվում է հատուկ բաղադրություն ունեցող յուղով՝ *մյուռոնով*¹: Կարնո բարբառում *մյուռոն* բառը հիմնականում հանդես է գալիս որպես գրական փոխառության հնչատարբերակ (օրինակ՝ *մէռօն*, Ախալցխայի Ջուղա և Ծղալթբիլա): *Մյուռոն* բառից են կերտված՝ *մեռոնեփեք* (Շիրակ), «յոթ տարին մեկ կատարվող մյուռոն եփելու արարողություն», *մէռընահան անէլ* (Կարին) «մկրտության երրորդ օրը կնքահոր օգնությամբ լվացվել»:

Մկրտություն գոյականին հոմանիշ է *կնունք* ձևաիմաստային միավորը²: Այս թեմային առնչվող բառերից են *կընունկ* (Վերին Բասենի Ալիճագրակ, Կարսի Քյուրագդարա), *կընքիչ* (Ախալքալաքի Բեժանո) և այլն:

Մկրտության ծեսի կարևոր անձանցից է կնքահայրը, որը Կարնո բարբառի տարբեր խոսվածքներում ունի *սան + ա + հայր*, *կնիք + ա + հայր*, *կնիք+ավոր* կառույցի անվանումներ. *սանահար* (Կարին), *կընգար* (Ախալքալաքի Բուղաշեն և Օլավերդ, Բոգդանովկայի Փոգա), *կընկըհար* (Ախալցխա), *կընկար* (Ախալքալաքի Վաչիան, Մեծ Սամսար և Բեժանո), *կընգեր* (Ախալցխայի Ջուղա և Ծղալթբիլա), *կընքավուօր* (Ծավկա, Ախալքալակի Բալխո), *քավոր // քավոր* (Բասենի Վելի Բաբա) և այլն:

Մկրտության ծեսի կարևոր դերակատարություն ունի նաև կնքամայրը, որի անվանումները կազմված են *սան+կին*, *կնիք+ավոր+մայր // կին (իկ)* բաղադրիչներից. *սանամեր* (Վերին Բասենի Ալիճագրակ), *կընքամար* (Ախալցխա), *կընքակին // կընքագին* (Ծավկայի Ղաբուռ, Ախալքալաքի Բուղաշեն, Աբով և Վաչիան), *քավորկընիգ* (Կարին) և այլն:

Գ) *Կրոնակեղեցական բովանդակություն ունեցող այլ բառեր*: Կարինում և Ախալցխայում գյուղական տոնախմբությունն անվանում են *դէրի*³, տարեմուտը՝ *տօն* կամ *տօնություն*, *կաղընտ* (Ախալցխա), *կա-*

¹ Տե՛ս Քյոսեյան Հ., Սրբալույս մյուռոն, «Էջմիածին» (ամսագիր), 1992, 2-Է, էջ 43-45:

² Աճառյանի Հ., «Հայերեն արմատական բառարանում» կնիք գլխաբառի տակ բերվում են նաև կնուք // կնունք՝ «մկրտութիւն» իմաստով (ն. տ., էջ 608):

³ Տե՛ս Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Եր., 1952, էջ 134:

դիմաց (Ծալկայի Ղաբուռ, Գանձա, Մեծ Սամսար) և այլն: Տոնին առնչվող մյուս անուններից են՝ *տըրըրնդէզ* (Կարին), *պայ* (Փոզա), *պաս/պայք* (Սպիտակի Շիրակամուտ), *պայվասկ* (Բեժանո, Մաջադիա, Կաջո, Բուռնաշեթի, Ազավրեթի), *ժառժարթար* (Ախալքալակի Ազավրեթ, Ալաստան, Բուզավեթ), *ժարժար* (Ախալցխա), *ժառժար* (Ախալքալակի Բուղաշեն, Աբուլ, Գանձա), *ժառժարառ* (Վաչիան, Տրկնա, Գոման, Մամգարա), *ժառժար* (Լոմատուրցի), *ժառժատան* (Ախալցխայի Ծինուբան, Չիֆլիկ, Խակ) *վարթավար* (Բասենի Տադվերան), *վարթեվուօր* (Ախալքալաքի Բեժանո, Բալխո, Ծալկա), *վարտեվօրիզ* և այլն:

Դ) *Կրոնական հիմք ունեցող հարադիր բայեր*: Ուշագրավ են Կարնո բարբառի կրոնական հիմքով պայմանավորված հարադիր բայերը: «Աստվածաշունչը պարզ բայեր կիրառելու փոխարեն առաջնությունը տվել է բաղադրյալ ձևերին. *աղօթել* - ուն գերադասել է *աղօթս առնել*. *յաղօթս կալ*, *աղօթս մատուցանել*, *երկրպագել* - ուն՝ *երկիր պագանել* և այլն»¹, - գրում է Վ. Առաքելյանը: Կարծում ենք, որ Աստվածաշունչի օրինակով են գործածվում *աղօտկ էնել* (Կարսի Քյուրագդարա), *խաճ էնել* (Կարսի Ղըզըլոյչ և Ճըջըխար, Ղուկասյանի Յոդամարգ), *խաչ հանել յէրէսը* (Սպիտակի Շիրակամուտ), *բահք փրոնել* (Ախալցխայի Ծիրա), *պաս պրոնիլ* (Ախալցխայի Մեծ Պամաճ և Ծուղրութ), *անընհօր հանիլ* (Ախալցխայի Ջուղա և Ծղալթբիլա) և այլն: Ինչպես նկատելի է, վերջին օրինակում *անընհօր* բաղադրիչն ստացվել է «Հանուն հոր»՝ աղոթքի առաջին բառերի արտակարգ հնչյունափոխության արդյունքում²:

Այսպիսով, Կարնո բարբառի կրոնականեղեցական բառապաշարը բավականին հարուստ է: Կարնո բարբառով առկա բանահյուսական ստեղծագործությունները՝ ավանդազրույցները, ժողովրդական երգերն ու կատակերգերը, առածներն ու ասացվածքները, հանելուկները, օրհնանքներն ու բարեմաղթանքները, երդման ու անեծքի արտահայտությունները

¹ Առաքելյան Վ., *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, էջ 35:

² *Ընդհանրապես հոգևորականները աղոթքն սկսում են «Յանուն հոր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, ամէն» նախաբան–աղոթասացությամբ, որը աշխարհիկ հանրության կողմից գրեթե կիրառելի չէ:*

միջոց են կրոնական բառերի գործածության և պահպանման, կրոնական-
դեցական բառաշերտի հարստացման:

Haykanush MESROPYAN (Armenia)

Institute of Language NAS RA (Yerevan)

E-mail: haykanushm@mail.ru

ABOUT RELIGIOUS-ECCLESIASTICAL MEANING (THEMATIC) OF WORD-STRIPS OF KARIN

The dialect of Karin is the biggest of "ky" branch in Little Asia or in western dialects group. The topic of our investigation is the word-strips of religious-ecclesiastical meaning (thematic) of Karin's dialect. We have divided the word-strips into several groups: a) literal dialectic phonetics which are the part of active vocabulary (god, holy, heaven, hell), b) dialectic words which are the part of colloquial vocabulary, c) dialectic word group which has passive use, d) idioms, proverbs, descriptive phrases and loan word from Arabic, Persian, Turkish.

The word-strips of religious-ecclesiastical meaning (thematic) of Karin are very rich. The Christian holidays were celebrated very specially prepared and ceremonially in Karin and Shirakfields. During these holidays were used legends, folk songs and comedic songs, proverbs and sayings, riddles, blessing and good wishes became means for religious words usage and protection, and also for enrichment of religious-ecclesiastical word-strips.

Աննա ՄԻԿՈՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: mikoyan.anna@mail.ru

**ՄԵՓԱԿԱՆ ՏԻԵԶԵՐՔԻՑ ՕՏԱՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԹԵՄԱՆ
ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆԶՅԱՆԻ «ԼՈՒՐ ՉԿԱ» ՎԵՊՈՒՄ**

Մեր զեկուցման մեջ քննության են առնված արդի հայ արձակի նշանավոր դեմքերից մեկի՝ Գ. Խանջյանի «Լուր չկա» վեպի մի շարք առանձնահատկություններ:

Խանջյանի ստեղծագործություններում տեսանելի են էքզիստենցյալ գրականության, մասնավորապես աբսուրդի թատրոնի ավանդները:

«Լուր չկա» վեպը քննվել է՝ նկատի ունենալով նաև Կաֆկայի «Դատավարություն» վեպի պատումի, հերոսների և առանցքային իրադարձությունների հետ ունեցած ընդհանրությունները, մոդեռնիստական և պոստմոդեռնիստական գրականության առանձնահատկությունները:

Վեպում հստակ ընդգծված է Խանջյանի կենսափոխափայտությունը. տիեզերքից լուրերի բացակայության պայմաններում մարդը մոլորվում է կյանքի անորոշության մեջ՝ կորցնելով դիմագիծը: Ըստ հեղինակի՝ համակերպվելը ոչ մի դրական արդյունքի չի բերում. դա հենց մարդկային հոգու կործանման հիմնական աղբյուրն է: Այդպես, վեպի հերոսը գիտակցում է, որ ի վերջո կյանքի հակասական ու անցանկալի իրողությունների հանդեպ ինքն անգոր է, իսկ նախախնամությունը ո՛չ կօզնի նրան, ո՛չ էլ կուղղորդի ընթացքում, կորցնում է ապագայի հանդեպ հավատը՝ մատնվելով անգործության: Կյանքի միապաղաղ ու տաղտկալի ընթացքը հանգեցնում է ժամանակի զգացողության կորստի, որը վեպում արտահայտվել է գործողությունների պատկերման խառնիխուռն հերթականությամբ, ինչը մոդեռնիստական գրականության մեջ զեղարվեստական հաջողված հնարանք է իրողություններին իռացիոնալություն հաղորդելու համար:

Կյանքի հանդեպ սառնասրտությամբ զինված հերոսներին Խանջյանը օժտում է բացառիկ ինտելեկտով, ինչպիսիք բարդ դատողություններ ու չոր հաշվարկներ անելն է՝ բացահայտելով 21-րդ դարի մարդու հոգեբանությունը: Մարդը դարձել է սառը մտահայեցողական էակ՝ անհոգի,

անխիղճ, անզգացմունք ու հաշվենկատ, ինչպես նորօրյա սարքերն ու մեքենաները:

Վերոնշյալ գաղափարական հարցադրումները Խանջյանը կատարել է հետևյալ թեմաների արծարծմամբ.

1) *Մարդու օտարումը*. «Օտար մարդու կերպար» եզրույթը առաջացել է ռուս գրականագիտության մեջ Եվգենի Օնեգինի և Պեչորինի կերպարների կապակցությամբ, որը տիպական է նաև Խանջյանի ստեղծած կերպարների համար: Նշյալ հերոսների համար կյանքն ու մարդիկ ասես վաղուց կարդացած գրքեր լինեն, անկանխատեսելի ոչ մի բան չի կատարվում նրանց շուրջը: Կյանքն իր իմաստն ու գայթակղությունն այդպես կորցնում է, ու կերպարները խորթանում են իրենց միջավայրին՝ հեռանալու ու մեկուսանալու անդիմազրավելի մղումով:

2) *Ազատության ըմբռնումը*. Հերոսը, որդեգրելով ազատության վերաբերյալ հիպպիական ծայրահեղ մոտեցումները, ծերության օրոք հասկանում է, որ ազատությունը երկսայրի սուր է. մարդ արարածը, եթե ազատ թողնի իր բնագրական մղումները, կդառնա դրանց գերին: Այսինքն՝ ստացվում է անազատ ազատություն՝ մարդկային աշխարհում բացառելով բացարձակ ազատության գոյությունը:

3) *Մարդ և շուն ընդհանրությունները*. Հեղինակը, պատկերելով շնամարտի տեսարան, ցույց է տալիս, որ մարդկային պայքարը, ըստ էության, նման է շների գոյամարտին՝ մինչև վերջին շունչը ինքնապաշտպանվել և բնագդաբար ինքնաշարունակվել:

Anna MIKOYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: mikoyan.anna@mail.ru

THE THEME OF A MAN ENSTRANGED FROM HIS OWN UNIVERSE IN GURGEN KHANJIAN'S "THERE IS NO NEWS" NOVEL

In our report we have done research of "There is no news" novel of Armenian contemporary writer Gurgen Khanjian. The novel has features of

existential literary stream, especially there is a relationship with The Theatre of Absurd stream. So, we have slightly represented the comparison of Franz Kafka's and Gurgun Khanjian's fictions as well. Especially in "There is no news" novel Khanjian shows his own life philosophy. He reveals the psychology of 21st century men: they are incredibly intellectual but senseless and unhappy, that's why they become prudent and cruel. According to the novel, all human beings are indetermined as they have no news from space and can not realize the highest meaning of life. In the work we have underlined 3 problems, which reveal the main idea of the novel. The enstrangement of a man: There is a term of a literary character called "stranger" who tends to be unsocialized and has abnormal behavior, always feels reluctant. The hero of this novel is a "stranger" too, as he has no expectations from life and society. He anticipates everything, he knows all about surrounding people and they have become just like a read book for him. So, he has lost curiosity about life and has bored from himself as well. The ideology of freedom: The main character of the novel-Suren in his late middle ages realizes that Hippies' philosophy about freedom is a dilemma, which he has followed all his life. Analyzing his behavior, we can conclude that he has finally become a prisoner of freedom. The analogy of dog and man life: Illustrating the dog fight, the author emphasizes the fact that humans' struggle is the same as dogs' survival, as both of them have the same life mission: defend themselves and take care about the continuation of their tribes.

Մարգուշ ՄԻՐՈՒՄՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: mirumyan51@mail.ru

**ԲԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀՈՎՋ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Պատկերավոր արտահայտությունների (ՊԱ) հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որ, իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով, հմնտ. *շարմաղ ինչպես ձյունը, մռայլ ինչպես ամպը, հպարտ որպես ծաղիկը, անցնել ինչպես ծաղիկն անցած գարնան, գետի նման արյուն թափել, ջրի նման հոսել* և այլն¹:

Բայական ՊԱ-ները հեղինակի խոսքին հաղորդում են այնպիսի արժանիքներ, որոնցով այն տարբերվում է այլ հեղինակների խոսքարվեստից: Հովհ. Թումանյանի խոսքարվեստը հարուստ է ժողովրդական բառ ու բանով. նրա ստեղծագործություններում բայական ՊԱ-ները հանդիպում են ամենատարբեր ոճական արժեքով՝ դրանով իսկ երանգավորելով հեղինակի խոսքը և ամբողջացնելով նրա լեզվամտածողական պատկերավորման համակարգը:

- *Օքսիմորոն* - գործածվում է արտահայտչականություն ստեղծելու կամ բարդ հոգեբանական ապրումներ արտահայտելու նպատակով²: Հովհ. Թումանյանի չափածոյում հանդիպում են բազմանդամ (բայական) արտահայտություններ՝ օքսիմորոնի արժեքով.

Լուռ կանգնած է ծեր քահանան, Դեմքը դեղին միրիքի պես,

¹ *Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 126-127, 140: Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 50-51:*

² *Օքսիմորոն-ի փոխարեն հայերենում գործածվում են «նրբաբանություն» (Ֆ.Խլդաթյան) և «սրասույթ» եզրաբառերը (տե՛ս Դ. Գյուրջինյան, Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք, Ս. Էջմիածին, 2015, էջ 202):*

Ծիծաղում է լացի նման, Թե լալիս է ժպտերես (1, 142):

- *Համեմատություն* - Այսպիսի կապակցությունները կարող են ստանալ հավելական բաղադրիչ՝ ընդարձակելով բայական արտահայտության թե՛ կառուցատիպը, թե՛ բովանդակային պլանը. *ցած ընկնել քարի նման և ցած ընկնել քարի կտորի նման, օձի պես բույն դնել և օձի պես բույն դնել մեկի սրտում (սրտի մեջ)* և այլն.

Նախանձը օձի նման բույն է դնում սրտի մեջ (3, 185):

- *Հակադրություն* – Հովհ. Թումանյանի գեղարվեստական խոսքում հակադրություն արտահայտում են այն բարդ կապակցությունները, որոնք տարբեր կառույցների փոխակերպման (փոխկադապարման) հետևանք են: Հմմտ. գալ ինչպես գարունքվա օրերը - գալ ինչպես տարագիր հավքեր և *գալ ինչպես գարունքվա օրերը՝ ինչպես տարագիր հավքերը.*

Չվարթ երամով դուք *եկաք* ինձ մոտ *Ինչպես գարունքվան օրերը ծաղկոտ, Ինչպես տարագիր հավքերը՝* երգով... (2, 251):

- *Չափազանցություն* - Հովհ. Թումանյանի երկերում հանդիպում են բայակապակցական չափազանցություններ, որոնք հիմնականում բնութագրում են անձանց՝ ցույց տալով նրանց գերմարդկային ուժն ու բնավորությունը, ինչպես՝ *առյուծի նման իշխան նստել, գալ վարար հեղեղի պես, արյուն թափել գետի նման, դաշտ իջնել առյուծի նման.*

Էսպես ահավոր *առյուծի նման* Սասմա սարերում *նստած էր իշխան* (1, 148):

- *Նվազասույթ* – ոճական այս երևույթի միջոցով փոքրացվում, նվազեցվում են առարկայի ծավալային, տարածական ու կշռային չափերը կամ թուլացվում և նվազագույնի են հասցվում գործողության կատարման հանգամանքները (ձևը, չափ ու քանակը, պատճառը, հիմունքը և այլն), ինչպես՝ *երեխի նման աշխարհ մտնել, երեխի նման խաբել, կորչել ինչպես ջրի կաթիլ, թիթեռի նման թրթռալ* և այլն:

Նրանք այս օտար ու սառն աշխարհքում

Կկորչեն ինչպես կաթիլը ջրի (2, 274):

- Սստիճանավորում – հոմանիշ արտահայտությունների գործածությունն է շարահյուսական միևնույն միջավայրում՝ իմաստի սաստկացման կամ

թուլացման նպատակով: Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում հանդիպում են աստիճանավորման բարձրացող և իջնող տեսակները:

ա) *Բարձրացող կամ ուժեղացող աստիճանավորման* դեպքում հաջորդ արտահայտությունը ուժեղացնում է նախորդի իմաստային շրջանակները. շրջել հալածված պանդուխտի նման – շրջել *ցավերով լցված պանդուխտի նման* և *շրջել հալածված պանդուխտի նման՝ ցավերով լցված պանդուխտի նման* և այլն.

Իմ միտքն էլ, ավա՛ղ, շրջում է մոլոր, Հայի *հալածված պանդուխտի նման*,
Մենակ ամեն տեղ, տխուր ամեն օր, *Ցավերով լցված պանդուխտի նման* (1, 131):

բ) *Իջնող աստիճանավորման* դեպքում հաջորդ արտահայտությունը նվազեցնում է նախորդի իմաստային բեռնվածությունը. *կորչել ինչպես վերջին շունչ՝ ինչպես մի չնչին հյուլէ*: Ինքն է կորչում հանկարծ, *Ինչպես շունչը իր վերջին, Ինչպես հյուլէ մի չնչին* (2, 65):

Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում աստիճանավորման ոճական հնարն այլ դրսևորումներ էլ ունի. այն կապվում է հավելական բաղադրիչ(ներ)ի առկայության հետ.

բոցի նման վառվել - *ծծումբի* բոցի նման վառվել, մրմուռի նման ծավալվել - *անհուն ցավի* մրմուռի նման ծավալվել, ծերի նման զրույց տալ - *անզոր* ծերի նման զրույց տալ, ման գալ եղջերվի նման - *ման գալ փախցրած* եղջերվի նման և այլն.

Աչքերը ծմակի մթան մեջ *ծծումբի բոցի նման ... վառվում են* (3, 120):

Մի *անհուն ցավի մրմուռի նման Օավալվում էին* զանգերը թաղման (1, 110):

Մեր ընտրանքում եղած բայական ՊԱ-ների գործառական-ոճական քննությունը ցույց է տալիս, որ անվանի բանաստեղծն ու արձակագիրը վարպետորեն է կիրառել բայական արտահայտությունները ոճական ամենատարբեր իմաստներով ու նրբերանգներով, որից մեծապես շահել է գեղարվեստական բնագիրը՝ ընդգծելով հեղինակի ոճի ինքնատիպությունն ու ժողովրդականությունը:

Margush MIRUMYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: mirumyan51@mail.ru

STYLISTIC VALUE OF VERBAL FIGURES OF SPEECH IN HOV. TOUMANYAN'S WORKS

The report deals with expressions with the value of the verb which, as figurative means, have specific value in Hov. Tumanyan's works. These set-combinations in the expressive lay-out appear as double-peak expressions, formed by verbal members, postpositions *պէս*, *նման*, *ինչպէս* and objects of postpositions.

Hov.Tumanyan's language is rich in folk vocabulary: in his works verbal figures of speech occur in various stylistic values, tinting the author's speech and completing his figurative language thinking.

Figurative expressions are based on figurative simile which, as a form of trope, expresses a comparable property by means of the relation of two heterogenous objects and a general property, peculiar to them, e.g. *շարմաղ ինչպէս ձյունը* (white as snow), *մռայլ ինչպէս ամպը* (gloomy as a cloud), *հպարտ որպէս ծաղիկը* (proud as a flower), *անցնել ինչպէս ծաղիկն անցած գարնան* (to pass as the flower of last spring), *զետի նման արյուն թափել* (to shed blood as a river), *ջրի նման հոսել* (to flow as water), and so on.

In Hov.Tumanyan's works they appear in certain stylistic value and express *simile*, *antithesis*, *hyperbole*, *litota* (*understatement*), *oxymoron*, *gradation* (*climax*), etc.

Verbal figures of speech conduct such stylistic merits to Hov.Tumanyan's language that distinguishes his fiction advantageously in the context of the Armenian prose.

Սարգիս ՄԽԻԹԱՐՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: sargis.mkhitarian@mail.ru

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԸ ԵՎ ԻՐ
«ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Մեծ հայագետ Մանուկ Աբեղյանը *Հովհաննես Սարկավագ վարդապետին (1050-1129)* համարում է «մեր վերածնության նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկը» տեսական-գեղագիտական առումով: Թեև դարաշրջանն աննպաստ էր սելջուկ Տուղրիլ և Ալփասլան սուլթանների ավերիչ արշավանքների պատճառով, բայց Արցախի Փառիսոս գավառից եկած Հովհաննեսը Հաղպատ-Սանահինյան միջավայրում հասունացել և զբաղվել է գիտական ու մանկավարժական բեղուն գործունեությամբ, ստեղծել իր բազմաժանր ու բազմաբնույթ երկերը: 1084 թ. երկարամյա մաքառումներից հետո Հովհ. Սարկավագի ջանքերով Հայ եկեղեցին մոտ 400-ամյա ուշացումով հաստատում է անշարժ տոմարը, որով բարելավվում է եկեղեցական կյանքում տիրող խառնաշփոթը:

Նշանավոր վարդապետի համար Մ. Աբեղյանը գրում է. «Անդուլ աշխատանքով նա դառնում է բազմակողմանի հմտությունների տեր մեծ գիտնական, փիլիսոփա մատենագիր, տոմարագետ, պատմագիր, ճարտասան հեղինակ կրոնական ներբողների, միաժամանակ և բնական գիտություններով պարապող ու բանաստեղծ»: Հովհ. Սարկավագի ստեղծագործություններից հատկապես մեկը՝ «Բան իմաստության» պոեմը, բարձր է գնահատված ինչպես մի շարք հայագետների, այնպես էլ մեծ գիտնականի կողմից: Ահա այն հանրահայտ խոսքերը, որով նա բնութագրում է հիշյալ ստեղծագործությունը և մեծարում նրա հեղինակին. «Այդ մեծ (188 երկայն տողերով) քերթվածն իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալի նորություն է մեր հին գրականության մեջ: Եթե դա պատահամբ չփրկվեր կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»: Փիլիսոփա մտածողը հանդես է գալիս իր ժամանակի իրականության մեջ իբրև Հայկական վերածնության քերթողա-

կան արվեստի տեսաբան: Ինչպես Ն. Կուզանացին կասեր, տեսանելի բնությունն աստվածային արարչագործության արդյունք է: Իսկ դա նշանակում է, որ այն օրինակ է կատարելության: Նրանից պետք է սովորել ինչպես կատարյալի բարձր արվեստը, այնպես էլ արվեստի կատարելության գաղտնիքը: Ըստ Մարկավագի՝ մարդը հեռացել է Աստուծուց, ուստի բնությունից կամ բնության զավակից պետք է կրկին սովորի կորցրածը: Երկն անվանված է «Ջովհաննու Մարկավագի Իմաստասիրի եւ վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զքօսանաց առ ձագն որ գաղթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն որ կոչի սարեկ (նան՝ սարիկ-Ս. Մ.)» կամ «Բան իմաստության»: Այս տրամախոսությունը մեզանում առաջինն է նաև որպես դրամատիկական սեռի երկ, քանզի հերոսների խոսքը և դերերը բաժանված են հեղինակի կողմից: Բանաստեղծ վարդապետը դիմում է սարեկին.

Արթուն և գուարթուն թըռչուն հըսկո՛ղ և բարբառող,
Անդառնասէր միայնակյաց և ձեռնդել համբուրասէր
Կանչող և կարկաչող, ճճուող ձայնի պաշտօնասէր,
Արդ՝ ե՛կ ինձ մերձ ի գովութիւն....

Թող մոտենա իրեն և գովեստի արժանանա, որ ինքն արարչի փառքը մեծացնի: Բանաստեղծը պատրաստ է նրան քարոզել ու ուսուցանել «քաջ արուեստը» իմաստության: Փիլիսոփա արվեստագետը պատրաստ է իր գիտելիքները փոխանցել թռչնին: Թերևս սպասելի է հետագայում տրվելիք մերժումը թռչնի կողմից, քանզի դրախտից մարդու և այլոց վտարումն արդյունք է իմաստության ծառից կերած պտղի: Իսկ այդ հարցը տրամախոսության առանցքային թեմաներից մեկն է: Փոքր թռչունը խոհեմ է, ողջախոհ և քաջասիրտ՝

Իսկ արուեստիւ դու երաժիշտ ամենահնար, անվարդապետ
Ինքնաբաւ և ինքնուսումըն, վայրաբնակ և անքաղաք,
Անմերձ և մերձաւոր, ուրախարար լըսասիրաց,
Քաղցրաձայն դաշնակաւոր՝ որպէս կարծեմ ըստ արուեստիդ....

«Ձագը» պատասխանում է, թե հասկացել է, որ նա ունի «իմաստ» (իմաստությունը) անսայթաք ու անխոտոր, դրանով առաջ է գնում, և ինքը գնահատում է դա: Սակայն իրենց միջև կա մեծ անջրպետ, որ հաղթահա-

րելն անհնար է, ուստի շեշտում է իրենց ամենաեական տարբերությունը: Մարդը գործել է մահացու մեղքը, վտարվել դրախտից՝ պատուհաս դառնալով հենց իր ու այլոց տառապանքների համար.

Ո՛չ մեղայ, ո՛չ մահացայ, ո՛չ կորուսի գոր ընկալայ.

զԱւանդըն պահեցի և տուգանաց ոչ ըզգացի.

Չշինեցի ես աշտարակ, զի յոգնակի դարձեալ մեղայց,

Կամ ընկալայց ըզպատուհաս նըմանապէս քանաւորացոյ:

Այդ ամենը նա պահպանել է անփոփոխ ձևով, իսկ բանավորները (բանականները-Ս. Մ.) մի շարունակական վտանգի դուռ են բացել սարեկի համար.

Արդ կացի ի բնականին, որոյ պարզն է յայտնութիւն.

Որ ի լրման ժամանակաց ընծայեցաւ փոքու հօտին:

«Հայտնության» պարզը որպես շնորհ տրվել է փոքր հոտին, բայց ոչ բանականներին, որ ցանկանում են օտարել թոչուններից: Այո՛, իմաստասեր վարդապետն անձամբ չի ծուլացել ու մեղք չի գործել: Վերջապես ինքը չի էլ արդարացնում Ադամի գործածը: Բայց ինչ էլ որ ձեռք է բերել նա, բազում տարիների տքնության արդյունք է: Ընդունում է իր պարտությունը, որով թոչունը «ջանայր յաղթել ինձ ի մարտին»: Հետաքրքիր է հոգեբանական պահը, երբ վարդապետը սրտնեղում է. *Ասէ, ընդէ՞ր դու զիս նեղես, ըզխորհեցողս իմաստութեան...*

Վարդապետն ընդունում է, որ ամեն ինչ սովորելով է ձեռք բերել, ինչպես և իր համագրի մեծագով *Ափիոն Թեբեացին, Արիոն Միթեմնացին և Որփիս Թրակացին*: Մարդիկ երաժշտության և առհասարակ բանաստեղծական և այլ արվեստներ միաբանություններում, նրանցում ստեղծված ճեմարաններում են սովորել: Իրենք դա սովորելով են յուրացրել, որովհետև «վարժումն ու կրթութիւն ոչ ժամանէ մերձ ի բնութիւն»: Մինչդեռ թոչունն այդ ամենը բնությունից է ստացել, պահպանել է արարչական արվեստի անաղարտությունը: Բայց նա էլ գրկվել է դրախտից, անտեղի ենթարկվել այն արհավիրքներին, որ սահմանված են եղել ամբարիշտ մարդու համար: Ուստի նա ամբաստանում է մարդուն, որ

Բայց և անմեղքս վնասեցաք վասն ձերոյ ժըպրիութեան.

Ի փառս ձեր մեք գոյացեալք և վասըն ձեր ապականեալք,
....Արդ մեզ և ձեզ առ հասարակ եղէք գրտիչըք կորըստեան,
Զի և ընդ մեր իսկ տուգանաց պարտիք համար տալ արարչին:

Ուստի արդյունքում թռչունը ոչ միայն համաձայն չէ սովորեցնել, այլև վարդապետին արժանացնում է իր սուր հանդիմանանքին: Մարդը պիտի պատասխան տա Աստծո առջև իրենց՝ թռչուններին պատճառած վնասի համար: Բանավեճի մեջ նա հաղթում է, քանզի մարդը չի ցանկանում փոխվել, շարունակում է մեղքեր գործել, իսկ բնության զավակները տուժել են նրանց պատճառով: Թեև վարդապետն ընդունում է իր անհիմացությունը և պարտությունը, բայց և առաջադրված խնդիրները՝ սովորել բնությունից և «թարգմանել բնության ձայնը», մնում են ուժի մեջ՝ որպես դարաշրջանի առաջնային պահանջներ: Արվեստագետ-գիտնականն ընդհանուր ուշադրության արժանի հարցերի արծարծմամբ ինքն էլ նմանվում է մարդու անկապտելի իրավունքները պաշտպանող մեծերին:

Պոեմն ունի գործողությունների զարգացման յուրահատուկ ընթացք, որը զգալի է ինչպես ներքին բովանդակային, այնպես էլ ֆիզիկական իրական շարժման իմաստով. դա դրսևորվում է մտավոր շարժման տիրույթում: Գործողությունները հասնում են բախման գագաթնակետին: Հակադրությունն ավարտվում է կողմերի տարանջատմամբ: Ի դերն են ելնում վարդապետի հույսերը. աստվածայինը սովորել բնության զավակից ձախողվում է: Դրան ավելանում է հանդիմանանքը: Մարդը հանդես է գալիս իբրև անուղղելի էակ, որ զղջումի ու ապաշխարության ճանապարհով չի գնում, այլ անհնազանդության:

Հովհաննես Իմաստասերը հայկական Վերածնության կարկառուն դեմքերից է: Այդ փիլիսոփա իմաստասերն իր էությանբ դրա կրողն է: Նա ևս բնությունը համարում է Աստծո գոյի տեսանելի և կատարյալ մասը: Ուստի դրանից բխող նրա գեղագիտական ընկալումներն այնպիսին են, որ նա արվեստը բնության յուրատեսակ արտապատկեր է դիտում: Դրա համար էլ առաջադրում է մարդու, այն է՝ արվեստագետի՝ բնությունից ընդօրինակելու շնորհիվ կատարելության հասնելու գաղափարը:

Sargis MKHITARYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: sargis.mkhitaryan@mail.ru

HOVHANNES IMASTASER AND HIS POEM "BAN IMASTUTIAN" ("DISCOURSE ON WISDOM") IN THE CONTEXT OF THE ARMENIAN LITERARY RENAISSANCE

One of the greatest Armenologists, M.Abeghyan, considers Hovhannes Sarkavag to be one of the first representatives of "Our new intellectual stream" of the 11th century. Although the era was unfavorable because of the Seljuk invasions, Hovhannes ripened in Haghpat - Sanahinyan environment and was engaged in intense scientific and pedagogical activities. In 1084, Hovhannes Imastaser became involved in the project of developing so-called Minor Armenian Calendar, which included all 365 days plus one additional day. Eventually, his work on calendars led to the invention of a perpetual or eternal calendar. In the result of his untiring work the outstanding vardapet (archimandrite, Doctor of Theology) of the Armenian Apostolic Church became a great scientist, calendar maker, historian, author of various religious odes, etc. Imastaser's innovative approach to literature, for which he is often referred to as a key representative of the Armenian literary renaissance, is fully demonstrated in his poem "Ban Imastutian" (Discourse on Wisdom). In the poem, written as a dialogue between the author and a blackbird, the bird symbolizes nature, which, per author, is the main inspiration behind art. In Imastaser's time, artistic inspiration was usually attributed to divine reasons. M.Abeghyan once said: "If it wasn't rescued from the loss, the theory of the development of the new intellectual stream would have remained incomplete".

Գարիկ ՄԿՐՏՉՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան

E-mail: garik_mkrtychyan@mail.ru

**ՄՇՈ ԵՎ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(ընդհանրություններ և տարբերություններ)**

Մշո և Կարնո բարբառները հայերենի ամենամեծ բարբառների թվին են պատկանում, որոնք, հազարամյակների խորքից գալով, կենդանի են մինչ օրս: Նրանց պատմական փոխառնչությունները, վստահ ենք, գալիս են հնուց, ուստի և նրանց քննությունն արդիական է բոլոր ժամանակներում: Մշո և Կարնո բարբառները ձևավորվել են Կենտրոնական Հայաստանում ինչ-որ պատմական ժամանակահատվածում՝ զբաղեցնելով պատմական Հայաստանի Մեծ Հայքի Տարուբերանի (Մշո բարբառ) և Բարձր Հայքի (Կարնո բարբառ) նահանգները: Երկու բարբառները սահմանակից են: Խնուսի խոսվածքը՝ որպես Մշո բարբառի առանձին միավոր, Կարնո բարբառի արևմտյան հատվածում է և, ըստ ամենայնի, հանդիսանում է սահմանաբաժան:

Տիպաբանական տեսանկյունից դժվար է որոշել՝ արդյոք Մշո և Կարնո բարբառները զարգացման միասնական ընթացք ունեցել են, որքան էլ այս երկու բարբառները տարածականորեն սահմանակից են և գոյակցել, զարգացել են կենտրոնական Հայաստանում, այդուհանդերձ նրանց ունեցած լեզվական տարբերակիչ հատկանիշները ցույց են տալիս, որ դրանք զարգացման միասնական ընթացք չեն ունեցել:

Մշո և Կարնո բարբառների լեզվական փոխհարաբերությունները, կարծում ենք, գալիս են նախապատմական ժամանակներից: Նրանց ընդհանրությունները, որոնք ավելի շատ են և ընդգծված, խոսում են հնագույն շրջանում միասնական բարբառային որակ ունենալու, մեկ լեզվահիմքի դրսևորումներ լինելու մասին, իսկ եղած տարբերությունները, որոնք վկայում են նրանց զարգացման ոչ միասնական ընթացքը, կարելի է ներկայացնել երեք հիմնական դրույթներով՝ ա) նախապատմական շրջանում եղած տարբերություններ, որոնք լավագույնս վկայում են հնագույն հայերենում եղած բարբառային յուրահատկությունները, բ) պատմականորեն

ի հայտ եկած տարբերություններ, որոնք արդեն իսկ միասնական լեզվի կրած ներքին փոփոխություններն են ցույց տալիս, գ) հարևան այլ լեզուների ազդեցությամբ առաջացած լեզվական օրինաչափություններ, որոնց հետևանքով երկու բարբառները զանազանվում են իրարից: Օտար ազդեցություններով պայմանավորված տարբերությունները, իհարկե, սակավ են:

Հայերենի արևմտյան խմբակցության Մշո և Կարնո բարբառների ուսումնասիրությունն սկսվել է 19-րդ դարի վերջերից: Հր. Աճառյանն առաջինն է, որ հայերենի բարբառների միահատկանիշ ձևաբանական դասակարգման մեջ որոշում է Մշո և Կարնո բարբառների հստակ դիրքը հայերենի բարբառների Կը ճյուղում՝ ուրվագծելով նրանց տարածման մոտավոր սահմանները 20-րդ դարի սկզբի լեզվական ու պատմական տվյալների հաշվառմամբ (Հր. Աճառեան, *Հայ բարբառագիտություն.-Ուրվագիծ և դասակարգություն հայ բարբառների*, Էմինեան ազգագրական ժողովածու, Ը հատոր, Մոսկուա-Նոր-Նախիջևան, 1911թ.):

20-րդ դարի ողջ ընթացքում հետազոտողները տարբեր առիթներով անդրադարձել են քննության ենթակա երկու բարբառներին: Մյուս կարևոր դասակարգումը տեսնում ենք հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ (Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, 1972): Գ. Ջահուկյանը հստակեցնում է երկու բարբառների տարածման մոտավոր սահմանները, և նրա ներկայացրած լեզվական միավորիչ և տարբերակիչ հատկանիշները խմբավորելիս հնարավոր է դառնում ոչ ամբողջապես ամփոփել երկու բարբառների ընդհանրությունները և տարբերությունները:

Ըստ Գ. Ջահուկյանի վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Մշո բարբառը Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ կենտրոնական բարբառախմբի ամենամեծ բարբառն է և ունի ինը խոսվածք՝ Բաղեշը, Խլաթը, Արծկեն, Արճեշը, Մանազկերտը, Մուշը, Բուլանդը, Խնուսը, Ալաշկերտը: Իսկ Կարնո բարբառը, ըստ նույն դասակարգման, ներառվում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում, որը ներկայանում է Կարինի, Գյումրու, Բաբերդի, Խնդաձորի խոսվածքներով:

Մինչև 19-րդ դարի առաջին կեսերն ուսումնասիրվող բարբառների դասավորությունը հնարավորինս կայուն է եղել: Մշո բարբառն իր զբաղեցրած տարածքներում էր՝ Մշո դաշտում և նրա շրջակա գավառներում, քաղաքներում ու գյուղերում՝ Մուշ կենտրոնով, իսկ Կարնո բարբառը Կարսի, Բասենի, Նարմանի, Խոտորջրի, Բաբերդի, Սպերի խոսակցական լեզուն էր՝ Կարին կենտրոնով: Կարնո բարբառի սահմանները տարածվում էին մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե (Գիրեսուն), իսկ Մշո բարբառը՝ Վանա լճի արևմտյան հատվածում: Ներառյալ Խնուսի, Բաղեշի, Ալաշկերտի խոսվածքները՝ Մշո բարբառը սահմանակցվում էր Կարնո և Արարատյան բարբառներին, արևելքից՝ Մոկսի ու Դիադինի բարբառներին, իսկ արևմուտքից՝ Տիգրանակերտի բարբառին (այժմյան Թուրքիայի Դիրբաեքիի նահանգ):

19-րդ դարի առաջին կեսերից սկսած և հատկապես 20-րդ դարի սկզբից Մշո և Կարնո բարբառների տարածական հիմքերը խախտվում են, իսկ նրանց բնականոն դասավորությունը՝ խաթարվում: Այս պահի դրությամբ Մշո բարբառն ամբողջությամբ և Կարնո բարբառը մասնակիորեն ցիրուցան են աշխարհի տարբեր հատվածներում: Երկու բարբառների կրողները հիմնականում վերաբնակվել են Հայաստանի Հանրապետության տարբեր հատվածներում, ինչպես նաև՝ Ջավախքում:

Այն, որ թե՛ Մշո բարբառը, թե՛ Կարնո բարբառը հնագույն լեզվական որակներ ունեցող բարբառներ են և ավելի հին լեզվական յուրահատկություններ ունեն, քան զբաբարը, անվիճարկելի են այսօրվա պատմահամեմատական լեզվաբանության տվյալներով: Ասվածը վկայում են երկու բարբառներում գործող հատկապես հնչյունական օրենքները և քերականական կարգերի առանձին դրսևորումները:

Տիպաբանական տեսանկյունից ցայժմ անորոշ են մնում երկու բարբառների լեզվական փոխառնչությունները, լեզվական տարբերակիչ և միավորիչ հատկանիշների պատճառաբանվածությունը և դրանց լեզվապատմական ու ծագումնաբանական հիմքերը: Ըստ այդմ՝ նոր լույսի ներքո կարևորվում են երկու բարբառների ինչպես ծագման, այնպես էլ նրանց լեզվական հատկանիշների լեզվաժամանակագրության մի շարք հարցեր:

Երբևէ չի կատարվել այս բարբառների զուգադրահամեմատական, տիպաբանական ուսումնասիրություն: Նրանք միշտ քննվել են մեկը մյուսից առանձին, ուստի և երկու բարբառների առանձնահատկությունների միասնական քննությունը, ըստ ամենայնի, առաջնային կարող է դառնալ: Այն՝ որպես ուշադրության արժանի կարևոր գիտական խնդիր, բաց օղակ է հայերենի տարածքային լեզվաբանության մեջ:

Garik MKRTCHYAN (Armenia)

Yerevan State University

E-mail: garik_mkrtyan@mail.ru

TYPOLOGY OF MOUSH AND KARNO DIALECTS (Similarities and Differences)

The dialects of Moush and Karno belong to the number of the biggest dialects of the Armenian language. The historical correlations of these dialects come from ancient times and they are worth studying.

In present days from the typological point of view it is quite difficult to designate whether the dialects of Moush and Karno have had unified development process or not. Although these two dialects are territorially contiguous and they have developed together in central Armenia, their linguistic distinctive features show that the two dialects haven't had unified development process.

It is a well known fact, that mainly in the first half of the 20th century the territorial bases of the two dialects have been violated and their natural distribution have been destructed. At present time the dialects of Moush totally and the dialect of Karno partially are scattered to different parts of the world.

The fact that both Moush and Karno dialects are dialects with ancient linguistic qualities and have much older linguistic peculiarities than Grabar is indisputable by the present data of historical-comparative linguistics. The above mentioned testifies mainly the phonetic rules and features of grammatical categories used in two dialects.

But from the typological point of view the linguistic relationships of two dialects, their correlations, the motivation of linguistic distinctive and unifying features and their linguistic-historical and etymological bases are still unknown. Under a new light it is quite important not only the presentation of etymological patterns of the distinctive features of two dialects historically constantly correlated to each other but also the clarifications of a number of questions concerning their linguo-chronology.

Comparative-contrastive, typological studies of these dialects have never been done. They have always been studied separately, thus the unified examination of the peculiarities of two dialects is of primary importance. It, as an important scientific issue, deserves attention, and is an open circle in the Armenian regional linguistics.

Ольга НОВИК (Украина)

Бердянский государственный педагогический университет

E-mail: Noviop@gmail.com

«ПУТЕШЕСТВИЕ В АД» («АД») АГОПА МЕЛКОНЯНА КАК ФАНТАСТИЧЕСКИЙ РАССКАЗ

Современная болгарская литература обогащается различными жанрами, в том числе и разновидностями фантастической литературы. Е.Харитонов включил в словарь болгарских фантастов Агопа Мелконяна, считая его мастером психологически изящной и стилистически безупречной философской фантастики склонной к притчевой форме, одним из самых авторитетных болгарских фантастов "новой волны"¹. Среди литературовед-

¹ Харитонов Е. *Болгария фантастическая: Библиография*. – София: Агрус, 2003// [Электронный ресурс: доступ [Электронный ресурс: доступ <http://academia-f.narod.ru/Bulgsf.htm>]

ческих работ о писателе доминируют обзорные статьи, отдельные произведения рассматривались вскользь. Для понимания процессов формирования фантастической литературы в Болгарии изучения творчества Агопа Мелконяна, является актуальным. Агоп Мелконян – один из основателей кафедры арменистики Софийского университета, где преподавал армянскую филологию. Переводил армянскую поэзию, исследовал армянскую литературу, участвовал в подготовке изданий «Армянские художники в Болгарии, 1897–1997» (1997), «Армянская лирика», «Армянская литература V–XVIII века» и «Армянские иконы» (все – 2001).

Один из рассказов писателя «Ад» (в переводах – «Путешествие в ад») отсылает читателя к литературной традиции с помощью непосредственного ввода в текст как персонажей древних писателей и деятелей науки и культуры. Фантастика граничит с мистикой, и, все же, можем говорить о фантастический рассказ, поскольку в ад герой попадает с помощью машины «Пеклотрон», используя блестящий скафандр. Начиная с эпитафии из Данте: «На полпути своего земного мира/Я попал в мрачный лес густой ...»¹, автор погружает читателя в причудливый мир, где живет персонаж Алигьери, который работает журналистом в Лондоне, не любит лесов, плохо слышит на одно ухо, дружит с университетских времен с чудаковатым ученым Вергилием. Несмотря на красноречивые имена, в начале текста жизнь героя выглядит вполне реалистично.

Осовремененное прочтения аббревиатуры АД – «автоматический душевыдавливатель» – на входе в ад соседствует с лозунгом: «Не допустим хорошего материала в чистилище. Везувий». Из многих табличек вроде таких: «Вольтер – худющий и глумильщик », "Жорж Санд – ни мужчина, ни женщина", "Ангел Р.–неслыханный дьявол!"; "Ампер – придумал силу тока", "Байрон – какой-никакой рифмоплет!", "Алонсо – водитель городского автобуса"; "Паганини – играл на чем-то?», – герой находит табличку с над-

¹ Мелконян Агоп. Подорож у пекло [Пер. з болгарської В. Гуця]/А. Мелконян// Пригоди; Подорожі; Фантастика' 81: Збірник фантастичних і пригодницьких повістей та оповідань / Упор. О.К. Тесленко; Мал. Р.Є. Безп'ятова та Г.П. Філатова. – Київ : Вид-во ЦК ЛКСМУ «Молодь», 1981. с. 186.

писью: «Ньютон – распространял слухи, будто яблоки притягивают Землю»¹. Пытаясь сделать сенсационное интервью, журналист добивается возможности поговорить с Ньютоном. Сама ситуация фантастического путешествия автором обыгрывается в духе ироничного повествования братьев Стругацких. Довольно много элементов осовременивания картины рая².

Пародийность изображения ада из произведений Данте углубляется философским нагромождением размышлений главного героя Алигьери. Временные смещения устоявшихся понятий дают возможность автору создавать фантастические элементы повествования, в частности описывать Ньютона таким, каким его видит Данте с XX века.

Творчество Агопа Мелконяна является оригинальным явлением современной болгарской прозы. Исследование фантастических рассказов писателя, в частности, «Путешествия в ад», дает возможность выделить такие черты поэтики как ироничность повествования, аллюзионность образов, заострение внимания на философских морально-этических проблемах, использование элементов научной фантастики для изображения реалий.

Olga NOVIK (Ukraine)

Berdyansk State Pedagogical University

E-mail: Noviop@gmail.com

“JOURNEY TO HELL” (“HELL”) BY AGOP MELKONYAN AS A FANTASTIC STORY

Modern Bulgarian literature was enriched by a variety of genres, including fiction varieties. Agop Melkonyan considered as a master of psychological elegant and stylistically perfect philosophical fiction, one of the most reputable Bulgarian fiction writers of “new wave” in literary criticism.

¹ Мелконян Агоп. *Подорож у пекло*, с.189.

² Там же, с 191.

Studying of Agop Melkonyan's creativity is actual to understanding the processes of formation of fantastic literature in Bulgaria.

The report examines one of the writer's stories "Hell" (in translation – "Journey to Hell"). The author refers the reader to the literary tradition of using direct entry into the text as the characters of the ancient writers and figures of science and culture. Fantasy borders on the mysticism and we can talk about the fantastic story because character goes to hell with the help of machine "Peklotron" using brilliant spacesuit. Despite the eloquent names at the beginning of the text the life of the hero seems to be quite realistic. The situation of fantastic journey played out by the author in the spirit of the ironic narrative of Strugatsky brothers. There are quite a lot of modern elements of paradise in the picture. Parody of hell image from Dante's works is deepening by philosophical conglomeration of reflection by Alighieri's protagonist. Temporary displacement of established concepts give the chance to the author to create the fantastic elements of the story, in particular, to describe Newton in the way it sees Dante of the twentieth century.

Creativity of Agop Melkonian is an original part of the contemporary Bulgarian prose. Research of the fantastic stories, in particular "Journey to hell" provides an opportunity to highlight those features of poetics as narrative irony, allusion of images, sharpen the focus on the philosophical, moral and ethical problems, using of elements of science fiction to reflect the realities of the modern world.

Галина ШКОЛА (Украина)

Киевский национальный лингвистический университет

e-mail: shkolagal@mail.ru

КОНЦЕПТ «СУДЬБА» В ЯЗЫКОВОЙ КАРТИНЕ МИРА АРМЯН И УКРАИНЦЕВ (НА МАТЕРИАЛЕ ПРОИЗВЕДЕНИЙ ОВАНЕСА ТУМАНЯНА И ОЛЬГИ КОБЫЛЯНСКОЙ)

Картина мира (постоянно меняющаяся и развивающаяся объективная действительность) имеет два компонента: поведенческий и языковой. В языке зафиксированы особенности восприятия мира отдельным этносом. Картина мира вмещает также этнические традиции, верования, поверья.

Законы мышления разных народов одинаковы, поэтому системы их понять поддаются сопоставлению. Национальные картины мира вмещают как специфические, так и общие черты.

Рассматривая творчество Ованеса Туманяна, Павел Тычина находил сходство между поэмой «Ануш» и повестью Михаила Коцюбинского «Тени забытых предков»¹. На наш взгляд, больше общих черт обнаруживается между произведением выдающегося армянского писателя и повестью другого украинского прозаика – Ольги Кобылянской. Исходя из этого, материалом предлагаемого исследования послужили поэма О. Туманяна «Ануш» (1902) и повесть О. Кобылянской «В неділля рано зілля копала...» (1908).

Произведения армянского и украинского авторов сходны целым рядом мотивов, образов, тематикой.

О. Туманян и О. Кобылянская рассматривают тему невозможности счастья двух влюбленных. Одной из причин этого стали прегрешения их родных и близких. Мама Ануш отказала в подаянии дервишу, который вошел в их дом, воспитательница Татьяны – главной героини повести

¹ Тычина П. Про мистецтво і літературу: Збірник [Упор., вступ. ст. та прим. Л.М. Коваленка] / П. Тычина – К.: Мистецтво, 1981. с. 121.

украинской писательницы, – холодной, ветреной зимней ночью отказала в приюте страннику. Сила проклятья отверженных пала на дочерей этих женщин. Слово в мифические времена, когда название предмета не отделялось от него самого, имело огромное значение. Считалось, что заклятие могло осуществиться.

Перст судьбы Ануш и Татьяна узнают и в гаданиях. В весенне-летних обрядах в ночь на Вознесение (в Армении) и в ночь на Ивана-Купала (в Украине) девушки идут в горы и к воде, обращаются к духам: пери («Ануш») и русалкам («В неділлю рано зілля копала...»). Функцию волшебных предметов в этих обрядах выполняют перстень («Ануш») и венок из цветов («В неділлю рано зілля копала...»).

Главная героиня армянского писателя также гадает, набрав воду из семи источников, нарвав цветов из семи кустов:

Под звёзды воду и цветы

Она поставила в ночь,

Моля у звёздной высоты

В любви ей, бедной, помочь... (Перевод В. Державина).

Сакральной семантикой наделено число семь и в украинском фольклоре. К помощи растений в борьбе за свое счастье прибегает и героиня О. Кобылянской.

Персонажи произведений О. Туманяна и О. Кобылянской – гадатели-профессионалы – в своем ремесле используют также зерно: ячмень («Ануш»), кукурузу («В неділлю рано зілля копала...»).

Одна из черт мифологического мировоззрения – вера в превращение. Легенда о превращении девушки, которая не дождалась своего сужденного, предвосхищает судьбу героини поэмы. Мотивами превращения богаты и украинские народные и авторские баллады.

Отличительной чертой, которая передает национальное своеобразие, есть мотив двоеборства, который занимает одно из ведущих мест в произведении армянского писателя. Для украинской традиции он не свойственен. Институт борцов силачей-пехливанов своего распространения в Украине не нашел.

В произведениях О. Туманяна и О. Кобылянкой отражены обычаи, нравы, быт народов Армении и Украины. Сопоставив картины мира, отображенные армянским и украинским авторами, находим, что они имеют свои национальные особенности, при том, универсальные черты в них преобладают. Изучение национально-языковых проявлений универсальных величин есть перспективным направлением дальнейших исследований.

Galina SHKOLA (Ukraine)

Kiev National Linguistic University

e-mail: shkolagal@mail.ru

CONCEPT “DESTINY” IN THE LINGUISTIC PICTURE OF ENGLISH AND UKRAINIANS (ON THE MATERIAL OF THE WORK OF H. TOUMANYAN AND OLGA KOBYLIANSKA)

The report discusses the concept of «Destiny» in the linguistic picture of the Armenians and Ukrainians (based on the works of Hovhannes Toumanyanyan and Olga Kobylianska).

The features of the perception of different ethnic group are fixed in the language of the world. The national pictures of the world contain both specific and general features. Considering the work of Armenian and Ukrainian writers, in our opinion, is found more similarities between the works “Anush” (H. Toumanyanyan) and “In the early Sunday potion dug...” (O. Kobylianska).

These products are similar to a number of other motives, images, themes. The main theme of the works is predestination of fate, the impossibility of happiness of two lovers. The protagonists of the works of H. Toumanyanyan and O. Kobylianska in the struggle for their own happiness resort to soothsayers professionals who use their craft plants: Barley (“Anush”), corn (“In the early Sunday potion dug...”).

The distinguishing feature, which transmits national identity, is a motive of a duel, which occupies a leading position in the work of the

Armenian writer. For the Ukrainian tradition, it is not peculiar. The Pehlivanov Institute's of fighters-athletes distribution is not found in the Ukraine. The customs, manners, way of life of the peoples of Armenia and Ukraine are reflected in the works of H. Toumanyane and O. Kobylanska. Comparing the pictures of the world, displayed by the Armenian and Ukrainian authors, we find that they have their national peculiarities, though common features prevail there. The study of the national language manifestations of common values has a promising direction for further research.

Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)

Վանաձորի պետական համալսարան

E-mail: lilitpetrosyano1977@mail.ru

**ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌՈՎ
ԳՐԱՌՎԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

Հեքիաթանունները, ունենալով ճանաչողական նշանակություն, գեղարվեստական անվանադրության համակարգում առնչվում են ժողովրդական լեզվամտածողության, բարբառագիտության հետ և հայկական ժողովրդական հեքիաթներում արտացոլում են հայ իրականության մեջ առկա մարդկային տարբեր հարաբերություններ: Ասացողները հերոսներին հիմնականում ներկայացնում են *անանունություն* գեղարվեստական պատկերավորման միջոցով, քանի որ հեքիաթներում «մի հերոսին մյուսից տարբերող հատկանիշ է դառնում կա՛մ մասնագիտությունը, կա՛մ սոցիալական պատկանելությունը»¹:

Հայկական ժողովրդական հեքիաթների անձնանունների ուսումնասիրությունը ենթադրում է բարբառագիտական բազմակողմանի վերլուծություն, քանի որ դրանք որոշակի իմաստային դաշտով առանձնացող

¹ Մանթոյան Մ., Էպիկական կերպարի ստեղծման չափումները, Վանաձոր, 1994, էջ 43:

լեզվական միավորներ են՝ իրենց հատուկ հնչյունախմբով, հնչյունափոխությամբ, բառակազմական կաղապարով, ստուգաբանությամբ, քերականական արտահայտությամբ, խոսքում ունեցած դերով: Սույն հոդվածում լեզվաբանական հայեցակետերով ուսումնասիրել ենք Շիրակի դաշտավայրի Գյումրի (պատմական Կումայրի, հետագայում՝ Ալեքսանդրապոլ) քաղաքի հեքիաթների¹ անձնանվանական համակարգը:

Հեքիաթանունները գեղարվեստական նշանակությամբ զուգահեռ ունեն նաև անվանողական արժեք՝ բնութագրող, ոճական տիպական գործառույթով: Ալեքսանդրապոլի հեքիաթները հիմնականում վերնագրված են.

- ա) հերոսների մասնագիտությամբ կամ էությամբ – «Դամրըճու հեքիաթը», «Թագավորն ու ճգնավորը» և այլն,
- բ) հերոսների անուններով – «Հաբրամանի», «Ավճի Շաբուրի տղեն» և այլն,
- գ) կենդանիների անուններով – «Դըռ -աթ», «Ձանգի-Ջրանգի» և այլն,
- դ) հանգուցային արտահայտություններով – «Ջրախառ կաթը» և այլն:

Ալեքսանդրապոլի հեքիաթներում թագավորները անվանված չեն, բացառությամբ «Թափագյոզի հեքիաթ»-ի Ասլան թագավորի և «Ջարգանդ թագավորի աղջիկը» հեքիաթի:

Հեքիաթանունները ընթերցողին ներկայացվում են.

- ա) միանգամից, օրինակ՝ «Ջարգանդ թագավորի հեքիաթի» տղան՝ Ջուրապը, միանգամից անվանակոչված է:
- բ) Որպես հավելյալ տեղեկություն՝ արդեն ծանոթ հերոսի մասին, օրինակ՝ «Թափագյոզի հեքիաթ» գլխավոր հերոսուհին ներկայացվում է «Էդ աղջկա անունը Գյուլինազ կեղնի» արտահայտությամբ:

Անվանումներ ունեն նաև չար հոգիները, ինչպես՝ Թափագյոզը՝ «հ՛երկրթե մարդ, քարե հոքի է», Հարամ բաշին:

Հեքիաթանունները, ըստ ձևի և բովանդակության լինելով լեզվական միավորներ, ասացողների կողմից մտածված, որոշակի բովանդակությամբ արտահայտություններ են, որոնց իմաստաբանությունը հասկանալի է դառնում ստեղծագործության ընթերցանության ժամանակ: Անձնանվան տրանսֆորմացիայի օրենքով հեքիաթանուններն արտա-

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, Եր., 1963, հ. 4:

հայտում են անցյալում և հեռավոր երկրներում ապրող մարդկանց անվանումները, ինչպես *Եվա, Ադամ, Քրիստոս, Յոթվերք* սրբանունները:

Հեքիաթանունները հիմնականում ենթարկվում են արտակարգ հնչյունափոխության, սակայն հնչյունափոխությունը կատարվում է այնքան, որ բառապատկերը խորքում պահպանվի, ինչպես՝ *Միմիզար > Միմիկ, Ջուրապ-եթում Ջուրո* (մոր մեռնելէն ետև տղին ըսման կկանչեին):

Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների անունները ժողովրդական լայն տարածում ունեն: Հեքիաթի հերոսի անվան փոփոխությունը վերապահված է միայն հերոս-կերպարներին, ինչպես՝ «Տասը դախա չ'ընցած գելը խեխտուկ քցուկ էր գետին: Հոտղներն էս օր տեսան, հ'ամենքը մե թարաֆեմ կ'ըսեին.- Տ'ո Ջուրո, էս ի'նչ է,- մեկը կ'ըսեր,- գելիս էդ էս,- մեկելը կըսեր.- ա'րջ էս տո,- մե քանիսն էլ թե,- ապլան է, ապլան,- ու էնտից ետև անունը կնքին Եթում Ասլան»:

Հեքիաթների հատուկ անուններից են նաև *կենդանանունները*, որոնք նույնպես ժողովրդական ստեղծագործություններ են և բարբառների հատկանունների բաղադրիչն են կազմում՝ ունենալով բնութագրող հատկանիշ, ինչպես՝ *Տղեն էնքան գուզեր էդ շներուն, օր խելքը կերթար: Մեկի անունը դրեց Ջանգի, մեկինն էլ՝ Ջրանգի*: Այստեղ հանդիպում են հեքիաթներ՝ վերնագրված կենդանիների անուններով, ինչպես «Դըռ-աթ» հեքիաթը նժույզ ձիու անունով է կոչվում:

Հեքիաթանունների ուսումնասիրությունն ունի ազգագրական-բանասիրական և բարբառագիտական նպատակներ: Հեքիաթանունները, որպես կանոն, չեն կրկնվում. իբրև հատուկ անուններ՝ դրանք արտահայտում են եզակի գաղափարներ:

Ըստ ծագման՝ Ալեքսանդրապոլի հեքիաթանունները փոխառություններ են.

արաբերենից, օրինակ՝ *Հաբրմանի, Շաբուր, Մուսա, Հուրի* և այլն, պարսկերենից, օրինակ՝ *Լալա, Մուրեն, Ջուրապ, Միմիզար* և այլն, հունարենից, ինչպես՝ *Ալեքսան, Օհաննես* և այլն, թուրքերենից, օրինակ՝ *Գյուլինագ, Ասլան* և այլն:

Ալեքսանդրապոլի հեքիաթներում հատկապես կարևոր է ընտանիքի հոր կերպարը, և «Ավճի Շաբուրի տղեն», «Մարդակերպ ձուկը» հե-

քիաթներում որդիները այդպես էլ չանվանակոչվեցին՝ չնայած կատարած բազմաթիվ քաջագործություններին:

Lilit PETROSYAN (Armenia)

Vanadzor State University

E-mail: lilitpetrosyano1977@mail.ru

NAMES IN FAIRY TALES RECORDED IN KARNO DIALECT OF ARMENIAN

The current research examines names in folk fairy-tales recorded in Karno dialect in Armenian. Interestingly, Armenian fairy tales suggest an informative system of naming people. This unique folk tradition presents the linguistic thinking, lifestyle and real-life relationships of Armenian people.

Besides, names in fairy tales are an abundant source for identifying and analyzing the dialectological peculiarities of Armenian. The research of names in Armenian fairy tales requires an all-inclusive dialectological analysis. The following article studies names in fairy tales from Shirak valley through linguistic contemplative model.

While artistic meaning is central in fairy-tale naming system, typical stylistic functions are significant as well, such as defining, identifying and describing.

Generally, the titles of fairy tales from Aleqsandrapol are based on the profession of the main heroes, humane and animal names and are formed as complex structures. They either present new information to the reader or add something new to the given one, thus extending the meaning.

The names of domestic animals are an important part of proper names in fairy tales and possess descriptive features. To conclude, the study of proper names in fairy tales provides us with ethnographical, philological and dialectological insights. As a rule, the names in fairy tales are not repeated. As such, they express singular ideas and concepts.

Ամալյա ՊՈՂՈՍՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ (Երևան)

e-mail: amalyapoghosyan@yahoo.com

ՏԱԲՈՒԻ ԼԵԶՎԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Լեզուն և մշակույթը սերտորեն կապված են իրար և, կարելի է ասել, առանց մեկը մյուսի գոյատևել չեն կարող: Մշակույթի մեջ առկա ցանկացած երևույթ, անտարակույս, պետք է ունենա իր լեզվական դրսևորումը տվյալ հասարակության մեջ: Մյուս կողմից՝ լեզվի միջոցով է, որ մշակույթային արժեքները պահպանվում են և փոխանցվում սերնդեսերունդ:

Տաբուն հասարակության մշակութային արժեքների և ազգային մտածողության արտահայտման ձևերից է և տվյալ հասարակության մեջ դրսևորվում է նախևառաջ լեզվի միջոցով: Լեզուն հասարակության հիմնական բաղկացուցիչ մասերից է: Լեզվական տաբուն կամ լեզվում որոշակի բառերի և արտահայտությունների գործածման սահմանափակումը բնորոշ է գրեթե բոլոր հասարակություններին: Դրա պատմությունն այնքան հին է, որքան հենց ինքը լեզուն: Այս բառերի գործածումը, կապված լինելով քաղաքավարության և բարոյական արժեքների պակասի հետ, կարող է երբևիցե չօգտագործվել անհատների կողմից, չնայած բոլորն էլ քաջ ծանոթ են դրանց:

Տաբուն բնորոշ է բոլոր լեզուներին և հասարակություններին, որտեղից էլ բխում է դրա ուսումնասիրության կարևորությունը: Համամարդկային լինելով հանդերձ՝ տաբուն նաև խիստ մշակութային երևույթ է, քանի որ լեզվում տաբուններ առաջանում են հենց մշակութային մտածողության արդյունքում և համապատասխանորեն տեղ են գտնում նաև տվյալ հասարակության լեզվամշակույթի մեջ: Լեզվական տաբուններն ինքնին վերաճում, դառնում են հասարակության մշակութային արժեքներ և հավատալիքներն արտացոլող իրողություններ, որով էլ ազգերը զանազանվում են իրարից: Այնուհանդերձ, մշակութային տաբուններից բացի, կան նաև ունիվերսալ տաբուններ, որոնք հատուկ են գրեթե բոլոր ազգերին:

Թերևս սխալված չենք լինի, եթե նշենք, որ հայերենի ուսումնասիրության դաշտում թեման ինքնին տաբու է, քանի որ որևէ ամբողջական աշխատանք այս թեմայով կատարված չկա: Տաբուին վերաբերող դիտարկումները սահմանափակվել են՝ բառապաշարի իմաստաթեմատիկ խմբերը բնութագրելով: Հայ լեզվաբանության մեջ տաբուին վերաբերող դիտարկումները գրեթե ակնարկային բնույթ ունեն, ներկայանում են հակիրճ ու սահմանափակ վերլուծություններով՝ բացառապես ներկայացվելով ուսումնամեթոդական դասագրքերում և ձեռնարկներում: Մույն ուսումնասիրության մեջ տաբուի ընտրությունը՝ որպես հետազոտության առանցքային խնդիր, պայմանավորված է ժամանակակից լեզվաբանության ուղղություններից մեկի՝ լեզվաճանաչողաբանության ընձեռած արդյունավետ հնարավորությունները կիրառելու և հետազոտվող խնդիրը միանգամայն նորովի իմաստավորելու անհրաժեշտությամբ:

Կարելի է ասել, որ լեզվական տաբուն հանրույթների կենցաղի, կենսակերպի, էթնոմշակութային ապրելակերպի լեզվական արտահայտությունն է, որի ակունքները գտնվում են լեզվական տաբու գործածող անձանց ազգային հոգեբանության մեջ: Մա ինքնին դառնում է քաղաքակրթությունների տարբերակման հիմունք և չափանիշ՝ արտահայտված լեզվական որոշակի համակարգերով: Լեզվական տաբուն որոշակի արգելքների արտահայտման հաղորդակցային միավոր է և, սրանով պայմանավորված, հոգևոր-մշակութային ավելի խորքային հիմքեր ունի:

Բանն այն է, որ առանձին քաղաքակրթություններում տաբուն եղել է արգելքների որոշակի համակարգ ի սկզբանե, որոնց խախտումը և անտեսումը կարող էին դառնալ առասպելական, ինչու չէ, երևակայական ուժերի պատժի հիմք: Արդյան լեզուներում լեզվական տաբուների հոգևոր-նյութական հիմքերն ուղղակիորեն արտացոլում են առասպելական ուժերի և մահկանացուների միջև եղած անջրպետը: Ըստ ամենայնի, որոշակի նախապաշարումների հաղթահարման նպատակով է, որ մարդիկ գործածում են որոշակի տաբուներ: Օրինակ՝ հայերի մեջ լայն տարածում ունի այն երևույթը, որ ողջ կամ մահացած տատիի կամ պապիի անունով կոչում են նորածին երեխային՝ որպես երախտագիտություն ողջ կամ հանգուցյալ ծնողներին: Մակայն երեխային ծնողները դժկամությամբ են կո-

չում իրենց իսկ արդեն ծանոթ ու հիշողություններով լի անունով՝ որոշակի տոտեմային նախապաշարումներից դրդված, և որպես անվանադրման դրսևորումներ գործածում են կա՛մ ապեր, կա՛մ այլ անուն: Այստեղ գործ ունենք լեզվական տաբուի հետ, որում բացասական նախապաշարումն ստեղծում է լեզվական տաբու կիրառելու հնարավորություն:

Բերենք մեկ այլ օրինակ, որ ընձեռում է հայերենի տվյալները: Հայերենի մի շարք բարբառներում մինչ օրս սովորական է այն, որ կանայք խուսափում են իրենց ամուսինների անունները տալուց՝ պայմանավորված որոշակի անհասկանալի վախերով: Ամուսինների անունները հնչեցնելը, ըստ ամենայնի, արգելված է հասարակական միջավայրերում: Այսպիսի գործելաճով կանայք իրենց պատկառանքն ու հարգանքն են ցուցաբերում ամուսինների նկատմամբ: Որպես դրանց լեզվական փոխարինիչներ՝ հանդես են գալիս *զլխավոր*, *էրիկ*, *մարդ/մատո*, *էրիկ/մատո* բառամիավորները:

Բերված լեզվական փաստերը ցույց են տալիս, որ տաբուներն առաջանում են տվյալ լեզվով խոսող ժողովրդի պատմության ընթացքում՝ արտացոլելով նրանց հոգևոր-նյութական մտածողության ողջ գունապնակը, իսկ տաբուները հաղթահարող լեզվական իրողությունների գործածությունները վկայում են տվյալ լեզվով խոսող ազգերի քաղաքակրթվածության մակարդակը:

Լեզվական տաբուներ ունեն գրեթե բոլոր ազգերը, այդ թվում՝ հայերն ու անգլիացիները: Երկու ազգերն էլ միավորվում են լեզվական տաբուների գործածման հատկանիշով, իսկ տարբերությունները սոսկ դրանց ներկայացման դրսևորումներն ու արտահայտություններն են, որոնց բացայատմանն էլ ուղղված են մեր հետազոտությունները:

Amalya POGHOSYAN (Armenia)

Institute of Language NAS RA (Yerevan)

e-mail:amalyapoghosyan@yahoo.com

LINGUO-CULTURAL VALUE OF THE TABOO LANGUAGE

Language and culture are closely related things and it can be said that they can't exist without each other. Any phenomenon presented in this or that culture finds its reflection and reverberation in a language. On the other hand, it's due to language that cultural values are transferred from generation to generation.

Language is a very important part of a society. Among other things, it carries the important cultural knowledge of a society. The most significant reflection of cultural values is revealed in the shape of linguistic taboos of a society. They are the interesting ways of reflection of social norms and cultural values of a society within its language.

Linguistic taboo is one of ways of expression of cultural values and national mentality and in the society first of all it is expressed by language. Linguistic taboo or the fact of avoiding mentioning certain words and expressions in a language is a common practice in more than one society. Its history is as old as the history of language itself. The nature of these words might be shocking in character or associated with lack of morality and in order not to hurt the other members of the society, many of them are never used in the lives of some individuals although they know them perfectly.

Studied linguistic materials permit us to say that taboos are formed during the whole history of the nation speaking some particular language reflecting their spiritual-cultural whole colourful palette. On the other hand, euphemisms used instead of taboo words show the level of civilization of the nation.

Linguistic taboos have almost all nations including the Armenians and English. The two nations are common by the feature of usage of taboo language and the differences are just in their usage and presentation peculiarities. Our studies aim to discover all those similarities and differences and find etymological connections of two languages.

Алла СЕРДЮК (Украина)

Бердянский государственный педагогический университет

E-mail: allacerdiuk@gmail.com

СТРУКТУРА КОНЦЕПТА «ИНОСТРАНЕЦ» (НА МАТЕРИАЛЕ КНИГИ АНРИ ТРУАЙЯ «МОЯ СТОЛЬ ДЛИННАЯ ДОРОГА»)

Проблема адаптации иностранцев не прекращает находиться в поле зрения ученых, прежде всего, психологов, социологов, культурологов. В наше время, когда языкознание сориентировано на антропоцентризм, лингвистические исследования в этой области приобретают особенную актуальность.

В мировой литературе иностранцы являются частыми персонажами произведений. Однако, особенный интерес представляют собой книги, основанные на реальных воспоминаниях. Показательной в этом отношении является жизнь французского писателя Анри Труайя, считавшего себя русским армянином. Как известно, после революции 1917 года его семья вынуждена была эмигрировать в Константинополь, а затем во Францию, где, по словам писателя, он «изменил национальность, затем – имя».

Цель нашего исследования состоит в описании концепта «иностранец» на материале мемуаров «Моя столь длинная дорога».

Пользуясь методикой, предложенной В. Масловой, мы устанавливаем ядро данного концепта на материале лексикографических источников. Ряд толковых словарей предлагает следующие дефиниции слова-репрезентанта: «Гражданин какой-н. страны по отношению к другой стране» (С.Ожегов); «<...> человек, который является гражданином не вашей страны» (С.Дмитриев); «Лицо, принадлежащее к гражданам чужой страны» (Д.Ушаков); «Гражданин, подданный какой-либо страны по отношению к другой стране» (Т.Ефремова) и др.

Итак, центральным компонентом концепта является «гражданин». Кроме того, в ядерную часть входят такие составляющие, как «государство» и «страна».

